Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ист.кбр
276.279

II 3/44.

№ 13/XIII



2003

ՓՈՒԾՔ

II.

Արխ
279
Կպ

ԲԱՖՖԻ

(Ց. Մելիք—Յակոբեան)

ՓՈՒՆՋ

II. Հատոր

Վիպասանութիւններ

ՓԻՏԼԻՍ

Въ Типографіи Амбарцума Энфіаджіанцъ и К—о.

1874

4326

Дозволено цензурою Тифлисъ 4-го Декабря 1873 г.

(7205-17)

279·2003

Ա 279

Ը.

Յառաջաբանի տեղ . . . . . VII.
Անմեղ վաճառք 1
Ուխտակալ Մխանձնուհի 59
Տնային փեսայ 95
Հարեմ (Առաջին մասն) 133
Սառա (բանաստեղծուհին) 267
Վուլկուբանի (առասպել) 309

VI.

«Դառն հալածանքը՝—է քո արդիւնքը,
«Հեռու աւերից, դու անկեղծ հանճար,
«Մի մերկացրու նորա մոլորութիւնքը,
«Մի քըրքրի փշած ախտերը չարաչար»

ԳԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ընծայելով պատուելի հասարակութեանը փունջի երկրորդ հատորը, մենք մասամբ հասած ենք համարում մեր նպատակին, տեսնելով, որ նորա առաջին հատորը սառն ընդունելութիւն չը գտաւ ընթերցողներից։ Այլ ընդհակառակն, նա յարուց աղմուկ, գըրգռեց հարցասիրութիւն, իսկ չաւերի մէջ՝ կրքեր և զզուանք . . . ։ Այդ բաւական է մեզ, նշանակումէ, որ նա ազդեց, նշանակումէ, որ մեր ժողովրդի մէջ դեռ հանգած չեն կենդանի զգացմունքները. . .

Անտարբեր չը մնաց և մեր լրագրութիւնը։ «Մշակը» և «Մեղուն» ևս իւրեանց կողմից ընծայեցին փունջին մի քանի վայր է վերոյ խօսքեր։ Աւելին սպասել չէր կարելի, երբ պակաս էր առողջ կրիտիկան կամ անաչառ քննադատութիւնը։

Գալով երկրորդ հատորի հրատարակութեանը, այսքանը միայն կասենք, որ այս գրքի մէջ պարունակուած վէպիկները մենք գրել ենք Թիֆլիսում 1872—1873 թուականներում։ Թէ որքան է յաջողուել եր-

կու տարուայ ընթացքում ըմբռնել՝ մեզ անծանօթ մի երկրի հասարակական կեանքի մի քանի երևոյթները, այդ թողումենք ընթերցողների դատողութեանը։ Բայց Հարեմը, Սառան և Ղուլլուբանին մեր Պարսկաստանում եղած ժամանակուայ դրուածներիցն է, երբ արդէն վերադարձած էինք մեր հայրենիքը։

Մենք յարմար համարեցինք այդպիսի փոքրիկ վէպիկներով նախ զարգացնել կարդացողների ճաշակը և նոցա սէրը դէպի մայրենի լեզուի ընթերցանութիւնը, մինչև նոքա պատրաստուած կը լինէին հետաքրքրուիլ աւելի ընդարձակ վիպասանական գրուածներով, որոնց, եթէ կը յաջողուի մեզ, կը մատուցանենք յետագայ հատորներով։

Թող կոյր վայրահաւանները ինչ որ ուզումեն ասեն, մեր վստահութիւնը կը մնայ մի և նոյնը, ինչ որ էր յառաջ։ Դադինք վայելելու ցանկութիւնից հեռու ենք մենք, բայց ուրախ ենք, որ հասարակական կրթութեան գանձանակի մէջ կարողանումենք ձգել մի չընչին լումայ—մեր ունեցածն այդ է։

Բաֆֆի

Ա Ն Մ Ե Ղ Վ Ա Ճ Ա Ռ Ք

Բ ա ֆ ֆ ի ի փունջ II.

ԱՆՄԵՂ ՎԱՃԱՌՔ

Ա.

Ջմեռ էր։

Վաղորդեան արեգակը տխրութիւնամբ սահումէր սեւ թուխպերի յետքում, երբեմն ամպերի ճեղքերից երկչոտ կերպով ցոյց տալով իւր գունատ դէմքը, տարածումէր նա թոյլ ճառագայթները նորեկ ձիւնի վերայ։

Օրը կիւրակէ էր։ Զանգակները դեռ նոր սկսել էին հրաւիրել բարեպաշտ ժամասէրներին դէպի Աստուծոյ տունը։ Մի տասերկու տարեկան աղայ՝ ցրտից լրջացած դէմքով միայնակ գնումէր նեղ և մեայլոտ փողոցով։ Մաշուած հագուստը չէր պաշտպանում նորան բուքի սաստկութիւնից. նա իւր սառած մատներն երբեմն տաքցնումէր բերնի շոգիով, երբեմն իւր ծոցն էր դնում։ Ձիւնը խշխշումէր նորա ոտքերի տակ, և պատառոտած կոշիկներից դուրս պրծած մատները, չատ անգամ հանդիպելով սրածայր սառուցի կտորներին, ծակծկվումէին, կտրատվումէին, և պա-

տանին մոռմոքելով չարունակումէր իր ճանապարը։

Երկար այնպէս գնումէր նա, մինչև հասաւ մի հոյակապ տան, ուր նորան կից կառուցվումէր մի նոր շինուածք։ Հողի, քարի, կրի, աղիւսների և փայտերի՝ անպիտան կտորտանքը՝ դիղուած էին նորա մօտ մի անկիւնում խառն ձիերի աղպի հետ, որ դուրս էին ածել մերձակայ ախոռատնից։ Քանի անգամ ոստիկանութիւնն ուշադրութիւն էր դարձրել այդ աղպանոցի վերա, բայց ոչ ոք չէր կամենում մաքրել նորան։

Պատանին մօտ գնաց ամբարտակին, և երկչոտ կերպով իւր շուրջը նայելով, երբ տեսաւ ոչ ոք չէ երևում, վեր բարձրացաւ նորա վերա։ Նա սկսաւ իւր սուրճ մատներով փորել հողը, քրքրել աղիւսների բեկորները և նոցա միջից հաւաքել փայտի կտորտանք։ Մի ամբողջ ժամ տևեց այդ աշխատութիւնը, մինչև նա հաւաքել էր բաւականին փայտ։ Նա իւր ժողոված պաչարը լեցրուց կտաւի չորի մէջ չալակն առաւ, կամենումէր հեռանալ։

Ցանկարծ փողոցի քարուղին որոտաց։ Փառաւոր կառքը, դուրս գալով ախոռատնէն, կանգնեց հոյակապ տան դրանը։ Դուրս եկաւ մի կարճահասակ, հաստիկ մարդ, փաթաթուած բարոքի և սամուրի մէջ։ Նա կամենումէր կառքը նստել, երբ աչքն ընկաւ պատանու վերա։

—Էդ ինչ ես տանում, հարցրուց նա կոշտ կերպով։

—Փայտի կտորտանք է, աղայ, այ էնտեղից հաւաքեցի, պատասխանեց պատանին դոյդ տալով աղպանոցի վերա։

—Էնտեղից հաւաքելիր, կոչեց մեծատունը բարկութեամբ և նոյն րոպէին նորա դէմքն ընդունեց վայրենի կերպարանք.—դէ, վեր դիր, ասումեմ քեզ, անպիտան, դէ չուտ, թէ չէ . . .

—Իմ տունը քանդեցին, եղած—չեղածս տարան, ուզումեն ինձ էլ իրանց պէս աղքատացնեն . . . Ասումէր նա ինքն իրան զայրանալով։

Պատանին դողդողալով ցած դրեց չալակը, բայց չէր կամենում նորանից հեռանալ։ Նա մի ողորմելի հայացք ձգեց մեծատան երեսին, աղաչելով՝

—Աղա ջան, թող տանեմ, մէրս հիւանդ է, վառելու ոչինչ չունենք։

—Դու համարձակվումես պատասխանել, դէ լակոտ, գնդ, աւազակ, դուրս մեծատունը։—Մեխակ, ձայն տուեց նա դէպի յետ նայելով։

Իսկոյն յայտնուեցաւ մի բարձրահասակ խմերէլ ծառայ, մէջքը սեղմած արծաթի քամարով։

—Ա՛ռ դրանից փայտերը, հրամայեց ծառային։

Խմերէլը մօտեցաւ, կամենումէր խլել փայտերը։ Խեղճ տղան, երկու ձեռքով պինդ բռնած իւր չալակից, չէր կամենում բաժանուել նորանից։ Նա արտասուքն աչքերում աղաչումէր՝—Մէրս հիւանդ է . . . Թողէք տանեմ . . .

Բայց Խմերէլի մի ապտակով տղան գետին գլորուեցաւ, իսկ ծառան փայտերի հաւաքածուն իւր ուրոյն ճոճանոցը տարաւ։

Խեղճ պատանին ուշաթափ ընկած էր սառուցների վերա, երբ մնծատունը նստեց կառքը և դիմեց դէպի իր դործերը։—Դա պարոն Ֆ. . . էր, ոչ միայն իր քաղաքի, այլ իր դաւառի ամենահարուստ մարդը . . .

Բ.

Կէս օր էր։

Թուխպերը սկսել էին երկնքից փոքր առ փոքր նօսրանալ։ Արևի ճառագայթները բաւականին զօրութիւն էին առացել։ Դառնաչունչ ցուրտը մեղմացել էր։ Կաւրներից կաթկթումէր նորեկ ձիւնի հալուցը և փողոցներում գոյացնումէր առուակ ցեխ։

Քաղաքի խուլ և յետ ընկած մի անկիւնում կանգնած էր փոքրիկ խրճիթ։ Փչուռ մայրաներով հիւսած ցանկապատը հազիւ բաժանումէր նորան մի տափարակից, ուր հրէաներին թոյլ էր տուած թաղել իւրեանց մեռելները։ Խրճթի մի կողմը բոլորովին աւերակ էր։ Նոյն ձմեռան մէջ պատահել էր այդ դժբախտութիւնը, երբ ցերտաները չը դիմացան առատիկ ձիւնի ծանրութեանը և առաստաղը իջած էր։ Իսկ խրճթի մնացած մասի փլփլած պատերը դեռ կարողացել էին պահել իւրեանց վերա մի գետնափոր սենեակի ծածկը։ Յամառակի հնութիւնից մաշուած, մամռապատ աղիւսները ստացել էին մոխրագոյն, որ տալիս էր այդ աղքատիկ բնակարանին մի տխուր մեռելային բնաւորութիւն, որով նա չէր զանազանվում իր մօտ դրած անչուք գերեզմաններից։

Դուռը ճռաց։ Խրճթից դուրս եկաւ ժանկահասակ աղջիկ։ Նորա հագուստն իր չքաւորութեամբ բոլորովին համապատասխան էր այն տխուր շրջանին, ուր ապրումէր նա։ Մի բանով միայն նա զանազանվում էր,—այդ էր նորա սիրուն և ախորժելի դէմքը։ Օրիորդը կը լինէր տասն և հինգ տարեկան, բայց որ պէս բարեխառն կլիմայի ծնունդ՝ նորա կուրծքը բոլորովին զարգացած էր։ Թուխ հիւսերն իջել էին չուտակ թիկունքի վերա և հասակը ձգտել էր ուղիղ՝ որպէս չինարի։ Նա նմանումէր մինին անմահ ոգիներից, որ եկել էր մխիթարել այդ աւերակների անբախտ բնակիչներին . . .

Նա, մի փոքրիկ փայտեայ տաշտ ձեռին բռնած, յառաջ դնաց, մօտեցաւ խրճթին կից փլատակներին և սկսեց այնտեղից ցամաք հող լեցնել իւր տաշտի մէջ։ Յետոյ նա բարձրացաւ կառքը, որ հազիւ որոշվումէր բակի տափարակից և սկսաւ այն հողով բռնել տանկքի ծակերը, որքով կոխ տալ, որ արդելէ հալած ձիւնի կաթկթոցը սենեակի մէջից, որ նոյն ժամուն անձրևումէր խեղճ բնակիչների գլխին։

Աղջիկն իւր աշխատութիւնն աւարտել էր արդէն, երբ խրճթի բակը մտաւ մեր ընթերցողին նախածանօթ պատին։ Դա օրիորդի եղբայրն էր։

Տեսնելով եղբօրը՝ քոյրն ուրախացաւ.—Փայտ բերիր, եղաւ նորա անհամբեր հարցմունքը։

Պատանին պատմեց քրոջը իւր դժբախտ դէպքը։ Մի քանի կաթիլ արտասուք երևացին աղջկայ տըխուր աչքերում։

—Կրողը տանէ նրան . . . ասաց օրիորդը, քա՛ն նա Աստուած չունէը . . .

Պատանին ոչինչ չը պատասխանեց, նա տրտում կերպով նայուածք ձրոջ նրեսին։ Խմէրէլի ապտակը լրջացած դունով դեռ ղրոչմուած էր խեղճ տղի թշի վերա։

—Մեր մայրը կը մեռնի ցրտից, Սանդրօ ջան, ասաց օրիորդը յուսահատութեամբ։

Մինչ նա այդ տխրութեան մէջն էր, յանկարծ աչքն ընկաւ խրճիթին կից վլատակներին, նա տեսաւ քանդուած առաստաղի գերաններից մէկի ղուխը մի քանի թղաչափ երեսումէր հողի տակից. իսկոյն նորա գլխում ծագեց մի միտք։

—Կարծս մի սրղոց ճարել, հարցրուց եղբօրից։

—Ի՞նչ պիտի անես, ասաց Սանդրօն։

—Էն գերանից մի քիչ կտրենք։

—Կարամ, պատասխանեց Սանդրօն և վազեց դէպի իւրեանց դրացի հիւս Օսէփի տունը և քանի րոպէից յետոյ դարձաւ սրղոցը ձեռին։

Ձոյր ու եղբայր մօտեցան գերանին, մինը նստեց նորա մի կողմը, միւսը՝ նորա հանդէպ. նոքա բռնեցին սրղոցի երկու ծայրից և սկսան շարժել։ Սկզբում նոքա անվարժ էին, չը գիտէին ինչպէս բանեցնել գործիքը, յետոյ փոքր առ փոքր սովորեցան և սրղոցը ադաս կերպով վազումէր փշած գերանի վերա։ Մինչև կէսը կտրել էին, երբ նոքա յոգնեցան, երկուսի էլ թեւկները ցաւացաւ։

—Ի՛նչ դժար բան է էլի դուրկալութիւնը, ասաց

Սանդրօն քրտինքը սրբելով։

—Հա՛, դժար է, պատասխանեց ձոյրը։

—Լաւ է, որ մէրս ինձ դուրկալի մօտ աշկերտ չը տուեց։

—Կը տորվէիր, Սանդրօ, էլ թևերդ չէր ցաւի։

—Հիմայ կտրենք, ասաց պատանին ոգևորուելով ձրոջ խօսքերէն։

Նոքա չարունակեցին գործը։ Կէս ժամից յետոյ գերանի կտորը ղղորուեցաւ գետին։

—Վա՛յ . . վա՛յ . . ոտս . . ոտս . . . կոչեց պատանին մորմոքելով։

Ձոյրը թէև չուտով հետացրուց վայտի կտորն, որ ընաւ եղբօր ոտքի վերա, այսուամենայնիւ նորա ցաւը սաստիկ էր, երկար Սանդրօն չէր դադարում մորմոքելուց։

—Վա՛յ, քօռանամ . . . էդ ինչ էլաւ . . . կոչեց օրիորդը, տեսնելով որ եղբօր բթամատից արիւն էր հոսում։

Նա պատռեց իւր մաշուած առաջակալից մի կտոր և իսկոյն փաթթեց վէրքը։ Արիւնը դադարեց, բայց Սանդրօն դեռ անհանգիստ էր։ Նա վեր կացաւ և կաղկղալով մտաւ խրճիթը։

Բայց կտրած վայտը ճղոտելու համար պէտք էր տապար։ Օրիորդը տարաւ սրղոցը յետ տուեց Օսէփին, և քանի րոպէից յետոյ դարձաւ տապարը ձեռին։ Նա հագուստի թևքերը վեր քաշեց և սկսաւ կամաց կամաց մանրել վայտը։

Գ.

Գիշերը մութն էր և ցուրտ. Ձիւնը սկսել էր նո-
րից մաղուիլ։ Քամին սաստիկ փչումէր, և ձիւնի հա-
սանքը զարկելով խրճթի թղթով պատած լուսամուտ-
ներին, սարսափելի ձայներ էր հանում։

Խրճթի մի անկիւնում, պատումը փորած վառարանի
մէջ, աղօտ—կանաչագոյն լուսով ալլալումէին փայտի
մի քանի կտորներ, որոց լոյսը թոյլ կերպով ծա-
վալումէր այդ մռայլոտ բնակարանի մէջ։ Երբեմն
քամին չըվայնելով ներս էր վազում վառարանի ծա-
կից և խեղդող ծխով լեցնումէր փոքրիկ սենեակը։

Մարիամն,—այդպէս կոչումէին օրիորդին,—լուռ
նստած վառարանի կողքին, խոնաւ գետնի վերա, կա-
րումէր մի բան։ Ցողնած և վիրաւորուած Սանդրօն,
հօր հին վերարկուն գլխին քաշած, մրափումէր։ Ն-
րանից հետու, տախտի վերա, կարկատած վերմակի
տակից՝ լսելի էր լինում խորին տքտքոց և երբեմն
ծանր հառաչանք։—Այդ Մարիամի հիւանդ մօր ձայնն
էր, որ տանջվումէր իր տաւերի մէջ . . . ։ Բացի այդ
երեք անբախտները խրճթի բնակիչների թուում գը-
ասնվումէին՝—փոքրիկ Յուցան, որ սիրուն գլուխը
իր առջևի թաթիկների վերա դրած, կծկուել էր
մի անկիւնում և կարծես ուժգնումէր ցրտի սաստ-
կութեան վերա.—այլև մի քանի հաս հաւեր, որք
իրենց կչկչալով երբեմն ընդհատումէին տնակի
մեռելային լռութիւնը։

Այդ աղքատ ներդաստանը պատկանումէր խա-
րազ Օվանէսին, որ իր կենդանութեան ժամանակ

հազիւ կարողանումէր հոգալ ընտանիքի ապրուստը։
Նա մեռաւ վերջին խօլերայից թողելով իր որդիքը
դառն աղքատութեան մէջ։ Չքաւորութիւնը չուտով
ստիպեց նորա այրին վաճառել տնից այն բոլոր բա-
ներն, որք կարող էին որ և իցէ գին բերել։ Նոքա
ևս չուտով սպառուեցան, այնուհետև նոցա վի-
ճակն եղաւ անտանելի։

Գնիւանն,—այդպէս էր Մարիամի մօր անունը,—
չէր կարողանում գործել, որովհետև նա մի տկար
կին էր։ Ամուսնի մահուան կսկիծը բոլորովին մաշեց
նորան, այնուհետև նա չէր կարողանում բաժանուել
հիւանդութեան մահճից։

Սանդրօին տուել էին աշակերտ կօշկակար Սիմոնի
մօտ իր հօր արհեստը սովորելու։ Տան հոգսը մնա-
ցել էր Մարիամի վերա։ Խեղճ աղջիկն ամբողջ օրը
հանգստութիւն չունէր։ Նա խնամք էր տանում հի-
ւանդ մօրը, լուանումէր, կարկտնումէր իր և եղբօր
հագուստը։ Իսկ պարապ ժամերում նա գնումէր իր-
ենց դրացի լուացարար Կէկէլի մօտ, այնտեղ աշխա-
տումէր, օրեկան մի քանի չայի փող առանալով, ո-
րոցմով գնումէին ցամաք հաց և երբեմն մի կտոր
միս, որ Մարիամն եփումէր հիւանդի համար։ Գիշեր-
ները նոյնպէս օրիորդը հանգիստ չէր գնում։ Դրացիքը
նորան տալիս էին կարելու մի բան, որոց համար
փոքր ի շատէ վճարումէին։

Այն գիշերը Մարիամը նստած կարումէր մի ար-
խալուխ, երբ լսեց դրան թխկոցը։—Ովքե՞ւ ևս, ձայն
տուեց նա։

—Ես եմ, լսելի եղաւ դրան յետքից։

—Ա՛խ, Նիկօլ, դուն ես, ասաց օրիորդը, ճանաչելով ծանօթ ձայնը և իսկոյն վազեց բաց արաւ դուռը։

Եկւորը լուացարար Էկէլի որդին էր, մի առողջ պատանեակ՝ բաւականին ուղիղ կազմուածքով և վայելուչ դէմքով։ Նա բերեց մի ամանի մէջ կերակուր, որոյ վերա դրած էր մի կտոր հաց և տուեց Մարիամին, ասելով—Մէրս ուղարկեց։

—Գնա տաքացիր, Նիկօլ, դու մրսել ես։ Ասաց նորան օրիորդը և կերակուրը տարաւ մօր մօտ։—Մայրիկ, տաք կերակուր է, մի փոքր խմի ջրիցը, դու էսօր ոչինչ չես կերել։

Հիւանդն առեց գդալը և դողդոջուն ձեռքով սկսեց ուտել։ Մարիամը բռնած ունէր մօր առջև կերակուրի ամանը։ Երբ նա վերջացրուց, օրիորդը տեսաւ, որ կերակուրից բաւականին մնացել էր։ Նա զարհուցրուց եղբօրը, մտածելով թէ նա քաղցած էր քնած։ Սանդրօն՝ աչքերը ճմռելով՝ բարձրացրուց գլուխը, նորա ուրախութեանը չափ չը կար, երբ տեսաւ իր առջև տաք կերակուրը։

—Բա դու չես ուտելու, հարցրուց Նիկօլը։

—Ես իշտահ չունեմ... պատասխանեց Մարիամը։

—Ցօ, չուր կտրած, լսելի եղաւ հիւանդի ձայնը, ինչու ես մաշում քեզ, դու էլ որ հիւանդանաս, մեզ ով պիտի պահէ...

Օրիորդն ոչինչ չը պատասխանեց։ Հիւանդը խորին կերպով ախ քաշեց և թուլացած գլուխը թողեց բարձի վերա։ Մարիամը նստած էր վառարանի մօտ, նորա

հանդէպ նստել էր Նիկօլը։ Սանդրօն դեռ վայելում էր իւր ընթրիքը։ Փոքրիկ Յուցան, պոչը չարժելով, փաղաքշաբար պտիտ էր գալիս նորա շուրջը։ Պատանին ձգեց նորան մի կտոր ոսկոր, շնիկը դոհունակութեամբ առեց անուշ պատառը, հետացաւ դէպի իւր նուիրական անկիւնը, սկսեց իւր մանրիկ ատամներով կրծոտել նորան։

Քանի րոպէից յետոյ լսելի եղաւ հիւանդի խռնփոցը։

—Նա քնեց, ասաց Մարիամը, և իւր տեղից վեր կենալով, մօտեցաւ մօրը, ծածկեց նորան ամեն կողմից, որ չը մրսէ և կրկին վերադարձաւ իւր առաջին տեղը։

Վառարանի մէջ հազիւ պլպլումէին մի քանի կիսատ ածուխներ։ Խրճիթի խաւարը յետզհետէ թանձրանում էր։ Մարիամն աւելցրուց մի քանի կտոր փայտ, կրակը բորբոքվեց և սենեակի տխուր պատկերները կրկին նկարուվել սկսան նորա աղօտ լուսով։

—Դու ուր էիր, Նիկօլ ընդհատեց Մարիամը նոցա մէջ սկսող լռութիւնը։

—Բազարումն էի, Մաչօ, պատասխանեց Նիկօլը, մէկ մարդից մի անդուկ լիմոն ունէի առած, աշխատում էի ծախեմ, որ փողը տամ։

—Ցետոյ տրւեցիր։

—Ցուվ, թէ չէի տուել, վայ իմ հալին, կոտոր կըընդունէի, պիտեա։

—Մին անդուկ լիմոնո՞վ։

—Բա ինչ քանով, իմ թանխէն ամեն ամին տինդ մանէթ է։

—Շատ փող ես ունեցել, Նիկոլ, հինգ մանէթ ... դարմանալով կրկնեց Մարիամը։

—Էս ճակտիս քրտինքովն եմ աշխատի. պատասխանեց ձեռքը տարաւ դէպի գլուխը։

Մի քաղցր ժպիտ բաց արաւ երկու սիրուն փոսիկներ Մարիամի ամէն մի թշի վերայ։

—Ինչպէս ես ծախում, Նիկոլ, լիմոնը, հարցրուց նա։

—Լեցնում եմ մի զամբիւղի մէջ, թևքիցս քաշ եմ տալիս, ու էնպէս սկսում եմ պիտա ածել փողոցները՝ «լիմոն առէք, հայ լաւ լիմոն, սիրուն լիմոն ...» էդպէս բղաւում եմ ու բղաւում ...

Վերջին խօսքերն այնպիսի մի բարձր ձայնով ասաց, որ հասկաց ուրախ պատանին, որ հասերը սկսեցին անհանգիստ կերպով կշկշալ. փոքրիկ Յուգան, որ նոյն ժամուն թաղնուել էր տախտի տակ, դուրս պրծաւ և իր սուր մետալական ձայնով մի քանի անգամ հեծկլտաց, և Սանդրօն, հետևելով Նիկոլի եղանակին, կրկնեց նորա խօսքերն այնպիսի մի յանդով, որ աւելի չիմի պատճառեց։

Խրճիթի մօտ լռութիւնն ընդհատեց մի առանձին կենդանութիւն։

—Քա, էդ ինչ արիր, Նիկոլ, խօմ դիժ չես, ասաց Մարիամը մի կողմից ծիծաղելով, միւս կողմից կշտամբելով պատանուն։

—Բա ինչ անեմ, լիմոնը էդպէս են ծախում. խօսեց պատանին աւելի կատակելով։

—Դէ տես, դէ տես, հապա լսելի ձայնով չընչաց ջրիորդը, մատները Նիկոլի բերնին դնելով։—Տես,

թէ չէ մէրս կը զարթնի։

—Ցմայ խելօք կը կենամ, տես, ինչպէս տուա կացայ։

Պատանին ընդունեց աւելի ծանր կերպարանք, բայց մի և նոյն ծանրութեան մէջ կար ծաղրածութեան բոլոր ձևերը, որով Մարիամը չէր կարող առանց ժպտելու նայել նորա երեսին։

Վառարանի մէջ կրակը սկսել էր աւելի բորբոքուել։ Մարիամի գունատ թշերը ստացել էին վարդի գոյն։ Կրակի լոյսը տուել էր նորա դէմքին խիստ գրաւիչ հրապոյրներ։

—Ինչ սիրուն ես էս գիշեր, Մաշօ, ասաց նորան Նիկոլը մի առանձին համակրութեամբ նայելով օրիորդի երեսին։

—Է՛հ, սիրուհութիւնը ինչ սաղ կը գայ ինձ ... պատասխանեց օրիորդը տխրութեամբ։

—Ջէ, Աստուած վկայ, սիրունացել ես, տես, և Նիկոլը տուեց նորա ձեռքը մի կտրած հայելոյ կտոր, որ նա առեց պատուհանից։

Մարիամը նայեց հայելուն, տեսաւ, իրաւ որ բաւականին կարմրել էր։—Կրակի տաքութիւնից է, պատասխանեց նա համեստութեամբ։

—Դրանից յետոյ ես շատ փայտ կը բերեմ, որ վառես, տաքանաս ու միշտ էդպէս սիրուն դառնաս ... վերա բերեց պատանին ուրախութեամբ։

—Է՛հ .... Թաք մէրս լսենայ, ես ուրիշ բան չեմ ըզում։

Այդպէս պատանին և պատանեկուհին, նստած վա-

ռարանի մօտ, երկար խօսումէին և դուարճանում, երբ դիչերն անվկատելի կերպով անցնում էր։ Մինչև աքաղաղն երեք անգամ թևքերը թափ տուեց, երգելով իւր սովորական երգը։ Նիկօլը, տեսնելով որ Մարիամը նիրհումէր, ինքն էլ գնաց իւրեանց տունը քնելու։

Գ.

Միւս օրն եղանակը չատ մեղմ էր։ Գիչերուայ մըրրիկը դադարել էր և արևի չողքերն ուրախ ժպիտով խաղումէին նորեկ ձիւնի խաչաձև բլրիանդների վերա։

Վաղ առաւօտեան լուացարար կէկէն նկաւ Օվանէսենց տունը, Քեթեանի առողջութիւնը հարցրեց, ուրախացաւ, որ հիւանդն այն դիչեր հանգիստ էր քնած, և Մարիամին ասաց, որ դայ բաղնիքները լուացք տանէ։

—Էս ահաթին կը գամ, թող կրակը վառեմ, տունը աւելեմ, կը գամ, պատասխանեց Մարիամը, ըշտապելով իրեանց տնակի առաւօտեան հոգսերը հոգալու։

Գնալով կէկէլի տունն օրիորդը տեսաւ, որ Նիկօլը դեռ նոր իւր զանրիւղն առած փողոց էր գնում։ Տեսնելով Մարիամին պատանին լուռթեամբ ակնարկեց իւր զանրիւղի վերա, կամենալով դորանով յիշեցնել գիչերուայ անցքը։ Բայց Մարիամն ոչինչ չը պատասխանեց նորան, տեսնելով որ պատանու մայրն այնտեղ կանգնած էր։

Նիկօլը հեռացաւ։ Կէս ժամից յետոյ Մարիամը

չալակեց մի մեծ կապոց լուացք և սկսաւ դիմել դէպի բաղնիքների կողմը։

Սանդրօն նոյնպէս վաղուց պատրաստուել, ուղում էր իւր վարպետի խանութը գնալ։ Նորան մնացել էր միայն իւր կօշիկների հոգսը. նա մտածումէր, թէ ինչ հնարք բանեցնէ, որ մատները նոցա ծակերից դուրս չը պրծնեն։ Մանաւանդ որ մի ոտքը վիրաւորուած էր։

—Ա՛խ, երբ պիտի պրծնեմ էդ մունդրէկներից . . . ասումէր նա դառն կերպով հոգոց հանելով։

Մինչ խեղճ Սանդրօն այդ մտատանջութեան մէջ էր, խրճթի դուռը զարկեցին։—Քեթեան, Քեթեան, լսելի եղաւ մի խռպոտ ձայն։

—Ա՛խ, էլի ևկաւ . . . ասաց հիւանդը վշտալի ձայնով։

Սանդրօն դուռը բաց արաւ, յայտնուեցաւ մի միջահասակ մարդ նեղ և խորամանկ աչքերով։ Նորա դոչշ—պղնձագոյն դէմքը կրումէր իւր վերա թափառական ցիգանի բոլոր վայրենի դծագրութիւնքը։ Եւ իրաւ, այդ պարոնը կոչվումէր՝ Բօչայ—Կարապետ։

—Փողերը հաղրեցիր, դարձաւ նա դէպի հիւանդը։

—Ախար, ո՞ր տեղից հաղրեմ, Կարապետ աղայ, քո հոգուն մատաղ, պատասխանեց Քեթեանն հղորմելի ձայնով։

—Օրհնած, էդպէս չի ըլի, է, մի առանձին դրժոհական եղանակով խօսեց Բօչան.—պլուխքը չես կարացի տալ, չահն էլա տուր . . .

—Ախար, ո՞ր տեղից տամ, Կարապետ աղայ, դու

179-2003 (1740)

չեմ տեսնում իմ հալը . . . ես հիւանդ, անտէր ընկած եմ . . . երեխաներքս չատ դիշեր քաղցած են քնում . . .

Այդ խօսքերն այնպիսի մի դառն կերպով արտասանեց Քեթեւանը, որ մի պրտա, եթէ քարից լինէր նա, դարձեալ կը փափկէր։ Բայց Բօշայի համար դրա սովորական բառեր էին, որպիսիք նա յաճախ լսել էր իւր պարտականներից։

—Տէս, ես քեզ ասում եմ, Քեթեւան, թէ որ մինչև էս շաբթի վերջը չը տաս, դանգատ կանեմ. ասաց նա սպառնալով։

—Աստծուն բաւիէ . . . քո որդիքներուն բաւիէ . . . աղաչումէր հիւանդն ողորմելի ձայնով։

Բայց Բօշայի համար անբախտի լացն և այրիկի արտասուքն ոչինչ նշանակութիւն չունէին։ Նա ինքն իրան բարկանալով խօսում էր՝—էդպէս էլ օլին կումի . . . նաղդ փող տաս, ու չը կարենաս առնել . . .

Եւ նորա սատանայական աչքերը լի չարամտութեամբ պատում էին մերկ խրճթի չորեքկողմը, կարծես, մի բան որոնելու նպատակով։ Նա տեսաւ անկիւնում կծկուած հաւերն, աղուէսի արագութեամբ յարձակուեցաւ նոցա վերա և բռնեց մի վառեակ և մի մանուկ աքաղաղիկ։

—Դրանք էլա տանեմ, ասաց նա դժոխային ուրախութեամբ։

Սանդրօն, տեսնելով այդ յափշտակութիւնը, վրա պրծաւ, բռնեց Բօշայի վէշից.—Աղայ Ջան, աղայ Ջան, ուր ես տանում, էդ մինն իմ «խուճուճիան վաւսն էր»

Այդպէս էր կոչում պատանեակն իւր նախնուն աքաղաղին։

—Դէն կորի, գոռաց անգութ վաչխատուն,—ա՛յ, ես քեզ նշանց կը տամ «խուճուճիան մամալը . . .» Եւ նա սպառնացաւ աղային իւր սարսափելի ապտակը։

Սանդրօն, մի այնպիսի ապտակ մի օր առաջ ի-մերէլից կրած լինելով, զարհուրելով յետ քաշուեց, թողելով վաչխատուի փէշը։ Իսկ անպաշտպան պատանեկին օգնութեան հասաւ նորա միակ մտերիմը՝—փոքրիկ Ցուցան։ Նա տախտի տակից դուրս պրծաւ և իւր սուր ատամներով ձիգ ընկաւ Բօշայի փէշից։ Բայց վաչխատուն իւր ձեռքի ահագին մահակով մի այնպիսի սաստիկ հարուած տուեց Ցուցայի գլխին, որ խեղճ չնիկն իսկոյն թաց թողեց նորա փէշը, և նորա տխուր կծկծոցը խառնուեցաւ Սանդրօի լաց ու սուգին . . .

Վաչխատուն տարաւ իւր կողոպուտը։

Սանդրօի տխրութեանը չափ չը կար, նա շատ ծրտումէր իւր նախնուն աքաղաղին։ Հիւանդը, տեսնելով որդու արտասուքն, անդադար կրկնումէր՝—Ա՛խ, էն անիծուած էձը . . . էդ քնչ կրակի մէջ քցեց մեզ . . .

Այդ խօսքերի մէջ, որ հիւանդն արտասանեց այնպիսի դառնութեամբ, կար մի սարսափելի դէպք, որ գլխաւորապէս պատճառ եղաւ նոցա անբախտութեանը։ Ամուսնի մահից յետոյ Քեթեւանը պարտք առաւ Բօշայ կարապետից տասն րուբլ փող, ամեն մի ամիսը մէկ րուբլի տոկոս հաշուելով, տասն ու վեց

բուբլու պարտամուրհակ տուեց վեց ամիս ժամանակով։ Այդ փողերով Քեթևանը դնեց մի այծ, որ իր երեխերքը կերակրվէին նորա կաթնով։ Բայց անդուր բախտը պէտք է հասցնէր նորանց իր վերջին հարուածքը,—այծն երկու ամսից յետոյ մեռաւ։ Այնուհետև նոքա դարձան Բօշայի ստրուկը։ Ամեն մի վեցամսեակին Բօշան պարտամուրհակը փոխում էր, տոկոսը տոկոսի վերա բազմապատկելով։ Անցան մի քանի տարիներ։ Քեթևանն իր տան եղած—չեղածն ծախել՝ նորան էր տուել, բայց տակաւին յիսուն բուբլ պարտական էր։ Ամեն անգամ կը դար Բօշան՝ ինչ որ ձեռքն ընկնէր կը տանէր՝—հաւ, ձու, եղ և այլն։ Բացի դոցանից նա իր տան լուացքը նորանց էր լուանալ տալիս և ոչինչ չէր վճարում։ Շատ անգամ Մարիամը կար էր կարում նոցա համար և փող չէր առնում։ Այդ բոլորը նորա համար էր միայն, որ Բօշան համբերի և դատարանին գանգատ չանի։ Իսկ համբերութիւնը Բօշայի միակ նպատակն էր, որովհետև օր ըստ օրէ նորա պարտամուրհակի թուանշանները աւելի խոշոր ձև էին առնում . . .

Ե.

Երեկոյ էր։ Արևը խոնարհումէր դէպի իր գիշերային մուտքը։ Ցուրտը սկսել էր սաստկանալ։ Փողոցների քարուղիները սառել էին արդէն, երբ Մարիամը, լուացքի ծանր կապոցը գլխին դրած, յետ էր դառնում բաղնիքներից։ Նորա հագուստի թրջուած թևքերը և բէշքերը սառել, տախտակի նման էին դարձել։ Եւ սպիտակ դէմքը ցրտի սաստկութիւնից ստացել էր մոյգ—կարմիր գոյն, իսկ ամբողջ օրը լուացքի մէջ տրորուած ձեռքերը բոլորովին լրջացել էին։ Նա յետ էր դառնում մի խումբ աղջիկների հետ, որոց ամեն մինը բերումէր գլխի վերա իր լուացքի կապոցը։

Նոյն ժամուն մի պառաւ կին, ոտքից ցգլուխ սև հագնուած, ծածկուած սպիտակ չարշաւով, հետևում էր այդ ուրախ խմբին, որը՝ քչփչալով, խօսելով և ծիծաղելով տուն էին դառնում։ Աղջիկները բոլորը համարեա թէ խեղճ ընտանիքների զաւակներ էին, որպէս Մարիամը։ Նոքա օրեկան վարձով աշխատում էին լուացարարների համար։ Պառաւն աչքը չէր հեռացնում նոցա խմբից, կարծես թէ մի բան պըռռումէր։ «Էդ մինն ամենից լաւն է . . .» ասաց նա իր մտքի մէջ և աւելի մօտեցաւ Մարիամին։

Երբ աղջիկները դուրս եկան քաղաքից, մտան մի խուլ փողոց, Մարիամը բաւականին յետ մնաց իր խումբից։

—Ո՞ւմ աղջիկն ես, հարցրուց նորանից պառաւը հաղիւ լսելի ձայնով։

—Խարազ—Օվանէսի աղջիկը։

—Հէրդ կենդա՞նի է։

—Չէ, մեռած է։

—Ապա ո՞վ ունես։

—Մէր ու մի պստիկ աղբէր։

—Ո՞նմն է էդ լուացքը։

—Մեր հարևանին։

—Ի՞նչու ես դու լուանում,

—Նա ինձ փող է տալիս,

—Բայց մէրդ աղքատ է,

—Նա հիւանդ է,

Պառաւի նեղնգաւոր դէմքի վերայ վազեց ուրախութեան մի նշոյլ, կարծես նա մօտենումէր իր նպատակին,

—Ո՞րտեղ էք կենում, շարունակեց նա իր հարցմունքը,

—Ջհուտների գերեզմանատան մօտ,

—Ասեղիր խարազ—Օվանէսի աղջիկն ես, հա,

—Հա,

—Անունդ ինչ է,

Մարիամը ձանձրացաւ այդ բոլոր հարցմունքներէն, փոխանակ ուղղակի պատասխանելու, ասաց՝—Ի՞նչ պէտք է քեզ իմ անունը,

—Էնպէս հարցնումեմ, որդի, քո հէրն իմ լաւ բարեկամս էր, հողին լուս դառնայ, ինչ լաւ մարդ էր հէրդ, Եւ պառաւն իր դէմքն այնպէս ձևացրուց, որպէս թէ օրիորդի հօր յիշատակը սաստիկ ցաւեցրուց նորան,

—Անունս Մարիամէ, պատասխանեց օրիորդը,

Պառաւը հեռացաւ, թէև նորա վերջին խօսքերը բաւականին ճմլեցին օրիորդի սիրտը, այսուամենայնիւ նա խիստ անախորժ տպաւորութիւն թողեց Մարիամի վերա, որ երևակայումէր, թէ դևռ իր աչքի առջևն է նորա սև սատանայի պէս պատկերը,

Մարիամի ընկերուհիքը յետզհետէ բաժանուեցան,

մանելով դանազան փողոցներ, նորա հետ մնացին մի քանիսն, որք իր թաղեցիքն էին,

—Էդ կնիկն, որ քեզ հետ խօսումէր, Մաշօ, շատ անգամ գալիս է բաղնիքները, ուր մենք լուացք ենք անում, ասաց աղջիկներից մինը,

—Միանգամ ես նրան տեսայ Գ...ի կտաւի ֆաբրիկումը, ուր շատ աղջիկների հետ մենք բանում էինք, ասաց միւսը,

—Նա էնպէս գալիս է միշտ խօսեցնումէ, աղջիկներին, մարդ չէ իմանում, ինչ է ուզում, մէջ մտաւ երրորդը,

—Է՛հ, հողեմ նրա գլուխը, ասաց մի այլը,

—Սև սատանայ է, վերա բերեց հինգերորդը,

Այդպէս նոքա խօսումէին, երբ հասան հրէից գերեզմանատանը և ամեն մինը բաժանուեցաւ դէպի մի կողմ, Բոլորովին մթնել էր, երբ Մարիամը մբռաւ կէկէլի տունը, նա համբարեց լուացքը յանձնեց նորան,

—Շատ ապրես, ոչինչ պակաս չէ, ասաց նորան կէկէլը,

—Նատօն միշտ գողանալ էր տալիս, խօսեց Մարիամը,

—Սատկի Նատօն, կրկնեց կէկէլը, միտ բերելով իր առաջին լուացարար աղջկայ յիմարութիւնները,

Մարիամը, մտնելով իւրեանց խրճիթը, գտաւ նորան բոլորովին անմխիթար դրութեան մէջ, Մայրը դեռ սաստիկ վրդովմունքի մէջ էր Բօչայի պատճառաւ, Սանդրօի աչքերն ուռել էին շատ լացելէն, Յուզան

որպէս երեւումէր, իւր սրտի անախորժ տրամադրութեան մէջն էր, որովհետեւ նա իւր սովորութեան յարմար այս պիղծը չը դիմաւորեց իւր աղջիկ պարոնին, և ոչ նորա շուրջը ցատկելով պաչպչեց Մարիամի հագուստի փէշքերը։ Հաւերը կարծես նոյնպէս տխուր էին, որ նոցա ընկերներից երկուսը պակսել էր։ Իսկ սենեակը սառն էր, որպէս գերեզման։

Սանդրոն պատմեց քրոջը Բօշայի անցքը։

—Ա՛խ, Կրողը տանէ նրան . . . ասաց Մարիամը արբելով արտասուքը։

Օրիորդի առաջին հոգսն եղաւ տաքացնել խրճիթը։ Դժբախտաբար նոցա մի օր առաջ կտրած փայտը սպառուել էր։ Նորից կտրելու ուժ չը կար օրիորդի վերա, որովհետեւ նա շատ յոգնած էր։ Սանդրոից մի բան խնդրել անկարելի էր, որովհետեւ նա դեռ ողբումէր իւր աքաղաղի կորուստը։ Ինչ պէտք էր անել։ Քամին կրկին սկսել էր չվչվացնել, երեւումէր, որ դարձեալ մրրիկ պէտք է լինի։ Օրիորդը դուրս եկաւ խրճիթից և դուռ Նիկոլին։

—Նիկոլ ջան, խնդրեց նորան, էդ կերանից մի կտոր կտրէ, վառելու վէտ չունենք։

Պատանին, տեսնելով այդ դործողութիւնն երկար կը տեւէ, ասաց՝—Ես վէտ կը բերեմ։

—Դէ, շուտ բեր, քո հոգուն մատաղ։

—Ցնա, ես էլ պիտի նստեմ կրակի մօտ ու մտիկ տամ քո երեսին, երբ դու կը կարմրես . . .

—Հանաքի վախտ է, Նիկոլ։

—Դու աւելի սիրուն ես լինում, երբ կրակի մօտն ես նստում։

—Էրնէկ քո գլուխ գլխին . . .

Օրիորդի համբերութիւնը հատաւ, ուզումէր գնալ Օսէփի տնից բերել սրղոյը, որ ինքը փայտ պատրաստէ։ Բայց Նիկոլն արգելեց նորան։

—Դէ լաւ, հիմայ խելօք կը խօսամ, ասաց նա, և ձեռքով հեզիկ չփելով Մարիամի թշին, վազեց դէպի իւրեանց տունը, որ փայտ բերէ։

Քառորդ ժամից յետոյ վառարանի մէջ կրակն արդէն պատրաստ էր։

Զ.

Ծննդեան ցրտերը վաղուց անցել էին։ Մարտը բերեց իւր հետ խոնաւ և անձրեւային օրեր։ Եղանակը մշտ թխպոտ էր և արեգակը հազիւ երեւումէր։

Քեթեւանի հիւանդութիւնը տակաւին նոյն դրութեան մէջն էր. նորա կենտանական ուժերն օրըստօրէ սպառվում էին։ Մի ցաւալի անցք աւելի մեծ հարուածք տուեց նորա առողջութեանը։ Բօշան դատարանին դանդատուել էր, վճռել էին, որ Օհանէսի խրճիթը ծախուի հրապարակական աճրդով։

—Խեղճ երեխերքս որտեղ պահեմ . . . ախ քաչալով ասումէր անդադար հիւանդը։

Մինչ Քեթեւանն իւր ցաւերի այդ հոգեվարք դրութեան մէջն էր, մի առաւօտ նորա մօտ եկաւ մի կարճլիկ պառաւ թուխ և ցամաք դէմքով, փոքրիկ և խորամանկ աչքերով։ Նա երկար նստած խօսումէր Քեթեւանի հետ։ Մարիամը տանը չէր, նա կէկէլի մօտ դրաղուած էր լուացքով։

—Էլ Աստուծից ինչ ես ուզում . . . յաւաչ տարաւ

պառաւը.—դու էդպէս հիւանդ ես, առնդ ծախում են, աւտելու հաց չունես, հիմայ մի էդպէսի մարդ, որ մեր քաղաքի ամենից հարուստն է, ուզում քիզ օպտուբիւն անել, դու ինչու չես ընդունում . . . էդ էլ խելք է . . .

Քեթևանն ոչինչ չը պատասխանեց։

—Տես, Քեթևան, չարունակեց պառաւը, երիու հարիւր մանէթ էս պ[illegible]խեմէն տալիս է . . . լաւ հագցնում է . . . ասում է, թէ յետոյ իմ փողով մի լաւ մարդու կը տամ . . . էլ Աստուծից ինչ ես ուզում . . .

—Ա՛խ, ես ինչպէս իմ ձեռքով երեխէս սաղ սաղ գերեզմանը գնեմ . . . պատասխանեց հիւանդն արտասւելով։

—Հիմայ մեր քաղքում ոնց չէ անում էդ բանը . . . պատասխանեց պառաւն աւելի գործագէտ մարդի եղանակով։—Նրանք որ ուտելու էլ ունեն, խմելու էլ ունեն, էդ բանն էլի անում են . . . դո՛ւ ինչու չը պիտի անես . . .

—Ա՛խ, Աստուած, էդ ինչ եմ լսում . . . ձայն տրձակեց Քեթևանը հառաչելով։

—Տես, Քեթևան, ասում եմ քեզ, յետոյ կը փոշմանես . . .

—Թէ որ հազար թուման էլ տայ, չեմ կարայ էդ բանն անել . . . պատասխանեց Քեթևանը վճռական կերպով։

Մինչ նորա այդ խօսակցութեան մէջ էին, խրճիթ դրները բացուեցան, ներս մտաւ Բօշան, նորա հետ պրիստաւը, և մի տանտանպետ։ Հիւանդը սարսափեցաւ։

Պրիստաւը, մի սուր հայացք ձգելով աղքատ խըրճթի վերա, դարձաւ դէպի պարտատէրը,—Դէ, պարոն, ինչ էք կամենում, որ ես գրեմ։

—Ինչ որ տեսնում ես, ամենը գրէ, էլի, պատասխանեց Բօշան դիւական սառնասրտութեամբ։—Էդ կողէնքը գրէ, որի մէջ հիւանդը պառկած է, էդ տախտը գրէ, էդ հաւերը գրէ, էն պղտիկ պղինձը գրէ, էդ աւելը, էդ չաքմէքը գրէ . . .

Չաքմէքի ձայնը լսածին պէս Սանդրօի աչքերը վառուեցան։ Դոքա նորա չաքմէքն էին, պատանու նշանաւոր կօչիկները, որոց պատմութիւնը մեր ընթերցողին յայտնի է։ Այն օրուայ ցեխի պատճառաւ, Սանդրօն չը կարողացաւ նոցանով դուրս գնալ, է նկատի ունենալով նոցա ծակերը, այդ պատճառաւ ձըգել էր նորանց տախտի վերա։

—Ի՞նչու էք գրում իմ չաքմէքը, հարցրուց նա աչքերը լայն բացելով։

—Ինչու,—փող չաժէ, խօսեց նորան Բօշան։

—Հալբաթտայ աժէ, երէկ կինտօները մի գրվանքայ ինձոր էին տալիս, ես չը տուի չաքմէքս։

—Պարոն, դուք ինչու էք վիճում երեխայի հետ, նոցա խօսքը կտրեց պրիստաւը պաշտօնական ձևով,—օրէնքով չէ կարելի գրել այն բաներն, որք բնակիչներին անհրաժեշտ պէտք են։

Բօշան սկսեց ինքն իրան բարկանալ։

—Էդ էլ բան է, էդ էլ օրէնք է . . . փող տաս ու նրա փոխանակ էդպէսի պլոթ—պլոթել տանես, ջն էլ չը թողնեն . . .

Քեթևանը պրիստաւին տեսածին պէս չփոթուեցաւ, նա չէր իմանում, թէ ինչ էր գործվում իր տան մէջ։ Մարիամը միայն կանգնած դրան յետքում լաց էր լինում։ Իսկ Սանդրօն, չաքմէքը ձեռին պինդ բռնած, կանգնել էր, նոցա օրհասին էր սպասում։

Պրիստաւը, տեսնելով անբախտների այդ ցաւալի դրութիւնը, և մանաւանդ ճանաչելով Բօշային, թէ ինչ ծառի պտուղ էր նա, խղճաց, և սկսաւ խնդրել պարտատիրոջը, որ դադարէ տան կայքը գրել տալուց։—Կարծեմ, աւելի լաւ կը լինի, որ դուք թողնէք չարժական կայքերը և բաւականանաք անշարժ կայքով, որովհետև իրճիմին իմ կարծիքով կը լրացնէ ձեր պահանջը։

—Էդ քանդուած քօխան երկու հարիւր մանէթի կը դուրս բերէ, կտրեց Բօշան պրիստաւի խօսքը.—ջհուդները տասը թումնից աւելի չեն տալիս, որ խառնեն իրանց գերեզմանատանը։

Երկու հարիւր մանէթի անունը լսածին պէս Մարիամը մէջ մտաւ.—Ի՞նչ էրկու հարիւր մանէթ, մէրս ասումէր, որ իսուն մանէթից աւելի քեզ պարտական չէ. գնա, դու Աստուած չունես . . .

—Քու դէղին շատ բան կասէ, բայց էս իսպօլնիտելստը տեհնումենա . . .

Եւ իրաւ, Բօշան ցոյց տուեց երկու հարիւր մանէթի իսպօլնիտելնի փաստ։

—Դուք դարձնել սկսեցիք երեխայոց հետ վիճել, դարձաւ պրիստաւը դէպի Բօշան։

—Ախար ի՞նչ անեմ, աղբէր, սիրտս տրաքեցնում

ևն . . . պատասխանեց Բօշան ձևացնելով խիստ անմեղ կերպարանք։

Մարիամի նկատողութիւնը բոլորովին ուղիղ էր։ Քեթևանը յիսուն մանէթից աւելի պարտական չէր Բօշային, այն ևս մենք պիտենք, թէ որպէս կազմուել էր այդ սարսափելի գումարը . . . Բայց միամիտ Քեթևանն արել էր մի մեծ սխալ, որ ամեն անգամ հին պարտաւորհանները փոխելու և նորը տալու ժամանակ՝ միշտ հները թողել էր Բօշայի մօտ . . . Միամիտներին այդպէս խաբելը Բօշայի սրբազան սովորութիւններից մինն էր . . .

Պրիստաւը տեսնելով, որ Բօշային հաւոզելու հնարք չը կայ, դրեց բոլոր այն կահ—կարասիքը, որոնք օրէնքով թոյլ էր տուած արեստի տակ դնել, և Քեթևանի անակէն դուրս բերելով այդ բանները, յանձնեց նոցա դրացի Աէկէլին պահելու համար, մինչև ճուրդ նշանակուի։ Բայց Սանդրօի կօչիկները բարեբախտաբար ղերծ մնացին հրապարակական ծախսի նիւթ դառնալէն։

Է։

Անծանօթ պատանն, որ բոլոր ժամանակը ներկայ էր այդ դրամատիկական հանդէսին, պրիստաւի գնալէն յետոյ, ինքն էլ հեռացաւ։ Մարիամը ճանաչեց նորան։—Դա այն կինն էր, որ քանի չաթաթ առաջ օրիորդի հետ խօսել էր բաղնիքների ճանապարհին . . .

Բօշայի և պրիստաւի երևոյթն որքան ցաւալի ներգործութիւն ունեցաւ խեղճ Քեթևանի անակի վերա, այնքան ուրախութիւն պղղեց պատանի սրտին։ «Դը-

բանից յետոյ կընդունեմ իմ ասածը, Ռեթևան . . . , » մտածումէր նա, չարունակելով իւր ճանապարհը։

Երկար այնպէս գնումէր նա, մինչև անցաւ մի մեծ փողոցից, որոյ մէկ ծայրում չինվումէր հոյակապ տուն։ Պարոն Ռ . . .—կարճլիկ, ուռած մարդը, փաթաթուած բաթոլի և սամուրի մէջ,—կանգնած էր այն տեղ։ Նա զանազան պատուէրներ էր տալիս վարպետներին և գործաւորներին, որք չինումէին այդ տունը։ Նա մի ձեռ֊ում բռնած ունէր բաղդադի աղլուխ, որով ամէպ ամէպ սրբումէր իւր քինքը, միւս ձեռքում՝ կրումէր մի գաւազան, որոյ գլխին ամրացուցած էր երկաթեայ սրածայր մասրջ, կարծես, այդ նորա հա-, մար էր, որ այն մուրջով ծակէ ամէն մինի գլուխն որք կը համարձակվէին նորան որ և իցէ ընդդիմու-թիւն գործել։ Բայց ամէն անցնողը նորան գլուխ էր տալիս, բարևումէր, ամենքը նորա առջև թեքվում էին, երևի թէ այդ մարդի մէջ կար մի բան, որ երկ-պագելի էր,—այո, նա հարուստ էր . . .

Վերջացնելով իւր խօսակցութիւնը, հարուստն ի-ջաւ մեծ գետի ափը, այնտեղ մի ընդարձակ աւա-զուտ գետին նոյնպէս պատկանումէր նորան։ Պ. Ռ . . . իւր մտքի մէջ գծումէր զանազան ծրագրներ, այնտեղ ևս մի բան չինել տալու։

Պառաւը, տեսնելով նա միայնակ է, մօտեցաւ։

—Հըմ, Կատո, տեսար. եղաւ հարստի առաջին խօսքը։

—Էս բոպէիս էնտեղից եմ գալիս, ասաց Կատոն։ Այդպէս էր պառաւի անունը։

—Ի՞նչ չինեցիր։

—Շատ ասեցի, չատ խօսեցի, բայց գլուխ չէ գա-լիս . . .

—Ասացիր, որ հարիւր մանէթ եմ տալիս։

—Ես իմ կողմից մէկ հարիւր էլ աւելցրի, չատ ու-րիշ բաներ էլ խօստացայ . . . էլի բաղի չը կացաւ . . .

Պ. Ռ . . . վրդովուեցաւ, առաջին անգամն էր, որ նա նկատեց արծաթի անզօրութիւնը։ Նորա կարծի-քով արծաթն ունէր իւր մէջ այնպիսի մի ուժ, որով բոլոր տիեզերքը մարդ կարող էր իւր ուզածին պէս պատյտ տալ։

—Դու աղջկան տեսար, չարունակեց նա իւր հարց-մունքը։

—Տեսայ, բայց աղջիկը ջէր երևիայ է, ոչինչ չէ հասկանում։

—Նրան աւելի չուտ կարելի է խաբել . . .

—Նա էնպէսներից չէ . . .

—Ուրեմն գլուխ գալու բան չէ . . . հարցրուց պա-րոն Ռ . . . յուսահատ կերպով։

Կատոն չուզեց նորան բացասական պատասխան տալ, միայն մանրամասնաբար պատմեց Բօշայի և պրիստաւի անցքը։ Պարոն Ռ . . . ի երեսի վերա չո-զաց վայրենի ուրախութեան լոյսը և նա մի առան-ձին հրճուանօք խօսեց՝

—Կատո, քո արևը գիտենայ, էդ լաւ է էլի, չատ լաւ է էլի . . . հիմայ բանը գլուխ կը գայ . . . դու մէկ-կէլ գնա, երկու անգամէլ գնա, մինչև սարքես . . . Էդ քո փէշաքն է, գիտես էլի, քեզ խօմ իրաւ տալ

չի ըլի . . . Ջո պատիւն էլ խօսմ ես չեմ մոռնայ, երկու թուման էլ քեզ եմ տալիս, տես, էս պլխէմէն։

Եւ նա հանեց իւր թղթապահի միջից երկու կարմիր տասն մանէթնոց տուեց պառաւին։ Բայց Կառօն, ճանաչելով Քեթեանի երկաթի բնաւորութիւնը, բոլորովին վստահութիւն չունէր դէպի իւր նպատակի յաջողութիւնն, այդ պատճառաւ նա հարցրուց պարոն Ջ . . . ից.

—Հէնց էն աղջիկը պիտի ըլի։

—Հէնց էն . . . մի անգամ տեսայ լուացք էր տանում, խելքս գնաց . . .

—Թող մի ուրիշը ճարեմ։

—Չէ, հէնց էն . . .

—Մէ քիչ դժար է։

Պարոն Ջ . . . բարկացաւ,—ինչ ես սարսաղ խօսում։

Կառօն ոչինչ չը պատասխանեց, միայն խոստացաւ, որ նրա կամքը կը կատարէ։

Վերջացնելով իւր խօսակցութիւնը կուսանենդը սկսաց գնալ դէպի իւր տունը։ Նորա յետքից բերում էին իւր կառքը։ Նա անցաւ մի օտարազգի ժամատան դրնից, որոյ մօտ դրած էր փոքրիկ Աստուածածնայ պատկեր։ Նա կանգնեց, դադրը առաւ, և երեսը խաչակնքելով՝ երկար աղօթումէր նորա առջև։ Ճանապարհից անցնողները չերմեռանդութեամբ խօսումէին նորա վերա. «Ինչ բարեպաշտ մարդ է,» ասումէին ամենքը։

Ճանապարհին մօտ եկան նորան քանի մարդիք, որոց մինն ասաց՝

—Աղայ Ջան, մի մեռած մնեցու համար փող ենք հաւաքում, որ թաղենք, մի քանի կօպէկ չնորհեցէք։

Պարոն Ջ . . . ձեռքը տարաւ դրպանը, նայեց, ասելով՝

—Ատառած վկայ է, որ հետս փող չունեմ, թէ չէ կը տայի. խեղճ մնեցի, Ատառած ողորմի իր հոգուն։

Մարդիքը հեռացան, բայց նոյն րոպէին նորա դրպանը լի էր արծաթով։ Նա նստեց կառքը, չիցէ թէ կրկին այդպիսի մարդերին հանդիպէ։ Քանի րոպէից յետոյ նա հասաւ իւր տունը, այնտեղ, ուր ձնծուել էր Սանդրօն։ Դրնները բացուեցան։ Նա անցաւ փառաւոր սրահակների միջից, որոց յատակը պատած էր կարմիր մահուդով։ Ալ ու ձախ չարուած լինէին, նարինջի ծառերը, հազուադիւտ ծաղիկները՝ տալիս էին այդ սրահակներին մչտականաչ ճեմելիքների ձև։ Եւ երբ, տարուայ այն եղանակին այնտեղ թագաւորում էր գարունքը։

«Աղան եկաւ . . . »—սարսափելի մի լուր, որ հեռագրական արագութեամբ մի րոպէում չքեղազարդ դահլճներից հասաւ մինչև խոհանոցի ծառաներին և ախոռատան վերջին սպասաւորին։ Ամեն տեղ տիրեց դիւրնդհանական լռութիւն։ «Աղայի» երեսին ունէր իւր մէջ այնպիսի մի մեծ զօրութիւն, որ խեղդումէր, փշրումէր և ճնշումէր ամեն մի կենդանութիւն ունեցող ուժը։

Նա անցաւ դահլիճը. Խորասանի ամենաթանգագին խալիները ծածկումէին այդ փառաւոր բնակարանի յատակը. Քիշմիրի ամենագեղեցիկ շալերը կազմում

Ը.

Մենարանը, որ կացուցանումէր պ. Ք...ի առանձնասենեակը, հանդիսացնումէր իր մէջ հարուստ գնումիւնների մի մեծ հաւաքածու։ Պարսկաստանից, Չաճկաստանից և Հնդկաստանից կային այնտեղ բոլոր այն բաները, որք կարող էին գրգռել զարմացք և հետաքրքրութիւն։

Այդ պարոնն ինքը, ոչ միայն հնագէտ չէր, այլ մի առանձին սէր չունէր դէպի հնումիւնները։ Բայց ինչ նպատակով կազմել էր մի այդպիսի փառաւոր մուզէում։

Պ. Ք...ձեռքերը քամակը դարսած անցուդարձ էր անում իր մենարանի մէջ, երբ անհետաքրքրական ծառաներից մինը ծանուցում արաւ, թէ գեներալ Ն...գալիս է։ Այդ լուրը յայտնի կերպով ուրախութիւն պատճառեց նորան, որովհետև խնդրոյ նշանաբանեցաւ նորա դէմքի վերայ գոհունակութեան նշոյլներ։ «Լաւ էլաւ...» ասաց նա իր մտքի մէջ և վազից դէպի դուռը։ Նա գուցե իր հիւրին երբ նոր ներս էր մտնում տան դրնից։ Նա հազարումէկ փաղաքշական խօսքերով դիմաւորից «հորին պայծառափայլութեանը», նորա խօսքերի մէջ արտայայտումէին կեղծ—բարեկամական շողոքորթութիւններ և մինչև անգամ ստորաքարշ—տրիական խոնարհութիւն։ Պարոնը շատ թեթուն էր և առաձգական, երբ հարկաւոր էր մինին գրաւել...

Նա մնաւ իր այցելուի թեքերու տակ, վեր բարձրացրուց սանդուխաներից և առաջնորդից մինչև իր մենարանը։

էին նորա վարագոյրները։ Շռայլութիւնը թագաւորումէր այնտեղ իր բոլոր ճոխութեամբ։ Մետաղների ազնիւ տեսակները՝—ոսկի, արծաթ, պղինձ, և հանքերի հարստութիւնքը՝—ֆարֆօր, բիւրեղ, և թանգագին փայտերը՝ ներկայացնումէին արհեստի և ճարտարութեան գեղեցիկ արդիւնքներ, որք կացուցանումէին նորա կահ—կարասիքը։ Պատերի վերա ոսկի չրջանակներից նայումէին պատկերներ,—գեղարուեստի ընտիր գործ։ Այդ տեսարանը հիանալի էր. նոցա մէջտեղ մի անկիւնում նկարւումէր մի այլ պատկեր. նորա մաշուած և տխուր դէմքը, սառն որպէս մարմարիոն, ներկայացնումէր վաղուց թառամած՝ գեղեցկութեան արձանը... Շիջած աչերի մէջ գեռ պղպջումէին վաստահար սրտի և յուսահատութեան կայծերը...։ Նորա դունատ շրթունքը չարժուեցան... չարագուշակ հազը դուրս պրծաւ մաշուած կուրծքից...։—Դա կենդանի մարմին էր։

Ցեռնելով «աղայի» գալուստը, նա չարժուեցաւ իր տեղից և նորա դէմքը ընդունեց իբրև երկչոտ և յաւակցական արտայայտութիւն։—Այդ թշուառը «աղայի» կինն էր...

«Աղան» մի արհամարհական հայեացք ձգեց նորա վերա և անփոյթ կերպով անցաւ իր մենարանը։

«Ախ, Աստուած... հոգուց հանեց խեղճ կինը և լուաց։

Ցիշողութեան ամպերը կրկին անցան տխրնոջ դէմքի վերա, նա կրկին նստեց իր տեղը և անշարժ մնաց քարէ արձանի նման։

Գևներալը մի մարդ էր բարձր հասակով, մուտ երեսով և խորամանկ—պաշտօնական աչքերով։ Մտաբերեց և խորամանկ—պաշտօնական աչքերով Մտաբերեց ալ. Ֆ...ի մենարանը, նա աչք ածեց իր չոբելոզմը և մի առանձին համակրութեամբ ասաց՝—Այո, գեղեցիկ է...

—Բոլորը փչքրէշ է ձերդ պայծառափայլութեանը, պատասխանեց ալ. Ֆ...ասիական քաղաքավարութեամբ։

Գ. Ն...ժպտաց նորա խօսքի վրա և սկսեց մի առ մի զննել մենարանի հնութիւնները։—Այո, գեղեցիկ է, ճշմարիտ, շատ գեղեցիկ, կրկնեցնելով նա անդադար։

Ալ. Ֆ...սկսեց ցոյց տալ նորան այն բաները, որոց մասին լսելը փոքր ի շատէ տեղեկութիւն ունէր։ Սենեակի մէկ ճակատին պատի վերա մեծաց էր մի ահագին արու առիւծի մորթ, որոյ վերա ամբացուցած էր կովկասեան եղջերուի գլուխն իր երկայն ճիւղաւոր եղջիւրներով, որոնցից կարգաւ քարշ էր տուած հնադարեան զէնքեր՝—պողովատի զրահ, երկաթէ վահան, սաղաւարտ և թևնոցներ, կեռ սուրեան սուր, կապարճ մի նետերով զարդարած սլրամարդի փետուրներով. աղեղ, երկայն նիզակ դամասկոսի եղեղից, գլուխը զարդարած սև փետուրներից հիւսած մեծ փունջով և այլն։

—Դոքա երևելի Նաղիր—Շահի զէնքերն են, ցոյց տուաց ալ. Ֆ....

—Նաղիր—Շահի զէնքերը,—կրկնեց գեներալը զարմանալով,—այդ հաղուագիւտ բան է։

Նա առեց վահանը և սկսեց նորա վերա նայել։—Ի՞նչ են նշանակում այդ ոսկեայ նշանագրները։

—Դոքա ղօրանից առած աղօթքներ են, գեներալ։ զոր չահին պահպանութեան Աշնաւոր հարուածքներէն, իսկ մլուանները՝ կախարդական թիլիսմներ են, դոքա չէին Թողում, որ չար ոգիները մօտենային Թագաւորին։

—Ցնա, ինչ խորամանկ են Պարսիկները...

—Մի և նոյն բաները կան և սաղաւարտի վերա, նայեցէք, գեներալ, ասաց ալ. Ֆ...։ տալով նորան պողովատի սաղաւարտն իր նիզակի նման բիլ գլխով։

—Ուրեմն այդ սաղաւարտն անխոցելի էր պահում նորան։

—Իհարկէ, ձերդ պայծառափայլութիւնը, պատասխանեց ալ. Ֆ...ի անսահմանապաշտութեամբ.—նայեցէք այդ թրին։

—Հրաշալի բան է, ասաց նա սուրն իր արծաթի պատեանից դուրս քաշելով,—այդ ոսկեայ տառերն երևի մի բան նշանակումն։ Ցոյց տուաց նա սրի վերա։

—Այնտեղ Թագաւորի անունն է գրած, ու նորա մեծ յաղթութիւնները։

—Ո՛րքան սպանած կը լինի Նաղիր—Շահն այդ թրով...

Շահի զէնքերից նոքա անցան այլ հնութիւններին։ Մի վագրի մորթու վերա, նոյնպէս եղջերուի գլխից քարշ էին ընկած հնդկական ֆաղիրի գործիքներ։

—Դոքա ինչ հրէշաւոր բաներ են, հարցրուց գեներալը ծիծաղելով։

—Դոքա դէրվիշի պարագայք են՝ ահա նորա դղակը և քամարն արձանագրուած զանազան նշանագրներով. այդ նորա եղբերափողն է. այդ ընծու մորթով ծածկվումէ նա. ահա տապարը և քաշքուլը, վերջինը չինուած է հնդկա—ընկուզից, տեսէք, գիներալ, ինչ սիրուն քանդակներ ունի նա, դոքա բոլորն արարական տառեր են. Ֆրիդոլսի երգերի ամենագեղեցիկ տողերից քանդակած է նորա վերա։

Նոքա գինեցին զանազան ասիական ազգերի երաժշտական գործիքները սկսեալ Թիֆլիսի զուռնայից մինչև Շերազի սանթուրը և տեսան զանազան ասիական ամանեներ և անօթներ, որք մի ժամանակ զարդարումէին մեծ իշխանների սեղանները. երբ նորին պայծառափայլութիւնը յափերով էր իւր հարցասիրութիւնը, նստեց փառաւոր բազկաթոռի վերա, պ. Ֆ...ն դրեց նորա առջև գամանայի Թանգագին սիգարներ, որք լեցրած էին ջայլամի ճուի մէջ, քանդակած գեղեցիկ նկարներով, որ կանգնած էր արծաթի ոտիկների վերա։

—Այդ ևս սիրուն բան է, ասաց գիներալը նայելով սիգարների ամանին.—երևի այդ բոլորը շատ փող արժէ ձեզ։

—Շատ, խիստ շատ... մի առանձին յանգով պատասխանեց պ. Ֆ...

Բայց նա, կամենալով Իշ. Ն...ի ուշադրութիւնը դրաւել իւրեան աւելի կարևոր առարկայի վերա, փոխեց խօսակցութեան ձևը.

—Ձեր պայծառափայլութիւնն երկար կը մնայ մեր քաղաքում։

—Մի ամիս միայն, բայց ես տանջվումեմ կացարանի մասին, ինձ ձանձրացրուց այդ հիւրանոցն, ասումեն այդ քաղաքում նորանից լաւը չը կայ։

—Ողորմութիւն արէք, գիներալ, ինչպէս կարելի է այտեղ հիւրանոցում ապրել. եթէ ձերդ պայծառափայլութիւնը չնորհ կանէ, ես ունեմ գեղեցիկ կահեալ տուն բոլոր սարք ու կարգով։

—Դուք նորան վարձով էք տալիս։

—Ո՛չ. դուք կարող էք այնտեղ բնակուել, որպէս ձեր սեպհական տան մէջ. այնտեղ դուք կը գտանէք ամեն ինչ, որ ձեզ հարկաւոր կը լինի, մինչև անդամ..... վերջին խօսքը պ. Ֆ...մօտ գնաց և ասաց գիներալի ականջին։

—Խա..խա..խա... ողորմութիւն արէք, արձակեց գիներալը խիստ ուրախ ծիծաղ.—այդ ալևոր մարդերին ինչ կը սազէ ձեր ասածը... մեր դարն անցաւ, ես և դուք ալևորներ ենք, մեզ երիտասարդները մտածեն դորա վերա...

—Գիտէք, գիներալ, մենք ունենք հայերէն մի առած, թէ «պառաւ ծին էլ զարի կուտի»։

—Խա..խա..խա... ինչպէս, ինչպէս, մեկել ասէք։

Պ. Ֆ... կրկնեց մի և նոյն առածը։

—Այդ հիանալի խօսք է, կը նշանակէ՝ մենք էլ յետ չը պիտի մնանք անուշ զօրից...

Վերջին զուարճախօսութիւնը պատճառեց Իշ.Ն...ի մէջ մեծ ուրախութիւն, նոքա երկար սրախօսումէին, ծիծաղումէին, մինչև պ. Ֆ... յարմար միջոց գտնե-

լով խօսակցութիւնը դարձրուց իր նպատակներին մօտ առարկաների վերայ։ Նոքա սկսեցին խօսել զանազան բաներից և կապակներից։ Եւ գնեցարէլ արայ նորան մի քանի խոստումնքներ . . .

Իսկ պ. Ֆ . . . մտածումէր իւր պատուելի հիւրին մի բան ընծայել իւր հնութիւններից։ Այդ իսկ նպատակով կազմուած էր այդ թանգագին հաւաքածուն։

—Եթէ ձերդ պայծառափայլութիւնը կը բարեհաճէր ինձ տալի բախտաւորել, ընդունէք, խնդրեմ, իմ հնութիւններից մի բան, որպէս բարեկամական յիշատակ ձեզ հետ Պետերբուրգ տանելու։

—Ողորմութիւն արէք, պատասխանեց գնեցարէլը, հնութիւնների վերա միայն կարելի է նայել և զարմանալ։

—Ես խնդրումեմ . . .

Գնեցարէլը բարեհաճեց ընդունել Եագիր—Շահի դէնքերը։ պ. Ֆ . . . մինչև գետին խոնարհուելով, շնորհակալութիւն յայտնեց և առաջնորդեց իւր պայծառափայլ հիւրին մինչև դուռը։

Երբ պ. Ֆ . . . ,—իւր սրտի ամենագուարճալի տրամադրութեան մէջ, որպէս մի մարդ, որ իւր որսն արդէն ծուղակի մէջն էր քցել,—դառնումէր դէպի իւր մենարանը, սրահակի անկիւնումն երևաց մի երկչոտ կերպարանք, նա իւր դողդոջուն մարմինն երկու քայլ առաջ տարաւ, և պ. Ֆ . . . ին դիմաւորելով ասաց՝

—Աղա Ջան։

—Ի՞նչ է, դուռաց «աղան»։

—Իմ . . . իմ . . . ամսականը . . .

—Սուպռֆնիկը կոտրիցէր, հերիք չէ, ամսական էլ ես ուզում։

—Ատուած է վկայ, աղա Ջան, ես չեմ կոտրել։

—Բաս, սատանան կոտրեց։

—Ես ինչ գիտեմ, աղա Ջան։

—Կորիր։

—Մեր երկերը պէտք է գնամ, քրանի փող չունեմ, Ատուծու խաթրու իմ ամսականը մի կորի։

—Կորիր, ասում եմ քեզ։

Խեղճ պատանին իւր արտասուքով լիքն աչքերը դէպի երկինք բարձրացուց և առաջ մնաց իւր տեղը։

Թ.

Քանի տարի առաջ Կ . . . քաղաքի յետ ընկած վուղոյներից մէնի մէջ պ. Ֆ . . . և իւր եղբայրն ունէին փոքրիկ խանութ. նորա դուռը միշտ բաց էր լինում ոչ միայն հասարակ օրերում, այլ և տօներին, երբ սովորաբար այդ քաղաքի բազարը կոզովումէր։ Խանութպանները նախ գնումէին եկեղեցի, ապա դէպի այգինները դիմելով՝ այնտեղ անճառաւոր էին լինում զանազան զուարճութիւնների։ Չէ կարելի որոշ անուն տալ, թէ ինչ վաճառքների խանութ էր այդ։ Նա նմանումէր մեծ ճանապարհների վերա իջևանի մօտ գտնուած մի գինետան, ուր յաճախորդը կարող է գտանել ամեն բան, ինչ որ նորան պէտք էր։ Այնտեղ կային ասիական գործուածների զանազան տեսակները, որպիսի են՝ կտաւ, չվալ, չիթ, զղաք և

այլեւ Ա. յն տեղ կային՝ սկսեալ ըմպելիքներից, ձկնեղէններից, մինչեւ մամ, լօբի, սոխ, թէյ, շաքար և ճանճերից կեխտոտած կօնֆէտներ, որոնց կաղանդի տօներին միայն մօրերին սիրեկան մանչերը, մի քանի կօպէկ տտանալով, կը գնէին և ուրախ ուրախ վազ կը տային իւրեանց ընկերների նախանձը դրդռելու։

Երկու եղբայրներն այնքան սերտ կերպով կապուած էին իւրեանց խանութին, որ աւագ եղբայրն առաւօտից մինչեւ կէս գիշեր կարծես մեխած էր իւր դախլին։ Իսկ կրտսեր եղբայրն անդադար շարժողութեան մէջ էր, նա կամ ապրանք էր դարսում, կամ նոցա փոշին էր սրբում, կամ խանութի դրան առաջն էր աւելում, ջուր սրսկում, որ հով լինի։

Խանութը գտանվում էր քաղաքի այն թաղումն, որտ բնակիչքը չէին վայելում բախտի առանձին բարիքները, և կարելի է ասել, որ նորա մեծ մասամբ աղքատներ էին։ Չը նայելով դորան նոցա առևտուրը բաւականին լաւ էր գնում, մանաւանդ որ խանութապանները հաւատարմութիւն ունէին դէպի իւրեանց մուշտարիքը և շատ անգամ վաճառքը թողնում էին անվճար։ Իսկ այդ կրեդիտն էժան չէր նստում գնողներին, որովհետև նորանց սարսափելի կերպով ծանրաբեռնում էին, ոչ միայն ապրանքի գների մէջ, այլև տոկոսների մէջ, որ բազմապատկում էին պարտամուրհակ առնելու միջոցին։—Այդ ընդհանուր կանոն է ասիական մանրավաճառութեան մէջ։ Այդ եղանակով իւրեանց գործը վարելու հետևանքն այն եղաւ, որ շատ չը տևեց պ. Ռ...ի դախլը լեցուեցաւ զանազան

պարտամուրհակներով և նոցա թուում աւելցան արծաթի և ոսկու բաներ, որք դրուած էին նոցա մօտ որպէս գրաւներ։ Այդ այն ժամանակն էր, երբ մարդիք նահապետական պարզմտութեամբ մտածում էին, թէ փողի պարտքը մարդու հոգու պարտքն է, եթէ այդ կեանքումը չը վճարուի, միւս կեանքում սատանաները նորա մարմնի մսից կը կտրեն և պարտատէրոջը կը տան։ Նոքա ունենալով մի այդպիսի պարզամիտ, մի և նոյն ժամանակ բարոյականութեան մաքրութիւնը պահպանած, ամբոխի հետ աւելտուր, չատ հաճախ էր պատահում, որ կորուստ ունենային իւրեանց ապառիկների մէջ։

Քանի տարի նոցա առևտուրն այդպէս չարունակուելէն յետոյ, նոքա բաց արին մի նոր խանութ քաղաքի ամենալաւ մասնումը, ուր նոցա ապրանքն թուում այժմ չէր գտանվում չվայ, կտաւ և այլ տոկ կամ կօնֆէտ, այլ ամբողջ խանութը լեցուած էր մանիֆաքտուրիայի ընտիր տեսակներով։—Այդ մի քայլ էր, որով նոքա ոտք դրեցին հարստութեան մի որոշեալ աստիճանի վերա։

Շատ չանցաւ երկու եղբայրներն այնպէս ընդարձակեցին իւրեանց առևտրական շրջանը, որ փոխանակ երկրորդական ձեռքերից գնելու իւրեանց վաճառքը, սկսան ուղղակի յարաբերութիւն ունենալ Մոսկվայի ֆաբրիկանների և նշանաւոր առևտրական տների հետ։ Իւրեանց գործակալութեան մէջ նոքա այնքան ճիշտ էին, որ չուտով ստացան մեծ վարկ, որով գրաւեցին մոսկվացիների համարումը դէպի իւրեանց հա-

րոց համար ռամկօրէն ասումէին՝ «դուրսը՝—քահանայ, ներսը՝—սատանայ։» Եւ իրաւ, այդ մարդն ընտանեկան շրջանից դուրս հեզ էր որպէս գառնուկ, իսկ իւր տան մէջ՝—վայրենի որպէս գազան։

Տիկին Նատալիան—այդպէս էր նորա անունն—այն կնիկներից մինն էր, որոց թէ բարոյական ազնիւ յատկութիւնքն և թէ մարմնական վայելչութիւնքը տալիս էին նորան իրաւունք սիրելի լինել ամենին։ Նորա դէմքը գեղեցիկ էր և դիւրևկան, նա սրտով բարի էր որպէս հրեշտակ։ Ոչ ոք նորանից չէր նեղացած, ամեն ծանօթները սիրում էին և յարգում էին նորան։ Միակ մարդն, որին աւելի էր նա, էր նորա ամուսինն։ Այդ աւելութիւնը սկսվեց այն օրից, քանի նորա ամուսինն աւելի և աւելի բարձրանում էր իւր հաշտութեան աստիճանները, և քանի նորա արծաթն աւելի էր տալիս նորան աւելի իրաւել իւր մելոթիւններին մէջ։ Զարմանալի է, որ Նախախնամութիւնն ըստ մեծի մասին տալիս է այդ բռնակալներին համբերող կանայք։ Իսկ այդ համբերութիւնը իսիստ թանդ արժէ ա. Նատալիային. նորա մարմնական զօրութիւնքն օր ըստ օրէ սպառվումէին և նա զգում էր, որ արագ քայլերով մօտենում է գերեզմանին . . .

Ամուսնի արհամարհական սառնասրտութեամբ նորա մօտից անցնելն, երբ նա նստած էր դահլճի անկիւնում, այնպիսի մի սպանողական տպաւորութիւն գործեց նորա վերա, որ տիկինն այլևս չը կարողացաւ պահել իւրեան և արտասուքն ակամայ կերպով սկսաւ գլորվիլ նորա դունատ թշերի վերա։ Երկար այնպէս

տառապութիւնը։ Այդ աւրից նորանց մեծ գումարների սպրանք գնել անվճար, վեց ամիս, մի տարի, կամ աւելի ժամանակներով։ Զը նայելով որ նորա գործը միշտ յաջողակ էր գնում, յայտնի չէ ինչ հրաշքով նորա մեծամեծ խանութների սպրանքները յանկարծ անհետացան, և նորա դաղարեցրին իւրեանց առևտուրը . . . Մենք չենք ուզում մանել այդ երևոյթի խորն գաղտնիքների մէջ և ոչ նորա պատճառները քննելու նպատակ ունենք, միայն կասենք, որ աւագ եղբայրը պ. Ֆ . . . դիմեց դէպի Մոսկվայ, յայտնեց պարտատէրներին իւրե անց դժբախտութիւնը, և մէկ րոպէս փոխարէն քան կօպէկ վճարելով, ազատեց իւր պարտամուրհակները։ Այդ անց քն եղաւ այնպէս աննկատելի կերպով, որ նորա քաղաքացիքն ոչինչ չը հասկացան, որովհետև այնտեղ նորա պարտքեր չունէին։

Եւ քանի տարի չէ անցկենում, իւր խանութում պղպեղն և օրին կօնֆէտի հետ ծախող մանրավաճառի քաակից մլլիօնների ձայներ են լսվում . . .

Այժմ գառնանք դէպի այն Թշուառ արարածն, որին մենք Թողեցինք դահլճի անկիւնում։ Դա պ. Ֆ . . . ի անբաւատ օրերի մտերիմ ընկերուհին էր, որոյ հետ ամենայն համբերութեամբ տարել էր նա աղքատութեան ծանր լուծը։ Զը նայելով, որ այժմ նա մի քանի երեխաների մայր էր, չը նայելով, որ այժմ նա մի հարուստ տան տիկին էր, այսուամենայնիւ նա իւր ըղձանքների մէջ չէր գտնում ոչինչ երջանկութիւն։ Նորա ամուսինն այն մարդկերից մինն էր, ո-

ատած էր նա այդ խռովութեան մէջ, չկտոյ վեր կացաւ իւր տեղից, կամենումէր դէպի պաղչամէն անցնել, մի փոքր ցրուելու սրտի ամբոխմունքը, երբ սրահակի մէջ հանդիպեց նորան նոյն ծառան, որ պ. Ֆ... յոյ ամսական էր պահանջում։

—Ի՞նչու ես կանգնած, հարցրուց տիկինը։

—Իմ ամսականը... աղջիկ պարոն, աղան չը տուեց։

Այդ խօսքերի միջոցին խեղճ պատանին այնպիսի մի ցաւակցական դէմք ձևացրուց, որ իսկոյն չարժեց տիկնոջ խղճմտանքը։

—Ա՛ռ։ Տուեց տիկինը տասն րուբլիանոց արծաթ։

Երբ ծառան կամենումէր իւր չնորհակալութիւնը յայտնել.—Հեռացիր, Թող չը տեսնեն քեզ, ասաց տիկինն և անցաւ դէպի պաղչամբը։

Ծառան, մի քանի անգամ գլուխ տալով, հեռացաւ։

Ժ.

Ապրիլ ամսի վերջին չաբաթն էր։ Հովասուն օդը շնչումէր գարնային թարմութեամբ։ Աստղազարդ երկինքը պարզ էր, որպէս կաթնային ովկիանոս։ Լուսնեակն ամէն տեղ թափումէր իւր արծաթափայլ լոյսը։

Գիշերը մտանումէր իւր կէսին։

Որպէս գիշերային վնասակար, իշղային ճրագը ձախ ձեռից քաշ տուած, Ռեմեանի խրճիթից դուրս եկաւ մի մանկահասակ աղջիկ, զարդարուած նոր և խըճըճուն հագուստով։ Նորա հագուստը սեղմուելով անցաւ նեղ պրնից և նա յայտնուեցաւ բակումը։ Երեսումէր աղջիկը բոլորովին սիրահարուած էր իւր գործանքով. նա անդադար յետ ու առաջ էր նայում, ուղղումէր հագուստի ծալքերն, ուղղումէր իւր վարլիզեան գդակի վարդերն և զմայլումէր...

—«Մի հայելի էլ չը կայ, որ մոխիկ անէի» ասումէր նա ինքն իրան և ընտրելով գիմումէր դէպի լուացարար Կէկելի տունը։

Փոքրիկ Յուլեան յայտնի չէ ինչ չարամտութեամբ նոյն ժամուն հոտոտելով վաղվղումէր բակումը, նա, ուսումնասիրել աղջկան, յարձակվեցաւ նորա վերա և քիչ էր մնում, որ պատռէ նորա փէշերը։

—Ա՛յ, սատկես դու, քօսացել ես, ճչաց աղջիկը։

Շնիկը ճանաչեց նորան, ակսաւ ներողութիւն խնդրել մի քանի անգամ պատյա գալով օրիորդի չորքը և քաշտռելով նորա փէշերին։ Աղջիկը մտաւ լուացարարի տունը։ Կէկելը նոյն ժամուն ութօ էր քաշում։

—Եկայ մնաք բարով ասել, Կէկել Ջան, ասաց օրիորդն ընդհատելով նորա գործը։

Կէկելը չփոթուեցաւ, նա հաղիւ կարողացաւ ճանաչել, որ իւր գործուն Մարիամն էր։

—Ես գնումեմ, Կէկել Ջան։

—Ո՞ր, հարցրուց լուացարարը զարմանալով։

—Ձեմ գիտեմ... մէրս ինձ մարդի տուեց։

—Ո՞ւմ տուեց։

—Ձեմ գիտեմ, Կէկել Ջան, ասես, էս չորերն, էս չեռալէն, էս քորոցն, էս լրասվանները... էս ամենն իմ մարդն է ուղարկի. ցոյց տուեց Մարիամն ուրախ ժպիտն երեսին։

Կեկելի դոյնը չուտ չուտ փոխուեցաւ, նա չէր կարողանում հաւատալ իւր ականջներին։

—Դու տեսար էն մարդուն։

—Ես չեմ տեսի, Կեկել Ջան, բայց էն պատառն, որ էս չորերը բերաւ, ասումէր չատ լաւ մարդ է։

—Ի՞նչ պատառ։

—Մեկ պատառ, էլի, նա հիմայ մեր տանն է, երկու հարիւր մանեթի էլ փող տուեց մօրս։ Էլ ի՞նչ, էն պէս չէ, Կեկել Ջան, էլ չի կարայ մեր տունը ծախել։

Կեկելի զարմացքն աւելի ատտակայաւ։

—Դու ճանչնումա՞ս էն պատառին։

—Չէ, Կեկել Ջան, մի անգամ ես նրան բաղնիքի ճամփումը տեսայ, չատ խօսեց ինձ հետ։ Գատասխանեց օրիորդը մտաբերելով անցեալը։—Էս օր էլ իրիկնապահին նա ինձ բաղնիք տարաւ, լեղցրուց, ֆայտոնով գնացինք, Կեկել Ջան, ախ, ինչ լաւ էր ֆայտոնը, էնպէս սըլսումէր . . . գնումէր ու գնում . . .

Մարիամն այնպիսի մի ոգեւորութեամբ արտասանեց վերջին խօսքերը ֆայտոնի մասին, որ նա առաջին անգամն էր նստել, մինչ Կեկելը, չը նայելով իւր բոլոր վրդովմունքին, սկսաւ ակամայ կերպով ծիծաղել։

—Լաւ, դու էն ասա, աղջի, պատկն ու հարսնիքն երբ է լինում, հարցրուց Կեկելը։

Մարիամը չփոթուեցաւ, չը գիտեր թէ ինչ պատասխանէ։

—Չեմ գիտում, էս գիչեր ինձ տանումն, ասաց նա մխիթարական կերպով։

—Ցետոյ դու էն մարդին պէտք է սիրես։

—Բան չի պիտի սիրեմ, Կեկել Ջան, ախար էս չորերը նա է ուղարկի։

Կեկելը, չը հասկանալով որ բոլորովին պարզմտութեամբ ասաց Մարիամն այդ խօսքերը, ընդմիջեց նորան մի փոքր յանդիմանական ձևով.

—Ցօ, ծամ կտրած, դու ախար Նիկոլին էիր սիրում։

—Էլի կը սիրեմ, Կեկել Ջան, բան Նիկոլին կը մոռնամ։ Գատասխանեց օրիորդը խիստ զգալի կերպով։—Գեղ էլ էի սիրում, Կեկել Ջան, դու լինճ չէիր ծեծում, քեզ էլ չեմ մոռնայ, չուտ չուտ քեզ մօտ կը գամ։

Այդ խօսքերի մէջ կար այնքան պարզութիւն, որքան մաքուր և անմեղ էր Մարիամի հրեշտակային սիրտը։

—Խեղճ աղջիկ . . . ասաց Կեկելն անլսելի ձայնով և երեսը մի կողմ շրջելով սրբեց արտասուքը։

—Հիմայ գնանք մեր տունը, Կեկել Ջան, էնտեղից դու լինճ ճանապար կը դնես, աղաչումէր Մարիամը։

—Չէ, Մարիամ, ես չեմ գայ, ես չեմ ուզում տեսնել էն պատառի երեսը . . .

—Նա չատ լաւ կնիկ է, Կեկել Ջան, էնպէս լաւ խօսումէր որ . . .

—Ի՞նչ էր խօսում։

—Մէրս չէր ուզում լինճ էն մարդին տայ, հէնց լայ էր ըլում ու լայ ըլում . . . Կեկել Ջան, ինչու էր լայ ըլում։

—Չեմ գիտում։ Աման, ինչ էր խօսում։

—Ինճ հանեցին գուրս, ես չը լսեցի ինչ խօսեցին, յետոյ մէրս կանչեց լինճ իւր մօտ, ասաց՝ «էդ կնիկն ինչ

որ ասէ, դրան ականջ դիր։» Ես տեսայ էն վախճան էլ նրա աչքերումն արտասուք կար։

Կէկէլը դրկեց օրիորդին և երկար նորան ճնշած ունէը իւր կուրծքի վերա. նա չէր կարողանում բաժանուել այն աղջկանից, որին այնքան սիրումէր։

—Դու էլ լայ ես ըլում, Կէկէլ Ջան, ինչու ես լայ ըլում, հարցնումէր Մարիամն սիրուխեամբ։ Մի լայ ըլի, ես չեմ գնայ էն մարդի մօտ. էլի քեզ մօտ կը մնամ, քեզ համար ուխտ կը քաշեմ, բաղնիքը լուացք կը տանեմ։

—Խեղճ աղջիկ... կրկնեց Կէկէլն անլսելի ձայնով։

Այդ միջոցին Կէկէլի կրծքի դրանը լսելի եղան մելոդական հնչումները մի վրացերէն երգի։

«Ա՛խ, Թբլալէրս, Թբլալէրս,

«Շաւ Թբլալէրս, Թբլալէրս։» (*)

Դրները յետ գնացին, Նիկօլն ուրախ—ուրախ ներս մտաւ, ասելով՝

—Է՛յ, չենի ճրիմէ, էսօր օխտը աբաստու ծախելեմ։

Նորա աչքին երևաց Մարիամն։—Էս ով է, կոչեց նա յետ յետ քաշուելով։ Նա կրկին քանի քայլ առաջ գնաց, և ուղիղ օրիորդի երեսին նայելով, ձայն տուեց՝—Տօ, Մաչօ, գնա ես... լաւ բարիշնայ ես դառի...

(*) „Ա՛խ, աչեր, աչե՛ր,
Աւորակ աչե՛ր։“

—Ես ժամ, պատասխանեց Մարիամը կարմրելով։

—Ո՞ր տեղից էր էդ չորերը։

—Մարդս է ուղարկի, Նիկօլ Ջան, պատասխանեց օրիորդը։

—Նիկօլ Ջան չէ, զմռրումար... մարդըդ... տեհնումես...։ Պատանու աչքերը վառվեցան, նա սպառնացաւ օրիորդին իւր սարսափելի մուշտին։—Դէ, էս նիմուտին, էս նիմուտին, ասումեմ քեզ, հանի էդ չորերը, թէ չէ դիփ կը պատռտեմ, քեզ էլ կը սպանեմ, գու մարդուն էլ...

—Ի՞նչու ես սպանում, Նիկօլ Ջան, խեղճ չէ. պատասխանեց օրիորդը միամտութեամբ։

Պատանին աւելի կատաղեցաւ։—Տօ, էդ ինչեր ես խօսում, դժուել ես...։ Թողէք դրան ես խեղդեմ։ Եւ նա դաղանի պէս յարձակուեցաւ Մարիամի վերա։

—Տօ, Նիկօլ, սո Նիկօլ, ինչ ես անում, մէջ մըտաւ Կէկէլը։—Նա խաթումէ քեզ, նա հանաք է անում.—կոչումէր խեղճ կինն, աշխատելով հանդստացնել որդու բարկութիւնը։

Այդ խառնութեան մէջ Մարիամը միջոց գտնելով, դուրս վազեց Կէկէլի տնից։ Պատանու մայրը նորա յետքից կողպեց դուռը, որ Նիկօլը դուրս չը գնայ։

Մարիամը բոլոր ժարմնով դողումէր. նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու զրգռեց Նիկօլի բարկութիւնը. նա կարծումէր, թէ Նիկօլը կուրախանայ իւր նոր հագուստով։ Նորա դէմքը բոլորովին դունատուած էր կաւճի նման, երբ նա մտաւ իւրեանց խրճիթը։

—Ի՛նչ չատ ուշացար, Մաչօ Ջան, ասաց Նորան պառաւն, որ սև սատանայի նման սպասումէր Նորան։—Դէ, գնանք, քո հոգուն մատաղ, ուշանումենք։

Մարիամն ոչինչ չը պատասխանեց։ Նա քարէ արձանի նման սառած կանգնել էր, չը գիտէր, թէ ինչ անէ։

—Գնանք, Մաչօ Ջան, ուշանումենք. կրկնեց պառաւը։

—Բաս մէրս չի պիտի գայ ինձ հետ, հարցրուց Մարիամը մօտենալով մօր մահճին։

Գևթիանի առողջութիւնը վերջին օրերում բաւականին ուղղուել էր. բայց Մարիամը զարհուրեցաւ, երբ գտաւ Նորան սաստիկ տաքութեան մէջ։

«Ա՛խ, Աստուած, ինչ բան արեցի . . . ։» կրկնումէր հիւանդը խորին կերպով հոգուց հանելով։ Նա տանջումէր խղճի տենդային դրութեան մէջ . . .

—Մայրիկ, մայրիկ, ձայն տուեց աղջիկը։

Հիւանդն ոչինչ չը պատասխանեց, վերմակը քաշեց գլխին և ծածկեց երեսը։

—Նա լաց է լինում . . . դարձաւ Մարիամը դէպի պառաւը.—ես չեմ կարող գալ, նրա քէյին էլի վատացաւ։

—Նա քնած է, Մարիամ, դու նրան մի նեղացրու. պատասխանեց պառաւը։—Մենք գնանք, գայտօնով կը տանեմ քեզ, կէս ահաթ չի քաշի, էլի յետ կը բերեմ։

—Ի՞նչպէս թէ քնած է . . . լսիր, նա խօսումէ։

—«Ես նրան իմ ձեռքով դերեզմանը դրի . . . » լսելի

եղաւ հիւանդի ձայնը։

—Նա տաքութեան մէջումն է խօստում, Մարիամ, գնանք, մի ուշացիր. ստիպումէր պառաւը։

—Լաւ, ինձ ինչի համար ես տանում, հարցրուց օրիորդը։

—Էնպէս, էլի, Մարիամ . . . ։ Մէրդ չասից քեզ, ես ինչ որ ասելու ըլեմ, դու պիտի ընդունես։

—Ասեց։

—Դէ, գնանք։

—Բայց էլի չուտ յետ պիտի բերես, որ մօրս մօտ ըլեմ։

—Կը բերեմ, Աստուած է վկայ։

—Էս գիշեր։ Գիտես։

—Հա, էս գիշեր։

Մարիամը մօտեցաւ քնած Սանդրօին, զարթեցրուց նորան։—Սանդրօ Ջան, նստիր մօրդ մօտ, Ջուր ուղելու լինի տուր, չը քնես, ես էս նիմուտին գալիս եմ։ Եւ նա տուեց եղբօրը մի բուռը կօնֆէտ, որ ստացել էր պառաւից։ Սանդրօն, տեսնելով քաղցրաւենիքն, էլ չը խօսեց և համաձայնուեցաւ քրոջ պատուէրներին։

Նոքա դուրս եկան։ Խրճիթի անկիւնումը սպասում էր մի կառք։ Կառօն իւր «անմեղ վաճառքը» դրեց կառքի մէջ։ Ձիաները սլացան, կառքը անհետացաւ պիչերային խաւարի միջում։

Նոյն րոպէին կէկէլի խրճիթի փակուած դրները փչրուեցան, դուրս պրծաւ կատաղած Նիկօլը . . . «Թողէք ես այն մարդուն սպանեմ . . . Թողէք . . . » դո-

ձումէր նա վազվզելով խաւարի մէջ։

Բայց նա ոչինչ չը գտաւ, գազանի պէս վազից Քեթեանի խրճիթը, տեսաւ Մարիամն այնտեղ չէ։—Ո՞ւր է գոյրդ, հարցրուց Սանդրօից։

—Նա գնաց, պատասխանեց պատանին։

—Ո՞ւր գնաց աղջիկդ, դարձաւ նա դէպի հիւանդը։

Նիկօլի ձայնի որոտմունքից ուշի եկաւ Քեթեանը և լսեց նորա խօսքերը։—«Մարիամը մեռաւ . . . » եղաւ հիւանդի վերջին խօսքը . . .

Նիկօլը թուլացաւ և գլորուեցաւ գետին։

ԺԱ,

Կառքը քանի մի ժամ հանդարտ կերպով գնում էր կոկած քարուղիի վերայ։ Մարիամը նորա ղօարճութիւնով զմայլած՝ ամենևին չէր զգում ճանապարհի երկարութիւնը։ Վերջապէս նոքա հասան մի գեղեցիկ այգիի դրանը, որ գտանվում էր քաղաքից դուրս մեծ գետի ափին մօտ։ Կառօն ներս տարաւ օրիորդին այգին և նոքա մտան մի փառաւոր տուն, որ էր այգետիրոջ ամարանոցը։ Այդ հոյակապ չինուածքի սենեակներից միևը միայն լուսաւորուած էր նոյն պահուն, ուր պառաւը ներս տարաւ Մարիամին։

Պ. Ֆ . . . միայնակ անցուդարձ էր անում սենեակի մէջ։ Տեսնելով եկւորներին, նա մի կրիտիկական հայացք ձգեց օրիորդի երեսին.—Ի՛նչ շատ ուշացար, Կատօ, հարցրուց նա պառաւից, և մօտենալով նորա ականջին ասաց՝—Հազար թուման աժէ . . .

Պառաւն ընդունեց խիստ ինքնաբաւական դէմք, որպէս մի մարդ, որ գոհ էր իր յաջողութեամբ, ոչ-

ինչ չը պատասխանեց, միայն նորա խորամանկ երեսի վերա երևաց լի չարախնդութեամբ մի դիւական ժպիտ։

Մարիամը, մի անկիւնում կանգնած, լուռ և երկչոտ դէմքով նայում էր նոցա վերա, երբ պ. Ֆ . . . գնաց նստեց կլուաթախտի վերա և հրաւիրեց իր մօտ օրիորդին։

Օրիորդի թշերն ամօթից կարմրել, վարդի գոյն էին ստացել։—Ե՛կ, մի ամաչիր, կանչում էր նորան պ. Ֆ . . . ։

—Գնա, մի ամաչիր, բօթում էր նորան Կատօն։

Օրիորդը մի քայլ անդամ չարեց։

Պ. Ֆ . . . տեսնելով, որ նա չէր համարձակվում իր մօտ գալ, մօտեցաւ օրիորդին, բռնեց նորա ձեռից և տարաւ կլուաթախտի վերա, ուր ինքն առաջ նստած էր։

—Ի՛նչ լաւ աղջիկ ես. ասաց նա չոքելով Մարիամի սիրուն մազերը և աւելի մօտենալով նորան։

Օրիորդը բոլոր մարմնով դողում էր։

—Այժմ դու կարող ես գնալ, Կատօ. ասաց պ. Ֆ . . . պառաւին։

Երբ Կատօն պատրաստվում էր դուրս գնալ, Մարիամը վազեց նորա մօտ, բռնեց պառաւի փէշից, ասելով

—Չէ, դու մի գնայ։

—Ես չեմ գնալու, Մարիամ, պատասխանեց պառաւը նորան հանգստացնելով.—ես գնում եմ մէկել օթախից քեզ համար միրգ բերեմ։

—Ջեմ ուզում միրդն, ինձ տար մեր տունը։

—Հիմայ ուշ է, ասաց նորան պ. Ֆ...կրկին մոտենալով.—էս դիշեր մնայ էս տեղ, առաւօտը կատօն քեզ կը տանէ։

—Չէ, չեմ կարայ մնալ, մէրս հիւանդ է, հիմայ թող տանէ. ասումէր Մարիամն աչքերն լցուած արտասուքով։

—Դէ լաւ, էտեղ սպասիր, գնամ ֆայտօնը կանչեմ, որ քեզ տանէ. ասաց Կատօն և դուրս վազեց։

Օրիորդն ըղտապեց նորան հետևել, դուռն արդէն կողպուած էր դրսից...

Անցան մի քանի րոպէներ...դառն—դրամատիկական րոպէներ....։ Անցաւ քառորդ ժամ։

Ցանկարծ սենեակի լուսամուտներից մինը չառաչեցաւ և մի մարմին պղոռնեցաւ ներքև։

«Ջեմ ուզի...չեմ ուզի...» Օդի մէջ լսելի եղաւ մի ձայն և չուտով լռեց....։ Դա խեղճ Մարիամի ձայնն էր...

—

Քանի օրից յետոյ նոյն այդիի կողքէն հոսող մեծ գետի մէջից ձկնորսը դուրս քաշեց մի սիրուն աղջկայ մարմին։ Բարի ձկնորսն առաց դիակն իւր ուսին, տանումէր դէպի իւր խրճիթը, որ պատանէ և թաղէ նորան, երբ տեսաւ աղբատներին մի փոքրիկ խումբ բերումէին իւր առջև մի դագաղ։

«Վայ դէդի, վայ դէդի» հառաչումէր մի պատանի իւր ձեռքերով քարշ ընկած դագաղի կողքից։

—«Սանդրօ, հէրիք լաս. միխիթարումէր նորան կէկէլը։

Դա Քեֆեանի դագաղն էր։

Նոքա տեսան դիակը ձկնորսի ուսին։

—Մարփամ...բռաց Նիկօլը և դրկից դիակը։

—Ա՛խ, սիրելիան...ձայն տուաց կէկէլը և մարեցաւ։

Ստեփաննոս Պօղոսեան
ՍՐԲՈՒՐԱԿՈՍԱՆՑ
Ա ս տ ր ա խ ա ն

ՈՒԽՏԵԱԼ

Մխայելնուհի

ԱԽՏԵԱԼ ՄԻԱՆՁՆՈՒՀԻ

Ա.

Ջոր քարափի կուրծքին կպած էր մի չինուածք, որ իր առանձնաւոր պարիսպներով և կիսաւեր աշտարակներով աւելի նմանութիւն էր բերում մի հին ամրոցի, որոյ խչհանը վազուց ընկել էր իր փառքից. ուր բաժակները դադարել էին փրփրելուց, երդերի, նուագների հնչումները լռել էին և պարահանդէսների աստղաբեղը մնացել էր բուերին և չղջիկներին . . .

Աւելի ուշադրութեամբ նայելիս՝ առաջին տպաւորութիւնքը փոքր առ փոքր անհետանում էին: Ցեղնեղումն խաչաձարդ գմբէթներ, լանջի է վիճակ զանգահարութեան խուլ—մելամաղձական ձայնն, որոյ արձագանգը դողդոջուն հնչումներով տարածվում հեռու և հեռու լեռների մէջ . . .

Այստեղ միանձնուհիների նախկին մի սրբարան է:

Վիշերային խաւարը տիրել էր աշխարհին:

Փոքրիկ խուցի մէջ աղօտ լուսով վառվռամեր մի ճրագ, որ դրած էր հասարակ փայտէ դրասեղանի վրայ։ Նորա հանդէպ նստած էր մի պառաւ կին ոտքից ցղուխս սև հագնուած. դա կուսանոցի մարապետն էր։ Նա կարդումէր նոյն ժամուն մի աղօթագիրք։

Դրան ճռռոցը խլեց մարապետի ուշադրութիւնն իւր կարդացած գրքէն։ Ցայտնուեցաւ մի աւելի մանկահասակ կուսան։

—Ի՞նչպէս է գդում իւրեան նորընձայ միանձնուհին, դարձաւ նա դէպի եկուորը։

—Ջերմն աւելի սաստկացած է, պատասխանեց նա, ամենևին հանդստութիւն չունի, անդադար կրկնումէ մի և նոյն խօսքերը...

Մարապետն ըստացաւ դէպի հիւանդի խուցը։

Մահճակալի վերա պառկած էր մի պատանեկուհի, նա տանջվումէր նոյն րոպէին ջերմախտական ցնորքներով։ Մահուան դեղնութիւնը պատել էր նորա քնքուշ դէմքը և սևորակ աչքերի մէջ, որ երբեմն նա բաց էր անում, աղօտ նշոյլներով փայլումէր մարած կեանքի վերջալոյսը։

«Օսէփ Ջան, Օսէփ Ջան, քո հոգուն մատաղ... աղաւնիր ինձ... տար, ուր որ ուզումես... ես կը գամ քեղ հետ...» Այդ խօսքերը լսվումէին մերթ ընդ մերթ հիւանդի բերանից։

Մարապետը նստաւ նորա մահճի մօտ և խորին տխրութեամբ լսումէր այդ խօսքերը, խօսքեր, որք բխումէին խորտակուած սրտի վշտահարներից...

Ցայտնուեցաւ մի կարճահասակ աղամարդ ակնոցներով։ Նորա առաջին հոգատարութիւնից երևումէր, որ բժիշկ է։ Նա հիւանդը քննելէն յետոյ, դարձաւ դէպի մարապետը, սկսաւ հարցնել նորա նոյն աւուր պրոթիւնից։

—Առաւօտեան նա բոլորովին ուշի եկաւ, ասաց մարապետը, մեր ամենից ճանաչումէր և պարզ խօսումէր։ Յանկարծ երևակայութիւնը գարձեալ խառնըվել սկսեց, երբ նայեց մեղ վերա։ Կարծես, իւրեան չրջապատող առարկայքը սարսափելի տպաւորութիւն են գործում նորա վերա և ծնուցանումն նորա մէջ մի վրդովմունք, որ մեր ամենիս անհասկանալի է...

—Ի՞նչպէս էր նա հիւանդութիւնից առաջ, հարցրուց բժիշկը։

—Ա՛յն օրից, երբ նորան կուսանոցը բերին, նա միշտ լուռ էր և տխուր։ Ժպիտ, ծիծաղ ասած բանները մենք երբէք չէինք նկատում նորա դէմքի վերա։ Պատահումէր, որ նա սեղանից հեռանումէր առանց մի պատառ հաց ուտելու. պատահումէր, որ ամբողջ ժամերով նա չէր երևում. մենք նորան գըտնումէինք առանձնացած իւր խուցի մէջ, կամ լայ էր լինում, կամ նստած խորին մոռացութեան մէջ սըխրումէր և հալումաշ լինում։ Պատճառները մեղ յայտնի չէին. ես կարծումէի, թէ խղճի խայթն այդպէս տանջումէր նորան և ղղջացած սրտի ցաւերով մաշվումէր նա...

—Հիւանդի ցաւը բարոյական է, պատասխանեց բժիշկը կանդնելով. երևումէ, նա ընդդէմ իւր կամ-

քին այտուղ բերուած է։ Նորա ծնողքը պէտք է չուտով հեռացնեն նորան կուսանոցէն, եթէ չը կամիքն մեռցնել իւրեանց աղջիկը։

Բժիշկը մի քանի պատուէրներ տալէն յետոյ հեռացաւ։

Բ.

Թօմաս Խորհնեանն—այդպէս էր բժշկապետի անունը—մի դիւղացի աղքատ մարդու որդի էր. նա իւր տաներկու տարեկան հասակում Թ... քաղաքը բերուեցաւ և աղգային դպրոցը յանձնուեցաւ, որպէս Թօշակաւոր աշակերտ։ Ա.յնուհետև մտնելով տեղային արքունական ուսումնարանն, աւարտեց որպէս ամենաընդունակ աշակերտներից մինն, որոյ համար տէրութեան ծախսով համալսարան ուղարկվեցաւ։ Նա դուրս եկաւ համալսարանից ստանալով, որպէս արդասիք իւր հինդ տարուայ անխոնջ աշխատութեան, դօքտորի տիտղոսը։ Վերադառնալով հայրենիքը դօքտոր Խորհնեանը չը մնաց այնտեղ, որովհետև հայրենի երկրի անշուք կեանքը նորան ձանձրացնում էր. այլ չուտով Թ... քաղաքը վազեց երկու նպատակով, մինն՝ իւր համար լաւ աւազարէզ անօրինելու, միւսը՝ մի հարուստ աղջկայ վերա պսակուելու մտքով։ Այդ յանկութիւններին հասնելու ուղին հարթելու համար ոչինչ չէր արգելում պարոն բժշկապետին իւր ժամանակից մի քանի ժամեր զոհել աղգային գործերին։ Դոցանից մինն էր կուսանոցի մէջ հիւանդների հոգաբարութիւնը ձրի ընդունելը։ Դեռ նոր եկած լինելով այդ քաղաքն, իւր այն դիւերուայ հիւանդի

ով կամ ում գաւակ լինելը բոլորովին անյայտ էր նորան։ Բայց հիւանդի կեանքի և նորա անցեալի մէջ նա թաղնուած էր գտնում մի գաղտնիք, որոյ լուծելը նորան շատ և շատ հետաքրքրում էր։ Այդ խորհրդածութեան մէջ կամենում էր նա կուսանոցի դրանը սպասող կառքը նստել, երբ մի ձայն կանգնեցրուց նորան։

—Պարոն բժշկապետ, ներեցէք ինձ հարցնել հիւանդ օրիորդի դրութեան մասին, որոյ մօտ դուք այցելութիւն ունէիք։

Կուսանոցի դրանը վաւելող ֆանարի լուսով բժշկապետը նչմարեց մի երիտասարդի տխուր և չնորհակալի կերպարանքը։

—Հիւանդի դրութիւնը բոլորովին յուսահատական է, պատասխանեց Խորհնեանը դառնալով դէպի անծանօթն.—եթէ չուտով պէտք եղած հնարները գործ չը դրուին, նա կորած է...

Երիտասարդը քարացաւ. տարտափի նման մի բան վազեց նորա գունատ դէմքի վերա։

Բժշկապետն իսկոյն նկատեց իւր խօսքերի ցաւալի տպաւորութիւնն անծանօթի վերա, և ղղջալով այնպէս յանկարծակի նորան վրդովելու համար, հարցրուց՝

—Դուք երեւի հիւանդի ազգականն էք։

—Ո՛չ. ես նորա ծանօթն եմ միայն... պատասխանեց երիտասարդը տխրութեամբ։

—Ուրեմն և ծանօթ կը լինէք նորա կեանքի և անցեալի հետ։

—Բոլորովին . . .

—Ուրեմն ներեցէք ինձ հարցնել ձեզանից մի քանի բան հիւանդի մասին, որոնք նրբև բժիշկ պէտք է ինձ պիտենալ։

—Ես բոլորովին պատրաստ եմ լսելու ձեր հարցասիրութիւնն, եթէ այդ օգուտ կը բերէր նորան։

Բժշկապետը սեղմեց երիտասարդի ձեռքն ի նշան իր չնորհակալութեան և խնդրեց նստել կառքը առելով՝—Գնանք ինձ մօտ, ես այստեղ մօտիկ եմ կեանում։

Նրբա նստեցին։ Կառքի մէջ անդադար հարցնում էր երիտասարդը՝—Ուրեմն ոչ մի յոյս չկայ . . .

—Կեանքը մի մազաչափ պատճառով կարող է վերադարձնել իր ղօրութիւնը. ասումէր բժշկապետը տեսնելով, որ երիտասարդը չատ անհանդիստ է։

Քանի րոպէից յետոյ կառքը կանգնեցաւ մի փոքրիկ տան հանդէպ. չուտով նրբա մտան մի հասարակ կերպով կահկարած սենեակ։

—Ո՞ւմ հետ պատիւ ունեմ ես. եղաւ բժշկապետի առաջին հարցմունքը։

—Ես կոչվումեմ Յովսէփ Արէսեան. պատասխանեց երիտասարդը. մնացածը դուք ինքներդ կը գիտենաք։

Նրբա նստեցին մխիթարից չատ մօտ կիսաթախտի վերա։

Բժշկապետը մանրամասնաբար պատմեց, թէ որպէս նա գտել էր հիւանդին, նկարագրեց նորա դրութիւնը, յայտնեց այն խօսքերն, որ լսել էր մարտսե-

ռից, և վերջացրեց իր խօսքը նորանով, թէ օրիորդի հիւանդութեան պատճառը նա գտնումէր մի բարոյական հարուածքի մէջ։

Բոլոր այդ խօսքերը լսելու միջոցին երիտասարդի դէմքի արտայայտութիւնքը բացատրումէին խորին ցաւակցական համակրացութիւն։ Նորա աչքերի մէջ նկարուած էր յուսահատութեան դառն կսկիծը։

—Այժմ, պարոն Արէսեան, յաւելացրեց բժշկապետը, պատմեցէք ինչ որ գիտէք, պատմեցէք, որպէս ձեր խոստովանահօրը, ի նկատի ունենալով, որ դուք ինձ տուած տեղեկութիւններով կը նպաստէք հիւանդի առողջութեանը։

Երիտասարդը մի քանի րոպէ չփոթուած դրութեան մէջ մնաց։ Առաջին անգամն էր, որ նա սովորած էր դուրս թափել այն ցաւալի ծանրութիւնքըն, որք ամբարուած էին նորա սրտի մէջ . . .

—Մի խռովվէք, պատմեցէք խնդրեմ. ասումէր բժշկապետը։

Գ.

Երիտասարդ Արէսեանն այդպէս սկսեց իր պատմութիւնը՝—

«Ցառաջ քան խօսել օրիորդի մասին, ես հարկաւոր եմ համարում ծանօթացնել ձեզ, պարոն բժշկապետ, նորա ծնողքների հետ, որտեղից դուք կարող էք ճչտութեամբ եզրակացնել այն դժբախտութեան պատճառն, որոյ մէջ այժմ գտնվումէ հիւանդը։ Նորա հայրն ոստիկանութեան մի հասարակ ծառայող էր։ Քաղաքի մի աղքատ և խաւար մասումը նա կա-

տարումէր Թաղապետի պաշտօն։ Այդ այն ժամանակն էր, երբ ոստիկանութիւնն իւր անկարգ կազմակերպութեան մէջն էր։ Օրիորդի հայրն, այդ խորամանկ ոստանիկը, հաւատարմապէս իւր պաշտօնին՝ ամբողջ տասնեակ տարիներով ծծեց խեղճ բնակիչների արիւնը և քամեց նոցա դրպանի հիմքը։ Որտեղ գողութիւն էր լինում՝—նորա մատը խառն էր. որտեղ խռովութիւն էր պատահում՝—նա էր խմորը. որտեղ կանայք էլին անպատուում՝—նա ընկեր էր սրիկայների հետ, մի խօսքով, ամեն չարագործութեանց մէջ նա ներկայ էր։ Մինչև այդ բոլորը յայտնուեցան, մինչև հաղթահարուած որբերի և այրիների աղաղակն և թղթոյն ուշադրութեան հասաւ, այդ պարոնն, որպէս ռամկօրէն ասումեն՝ «իւր բեռը բռնեց»։ Թէև նա այնուհետև դրկուեցաւ իւր պաշտօնէն, բայց հոգը չէր, որովհետև արդէն շատ հաղարներով նորա ոսկիքը՝—խեղճերի արեան և քրտինքի արդիւնքը,—զանազան սեղանատներում առատ տոկոսիք էլին բերում։

«Ոստանիկի պաշտօնական համազգեստը փոխելով պատուաւոր քաղաքացու հադուստով, նա մտաւ մեծամեծ կապալների մէջ, սկսեց այնուհետև խաղ առնել հարիւր հազարների հետ . . . և շուտով սէր դարձաւ քաղաքի նշանաւոր մասներում հոյակապ տների, լծեց փառաւոր կառք և սկսաւ վայելել իւր բախտը . . .

«Նորա կինը համարեա մի ձու էր իւր ամուսնի հետ կէս կիսած։ Նախանձոտութիւնն, անդիտելի է,

թէ ինչ նպատակով չատ անգամ այդպիսի երկու հակադիր և հակակամ բնաւորութիւնքը լծորդումէ միմեանց հետ։ Նա այն աղղեցութիւն ունեցող կնիկներից մինն էր, որոց ներգործութիւնը մեծ նշանակութիւն ունի զանազան մարդերի ճակատագրի վերա, Այդպիսի կանայք, որք կառավարումեն նշանաւոր պաշտօնականների սանձը, միշտ եղել են և լինում են մեծամեծ վոճրոխութիւնների պատճառներ և կարծես հակումեն մարդերի բախտաւորութեան և անբախտութեան վերա։—Այդպէս էր օրիորդի մայրը։ Նա կատարումէր մի երևելի միջնորդի դեր ոչ միայն հասարակական կեանքում, այլև նշանաւոր գերդաստանների ընտանեկան շրջանի մէջ.—ում աղջիկը պէտք էր մարդի տալ, ո՛ր տղամարդն ամուսին լինելու միտք ունէր, նա խառն էր դոցա պայմանների մէջ, և այդպիսի դէպքերում այնքան առատ էր նորա հունձքն, որքան թոյլ էր տալիս իւր մանղաղը . . .

,,Ը նայելով այդ բոլոր ասածներիս, այդ երկու ամուսիններն այն ներմեռանդ քրիստոնեաներից էլին, որոնք ժողովրդի մէջ ունեն մեծ համարում իբրեանց բարեպաշտութեան համար։ Նոքա չէլին լուծում ոչ միայն շաբաթական պատերն, այլև օրականները. նոքա իբրեանց որդիների հիւանդ լինելու ժամանակ «խէչէմէն» է, ասելով, տանումէլին մի ուխտատեղի, որ առողջանայ. կրօնական բոլոր ծեսերը կատարում էլին սրբութեամբ. ամեն կիրակէ եկեղեցի էլին գնում, որ պատարագ տեսնեն. քահանաներին պատուումէլին և նորանց առատ աջահաւքոյր էլին տալիս. մի խօս-

քով, նորա ունէին բարի քրիստոնեայի բոլոր արուեստքին յատկութիւնները ... Նոցա այդպիսի մի կրօնական ջերմեռանդութիւնը պսակվեցաւ աւելի մի բարձր և վսեմ գոհաբերութեամբ, այն է, որ նորա իւրեանց զաւակը նուիրեցին կուսակրօնութեան։

«Օրիորդ Սօնան—այդպէս է այն հիւանդի անունը—դեռ իւր մօր արգանդումն էր, երբ նորա ծնողքն ուխտեցին՝ եթէ ծնունդն արու լինի՝ մի վանքում տալ ճգնաւոր լինելու համար, իսկ եթէ աղջիկ լինի՝ կուսանոցը նուիրել Սուրբ Աստուածածնին աղախին դառնալու։

,,Այդ մեծ գոհաբերութիւնը մինչ այն աստիճան բարձրացրեց «ուխտեալ միանձնուհու» ծնողաց փառքին որ ոչ մի մարդ առանց պատուելու չէր խօսում նոցա վերա։

«Ահա այդպիսի քրիստոնեաներից գոյութիւն է առել այն օրիորդն, որոյ արկածքը ստիպուած եմ պատմել ձեզ, պատուելի բժշկապետ։ Օրիորդ Սօնան իւր պատանեկութիւնն անցուցել է ծնողքների երկաթի հսկողութեան ներքոյ, այլ խօսքով, նա իւր մանկութիւնից պատրաստուել է կոյս դառնալու համար։ Ընտանեկան փակ շրջանը միշտ ունեցել է նորա համար խստար բանտի նշանակութիւն։ Մինչև իւր տասն և չորս տարեկան հասկն ոչինչ չէ ուսել նա, որովհետև ոչ վարժուհին ուղարկել են նորան և ոչ ունեցել է տնային ուսուցիչ։ Ցետոյ հրաւիրուեմք նոցա գերդաստանում մի աղքատ ուսանող որպէս վարժապետ։ Թէև չնչին ռոճիկով, այսուամենայնիւ այդ պարոնը յանձն առաւ այդ պաշտօնին, այն յուսով, որ մի օր իւր բարերարների—օրիորդի ծնողաց—չնորհիւ դուցէ բայ կանէր իւր համար մի ասպարէզ։ Այդ յուսով խակ հրապուրել էին նորան ... Թէև այդ ակնկալութիւնը չիրագործուեցաւ, բայց վարժապետը դարձեալ գոհ էր իւր պաշտօնից, գոհանալով մի աշակերտուհի, որ իւր ընդունակութեան հետ ունէր անմեղ դեղեցկութիւն և հրեշտակային բնաւորութիւն։

«Վարժապետը դրսեցի էր այն քաղաքում և բնակվումէր նոցա տան մէջ։ Դասերը չարունակվումէին խիստ եռանդով։ Փոքր ժամանակում երևեցաւ նշանաւոր յառաջադիմութիւն օրիորդի մէջ։ Վարժապետը բնապէտ էր։ Նա աշխատումէր զարգացնել իւր աշակերտուհու միտքը դրական գիտութիւնների ընդհանուր տարերքին ծանօթացնելով։ Մայրենի լեզուն էլն այնքան չուտ զարթնեցրեց նորա մէջ, մինչ օրիորդն ոչ միայն դեղեցիկ հայերէն էր խօսում, այլ բաւականին մշակուած լեզուով կարողանում էր գրել և թարգմանել։

«Մի փակ ընտանեկան շրջանում վայրենացած աղջիկ, որպէս էր օրիորդ Սօնան, դառնում է աղատամիտ և համարձակ։ Չը նայելով այդ նշանաւոր փոփոխութեանը, նորա ծնողքը դարձեալ վարվումէին նորա հետ, որպէս մի կոյսի հետ։ Օրինակի համար, նորան արգելումէին առանց մօրը տանից դուրս գալ, մի տեղ հիւր գնալ, կամ հրապարակական զբօսարանները յաճախել։ արգելումէին իւրեանց մօտ նկած

հիւրերի հետ տեսնուել, մանաւանդ երբ որ նոքա երիտասարդներ էին։ Այդ խստութիւնները մինչ այն աստիճան վշտացնում էին օրիորդի անձնիշխանութիւնը, որ նա երբէք ուրախ չէր լինում։ Նա իւր հայրենական օջախի մէջ զգում էր իւրեան կալանաւորուած, այդ պատճառաւ նա միշտ լուռ էր և տխուր։ Երբեմն նորա սևորակ աչքերի արտասուքի մէջ միայն նշմարւում էր մի խորին տանջութիւն.—դա բողոք էր դէպի ծնողաց ճնշումները . . .

Դ.

Վերջին խօսքերը զարթեցրին երիտասարդ Արէսեանի մէջ մի վրդովմունք, որով նա քանի մի րոպէ ընդհատեց իւր պատմութիւնը։ Բժշկապետը նկատեց նորա աչքերում նոյնպէս արտասուքի կաթիլներ, լսեց որ նորա ձայնը զգալի կերպով դողում էր . . .

—Ներեցէք, խնդրեմ, ասաց Խորենեանը տալով երիտասարդին մի սիգար, դուք երևի յոգնեցաք։

Արէսեանը լռութեամբ վառեց սիգարը, մի փոքր ծխելէն յետոյ շարունակեց՝

»Տարիքն աննկատելի կերպով անցնում էին։ Օրիորդն օրըստօրէ հասունանում էր . . . Նորա գեղեցկութիւնը ստանում էր աւելի և աւելի աքանչելի կերպարանք . . .

»Տան և ինն տարեկան էր նա, երբ նորա մայրն ամարանոց գնաց, իւր հետ տանելով և աղջկան։ Վարժապետին նոյնպէս հրաւիրեցին այնտեղ։ Օրիորդի հայրն իւր գործերի պատճառաւ չը կարողացաւ հեռանալ քաղաքից։

»Ամարանոցը գտանվում էր քաղաքից կէս օրուայ ճանապարհ հեռաւորութեամբ սարերի և անտառների մէջ։ Անտեղ օրիորդի ծնողքն ունէին սեպհական մի ագարակ, ուր չինել էին տուած գեղեցիկ տուն։ Նա պատրաստուած էր այն բոլոր ճոխութիւններով, որպէս վայել է բախտաւոր հարուստներին։ Շուտով լեռնային օդն, անտառների հոլասուն թարմութիւնը յայտնի փոփոխութիւն արեցին նոցա կեանքի վերա։ Սօնայի քաղաքումը գունատուած թշերը վառվում էին վարդի գունով։ Նորա մօր թառամած դէմքը նոյնպէս ստացաւ մի առանձին կենդանութիւն։ Ամարանոցն աւելի ազատութիւն տուեց նոցա ընտանեկան կեանքին.—վաղորդեան ղբօսանքներն անտառներում և սարերի վերա՝ եղաւ անհրաժեշտ, երեկոյեան ղբօսանքները պարտէզի մէջ և երբեմն հեռու տեղերում՝ չատ անգամ տևում էին քանի մի ժամ։ Այդ արշաւանքների մէջ մայրն երբէք աչքից բաց չէր թողում իւր աղջկան։

»Մի երեկոյ, երբ արևը դեռ նոր էր մտնում, օրիորդի մայրը հրաւիրուեցաւ իւր ծանօթներէն լսած խաղալու։ Նա կամեցաւ Սօնային իւր հետ տանել։ Բայց օրիորդը հրաժարուեցաւ, պատճառելով, թէ գլուխը ցաւում էր։ Մայրը թողեց նորան տանը, հրամայելով, որ քնէ հանգստանալու համար։

»Նոցա տան պարտիզումը կար մի հովանոց, հիւսած պատատումների կենդանի ճիւղերից։ Նա չրջապատած էր հաղուագիւտ ծաղիկներով և մի քանի ազարթմախիտ ծառեր տարածել էին նորա վերա իւ-

բանից անհամապատասխան սառնարը։ Օրիորդն իր վարժապետի հետ առանձնացան այնտեղ, հրամայելով տալ երեկոյեան թէյն։

«Արևի վերջալոյսը ձգել էր հովանոցի մէջ ոսկի ժապաւէններով մի քանի ծիրանի չողքեր. նոքա տակաւին էին այդ կանաչազարդ առանձնարանին կախարդական քնաւորութիւն։ Սենեակի դէմքն աւելի գեղեցիկ փայլումէր այդ լուսի առջև։ Նորա սևորակ աչքերում նոյն րոպէին նկարուած էր սրբազան ողբերգութիւն...

«Օրիորդը միշտ աչքերը ցած էր թողում, երբ վարժապետն ուղղակի նայում էր նորա երեսին և ձայնը դողալի կերպով դողումէր խօսելու ժամանակ։ Երեսում էր, նորա սրտում յուզմունքը ներքին մրրիկը...

«Շուտով մերկացաւ խորհրդական վարագոյրը։

«Վարժապետը ստացել էր հրաւէր, որով առաջարկումէին նորան մի չահաւէտ տեղ գաւառական մի դպրոցում։ Այդ բանն իմացել էր օրիորդը։ Մօր բացակայութիւնն առիթ տուեց նորան խօսել այդ առարկայի մասին, որով նա չատ անհանգիստ էր։

—Ես լսեցի, որ ամարանոցէն գառնալէն յետոյ դուք նպատակ ունիք հեռանալ մեզանից, հարցրուց նա։

—Այո՛. պատասխանեց վարժապետն անվճռական կերպով։

Օրիորդի դէմքի վերա վազեց անբացատրելի տխրութիւն։

—Ե՞ւ դուք չուտով չը պիտի է վերադառնաք, կրկնեց նա։

—Չը գիտեմ... կարելի է ամէնևին չը վերադառնամ. պատասխանեց վարժապետը տխրութեամբ։

Օրիորդի աչքերը վառվռեցան մի անսովոր կրակով։

—Ո՛չ. այդ անկարելի է, կոչեց նա, ես չեմ թողուտալ ձեզ որ հեռանաք։

Ամենքին մի ազդու կերպով արտատանեց նա այդ խօսքերն, որ լի էին սրտի բոլոր զգացմունքներով...

—Դուք կը զրկէք ինձ հայրից, օրիորդ, ասաց վարժապետը րոպէական մտատանջութիւնից յետոյ.—մրատածեցէք, որ ես աղքատ եմ և մինչև այսօր չեմ անօրինել ինձ որ և իցէ ապարէշ։

«Օրիորդը մօտեկաւ, բռնեց վարժապետի ձեռքը։

—Ես խնդրումեմ ձեզ, ես աղաչումեմ ձեզ, մի գնացէք. ասաց նա և նոյն վարկենում նորա աչքերից պղտրուեցան արտասուքի խոշոր և խոշոր կաթիլներ...

«Տիրեց երկու կողմից ես լռութիւն։

«Այդ այն խորհրդական րոպէներից մինն էր, երբ լեզուներն այլ ևս չեն զօրում արտայայտել հոգու զգացմունքներն, այլ սրտերը գաղտնի կերպով հասկանումեն միմեանց...

«Արևը վաղուց արդէն քաշել էր իր վերջին ճառագայթները։ Նոքա ամենևին չէին նկատել, որ հովանոցի մէջ տիրումէր մթին խաւար։

«Մի եղնքտրական ցնցում սթափեց վարժապետին իր խորին հոգեզմայլութիւնից, երբ նա զգաց, որ օրիորդի շրթունքը ջերմ կերպով սեղմուեցան իրենների վերա...

Ե·

Բժշկապետն, որ խորին ուշադրութեամբ լսում էր երիտասարդին, ընդհատեց նորա խօսքը, ասելով՝

—Ես չեմ սխալվում կարծելով, որ յիշեալ վարժապետը դուք լինելու էք, պարո՛ն։

Երիտասարդ Արէսեանն ոչինչ չը պատասխանեց, բայց նորա լռութեան մէջ նշմարվում էր այն խոստովանութիւնը, թէ բժշկապետի նկատողութիւնը հետու չէր ճշմարտութիւնից։

—Շարունակեցէ՛ք, խնդրեմ, ասաց բժշկապետը, չը կամենալով աւելի վրդովել նորան։

Երիտասարդը չարունակեց՝

«Երբ ես սթափուեցայ, պարո՛ն բժշկապետ, իսկոյն զգացի, որ կապուած եմ մի անհասկանալի չղթայով,— դա սիրոյ անխզելի չղթան էր, որով ամէն մի օղակները տարիներով զարքնուել էին բոցավառուած սրտիս կրակի մէջ... Ես ուրախ էի, ես երջանիկ համարումէի ինձ, մտածելով, թէ Սօնան սիրումէր ինձ ... Դէպի գաւառը գնալու դիտաւորութիւնս բոլորովին փոխեցի, վճռելով միշտ Սօնայի մօտ մնալ և նորանով բախտաւոր լինել...

«Բայց գեռ չը գիտէի և գուշակել անգամ կարող չէի, թէ սատանան որպիսի որոգայթ լարումէր ինձ համար, որ և եղաւ խեղճ Սօնայի դժբախտութեան պատճառը...

Այստեղ Արէսեանը դարձեալ կանգ առաւ և նորա դէմքը մթնեցաւ տխրութեան ամպով։

«Ա՛խ սէր, ախ սէր, ցնորամիտ սէր... կսկծաց նա,

դու աւելի լի ես յիմարութիւններով, երբ բորբոքվում ես մի անփորձ սրտի մէջ...

«Հովանոցի անցքէն յետոյ, յաւաջ տարաւ Արէսեանն, ես դառնվումէի բոլորովին տենդային դրութեան մէջ։ Գունը բոլորովին անհետացաւ իմ աչքերէն, ես ամբողջ օրն անհանգիստ էի։

«Տիկինը միշտ սառն էր ինձ հետ։ Նորա լեզուն դադարեց իւր սովորական չատախօսելուց, նա միշտ տխուր էր և լուռ։ Բայց այդ ծածկամիտ լռութեան մէջ թաղնուած էր մի սարսափելի դաղանիք։

«Օրիորդի մայրն այն վտանգաւոր կնիկներից մինն էր, որ չէր կարելի չը վախենալ նորանից։ Մի քանի դէպքեր նորա պատմութիւնից, որք ինձ լաւ յայտնի էին, առիթ էին տալիս մտածել, որ նա պատրաստ էր ամէն չար գործելու միջին, երբ նա չէր հնազանդվում նորա կամքին...

«Բայց երիտասարդութիւնն, անմիտ երիտասարդութիւնը՝ միշտ հետու է պահում իւրեան խոհեմութիւնից...։ Ես չը կարողացայ երկար համբերող լինել...

«Օրիորդը չատ սիրումէր մանր դալ լուսնեակ գիշերով, մանաւանդ երբ նա չըջումէր անտառի մթութեան մէջ։ Մի գիշեր նա ինձ առաջարկեց կատարել մի այդպիսի զբօսանք, յայտնելով, թէ չատ տխուր էր և կամենումէր իւր ամբոխմունքը ցրուել։ Ես սիրով յանձն առի, ամենևին չը մտածելով, որ այդ կատարվումէր առանց նորա մօր գիտութեանը։

«Գիշերը խաղաղ էր և լուռ։ Լուսինը նայելով

ահռելի պարզ երկնակամարի վերա և թափուկեր իր արծաթի չողքերը նիրհած անտառների մէջ, աւելի ևս քաղցրացնելու դարևոր ծառերի նախայական քունը։

«Զբօսանքի ամբողջ ժամանակն օրիորդը քաշ էր ընկած իմ թևքէն. նա խօտուկեր առանց լռելու և նորա խօսքերն այնքան տաք և անուշ էին, որպէս հրեշտակի չունչը . . . : Անվերատեսի կերպով մենք բաւականին հեռացել էինք տնից, երբ գտանվումէինք անտառի խորքում։ Վերջապէս «յոգնեցայ» ասաց օրիորդը և նստեց մի կտրած ծառաբունի վերա։ Ես լուռ նստեցի նորա մօտ։

«Վառնի չողքերը թափանցել էին ծառերի տատերի միջից և նոցա կաթնագոյն լուսով օրիորդի դէմքը նկարվումէր այն սրբազան լռութեան մէջ, որպէս անտառային հաւերժահարսի կերպարանքը։

—«Ի՛նչ գեղեցիկ է այստեղ, Օսէփ, ասաց նա լի քանաստեղծական ոգևորութեամբ. ինչու չը լինել մեղ մի զոյգ անտառային եղջերուներից և բնակվել միշտ այդ սարերի, այդ ձորերի և այդ ծառերի լռութեան մէջ . . . : Անասուններն այստեղ աւելի երջանիկ են, քան թէ մենք մեր չքնաղագոյն դահլիճներում . . . Այստեղ, այս ծառերի սրբազան լռութեան մէջ՝ մայրերը չեն խանկարում իւրեանց ծոցերի ոչ սէրը, ոչ նոցա ծիծաղը և ոչ արտասուքը։ Այստեղ մի սրբարան է, Օսէփ, ուր սէրը կարող է աղատ կերպով պաշտուիլ . . .

«Ես ավշեցայ, և աւելի պարզ ասած, մինչ այն աստիճան յիմարացայ, որ մի բառ անգամ չը կարողացայ դանել պատասխանելու իմ սիրուհուն։ Միայն ղլուխս նորա գիրկը դրած, նորա ձեռքերը առէպ առէպ սեղմուկէի չրթունքիս վերա։

Անվերատեսի կերպով անցել էր գիշերը։ Մենք այդ կախարդական մոռացութեան մէջ անցուցել էինք քանի մի ժամեր, ժամեր, որոց ամեն մի րոպէին այժմ կեանքս կը գոհէի . . .

«Ցանկարծ թփերի միջից լսելի եղաւ խշխշոց, դա նման էր բարակ ղեսատի ոստափնների։

—„Այստեղ ինչ է՛ք չինում.“ լսելի եղաւ մի ձայն։

„Դա Սօնայի մօր ձայնն էր . . . : Կայծակի հարուածքն այնքան սարսափելի չէր կարող լինել, քան թէ այդ զարհուրելի ձայնը։

„Երեսումէր, տիկինն երկար լսումէր մեզ։

„Ես ըսկսում էի քարացայ։ Օրիորդն ամենևին չը կորցրեց իւր արիւթիւնը։ Նա ընկաւ իւր մօր ոտքերը և նորա արտասուալի հեկեկանքի միջից լսելի եղան այդ խօսքերը.—„Մայր իմ, մի բարկացիր, ես պիտումամ Օսէփին . . .

„Տիկնոջ դէմքն այնքան ահարկու էր, որպէս կատաղած դազանի կերպարանքը։ Այստամենայնիւ, նա զսպեց իւր բարկութիւնը և հրամայեց մեզ տուն դառնալ։

„Արշալոյսը դեռ նոր սկսել էր չառագունել։ Մենք անցուցել էինք ամբողջ գիշերն անտառում . . .

„Օրիորդը, գլուխը քաշ քցած, սկսեց դիմել դէպի տուն։ Ես այլ ևս չը համարձակվեցայ առնել նո-

բա թևքը, թէև տեսնումէի, որ նորա մէջ չըջելու ուժ չէր մնացել . . .

Ջ.

,,Սեպտեմբերի վերջին չաբաթները մօտեցել էին։ Ցուրան օրըստօրէ դառնումէր ղժալի. երկինքը թղպատումէր և օրերն անցնումէին մռայլոտ և անձրևաբեր։

,,Ամարանոցի կեանքը կորցրեց իւր վայելչութիւնքը։

,,Մենք վերադարձանք քաղաքը։

,,Ես միշտ սպասումէի, որ տիկինը վերջին անգամ կտտոյ ինձանից բացատրութիւններ կը պահանջէ, բայց նա միշտ լուռ էր, և այդ խորհրդաւոր լռութեան մէջ ծածկուած էր մի սարսափելի խորամանկութիւն։ Հին վարպետուհին արդէն զինուորուած էր հնարագիտութեան բոլոր զէնքերով, զէնքերով, որք պէտք է խորտակէին և ոչնչացնէին իմ և Սօնայի բախտը . . .

,,Տիկինն այնքան համբերող էր, որ ոչինչ չը յայտնեց իւր ամուսնին իմ և Սօնայի սիրահարութեանց մասին։ Եւ ես ու օրիորդը մեր կողմից այնքան համարձակութիւն չունեցանք պարզապէս խոստովանելու տիկնոջ ամուսնին մեր սէրն։ Ի՛նչ պէտք էր այդ բան։ Իմ դրութիւնը յետզհետէ դառնումէր անտանելի։ Այդ տանջանքէն ազատուելու հնարը գտայ միայն վարժապետութիւնէս հրաժարական տալու մէջ։ Թէև այդ խիստ ցաւալի ներգործութիւն ունեցաւ Սօնայի վերա, բայց ուրիշ ճար չը կար, ես պէտք է հեռանայի նորանից, պէտք է հեռանայի, գուցէ կա-

րողանայի ազատուել նորա մօր որոգայթներէն . . .

,,Ես չը մոռացայ Սօնային և մոռանալ ևս կարող չէի, որովհետև նորա սիրոյ հետ կապուած էր իմ կենդանութիւնը։ Բայց ցաւալին այն էր, որ օրիորդն այնուհետև եղաւ ինձ անմատչելի. ես այլ ևս նորան տեսնել չը կարողացայ։

,,Ամբողջ քանի մի չաբաթ ես նորանից տեղեկութիւն չունէի։ Իմ անհանգստութեանը չափ չը կար։ Ամեն օր անցնումէի այն լուսամուտի առջևից, որտեղից օրիորդը սովորաբար դէպի փողոցը նայել կը սիրէր, բայց միանգամ ևս չը կարողացայ տեսնել նորան։

,,Իմ մտատանջութիւնն աւելի սաստկանումէր, ես հաւատացրի ինձ, թէ նա անպատճառ հիւանդացած պէտք է լինի։ Բայց ո՛րքան ուրախացայ, երբ մի օր օրիորդի սպասուհին ինձ մօտ եկաւ։ Առաջին հարցմունքն, որ արեցի նորանից, էր Սօնայի առողջութեան մասին։ Սպասուհին փոխանակ պատասխանելու, տուեց ինձ մի նամակ։ Դա նորա գրածն էր։ Ես երեխայի նման սկսեցի ուրախանալ։ Աղախինը զարմանալով նայումէր ինձ վերա։

,,Անհամբերութեամբ աչքերս վազեցրի նամակի տողերի վերա. յանկարծ սարսափեցայ, իմ բոլոր ուրախութիւնը արտասուքեան փոխուեցաւ։

,,Ես ինձ հետ չունեմ այն դժբաղդ նամակը, պարոն քժշկապետ, բայց մինչև այսօր, գուցէ մինչև մահ նորա ամեն մի տողն անպակաս ես չեմ մոռանալ . . .

,,Օրիորդը ցաւալի կերպով նկարագրումէր այն

դառն կսկիծն, որ պատճառեց նորան իմ բացակայութիւնն։ Աւելցնում էր, որ բացի ինձանից ուրիշ մխիթարութիւն չունի. խիստ դղալի խօսքերով արտայայտում էր իւր սէրը դէպի ինձ. և վերջ ի վերջոյ յայտնում էր, թէ նորան սպառնում է մի մօտաւոր վտանգ, որ կարող էր մեզ յաւիտեան բաժանել միմեանցից...

,,Ես բոլորովին մարեցայ վերջին տողերը կարդալու միջոցին, իմ թևքերը թուլացան և նամակն ընկաւ իմ ձեռքից։

,,Քառորդ ժամից յետոյ, երբ մի փոքր ուժ ստացայ, կրկին վեր առայ նամակը, կրկին կարդացի, կարծելով, թէ իմ աչքերը խաբում էին ինձ։ Եւ իրաւի, նամակի մէջ թողել էի մի քանի տողեր։ Այն տողերի իմաստն ամբողջապէս կը հաղորդեմ ձեզ, պարոն բժշկապետ։—«Այս դիշեր, այս դիշեր, գրում էր նա, տասերկու ժամին ես կըսպասեմ քեզ իմ սենեակում. ել, ազատիր ինձ, աղախինս կառաջնորդէ քեզ, եթէ մի փոքր ուշանաս, եթէ այս դիշեր չը տեսնուենք, ես յաւիտեան կորած եմ քեզ համար...»։

,,Իմ սարսափը մի փոքր մեղմացաւ այն յոյսով, որ ես կրկին պէտք է տեսնէի Օնային։ Նորա սպասուհի աղջկայ հետ բոլոր պայմանները կապեցինք. որոշեցինք տեղն, ուր կարող էինք հանդիպել միմեանց։ Նա հեռացաւ, ես անհամբերութեամբ սպասում էի նշանակեալ ժամին։»

Է.

,,Տասերկու ժամին քառորդ մնացած աղախինն ինձ սպասումէր իւրեանց տան անկիւնում։ Ես գոայ

նորան բոլորովին ծպտեալ հագուստով։ Դրների բանալիները իւր հետ առնէր։ Նա շատ զգուշութեամբ ինձ ներս տարաւ։ Այդ քնարանի բոլոր մուտքերն այնքան ծանօթ էին ինձ, մինչ ես խաւարի մէջ դնում էի առանց վրիպելու։ Վերջապէս Օնայի քնարանի դրանը հասայ։ Ես իմ մէջ այնքան ուժ չէի զգում նորան հանդիպելու, երբ երկու քնքուշ թևքեր փաթաթուեցան իմ վզով։ Գիշերային ոգին ընկաւ իմ դիրկն. նա իւր սենեակի դրանը հսկումէր իմ գալստեանը։

,,Մենք ներս մտանք։ Օնայի քնարանը լուսաւորուած էր խիստ աղօտ լուսով։

,,Իմ լեղուն, պարոն բժշկապետ, չէ գտնում այն կենդանի բառերն, որ կարողանամ նկարագրել այն բախտաւոր րոպէն, երբ միւսանգամ սիրուհիս իմ գրկումը դտայ,—լաց, արտասուք, համբոյր, ծիծաղ, բոլորը մի քանի վարկենում միախառնուեցան միմեանց հետ...

,,Ամբողջ ամիս էր, որ ես չէի տեսել Օնային. այդ միջոցում այնքան մաշուել էր նա, կարծես, գեռ նոր էր բաժանուել հիւանդութեան մահճից։

—,,Դու անգութ ես, Օսէվ, ասաց նա, դու ինձ յաւիտեան կը կորցնէիր, եթէ ես կանչած չը լինէի քեզ։

,,Այդ խօսքերն արտասանեց նա այնպիսի մի ցաւակցութեամբ, որ կրակի պէս այրեցին իմ սիրտս։ Ես նայեցայ նորա վերա, նորա դէմքը դունատ էր որպէս մարմարիոն, և արտասուքով լեցուած աչքերը

ներկայացնումէին տիրութեան՝ ամբողջ մի ովկիանոս...

,,Ես ոչինչ բառեր չը գտայ նորան պատասխանելու, միայն ապշած նայումէի նորա վերա և նորա վախուկ ձեռքերը թրջումէի իմ արտասուքով։

—,,Ժամանակը խիստ թանգ է մեզ, Օսէփ, ընդհատեց օրիորդը մեր մէջ տիրող լռութիւնն. ես շատ բաներ ունեմ քեզ պատմելու, իսկանք այժմ մեր վիճակի վերա։

,,Ես պատրաստուեցայ նորան լսել։ Մինչև այսօր իմ աչքի առջևն է նորա տխրամած և վշտահար դէմքը, թէ որպիսի ցաւալի կերպով նա պատմումէր բոլոր անցածն ամարանոցէն դառնալէն յետոյ։

—,,Ջո հեռանալէն յետոյ, ասաց օրիորդը, մայրս և հայրս ունէին առանձնակի խօսակցութիւններ, որք շատ անգամ նոցա մէջ հանդուրժէին տաք վիճաբանութեան։ Այդ տևեց քանի մի օր։ Վերջապէս ես նկատեցի, որ նոքա հաշտուեցան։ Երեւումէր, յաղթականը մնաց հօրս կողմը, որովհետև նորանից յետոյ ես գտնումէի նորան աւելի ուրախ։ Այդ գաղտնիքն ինձ բոլորովին յայտնի եղաւ, երբ մի օր հայրս ինձ իւր մօտ կանչեց։ Անդամ ներկայ էր և մայրս։ ,,Սօնա, ասաց նա ինձ խիստ ծանր կերպով, դու դիտես որքան ես սիրումեմ քեզ, որքան մի հայր կը սիրէ իւր զաւակը։ Բայց մենք ունենք և մի աւելի բարձր սէր դէպի Աստուած, որ քո և մեր ամենի ստեղծողն է։ Մեր պարտաւորութիւնների կատարումը դէպի նա, բոլոր մարդկային

պարտաւորութիւններից ամենասրբազանն է։ Լսիր, Սօնա, այժմ ես ստիպուած եմ քեզ յայտնել մի ընտանեկան գաղտնիք, որ մինչև այսօր քեզանից ծածուկ մնացած է։ Մայրդ քո ծննդեան ժամանակ ամենասաստիկ երկանց մէջ ընկաւ։ Բաղաքից բոլոր բժիշկները չը կարողացան ազատել նորան։ Վերջապէս նա իւր յոյսն Աստուծոյ վերա դրեց և ուխտեց նորա առջև՝—եթէ ծնունդն արու կը լինի, նա խոստացաւ մի վանքում ճգնաւորութեան նուիրել. իսկ եթէ աղջիկ կը լինի, խոստացաւ կուսանոցն ընծայել նորան, որ սուրբ Աստուածածնին աղախին դառնայ։ Այդ ուխտը լսելի եղաւ Աստուծոյ աթոռի մօտ և մայրդ ազատուեցաւ։ Այժմ սիրելի Սօնայ, կատարէ քո որդիական պարտաւորութիւնն և ազատիր մօրդ հոգին այդ մեծ և ծանր պատասխանատուութիւնից։»

,,Վերջին խօսքերն, ասաց օրիորդն, ինձ վերա այլ ևս լսելու ուժ չը թողեցին. ես փախթախուեցայ հօրս ոտքերով և սկսեցի իմ արտասուքով թրջել նորանց։ Երկար նա աշխատումէր հեռացնել և միխիթարել ինձ, բայց հնարք չեղաւ։ ,,Ես սիրահարուած եմ, ասացի նորան, իմ սիրտն ինձ չէ պատկանում, ես սիրումեմ Օսէփին...“

,,Մայրս, չարունակեց օրիորդը, քարէ արձանի նման նայումէր այդ տեսարանին, մայրական սէրը կարծես բոլորովին մեռած էր նորա սրտի մէջ։ Հայրս ամենևին ուշադրութիւն չը դարձրեց իմ արտասուքս ու լացին. նորա մէջ ծնողական թէ գութ, թէ

խղճ—բոլորը հանգած էին... Երբ նա տեսաւ իւր խրատներով չը կարողացաւ համոզել ինձ, բացա-ձակ հրաման արաւ—,,Ձո ժամանակը լրացած է, դու պէտք է կուսանոց գնաս։“—

,,Սարսափելով լսումէի ես օրիորդի խօսքերը և երևակայել չէի կարող մի ՚այդպիսի բարբարոսութիւն։

,,Այժմ ինչ պէտք է արած, սիրելի Սօնա, հարց արի նորանից, երբ նա մի փոքր հանգստացաւ իւր խռովութիւնից, որ պատճառել էր նորանում իւր ցաւալի պատմութիւնը։

—,,Ես չը գիտեմ, ես ոչինչ չը գիտեմ, Օաէվ, ես բոլորովին չփոթուած եմ, ես կը մեռնեմ, եթէ ինձ կուսանոց տանեն. աղաւոր ինձ, ասումէր նա դառն կերպով լայ լինելով։

,,Ես էլ չը գիտէի, թէ ինչ պէտք էր անել, գնալ հօր մօտ, յայտնել նորան մեր սէրը և աղաչել, որ փոխէ մի այդպիսի բարբարոսական վճիռն, անկարելի էր, որովհետև ինձ յայտնի էր նորա խստասրտութիւնը։ Գնալ մօր մօտ և մին կերպով ղրաւել նորան, որ չանէ այդ բանը, դա նոյնպէս մի ցաւալի վախճան չէր խոստանում։ Երկար մտատանջութիւնից յետոյ ես ասեցի օրիորդին՝

,,Ինչ որ առաջարկելու լինեմ, կընդունեա՞ս։

—,,Կընդունեմ, կընդունեմ, պատասխանեց նա ղժալի կերպով, միայն ինչ որ ասելու ես, չուտ ասա, ինչ որ անելու ես, չուտ արա. ինձ աղաւոր, եթէ ոչ երկուշաբթի օրն ես կուսանոցում կը լինեմ։

,,Ժամանակը խիստ կարճ էր, մի քանի օր միայն մնում էր երկուշաբթին։ Ես առաջարկեցի օրիորդին նորա ազատութեան վերջին և ծայրայեղ հնարը։

,,Մենք պէտք է փախչենք, Սօնայ, ուրիշ ճար չը կայ, ասացի նորան։

—,,Փախչենք, կրկնեց նա, ուր որ գնաս, քեզ հետ կը գամ, մինչև աչխարհիս ծայրը։

,,Վերջին խօսքերն այնպիսի մի կլկթով արտասանեց նա, որ օրիորդի աչքերում ես նկատեցի վրէժխնդրութեան բոցեր։ Երբէք չէի տեսել ես Սօնային այնպէս անձնավստահ և վճռական, որպէս այն րոպէին։ Կանացի տկարութիւնները, կարծես, կորուսել էին նորա մէջ իւրեանց թուլութիւնքը, և նա ոգևորուած էր մի վսեմ քաջասրտութիւնով, փչրելու և ջախջախելու չղթայներն, որք բռնաբարումեն ընտանեկան ազատութիւնը և իրաւունքը։

,,Մեր մէջ ամեն պայման վերջացած էր. մենք որոշեցինք օրը, ժամը, երբ պէտք է կատարուէր մեր փախուստը։ Լուսաբացին ես հեռացայ Սօնայի քնարանից։

,,Բայց մենք շատ անփորձ էինք, մեզ չը յաջողուեցաւ այդ բախտը։ Մի և նոյն գիշերը լրտեսեցին մեր բոլոր դաղտնիքը և Սօնան նշանակեալ օրը կուսանոց տարուեցաւ. իսկ մնացեալը ձեզ ՚արդէն յայտնի է, պարոն բժշկապետ....»

Ը.

Երիտասարդն աւարտեց իւր պատմութիւնը։ Բժշկապետն, որ ցաւակցելով լսումէր նորան, բռնեց

Արէսեանի ձեռքը, ասելով՝

—Շնորհակալ եմ, պարոն, ձեր պատմութեան համար և շատ ցաւումեմ, որ այդպէս պատահել է։ Ինձ տակաւին հասկանալի չէ մի բան, թէ ինչ էր պէսաւոր չարժառիթն, որ ստիպեց օրիորդի ծնողքներին նորան կուսանոցը տալ, արդեօք այն ուխտն էր, որ նոքա ուխտել էին սկզբում, թէ այլ պատճառ։

—Այո՛ ուխտը։ Գիտէք, պարոն բժշկապետ, թէ ինչ նշանակութիւն ունի կրօնական ուխտադրութիւնն այնպիսի մոլեռանդների համար, որպիսի էին օրիորդ Սօնայի հայրն ու մայրն։ Այժմ ձեզ բաւականին յայտնի է նոցա կեանքոտ անցեալն, իսկ նոցա ներկան դարձեալ ազատ չէ նոյն կեանքերից։ Այսու ամենայնիւ, նոքա համարումն բարեպաշտ քրիստոնեաներ, նորանց պատիւն ամբոխն, որպէս բարեխիղճ մարդկերին։ Նոքա կողոպտումն, նոքա չարչատումն, նոցա ամեն մի արծաթը լի է հաղարաւոր խեղճերի արիւնով և արտասուքով. բայց դոքա չեն երևում, այդպիսի չարագործութիւնքը ծածկումն բարեպաշտական կեղծ քօղով։ Նոքա խլումն աղքատի վերջին կօպեկը և այդ փողով մոմեր են վառում սուրբ պատկերների առջև, Նոքա չարչատումն որբերի պատառ հացը և կերակրումն քահանայներին։ Նոքա սուտ երդումներ են անում, չողոքորթումն, բամբասումն, հայհոյումն, անէծքներ են թափում և նոյն շրթունքներով աղօթումն Աստուծոյ առջև, առանց զգալու իւրեանց սրտում, խղճի խայթը։ Ի՞նչու։—Որովհետև թէ առաջինն և

թէ վերջինն՝ երկուսն էլ նոցա համար սովորական բաներ են, կարծես թէ, մինը միւսին չէր արդելում։

—Բայց միթէ նոքա կարող էին այնպէս անխիղճ վնասել դէպի իւրեանց աղջիկը, դաստիարակն սկրուտնն իւրեանց ձագերին, կարեց քժշկապետն Արէսեանի խօսքը։

—Նախ, որ հայ ընտանիքներում աղջիկը սեպհական կամք, զգացմունք չունի. նորա բոլոր դիւութիւնը պատկանում ծնողքներին, մանաւանդ մի այդպիսի դէպքում, ուր հարցը բոլորովին կրօնական է։ Կուսանոցը նուիրել իւր դուստրը նորա կամքին ընդդէմ, մի և նոյն է, որպէս նոքա իւրեանց անասուններից միևը նուիրումն այս կամ այն ուխտաւորին պահելու համար։ Անասունի ողորմելի բարեչմունքն ոչինչ արդելք չէ կարող դնել նորա սիրոջ բարեպաշտական նպատակին, մանաւանդ երբ մի այդպիսի վարմունքը չահում էր ամբոխի համակրութիւնը։

—Այժմ բոլորը հասկացայ, պատասխանեց բժշկապետը զարմացքով գլուխը չարժելով. սարսափելի մի գոհ, որ անպատրոյն հայրը նուիրում է իւր մանուսաութեանը . . .

—Դուք բոլորը հասկացաք, պարոն բժշկապետ, կրկնեց Արէսեանը. բայց ես աշխարհի բոլոր անբախտներից թշուառագոյնը կը լինեմ, եթէ օրիորդը չապրէ։

—Այժմ պէտք է մտածել նորա համար։ խօսեց բժշկապետը կանգնելով, և նայեց ժամացոյցին, ասելով—Դեռ տասերկուքը չը կայ, դուք կարող էք ինձ

առաջնորդել մինչև հիւանդի հօր տունը. դարձաւ նա դէպի Արէսեանը։

—Մեծ ուրախութեամբ, պատասխանեց երիտասարդը։

—Որեւէն գնանք։

Քառորդ ժամից յետոյ կառքը կանգնեց մի հոյակապ տան հանդէպ։ Բժշկապետը թողեց երիտասարդին կառքի մէջ, ինքը վայր իջաւ և սկսաւ քաշել դրան զանգակը։ Քանի րոպէից յետոյ բժշկապետը ներս ընդունվեցաւ։ Շքեղազարդ դահլիճներից անցաւ նա մինչև տանուտիրոջ առանձնասենեակը։ Նա հասած նոյն ժամուն քրքրումէր իւր հաշուադրքերը։ Տեսնելով իւր հիւրը նորա վայրենի դէմքն ընդունեց մի կեղծեալ ժպիտ և խիստ քաղաքավարի կերպով խնդրեց բժշկապետին նստել։

Մի քանի գծերով կարելի է այդպէս նկարել այդ գաղանի պատկերը.—նա մի հաստ մսեղէն կոթողի նման մարդ էր։ Խնամքով ածիլած ուռած թշերը խառնուր ծալքերով միախառնուել էին դուրս ցցուած ծնօտքի հետ։ Մեծ քիթն, որպէս սովորաբար լինում են հայերի քիթերն, իւր պատուաւոր տեղն էր բռնել, լքանելով մինչև նորա ալեխառն բեխերն, որք ծածկել էին նորա դուրչ—կապտագոյն շրթունքը։ Սև աչքերի մէջ վառվռումէր վայրենի կրակ։ Առհասարակ նորա բոլոր կերպարանքը նեղկուած էր թուվ—դեղնագոյն բանգով, որ տալիս էր նորա դէմքին աւելի սարսափելի բնաւորութիւն։ Ներողութեան վինիքը դրած էր նորա ճակատի վերա։

Բժշկապետն առանց սպասելու յայտնեց իւր ովլինելն, ասաց, թէ որպէս նա գտնուել էր կուսանոցում և ինչ դրութեան մէջ գտել էր նորա աղջկան. մանրամասնաբար պատմեց բոլոր իւր լսածներն Արէսեան երիտասարդից։

Հիւանդի հայրն այդ բոլորը լսումէր, անհնարին սառնասրտութեամբ իւր ձեռքերը տրորելով։ Միայն երբեմն նորա վայրենի դէմքի վերա երեւումէին անսովոր ցնցումներ, որք արտայայտումէին ներքին պատերազմը . . .

Բժշկապետն իւր պատմութիւնը վերջացրուց այդ խօսքերով—Ես իբրև բժիշկ իմ առաքելութիւն եմ համարում յայտնել ձեզ, պատուելի պարոն, որ դուք առանց ժամանակ կորցնելու պէտք է հասնէք ձեր աղջիկը կուսանոցին և անյապաղ ձեր տունը բերէք, ուր յոյս ունեմ, որ կառողջանայ նա, այնուհետև նորան իւր սիրած տղամարդին տաք։

Մի քանի րոպէ հիւանդի հայրը մնաց անորոշ դրութեան մէջ։ Բժշկապետը բոլորովին զարմացած էր նորա քարասրտութեան վերա։ Ոչ մի կաթիլ արտասուք չերեւաց նորա աչքերում, ոչ մի ցաւակցութեան նշոյլ չերևաց նորա սառը դէմքի վերա. չը նայելով, որ բժշկապետը խիստ կարեկցական ձևով նկարագրեց նորա դստեր դրութիւնը։

—Այդ անկարելի է, վերջապէս ասաց նա ողորմելի ձայնով. Նախախնամութեան կամքին ընդդիմանալ ով կարող է։ Եթէ Աստուած վճռել է իմ աղջկան մեռնել, ով կարող է արդելք դնել օրհասին. եթէ

նորա օրը հասած չէ, նա առանց մեր հոգատարութեան ևս կապրէ։

Զարմանալի բան է, որ այդպիսի գազաններն, որք իւրեանց կեանքում երբէք չեն մոռածել Աստուծոյ և երկնքի վերա, յանկարծ դառնում են ֆատալիստներ։ Հիւանդի հայրն այնպիսի մի ջերմեռանդութեամբ արտասանեց իւր խօսքերն, որ ստիպեց նորան մի քանի անգամ խաչակնքել իւր երեսն։ Այդ բռնակալների յատկանիշն է՝ իւրեանց բարբարոսութիւնքը ծածկել կրօնական քօղով և խղճի խայթերը հանդստացնել նախասահմանութեան անօրինութեամբ...

Այդպիսի տիպերն, որոց թիւը դժբախտաբար մեզանում խիստ շատ է, վաղուց ծանօթ էին բժշկապետին, և նա չը կարողանալով այլ ևս իւր համբերութիւնը զսպել, ասաց նորան՝

—Դուք ուրեմն կամենում եք սպանել ձեր աղջիկը։

—Նորա կեանքն և մահն Աստուծոյ ձեռքումն է. պատասխանեց նա ամէն սառնութեամբ։

—Գազան, կոչեց բժշկապետը կանգնելով. քեզնում մեռած են՝ որպէս մարդկային զգացմունք, նոյնպէս հայրական սէրը։ Բայց ևս իրրև բժիշկ ամենայն իրաւունք ունեմ նորան դուրս հանել իւր սպանողնոցէն։

Բժշկապետը հեռացաւ։ Հիւանդի հայրն իւր հոգւոյ բոլորովին անվրդով տրամադրութեամբ շարունակեց քրքրել իւր հաշուադրքերը...

Թ.

Երբ բժշկապետը դուրս եկաւ, Արէսեանն անհամբե-

րութեամբ հարցրուց՝—Արդեօք յաջողուեցա՞ւ... Բայց նկատելով Խորենեանի վրդովուած դրութիւնն, էլ չսպասեց պատասխանի։ Բժշկապետը հրամայեց քշել կառքը։

Քառորդ ժամից յետոյ նորա հասան կուսանոցի դրանն, առանց սպասելու ներս մտան և իսկոյն գնացին հիւանդի խուցը։ Խիստ աղօտ ճրագով լուսաւորուած էր այն սենեակը. մի պառաւ միանձնուհի նիրհումէր հիւանդի մահճակալի մօտ։

Բժշկապետը մօտեցաւ օրիորդին, տաքութիւնն անցել էր արդէն։ Նա ղրած էր իւր մահճի մէջ, որպէս սառն մարմարիոն։ Շնչառութիւնը թոյլ կերպով բարձրացնում էր նորա մաշուած կուրծքը։

Երիտասարդ Արէսեանը, տեսնելով թառամած և դալկացած գեղեցկութիւնը, սոսկաց, նորա աչքերի առջև սևացաւ, ոտքերը դողացին,—Աստուած իմ, կոչեց նա, և հազիւ հազ իւր թուլացած գլուխը վեր թողեց սիրուհու կուրծքի վերա։ Երկար այնպէս զըրկած ունէր նորան։ Բժշկապետն աշխատութեամբ արգելել երիտասարդին, որ նա չը վրդովէ հիւանդի հանգստութիւնը, բայց ամենևին չը կարողացաւ բաժանել նորանից։

Հիւանդը բաց արաւ նոր աղած աչքերը և ճանաչեց նորան։ «Ա՛խ, Օսէփ Ջան,» կոչեց նա և նորա սկարացած թևքերը կարծես նորից զօրութիւն ստացան, և փաթաթուեցան երիտասարդի վզովը։ Երկար օրիորդը ճնշած ունէր նորա գլուխն իւր կուրծքի վերա։ Արիւնն խառնուեցաւ նորա երակայութիւնը։

«Ա՛խ, Օսէփ Ջան, կրկնեց նա, ազատիր ինձ, տար ինձ . . . » Ասումէր նա իր տենդային Ջերմութեան մէջ։

Կրկին տիրեց լռութիւնը։ Մարած ճրագի վերջին պլպլոցը հանգաւ . . .

Բժշկապետը չօշափեց հիւանդի երակը և ասաց սարսափելով—Ամեն ինչ վերջացած է . . .

Նա հեռացրուց անբախտ երիտասարդին անչնչացած դիակէն։

Ցետոյ առեց Արէսեանին իր կառքի մէջ։ Կառքը սլացաւ, երիտասարդը կրկնումէր անդադար՝ «Օհնա Ջան, Օհնա Ջան, փախչենք, գնանք, ես կազատեմ քեզ . . .

Խղճալին ցնորքների մէջ էր։

ՏՆԱՅԻՆ ՓԵՍԱՅ

ՏՆԱՅԻՆ ՓԵՍԱՅ

Ա.

Գարնան թարմ և փափուկ երևկոյներից մինն էր։ Արևի վերջին ճառագայթները դեռ ոսկեզօծումէին կազ—Բէկի ձիւնապատ գագաթը։ Ժամաններից լսելի էին մինուճար մեղմ—քարեպաշտական հնչումները զանգահարութեան։ Հալաբարի պառաւ կնանիքը, ծածկուած իւրեանց սպիտակ չարսաւներով, ըստապումէին աղօթելու։

Նոյն ժամուն Դուրկալենց Շուշանը, թևքերը ծալած, կաթսայի փէշքերը գօտկումը խրած, լուացքի լաստանը ձեռին, դուրս եկաւ իւր փոքրիկ տնակի դռրանը, և նայելով իւր չորեքկողմն, երբ տեսաւ անցնող չը կայ, շուռ տուաւ լաստանն իւր դրան առջև և սապնախառն ջուրը սպիտակ պղպջակներով անհետացաւ փոշիներով պատած գետնի մէջ։

Փողոցի միւս ծայրից երևեցաւ պառաւ Մաքթաղը, ձեռին բռնած մի քանի հատ մոմ։ Նա իւր հետ բերումէր իւր Ջուխտակ թոռնիկներն, որոց առնն մինը

Նոյնպէս բռնած ունէին մի մի հատ փոքրիկ մոմեր։

—Ո՞ւր ես էդէնց ըշտապով գնում, Մաքթաղ Ջան, հարցրուց նրանից Շուշանը լապանը դնելով գետին։

—Փէթխաչին իմ գնում, Շուշան Ջան, օղորմած կենայ, գնումիմ համբուրելու. պատասխանեց Մաքթաղը ներմուծանդումեամբ։

—Էրնէկ քիզ, Մաքթաղ, վուր վոխտ ունիս համբուրելու, ես կի միր Սուրբ Մինասն էլ չիմ կանացի գնա։

Վերջին խօսքը չը դիւր եկաւ Մաքթաղին և նա զարմանալով հարցրեց՝—Ի՞նչի չմ։ Գանա կիրակնամուտ գիշերն էլ չիտ կու նըմնինին ժամիցը։

—Է՛հ, ինչ անիմ, Մաքթաղ Ջան, խղճումիննը դըժար բան է։—Հոգուց հանելով պատասխանեց Շուշանը։—Էսօր առուտէմէն կցած մատնիցս տրորուեցան չատ լուացք անելէմէն։ Իմ Նատօն էլ ջեր չի պռծի ումօ քանը։

Լսելով Նատօի անունը մի նոր միտք ծագեց Մաքթաղի գլխում։ Նա փոխեց իւր խօսքը։

—Լաւ արիր, վուր միտս բերիր, ասա, թէ քու Աստուծը կու սիրիս, ձվ է էն ջհել տղէն, վուր չուստ չուստ ձիր տունն է գալիս։

Շուշանը փոքր ինչ չփոթուեցաւ։

—Ղարիբ օքմին է, Մաքթաղ Ջան, էնպէս գալիս է, էլի. խան լուացք է բերում, խան կարկատան է բերում, չատ գամէլ գալիս է էնպէս խօսելու։

—Ո՞վ է, վըր տղանցն է։

— Ղարաբաղցի է, Մաքթաղ Ջան, մինձ մարթու

ձուրքի է՝ կի, ինքն ասումէ, վուր հէրն էնդի մէլիք է. չատ փուղ ունի, ասումէ, բաղ, բաղչայ, մուլքեր ունի, կօսէ։

Այդ խօսքերը չարժեցին Մաքթաղի զարմացքը։

—Լաւ, ասաց նա, թէ վուր էդէնց մարթու վուրթի է, բաս ինչի է միր քաղքումը պարապ թրև գալի։

—Ձիմ իմանում, Մաքթաղ Ջան, իրան վուր հարցնումիս, ասումէ, մինթօմ հօրմէն խռովիլ է ու միր քաղաքն է էկի։ Հէրը կի հէնց մի գլուխ գրումէ՝ վուրթի Ջան, հէրիք ձնաս գարիր երկրումը, թող արի, տուն ու տեղից տիրումին ասա. ամա ինքն կի չէ գնում։

—Բաս էտուղ ինչ պիտի չինի։

—Ասումէ մաղազիայ պիտիմ բաց անի, վուր լաւ լաւ ապրանքներ ծախիմ։

—Իժում փուղ ունէ։

—Ձիմի չունէ, ամա ասումէ, էնքան կու մնամ, ինչքի հէրս մեռնի, իժում կիհամ, նրա մուլքերը կու ծախիմ, փուղ կու չինիմ։

Մաքթաղի խոժոռ դէմքի ծալքերը չարժուեցան մի հեգնական ծիծաղով։—Էդ լաւ բան է, Շուշան Ջան, բաս դու աղօթք արա, վուր չուտ մեռնի։

—Վընց թէ աղօթք անիմ, չփոթուելով հարցրուց Շուշանը։

—Էլ ինչ ասիլ կուզէ, պիտի Աստծուն աղանչաք անիս, վուր մուրադիդ չուտ հասնիս . . .

Շուշանը ձևացրուց դժգոհութեան նշաններ։—Ի՞նչ մուրադ, ինչքեր ես խօսում, Մաքթաղ.—խօսեց նա

երեսը չուռ տալով։

—Գանա չիմ գիտի, վուր ուղումիս Նատօիդ էն տղին տայ, վուր տանու—փէսայ (*) չինիս։

—Չէ, խաչը գիտենայ։

Մաքթաղը չարունակեց իր ճանապարհը ասելով—ինձ Զիկլօինց Մաքթաղ կօսին, Մաքթաղ, չիս գիտի վուր ծաերն ինձ համա խաբար ին բերում։

Շուշանն ոչինչ չը պատասխանեց, մտաւ տունը։

Բ.

Մի նեղ բակ երկու փոքրիկ սենեակներով, չրջապատած տախտակամածով, ներկայացնում էր այն տրնակն, ուր ներս մտաւ Շուշանը։ Այդ բնակարանը նորան չէր պատկանում, այլ վարձած էր խիստ թեթև ամսականով։

Բակի մի անկիւնում ուրագը ձեռին գործում էր մի հիւան։ Նա կամ տաշում էր, կամ մեխում և յարմարեցնում տախտակները։ Նայելով նորա ձիւնի պէս սպիտակ մազերին՝ նորան կարելի էր համարել վաթսուն տարեկան ալեւոր, բայց մարմնով նա տակաւին առողջ էր, ժիր և գործունեայ։ Նորա երեսի խոշոր գծագրութիւնն՝ իր տխուր արտայայտութիւններով՝ բոլորովին համապատասխանում էր իր կոչած արհեստին։—Նա դագաղ չինող էր։

Ուստա Գրիգորն—այդպէս էր նորա անունը—Շուշանի ամուսինն էր։ Նորա մօտ անհամբեր դէմ-

(*) Տանու—փեսայ նշանակում է „տնային փեսայ,“ այդպէս կոչւում են այն փեսաներին, որք պսակվելուց յետոյ ապրում են իրենց աներոջ տան մէջ։

քով կանգնած էր մի մշեցի համալ հայկական հասակով և ըտտպեցնումէր նորան չուտ վերջացնել դագաղը։

—Հաւար, բաբօ, թէզ արա, խըլտուն է, տաս քավիկս կը կոլի. անդադար կրկնում էր մշեցին իր հայրենական բարբառով։

—Հէյ, Թօմաս աղայ, դու թէ չը մեռնէիր, մշեցին չէր կարող տանել քո տասը կապէկը... բացականչեց հիւսը չարունակելով իր գործը։

—Աստուած օղորմի անոր խօզուն, տասց համալը։

—Աստծու ողորմութիւնը թող նազաստակի նըման նրա գերեզմանի վրիցը թռչի, կտրեց մշեցու խօսքըն ուստա Գրիգորը։

—Ի՞նչու, աղէկ մարդ մը չէր Թօմաս աղան։

—Լաւ էր նրանով, որ չուտ մեռաւ։ Աղուէսն էն ժամանակն է պէտք գալիս, երբ որ սատկում է։

—Թօմաս աղան ասանկ մարդ էր, հարցրուց մշեցին։

—Հա՛։ Այս չարաթ մի քանի այդպիսիների համար դագաղ չինելու բախտն ունեցայ, մինն եկեղեցւոյ դանձապետ էր, մինն՝ հայի փօղրաղչիկ, բայց միւսը՝ վաչխառու։ Ա՛խ, ծրքան ուրախ բանում էի ուրացն, երբ որ այդպիսիների համար դագաղ է չինում...

—Երբ մեռնողն աղէկ մարդ է։

—Այն ժամանակ ես ուրախ չեմ, ինչպէս քանի օր առաջ չինեցի մի դագաղ վարժատան աշակերտի համար։

Ծերունի հիւսի ուշադրութիւնը գրաւեց տխուր երգի

ձայնն, որ լսելի էր վինուա փոքրիկ սենեակից։

«Ես սրտումս դարդ ունեմ,

«Փչով պատած վարդ ունեմ,

«Մէրիկ, մէրիկ, քօռանամ,

«Ես առկի մարդ ունեմ։»

Այդ նորա դստեր Նատօի ձայնն էր, որ նոյն ժամուն ուժգին էր քաշում և երգում էր։

—Նատօ, Նատօ, ձայն տուեց ծերունին։

—Ի՞նչ է, հայրիկ, լսելի եղաւ մի քնքուշ ձայն։

—Ե՛կ էստեղ։

—Էս նիմոուտին, հայրիկ, մի չարիկ է մնացել ութօելու։

Շուտով յայտնուեցաւ սենեակի դրանը մի բարձրահասակ օրիորդ՝ Թուխ աչքերով, սև մազերով, վարդ թշերով։ Նա իւր հասակի այն տարիներումն էր, երբ կուսական գարունքը դեռ նոր սկսել էր ծաղկել իւր ջերմ—մանկական Թարմութեամբ։

—Ե՛կ դաշտի խուփը մախմուրով պատէ, զանջիրայները մեխէ, ծաղիկները կպցրու, դրանք քո գործն է, ասաց աղջկան հայրը։

—Է՛հ. հողևմ նրա գլուխը, ծաղիկները էլ սիտի կպցնեմ. պատասխանեց Նատօն դժգոհութեամբ։

—Այդպէս են պատուիրած, որդի։

—Հայրիկ, այն ժամանակ տուր ինձ վարդեր չարեմ, երբ ջէհնէլի համար է դաշտը։

—Այդ փառքը հարուստներին է, որդի, նրանք մեզ նման աղքատներից լսած փողերով իրանց դաշտն են զարդարում . . .

—Կրծողը տանէ նրանց, ինչու են էդպէս անում։

—Որ էն կենդուումը սատանայները հոտ քաշեն։

—Ով գիտի, ուրախանում կը լինեն սատանայներն, երբ որ էդ ծաղիկները կը տեսնեն. էնպէս չէ, հայրիկ, հարցրուց Նատօն ինքն ևս մի առանձին ուրախութեամբ նայելով նոցա չքեղութեան վերա։

—Էդ բոլորը կէրեն դժոգքումը, պատասխանեց հայրը։

—Վա՛յ, կէրեն . . . կրկնեց Նատօն սարսափելով։

—Բա՛ս, էրումեն, երբոր դաշտը հարամ փողով է չինվում, վերջացրուց ծերունին։

—Երբ որ հալալ փողով է չինվում, էն ժամանակ ինչ են անում։

—Սուս կա՛ց, Նատօ, չատ բան որ սորվես, չուտ կը պառվես. ասաց նորան հայրը չարունակելով իւր գործը։

Նատօն լռեց, և առնելով մի փոքրիկ մուրճ, սկսեց օգնել իւր հօրը։

Գ.

Օրը կիւրակէ էր։ Արեգակի ճառագայթներն ուրախ ժպտով խաղում էին Շուշանի տան կուորատուած ապակիների հետ։ Վաղորդեան զեփիւռը ծաւալվում էր փափուկ և հոլատուն Թարմութեամբ։

Մանկահասակ աղջիկները, զարդարուած տօնական հագուստով, որը՝ կանգնած էր իւրեանց դրան չէմքի վերա՝ գաղտուկ նայում էր փողոցում անցուդարձ անողներին, ժպտում էր և թաղցնում էր իւր գլուխն, երբ որ մի տղամարդ էր գալիս։ Որը՝ դեռ չէր հա-

ռացել հայելուց, կոկումէր իւր դէմքը և զարդարումէր իւրեանս։ Ոմանք՝ հաւաքելով իւրեանց կտուրնեըի վերա, կամ նեղ բակերի մէջ՝ մի խումբ մեծ և փոքր աղջիկներ, դայիրայ և դիպլիպիտօ էլին ածում, տաշի խփում և հերթով պար էլին գալիս։ Ամեն տեղ տիրումէր ուրախութիւն, լսելի էլին լինում ծիծաղ և հանաքներ։ Իսկ Նատօն միայնակ և լուռ նստած էր իւր փոքրիկ սենեակում, նորա տխրամած դէմքը չէր ցուցանում ոչինչ ուրախութիւն։

Նոյն միջոցին ժամիցը յետ դարձաւ նորա մայրը Շուշանը, և տալով աղջկան մի պատառ նշխարք, ասաց՝

—Վա՛, աղջի, ջէր չուրերդ չես հագի։

—Է՛հ. ինչի համար հագնեմ .... պատասխանեց օրիորդն երեսը չրջելով։

—Դու էլի լացել ես, աչքերդ կարմրել են։

—Ջեմ լաց էլի, գլուխս է ցաւում։

—Հիմայ էլ աչքերումդ արտասուք կայ, ինչու ես ինձ խաբում։

—Ջեմ պիտում ... պատասխանեց օրիորդը տըխրութեամբ։

—Էլի լծանիրդ մօտ ին էլի։

Նատօն ոչինչ չը պատասխանեց և կամենումէր սենեակից դուրս գնալ։

—Աբի չարսաւս մո, կանչեց նորան մայրը։

Նատօն առեց չարսաւը, ծալեց, մի կողմ դրեց և սկսաւ մօր համար ածել թէյ։ Շուշանը նստած էր փոքրիկ տախտի վերա լուսամուտի հանդէպ։

—Ջուխտուդ—բէկն էսօր չէ եկել, հարցրուց նա։

Այդպէս կոչվումէր նոցա զարաքաղցի փեսացուի անունը։

Իսկ Նատօն, փոխանակ ուղղակի պատասխանելու հարցրուց՝—Դէդի, ինչվէս եի էդ տղէն մեր տունն սիտի գայ ու գնայ։

—Հուղեմ քու տուտուց գլուխը, պատասխանեց Շուշանը հեգնական ժպիտով. միթօմ դու ուրախ չես վուր նա գալիս ու գնումէ ...

—Ի՛նչ ունիմ ուրախանալու ... հարևաններն ինչ ասիս ինձ վրա ին ասում ... ամենի քերնի մաստաքն ես իմ դառի ...

—Նրանց աչքն էլ տրաքի, բարկանալով պատասխանեց Շուշանը։

Այդ խօսակցութեանը վերա հասաւ ուստայ Գրիգորը։—Լաւ ես ասում, ա կնիկ, ախար բանը բանի նման չէ, է, հարևաններն ինչ մեղ ունեն, որ բամբասումեն ...

Շուշանն աւելի բարկանալով կտրեց ամուսնի խօսքը։

—Ա՛ մարդ, էդ քու խելքի բան չէ, ծիտը ձվիս մէջ դավասիս մէջն իմ դցել, հիմի դուն ուզումիս թըռցընի ...

—Դուն դէդի, մէջ մտաւ Նատօն արտասուքը սրբելով. դուն իմ բօղազը պիտիս դուս կտրի, վունց որ տեհնումեմ ...

Օրիորդն էլ չսպասեց պատասխանի, սենեակից դուրս եկաւ։

—Իմ հոգին դիտենայ, դրուստ է ասում Նատօ

—ասաց ուստայ Գրիգորն աղջկայ դուրս գնալէն յետոյ։—Ջէր չը նչնած տղին ախար վռնց կուլի տուն թողնել, գանա էդ քաղքի նամուսը ձվիս գնացել է։

—Լաւ ես ասում, Գրիգոր, կորնց Շուշանն ամուսնի խօսքն, ես էլ գիտեմ վուր էգէնց է, ամա անիծուի հիմիկուայ ադաթը . . . Ի՞նչ անեմ, վուր ջուրը նրնկնեմ . . . Աղջիկս հասիլ է, մօտ տասնուվթը տարեկան է դառի, հիմայ մարդու տալու վախտն է։ Մենք երկուսս էլ աղքատ մարդիկ ենք. դու ձվիս կարուսես քու ուրագով մէր օրեկան հացը դադել։ Ես էլ, տեհնուսիս, ինչպէս չարչարվումիմ. ջէր էս ամիսվայ տան քրաէը չիմ կարացի տալ։ Տան տէրն ամեն օր պուխս տանումէ, փուղ է ուզում։ Դէ, արի դու փուղ ու բաժինք բէր, վուր աղջիկդ իրա ուզած մարդին տաս։ Վռնւր տեղից պիտի բերես։ Ու առանց փուղ ու բաժինքի էլ, դու գիտես, վուր մէր քաղքումն աղջիկ չին ուզում։ Անիծուի էդինց ադաթը . . . Հիմայ ձվիս մէ խամ օքմին իմ գլխի, գարիբ տղայ է, էստեղի ադաթը չէ իմանում. ասումէ, Նատօն սիրուն է, ես առանց փուղի էլ կու պսակուիմ։ Հիմայ դուն ինձ ասա, ա մարդ, կուլի վուր էդ թավուր տղին մէր ձեռնէմէն թող տանք։

Շուշանի այդ երկար մտնոլորը դարձեալ չը կարողացաւ հանդուրժացնել նորա ամուսնին և նա պատասխանեց՝

—Էդ ամինը դրուստ ես ասում, Շուշան, ամա դուն էն ասա, թէ կնկան ինչով պիտի պահէ. դուն

մէկ մուքթայ փեսայ ես գթի, որի չէրերը գլխովը աւելի դարտակ է։

—Ի՞նչ է ասում, քա, ախար փուղատուր մարթու վուրթի է, հօրէս հէրը կու մնունի ու դովլաթն իրան կու մնայ. ասաց Շուշանն ինքնավստահաբար յուսով։

—Բալքա չուտ չը մնուսու։

—Ջը մնուսու, մինք կու պահենք, տանու փեսայ կը չինենք։

—Էդ լաւ է . . . հեգնօրէն պատասխանեց ուստայ Գրիգորը։

—Թէ վուր վատ ըլի ինձանից պահանջի, ասաց կինը, դուն դորձ չունիս։

—Ես չը նչնուած տղին իմ տուն չիմ թողնի։

—Իմ ուզածն էլ էդի է գալի է, ախար, ա մարդ, դուն չես թողնում, վուր ես բանը պուխս բերիմ։

—Ես էդ գործիմէն իմ ձեռնները լուացի, ես կնկանց բազարին խառնվելու պուխս չունիմ։ Ասաց ուստայ Գրիգորը և անից դուրս գնաց, մտանցաւ մի խումբ մարդիկների, որք մի պատի ստորոտը նըստած, արևի շուաքի դէմ, գրից էին անում։

Գ.

Իսկ Նատօն, դուրս գալով տնեսակից, երկար դրլուվը ձեռքին կնսած, խորին մտորմնանի մէջ, նըստած էր իբրևանց բակի ցածրիկ պատի հովանոցնեըքև մի տախտակի վրա, որը ներս մտաւ նրանց ղրացի Քէթօի աղջիկը՝ Նիւսուցին։

—Ի՞նչ կու տաս, վուր ասիմ, թէ ում վրա էիր

փիքը անում. ծիծաղելով ասաց Նինուցին և նստեց Նատոի մոտ։

—Է՛հ, Նինուցի, էրնէկ քիզ, վուր դարդ չունես, ու էդպէս կանացիլ իս ծիծաղել. խօսեց Նատոն գլուխը բարձրացնելով։

—Ե՞ս դարդ չունեմ ... դուն չիս պիտի ունենայ, դուն ...

—Ի՞նչլի։

—Նրա համա վուր Գիգօլին քիզ սիրումէ։

—Ի՛նչ անիմ, վուր սիրումէ ... կրկնեց Նատոն սառնութեամբ։

—Էլ ինչ պիտիս անի, սարսաղ, մէ էնթավուր սիրուն, ջէհիլ տղէն վուր աղջկան սիրում ըլի, նա էլ դարդ կունենայ ...

—Բա՜ս չի ունենայ ...

—Է՛հ, հուղեմ քու տուտուց գլուխն ... ինքն էլ չի գիտի ինչ է խօսում. պատասխանեց Նինուցին քօքօլայ տալով Նատոի երեսին։

Նատոն բոպէական մտածութիւնից յետոյ պատասխանեց իր ընկերուհուն՝—Դուն փուղ ասա, փուղ, անխիլք, հիմայ միր սիրելն ով է հարցնում. ... Հաղար կուզէ աղջիկը սիրէ, հաղար կուզէ տղէն սիրէ, ով է այնումը գցում։ Նրանք էնէնց կու մաչուին, էնէնց կու մնռնին ու իրենց սէրն էնէնց գերեզմանը կը տանին, ու դովրը էլի փուղաւորին է մնում ...։

—Անիծուի էդէնց աղաթը, պատասխանեց Նինուցին դէմքը խոժոռելով։

Նատոն ոչինչ չը պատասխանեց, նորա դունատ

դէմքի վերա արտայայտվումէր սրտի բոլոր յուզմունքը։

—Ամա դուն էն ասա, Նատո ջան, Գիգօլին խօմ փուղ չէ ուզում. հարցրուց Նինուցին ցաւակցելով իւր ընկերուհուն։

—Գիգօլուն ով է մտիկ անում, պատասխանեց Նատոն տխրութեամբ. խօսքը հօրն ու մօրն է։

—Տղէն վուր ուզումէ, քա ջան, հէրն ու մէրն ինչ դաւի ունին։

—Փուղի դաւի ունին, իմացար։

Երկու ընկերուհիների մէջ կրկին տիրեց լռութիւնը։ Նոցանից ամեն մինը մտածումէր իւր վիճակի վերա։ Երկուսն էլ պսակուելու աղջիկներ էին, երկուսն էլ փող չունէին։ Ցաւալի դրութիւն, երբ ամուսնական չղթան զարգնվումէ արծաթի օղակներով ...

—Էն զարաբաղցի տղէն ինչ է ուզում, ընդհատեց Նինուցին լռութիւնը։

—Է՛հ, թաղեմ նրա գլուխն էլ ... պատասխանեց Նատոն մի առանձին զզուանքով։

—Ո՞վ է նա։

—Ի՞նչ գիտիմ։ Կապ կտրածի մէկն է, ով է։

—Ասումեն, դէղիդ ուզումէ քեզ էն աղին տայ։

—Ուզումէ։

—Իժում դուն ինչ ես ասում։

—Ես ինչ պիտիմ ասի ...

—Կը գնա՜ս, էլի։ Գիգօլուն պիտիս թողնի, էլի։

—Մունջ կաց, թէ Ասուած կը սիրես, Նինուցի։ դարդերս մի թաղացրու։

Նինուցին տեսնելով Նատօի աչքերի արտասուքը լուեց։ Մի քանի րոպէ նոքա տխուր կերպով նայուեցին միմեանց վերայ։

—Լաւ, Աստուծ օղորմած է, մի լայ ըլի. բռնեց Նատօի ձեռքից Նինուցին. դէ, վեր կաց գնանք մեր հարևան Սաբեղինց տունը. էնտիղ աղջիկները հաւաքուել են, պար են դալիս։

—Է՛հ, ինչ պար դալու սիրտ ունիմ ... ասաց Նատօն յետ քաշուելով։

—Աղջի, գժուել իս. էս կիրակի օրը վուչ չորերդ իս հագի, վուչ պլուկդ իս սանդրի. ով գիտէ, երեսըդ էլ չիս լուացի։ Ծիծաղելով յառաջ տարաւ Նինուցին։

—Թող տուր, թէ Աստուծ կը սիրեա։

Բայց Նինուցին չէր դադարում նորան քարշ տալով դէպի Սաբեանից տունը, երբ սենեակից լսելի եղաւ Շուշանի ձայնն, որ կանչումէր նորան։ Նատօն խնդոյն Թողեց իւր ընկերուհին և վազեց դէպի մայրը։ «Խեղճ Նատօ,» ասաց Նինուցին և գնաց Սաբեղինց տունը պար դալու։

Ե.

Նինուցին Նատօի միակ ընկերուհին էր, որոյ հետ նոքա չատ անգամ մանկահասներ էին անում, թափումէին իւրեանց սրտի դարդերը և միսիթարումէին մէկմէկու։ Այդ երկու աղջիկներն ոչինչ գաղտնիք չունէին միմեանցից։

Նոյն աւուր երեկոյեան պահուն Նինուցին կանգնած էր իւրեանց տանիքի վերա, որ կից էր Շուշա-

նենց կտուրին և նայումէր դէպի փողոցը։ Նա անցաւ չուչանենց կտուրը, անտես Նատօին իւրեանց բակումն, երբ Շրէյ սրտխումէր նա իւր ծաղիկները։

—Նատօ, Նատօ, ձայն տուեց նա։

Նատօն վեր նայեց, տեսաւ Նինուցին էր։—Ի՞նչ է, հարցրուց օրիորդը։

—Դէդէդ տանն է։

—Տանը չէ։

—Ապա ով կայ ձեր տանը։

—Ոչ ով չը կայ։

—Էստի արի, բան իմ ասում։

—Ի՞նչ իս ասում, էնտղանցէն ասա, էլի։

—Էստղանց չիմ կանայ ասի, դի վեր արի։

Նատօն բարձրացաւ իւր ընկերուհու մօտ։

Արեգակի վերջալոյսը գեռ խաղումէր եկեղեցիների խաչազարդ գմբէթների հետ։ Շրջակայ տների կտուրները կանաչին էին տալիս նոր բուսած խոտով։ Կտուրների վերա տեղ տեղ արածումէին փոքրիկ ուլեր և այծեր, և նոցա մօտ մի քանի ընտանիք, դուրս գալով իւրեանց խեղդուած տնակներից, նստած կանաչ խոտերի վերա, խմումէին երեկոյեան թէյը և զուարճանումէին հիանալի տեսարանով։

Նատօն նայեց դէպի իւր չորեքկողմը։—Տես, Նինուցի, ինչ սիրուն կանանչել են կտուրները, կօսես թէ, մահմուռով ըլին ծածկուած։

—Հա, Նատօ, պատասխանեց ընկերուհին խորին համակրութեամբ. մեր կտուրներն էլ մեր սեյրանգահն է, ուրիշները ֆայտոնով Մուշտէիդ են գնում, ու էն-

տեղ քէփ ին անում, մենք էլ մեր կտուրների խոտերովն ինք ուրախանում։

—Մտիկ արա, Նինուցի, ձեռքով ցույց տուեց Նատօն, հօրէն Ղազախեցի Բարբարէն, մօտիս էլ իր աղջիկը չայ է չինում. էն էլ էրևնեցու հարսն է՝ նրանց մօտը նստած, չայի վրա մնձրած կուլին. էն էլ խաչատան Սհակի կնիկը՝—Կատօն, էն խաբարըզանն, ով գիտե ինչեր կուլի խօսում ...

—Է՛հ, նրա լիդուն էլ կտրուի. ասաց Նինուցին իւր քօքօլան դէպի Կատօն ուղղելով։—Ի՞նչու ես էլի էդպէս տխուր, դարձաւ նա դէպի Նատօն, ուղիղ նորա երեսին նայելով։

—Ես էլ չիմ գիտում ... պատասխանեց Նատօն աւելի տրտմութեամբ։

—Կուզիս ուրախացնեմ քիզ. հարցրուց Նինուցին ժպտելով։

—Ինչով։

Նինուցին մօտեցաւ, Նատօի ականջին փսփսաց մի խօսք։

—Ղուրթ իս ասում, ղուրթ իս ասում, չէ, խաբում կուլիս, Նինուցի. անհամբերութեամբ հարցրուց Նատօն, պինդ գրկելով իւր ընկերուհին։

Ժպիտ, ուրախութիւն, հրճուանք, այդ բոլորը կաթել էր նոյն րոպէին կարդալ Նատօի գեղեցիկ դէմքի վերա։

—Դրուստ իս ասում, Նինուցի Ջան, կրկնեց Նատօն, դարձեալ փաթաթուելով նորա վզին։

—Ջու արևը գիտենայ, վուր դրուստ իմ ասում,

պատասխանեց Նինուցին.—ղէ, գնանք։

Երկու օրիորդները, ձեռք ձեռքի տուած, ուրախ, ուրախ, իջան Նինուցենց տունը։

Նինուցին ներս տարաւ Նատօին մի սենեակ, ուր միայնակ նստած էր մի. պատանի։ Նա հագած ունէր մեխակի մահուդից կաբայ, կապոյտ գլխից արխալուխ, կապած ունէր արծաթի մինա արած քամար և վզին փաթաթել էր բաղդադի աղլուխ։ Պատանու սևորակ աչքերը, կամարած յօնքերը, մախմուռ թշերը, սև գանգրահեր մազերը՝ տալիս էին նորա դէմքին վայելչագեղ կերպարանք։ Նա նստած էր սեղանի մօտ, որոյ վերա դրած էր գոյնզգոյն ծաղիկներից հիւսած գեղեցիկ փունջ։

—Էդ ինչ սիրուն թայփուլ է, Գիզօլի Ջան, ասաց Նատօն, և ժպտելով մօտեցաւ պատանուն, վեր առաւ փունջը։

—Հաւնումիս, Նատօ Ջան, նոյնպէս ժպտելով հարցրուց պատանին։

—Շատ սիրուն է։ խօսեց Նատօն, և ձեռքը գիգօլու ուսին դնելով, նազելի կերպով նայումէր նորա երեսին։—էդ ում համա իս բերի։

Երիտասարդը կարմրեց։ Իսկ Նինուցին նորա փոխարէն պատասխանեց՝

—Ո՛ւմ համա պիտի ըլի, քի համա բերած կուլի, էլի։

Նատօն սկսեց ծիծաղել։

—Նատօ, դոն լաւն իս, թէ չս. հարցրեց պատանին ցոյց տալով փունջը։

Օրիորդն ոչինչ չը պատասխանեց և նորա թշերին իր ձեռքի վարդերի գոյնը տարածան։

—Ի՞նչն ձէն չիս հանում, հարցրեց Գիդօլին բռնելով օրիորդի ձեռքից։

—Դուն իս լաւը, դուն. պատասխանեց Նատօն իր ձեռքի ծաղիկներով հեզիկ չփելով պատանու երեսին։

—Չէ, դուն իս լաւը, դուն իս սիրուն, Նատօ չանկրկնեց Գիդօլին և կամենում էր գրկել նորան, բայց օրիորդը յետ քաշուեցաւ, երբ Նինուցին մէջ մտաւ։

—Ի՞նչ լաւ կուզում, երկուսդ էլ լաւն իք. ասաց նա. ամա վունց քու հէրը, Գիդօլի, Նատօին փիլ համա կուզէ, վունց էլ Նատօի մէրը փուշ ունի, վուր նրան քիլ տայ։

—Գժուիլ իս, Նինուցի, ինչիր իս խօսում. դարձաւ պատանին դէպի Նինուցին չվոխուելով։

—Ես դրուստն իմ ասում, աւելացրեց Նինուցին և պատմեց բոլորն, ինչ որ լսել էր դարբարաղցի վաճառքի մասին։

—Ղուրթ է ասում, դարձաւ նա դէպի Նատօն։

—Չա, Գիդօլի, ինձ նրան ին տալի, պատասխանեց Նատօն տխրութեամբ։

—Ես կու մեռնիմ, ու չիմ թողնի վուր էդ քանը գլուխ գայ, խօսեց պատանին մի վորը վրդովուելով։

Նինուցին դարձ գնաց որ սամօվարը կրակ քցէ։ Նոքա մնացին միայնակ։

Նատօն տխուր նստած էր Գիդօլու մօտ, երբ պատանին դարձաւ դէպի նա՝—Մի դարդ անի, հոգի

ջան, դուն իմն իս, ես՝ քոնն, ոչ ով չի կանայ միզ մէկմէկուց բաժնել . . . : Այդ խօսքերին յաջորդեց մի ջերմ գրկախառնութիւն և երկուքի էլ երիտասարդական շրթունքները միախառնուեցան միմեանց հետ . . . . .

Ջ.

Անցան մի քանի շաբաթներ, անցան մի քանի ամիսներ։ Աշունքն էր։ Տեղատիսիկ թռչունները խումբովին դիմումէին դէպի օտար աշխարհ։ Ծիծեռնակը բաժանվումէր իր բոյնից։ Ծառերի դալկացած տերևները դեղնումէին, թափվումէին։ Նոցա հետ և սիրուն Նատօի վարդագեղ թշերը դունատուած, խամրած՝ օրըստօրէ կորցնումէին իւրեանց քնքուշ կուսական թարմութիւնը։

Մութ գիշեր էր։ Սառը քամին անախորժ կերպով փչումէր չուչանենց տան կոտրատած ապակիներից. սենեակում բաւականին ցուրտ էր։ Միայնակ և տխուր նստած էր Նատօն ճրագի մօտ, կարումէր իր կարը։ Նորա մայրը խոհանոցում պատրաստումէր ընթրիք։ Ուստայ Գրիգորն իր արհեստանոցում (որ բաղկանումէր ներքնատան մի նեղ սենեակից) գործումէր։

Նոյն ժամուն խաւար փողոցի միջով աննկատելի կերպով գնումէր մի մարդ։ Նա հասաւ Շուչանենց տանը և վարդի արտաքինամբ թուաւ ցածրիկ տափատակապատից։ Նա իսկոյն կանգնեց սենեակի դրանն, երբ նորա ականջներին հասան այդ մելոդական հընչումները՝

«Արի, իմ սիրեկան,
«Դարդիս ճար արա,
«Ռո սիրոյ խանջարէմէն
«Ջիգարս—փարա, փարա:»

«Նա ինձ սիրումէ» ասաց եկուորը և աւելի մօտեցաւ դրանը· Հնչեց կախարդիչ երգի երկրորդ տունը·

«Ես քեզի չեմ մոռանայ,
«Քանի որ սաղ եմ,
«Ռո սիրոյ զանջիրէմէն
«Մինչև մահ դուսաղ եմ . . . . »

«Նա ինձ սիրումէ . . . » կրկնեց երիտասարդը և դմայլած ներս վազեց:—Նատո ջան, իմ սիրեկան, ելաւ նա և օրիորդին պինդ ճնշեց իւր կուրծքի վերա:

Եկուորը Ջումշուդ—բէկն էր: Նա իսկոյն տոսկաց, երբ իւր աչքերը հանդիպեցան Նատօի վշտալի, սի և նոյն ժամանակ զայրացած աչքերին:

—Նատո ջան, կրկնեց երիտասարդը, թողելով Նորան իւր գրկից, դարդ մի արա, հիմայ դու բախտաւոր ես: Ես հիմայ հարուստ եմ, քեզ միշտ ոսկու, արծաթի, բրլիանտի, ատլասի ու մախմուրի մէջ կը պահեմ:

Օրիորդը գլուխը քաշ քցեց, ոչինչ չը պատասխանեց. Նորա դէմքն ընդունեց աւելի տխուր արտայայտութիւն

—Ի՞նչու չես խօսում, Նատո ջան, մի ձէն հանի, քո հոգուն մատաղ. շուտ շուտ կրկնում էր երիտասարդը:

—Ռո բրլիանտներն ինձ պէտք չեն . . . ասաց օրիորդը և արտասուքը թրջեց Նորա աչքերը:

Երիտասարդը վշտանալով թողեց Նորան, երբ ներս մտաւ. Շուշանը: Նա դարձաւ դէպի մայրն, ասելով

—Դէդի ջան, ես հիմայ բախտաւոր եմ. էս օր փօշտից, նամակ ստացայ, հայրս վախճանուել է և ինչքան ապրանք, մուլք, փող է թողել, գիտես,—ինձ էս օթախով լէքը:

—Էդ լաւ լաբար է, ուրախանալով կոչեց Շուշանը:

—Բանս վատ լաբար է, պատասխանեց երիտասարդը նոյնպէս ուրախութեամբ:—Հայրս ղարավուլ էր նստած իւր խազինի վերա, բայց հիմայ նրա դրները բաց էլան ինձ համար:

—Փառք Աստծու, փառք իրա մեծ գօրութինին, բացականչեց Շուշանը խորին Յերմնուանդութեամբ:

—Հիմայ Նատօիս բախտն էլ բաց էլաւ:

Շուշանը նստեց թախտի վերա: Ջումշուդ—բէկը տեղաւորեցաւ Նորա մօտ:

—Գիտես ինչ կայ, դէդի ջան, ես պէտք է շուտ գնամ, շարունակեց երիտասարդը:

—Ո՞ւր, զարհուրելով հարցրեց Շուշանը:

—Ղարաբաղ: Գնամ, որ հօրս թողած կայքերին տիրութիւն անեմ:

Վերջին խօսքը ձգեց Շուշանին մտատանջութեան մէջ:—Ախ, քօռանամ ես, ասաց նա շուարած կերպով, էդ վռնց կուլի, վուր դուն գնաս առանց պսակվելու:

—Հիմայ ինչով կարող եմ պսակուել, որ էստեղ փող չունեմ:

Շուշանը խորին կասկածանաց մէջ ընկաւ, գուցէ իւր փեսացուն հայրենիքը գնալէն յետոյ կրկին չը վերադառնայ, այդ պատճառաւ մտածումէր վազ օրօք կապել նորա վիճակն իւր դստեր հետ։

—Վուրթի, ասայ նա ծանր կերպով, ինչպէս քիւիմ Նատօի աչքը պիտիս քու ճամփին պահի. էդպէս բան չի ըլլի, պատկերի, իժում Աստուծ բարի ճանապար տայ, ուր ուզումիս՝ գնայ։

—Հիմայ ձեռքումս փող չունեմ որ հարսանիք անեմ, ինչպէս պատկուեմ. հարցրեց երիտասարդը։

—Աստումիս, վուր ձեռիդ փուղ չունիս, բան չը կայ, ես մէ քանի թուման պարտք կօնեմ, կու մնասիմ ու քու լայիաղ հարսանիք կօնեմ։

Ջումշուդ—բէկի նալատակն էլ հէնց այդ էր, թէև նա խորամանկութեամբ պատճառումէր իւր գնալն, որպէս դի որքան կարելի է ըլտապեցնէ հարսանիքը։

—Շատ լաւ, դէդի Ջան, ես քո խօսքը չեմ կոտրի, ինչպէս ասումիս, էնպէս կանեմ. բայց դու էլ ըլտապիր, որ ինձ շատ չուշացնես այստեղ։

Շուշանն ուրախացաւ, դրկեց իւր փեսացուն։

—Ջումշուդ Ջան, ես էդուցէվէտ կու տեսնեմ հարսնիքի թադարէքը։

Նատօն, որ հետու կանգնած լսումէր այդ խօսքերը, դուրս գնաց սենեակից խորին յուսահատութեամբ։ Նա նատեց բակի խաւարումն իւր սովորական տախտակի վերա, երկար լաց էր լինում և ան ու վախ քաշում, երբ ճրագը ձեռին իւր արհեստանոցէն դուրս եկաւ նորա հայրը։ Նա իմացաւ իւր

դստեր դարդը, բռնեց նորա ձեռքից։—Գնանք, Նատօ Ջան, էստեղ մի նստի, դուրա է, կը մրսես. ասաց նա ներս տանելով նորան սենեակը։

Է։

Անցաւ մի ամբողջ չաբաթ Ջումշուդ—բէկի հօր մահուան լուրը յայտնուելէն։

Մի գիշեր Շուշանի քրոջ Սօփօի տունը սովորականից փառաւոր կերպարանք էր ստացել։ Սենեակները լուսաւորուած էին ճրագներով։ Նա էր գալիս բազմաթիւնը գոյնզգոյն հագուստներով։ Ամեն տեղ ուրախութեամբ փայլումէին երեսները։ Լսելի էին լինում երգի, զուռնայի և նաղարայի ձայներ։

Նատօի հարսանիքն էր։ Շուշանի տունը փոքր լինելու համար, այստեղ էր կատարվում հանդէսը։ Այս և այն անկիւններում, այս և այն սենեակներում հաւաքուած հիւրերի մէջ, անց էին կենում զուարճալի խօսակցութիւններ։ Մի տեղ տէրտէրը, հաւաքած իւր շուրջը մի քանի արհեստաւորներ, դարմացնումէր նորանց իւր խորին գիտութեամբը, խօսելով սրբերից և հրաշքներից։ Մի տեղ կանայքը բաց էին արել բամբասանքի բազարը։ Մի այլ սենեակում աղջիկները շրջապատած Նատօին դայրայ էին ածում, երգումէին և պար էին գալիս։ Իսկ Շուշանն ոտքի վերա անդադար պտիտ էր գալիս, զանազան կարգադրութիւններ էր անում և իւր հիւրերի հետ քաղցրախօսումէր ու նրանց սիրտն էր շահում։

—Սարեւտ, ասումէր Թաթուխինց Նատալիան իւր

մօտ նատած կինոջ ականջին,—տեհնումես Շուշանի բախտն, վերնոց առանց փուղի ու առանց բաժինքի տանու—փեսայ ճարեց իր համայ։

—Էդ էլ Աստծու տուրք է, Նատալիայ Ջան. պատասխանեց Ձօն—Օհանէսի կինը Սաբետօն։

—Հալբաթտայ, առանց Աստծու կամքի փօթօլը ծառից վէր չէ գալիս, մաղրամ, աղմորթին պիտի բախտ էլ ունենայ։

—Չէ, էդ գարիբականները փուղին չատ մտիկ չին անում. մէջ մտաւ կալատօզ Սիմոնի կինը՝ Մաշօն. —նրանք աղչկան ին մտիկ անում, աղչիկն օղօնդ լաւըն ըլի, էդ է հարկաւոր նրանց։

—Մաղրամ, էդ գարաքաղչին ինչ մի հուտով ծապիկ Յոկնց իր համա...Նոցա խօսքը կտրից խարագ Դարչօի կինը՝ Բարբարէն։

—Չէ, Բարբարէ, էդ ձեր իս ասում, միղք է էդինց խօսիլը. Նատօն, հախ Աստծու հալալ կաթնակեր ու սիրուն աղչիկ է. պատասխանեց գաբաղինց Մակին։

—Լաւ հալալ կաթնակեր ես գտի...Նրա բաներն ես լաւ գիտեմ մանդրուք ծախող Գիդօլու հետ...խօսեց Բարբարէն երեսը չուռ տալով։

—Է՛հ, էդ ինչիր էք խօսում, մէջ մտաւ զազազ Ծղալօբի կինը Սալօմէն.—մեր ժուկում ով է մտիկ տալիս վուր աղչիկը լաւ կաթնակեր ու հալալ ըլի. էս ժուկում աղչկայ սիրունութինն էլ վուչինչ է, նրա խիլքն էլ վուչինչ է, նրա ասումն էլ վուչինչ է... հէնց աղչիկը չատ փուղ ունենայ,—փեսէն նրա համար հաղիր է. թէ կուզ նա քօռ ըլի, թէ կուզ քա-

չալ ըլի, աննամուս ըլի՝—դիփ մէկ է..., թէ չէ էդինց քօռ—քօռինայ մուչտարիքը հաղրէմէն մի գամ ռաստ չին գալիս, վուր առանց փուղ ու բաժինքի նչնըվին։

Սալօմէի խօսքերը գրաւեցին կանանց ընդհանուր համակրութիւնը և ամենքը միաբերան ձայն տուին՝ —Անիծուի էդ թալուր ադաթը...նրա մօգնողի տունը քանդուի...

Բայց տչամարդերի մէջ անց էր կենում բոլորովին այլ խօսակցութիւն, բոլորովին կենսական այլ խնդիրների վերա։ Նոքա խօսում էին նոյն օրերի հացի և այլ ուտելիքի թանդութեան մասին։

—Էդ բոլորը ժողովրդի մեղքերիցն է, ասաց Նոթանց քահանան. երբ մարդերի մեղքը բազմանում է, Աստուած էլ իրատում է նրանց տեսակ տեսակ պատիժներով։ Գիտէք, որքան թերահաւատացել է մեր ժողովուրդն, էլ ոչ ժամն են իմանում և ոչ աղօթքը. էլ ոչ պատն են իմանում և ոչ պատարագը. էլ ոչ սուրբն են իմանում և ոչ սրբութիւնը. դիփ մի խօսքով մոռացել են, հէնց սատանայի ճանփան բռնած գնում են։

Քահանայի խօսքերը չարժեցին մի քանիսի ջերմեռանդութիւնն, որք իւրեանց երեսները խաչակնքելով ասում էին՝—Միղայ Աստծու, միղայ իր սուրբ զօրութինին։

—Բայց երբոր մարդիքը չար ճամփէմէն դառնան. յառաջ տարաւ քահանան. Քրիստոսի ճանփօքը գընան, այսինքն կամենում եմ ասել՝ մատաղ մորթին, սուրբերը համբուրելու գնան, աղքատներին ողոր-

մսթիւն անեն, տէրտէրի հախը չը կտրեն, Աստուած էլ քաղցր աչքով մտիկ կ'ընէ նրանց, հացը, գինին ու ամեն բան կը բօլացնէ։

—Թէ քու Քրիստուսը կու սիրես, տէրտէր Ջան, էս քարուզնիրը Թող մնան.—քահանայի խօսքը կըտրեց մի կարմիր և ուռած թշերով աղամարդ՝ չիրաչի կօնիա.—աղբաթըխէր հարանիքի տուն է, խօմ էկէղեցի չէ, ինչ Աւետարանի վուխտ իս գթի, Թող մէ քիչ գինի խմենք, քէփ անենք, սրտերս բաց ըլի։

—Բի բերանդ պաչ անեմ, կօնի Ջան, նորան գըրկելով ասաց ձկնատան մեխակը.—ախըէր, ինչ մէր ֆսկլքի բան է խուրը գրքերէմէն խօսիլը. միրն էն է՝ —ուտենք, խմենք, քէփ անենք ու Աստծուն փառք տանք։

—Բարաքալղի, բարաքալղի, Մեխակ Ջան, քո հոգուն մեռնիմ. գոռացին մի քանի ձայներ։—Հա՛ Աստծու լաւ օրհնաւոր խօսք ասեցիր։

—Քու կենացը, քու կենացը. ձայն տուեցին դահլիճի կողմից, նոցանից ամեն մինը չբխկացնելով Մեխակի հետ իւրեանց բաժակները։

Սոյն մէջօղին՝ կոյր աչերը՝ Բէժանը քաշից ճիանուրի աղեղն երգելով Սայաթ—Նովայից՝

«Աչիաբդում դարդ չիմ անի
«Բանի վուր սաղ իս ինձ համա,»

—Ա՛խ, Թէ գիտենայի էս գինին ով է մօգօնի.—ասաց խմողներից մինը հիացմամբ նայելով իւր կարմիր բաժակին.—հա ամեն տարի նրան մատաղ կու կարնէի։

—Դանա էս էլ չիս գիտի, ուստայ Պետրոս, նորա խօսքը կտրեց քահանան։

—Ես վուր դանցէն գիտենամ, քու հոգուն մատաղ, տէրտէր Ջան, պատասխանեց ուստայ Պետրոսը։—Գրի սիւն ու սիպտակը դուք էք իմանում, Աստծու խօսքիրը ձիր մօտն լին, մենք ինչ ինք տորվի, վուր ինչ գիտենանք։

—Գինին նոյ նահապետն է չինի, ասաց տէրտէրը մի առանձին նշանակութիւն տալով իւր գիտութեանը և ափսոսելով մի քանի խօսք Քամի մասին։

Բոլորը զարմանալով լսում էին։

—Փառք Նոյի սուրբ գօրութեանին, ասաց ուստա Պետրոսը երեսը խաչակնքելով։

—Նոյի հոգուն մեռնեմ, բացականչեց մի աչխոյժ երիտասարդ բարձրացնելով իւր բաժակը.—էս էլ Նոյի կենացը, Թէ նա չէր էլի մենք էդ պլպլուն Թասերը վրէր տեղից պիտի խմէինք։

Բոլորը ձայն տուեցին նորան և մի մի բաժակ խմեցին Նոյի կենացը, կարծելով, Թէ նա դեռ կենդանի է։

Այդ ընդհանուր ուրախութեան մէջ տէրտէրը նկատեց, որ միակ տխուր մարդն ուստայ Գրիգորն էր՝ նորահարսի հայրը։ Նա անդադար դուրս էր գալիս, նեղս էր մնում, կարծես մի բան նորան անհանգստացնում էր։

—Ի՞նչ ես նօթերդ կիտել, ուստայ Գրիգոր, դարձաւ դէպի նա տէրտէրը.— օրհնած, էս ուրախութիւնը քանն է, դու ինչու ես դարդ անում։

Ուստայ Գրիգորը գլուխը միայն չարժեց ցույց տալով, որ ինքը զբաղուած է և հեռացաւ առանց պատասխանելու։

Ը։

Գիշերի կէսն էր։ Հասասների խռպոտ ձայնը, մոլաշրջիկ շների անընդատակ հեծկլտոցը, տարաժամ տարփածուի կառքի դղրտոցը, երբեմն ընդհատուելին փողոցների խուլ—գերեզմանական լռութիւնը։ Բաղարի խանութներից մինի մէջ միայն փայլումէր աղօտ լոյս, ուր նստած էր մի պատանի։

—Աղայ, ըվխըմայ էս քըչեր էտենց զարթուն ես ինալի, չես քնելի. ասաց պատանուն խոյեցի հասասը գլուխը ներս տանելով խանութի դրնից։

—Քունս չէ տանում, Կարօ, պատասխանեց պատանին։

Պատանին մեր Նատօի սիրականը՝ Գիգօլին էր։ Լսելով Ղարաբաղցի փեսացուի պատմութիւնը, և օրիորդի ծնողաց նպատակը՝ Գիգօլին չը կարողացաւ իւր համբերութիւնը զսպել, տեսնելով, որ իւր սիրուհին չուտով կորած կը լինէր իւր համար։ Նա, որքան և պատկառանք էր դնում իւր հօր և մօր պատուին, որքան և ամաչկոտ էր իւր որդիական հնազանդութեան մէջ, այսու ամենայնիւ համարձակուեցաւ իւր ծնողաց առջև պարզ խոստովանուել իւր սէրը դէպի Շուշանի աղջիկը։ Նա ոչ միայն զբաւաւ ծնողաց կողմից ամենատաստիկ ընդդիմադրութիւն, այլև նոքա սպառնային, եթէ պատանին բոլորովին չէր փոխելու իւր միտքը, կարող էր իսպառ

զրկուիլ հայրական ժառանգութիւնից։ Դորա հետևանքն այն եղաւ, որ Գիգօլին թողեց հօր տունը, և այնուհետև դիշերումէր իւր խանութի մէջ։ Համալը, տեսնելով նորա տիրութիւնը, նստեց խանութի դրան չէմքի վերա և սկսաւ պատանուն զբաղեցնել իւր զրոյցներով։

—Դիւն մէ զարդ ունես, որ քիւնդ չի տանէլի. հարցրեց հասասը։

—Ունեմ, Կարօ, զարդ ունեմ . . . պատասխանեց Գիգօլին խորհրդական ձայնով և պատմեց մանուածապէս Նատօի մասին։

—Է՛հ, աղայ, ես էլ որ քո պէս հալայ ջահիլ եմէր, քչերները քիւնս չէր տանէլի. ասաց հասասը իւր հին ցաւերը միտ բերելով. մեր գեղը մէ ախչիկ կար, էնդեղար խօրօվիկ էր, որ կասես մարալ—ջէյրան էր. էն ընձիկ էր սիրելի, ես դարն եմէր սիրելի. էրկուսիս էլ սրտերը կապած ենէր միկմիկու։ Էլաւ որ, մեր գեղի մալէքի լաճու աչկը ընկաւ էն ախչիկեան, սիրեց դարը. էլ էն ախչիկը ընձի չը տըվին. փըտայվեց մալէքի լաճու խէտը։ Մէ ամիս չը քաշեց ախչիկը դարդըմախ էլաւ . . . ես էլ դարմէն ետ էն երկրէն տաւս էգամ, որ էլ չը տմնամ դար գերեզմանը . . .

Խոյեցի հասասն այդ խօսքերն այնպիսի մի ցաւալի կերպով պատմեց, որ ինքը նոյնպէս չը կարողացաւ զսպել իւր արտասուքը և վերջին տողերն արտասանելու միջոցին նորա ձայնը բոլորովին խեղդուեցաւ։

Գիգօլին ցաւելով նայումէր նորա վերա, տեսնելով որ սէրն ասնի իւր բոցավառ զօրութիւնը մինչև ան-

դամ այնպիսի սարդամիտ և անմիղ արարածների մէջ, որպիսի էր խոյեցի հասասը։ Եւ նա զարձաւ դէպի Կարօն այդպիսի խօսքերով՝

—Էդպէս է, Կարօ։ Բայց աւելի լաւ է, որ մարդ ինքը մեռնի ու չը տեսնի իր սիրած աղջկան մէկ ուրիշը տանելիս . . . դու էլի բախտաւոր ես, Կարօ, որ տեսար քո սիրածի դերեզմանը . . .

Կարօն տեսաւ, որ իւր խօսակիցն աւելի տխրութեան մէջ ընկաւ, ասաց նորան՝

—Աղայ, ձեր թաղը էս քշեր խարնիս կայ, աղէկն էնի, որ դուքանդ փակես, էթաս էնտեղ, որ սիրտդ բացվի։

—Հարանիք . . . կրկնեց Գիպօլին մի զարհուրելի սառաւռւռ ղռալով իր ամբողջ մարմնի մէջ։

—Խրամանքս, խարնիս, ես ձեր թաղն էս քշեր ընցած, զուռնայ—նազարայի ձէն էր իջալի Շուշանի բրոջ Սօփօի մասին։

Գիպօլին բոլորովին չփոթուեցաւ և խնդրեց հասասին օգնել իւրեան խանութը կողպելու։

Ա՛յս ժամից յետոյ նա հասաւ պառաւ Սօփօի տանը։ Նուագածութեանց ձայները մի նոր սարսափ ձգեցին նորա վերայ։ Պատանին քարացած, կանգնած լսումէր հարսանիքի անից եկող ձայները, և նորա երեւակայութիւնքը գնալով սաստկանումէր։ Յանկարծ երեւաց մի օրիորդ, որ փոքրիկ լապտերը ձեռքին վազումէր դէպի մօտաւոր տունը։

—Ա՛խ, Նինուշ, դուն ես, կոչեց պատանին նորան տխուր ձայնով։

—Ես իմ, Գիպօլի Ջան, ձայն տուեց օրիորդը և կանգնեց։

—Ո՞ր ես գնում։

—Միր տուն, մանուօս վիկալնեմ, խիստ ցուրտ է, հիմայ պատկ պիտի գնանք։

—Ի՞նչ պատկ, չփոթուելով հարցրեց պատանին։

—Ջիս գիտի, Նատօի պատկն է էս գիշեր։

Պատանին բոլորովին թուլացաւ։

—Նատօն հիմի էլ է սիրում քիզ, Գիպօլի Ջան, ասաց Նինուշին. քանի դամ սիրտը գնաց, թիլացաւ, ես նրան ուշքի բերի . . . Նա ասումէր ինձ, Նինուշ, ես կը մեռնիմ, ինչվի ինձ էկեղեցին տանին։

—Ա՛խ, Աստուած . . . կոչեց պատանին խորին յուսահատութեան մէջ։

—Նատօն միղ չունի, Գիպօլի Ջան, յաւաչ տառաւ օրիորդը. նա ասումէր, որ քիզ չի մոռնայ, ինչվի մահը կը սիրէ քիզ . . . Բայց քօանանց քու հօրն ու մօր աչքերը, վուր ձիզ մէկմէկուց բաժնեցին . . .

Պատանին էլ ոչինչ չը խօսեց, նա իւր դողդոջուն քայլերն ուղղեց դէպի Քուրի կողին, երբ Նինուշին հեռացաւ նորանից։ Այդ լուռթիւնը խիստ զդալի եղաւ օրիորդին, որին յայտնի էր Գիպօլու յուսահատ դրութիւնը։ Այդ պատճառաւ Նինուշին հեռուից նայումէր, տեսնել, թէ ո՛ր կողմը գնաց պատանին։ Օրիորդն էլ չսպասեց դնալ իրենց տունը, վեր առնել իւր մանտօն, այլ կրկին մտաւ հարսանիքի տունը

և հազիւ լսելի ձայնով չընչաց եղբօր ականջին՝

—Ստեփկո, մեր Գիդօլին էս նմուտին Սաղի կուռը գնաց, ես խիստ դարդոտ տեսայ նրան. գնա, տես ինչ էլաւ խեղճ տղին։

Լսելով այդ խօսքերը Ներսուցայի եղբայրն իսկոյն դուրս վազեց։ «Խեղճ Գիդօլի, ինչու է գնում նա Սաղի կուռը.» ասումէր Ստեփկոն ինքն իրան։

Երկնքի սև ամպերը սկսել էին արդէն նօսրանալ և ջուրի ափերը լուսաւորվումէին լուսնի դունաթափ շողքերով։ Քանի րոպէից յետոյ Գիդօլին հասաւ գետի եղերը։ «Էլ էստումէն դէնը ինձ պէտք չէ ապրել . . . » ասաց նա և պատրաստվումէր իւրեան ջուրը ձգել, երբ Ստեփկոի երկաթի մատները բռնեցին նորան։

—Ա՛խ, Ստեփկո, թէ ախբէր իս, թող տուր, աղաչումէր պատանին։

—Ի՞նչ իս չինում, գժուիլ իս. պատասխանեց Ստեփկոն հեռացնելով նորան գետի ափից։

—Ա՛խ, ինչի դուն վրա հասար . . . . .

Թ.

Սոյն միջոցին պատաւ Սօփօի տանում քահանան ոտքի ելաւ, կոչնականներից ամէն մինը վառելին իւրեանց լապտերիները և պատրաստվումէին եկեղեցին գնալ պահկի խորհուրդը կատարելու։

Ջումշուդ—բէկը զարդարուած էր իւր հարսանիքի հագուստով, որոնք նոյն օրերում Շուշանը նորա համար կարել էր տուած։ Երիտասարդն իւր սրտի անհնազանդելի հրճուանքի մէջն էր։ Իսկ Նատօն,

թէև նոյնպէս զարդարուած, բայց նորա դունաթափ դէմքը, վշտահար աչքերը ցուցանումէին յուսահատութեան ամենասարսափելի յուզմունքն, որ նոյն րոպէին խռովումէր օրիորդի սիրտը։

Ցանկարծ ներս մտաւ մի անծանօթ հիւր։ Դա էր սպիտակ մօրուքով հակայատիպ մի ծերունի։ Նորա սև չալէ չուխան, ահագին մօթալ փափախը, կաշեայ տրեխները ցոյց էին տալիս, որ նա գալիս էր հեռու երկրից։ Ներսունու օտարոտի երևոյթը, խոժոռ կերպարանքն իւր վերա դարձրեց բոլոր հանդիսականաց ուշադրութիւնը։

Իսկ այդ անակնկալ յայտնութիւնը կայծակի հարուածք ունեցաւ փեսայի վերա, որոյ դէմքն իսկոյն կաւիճի պէս դունաթափուեցաւ։

Ներսունին, առանց ուշադրութիւն չը դարձնելով իւր չրջապատողների վերա, անփոյթ կերպով մօտեցաւ փեսային, և իւր ի բարկութեամբ սպանիչ հայացքը ձգելով նորա երեսին, ասաց՝

—Աղա, քնձահօր լակոտ, ըսքան տարի թօռնըս կորալ, քանի վախտ ա քու եանապ մանըմ գոլիս, էլ ոչ Ռուսէթ, էլ ոչ Ղզլբաշի երկիրը, օլքայ չըմ թօղալ՝ լօխ մանըմ էկալ՝ բալքամ քե քինամ. ամա դու քո տօնըդ տեղըդ, քուլփաթըդ՝ մնետ քըցալըս, դիարբադիար (երկրէ երկիր) քո քեփը արամիչըս անըմ։ Աղա, թուլու տղայ, բա իսկի փիքր չըս անըմ, թա ես էլ հար ծնէմ, մար ծնէմ, տօն ծնէմ, տեղ ծնէմ . . . ։ Բա, իսկի մէտըդ չըս քցըմ, որ քո խօխէքը տիւղնը—ծարաւ. կտորվումէն, քո նշնածի աչ-

քերա լացնելաւ փօւսայալ . . .

Սարսափը և զարհուրանքը տիրեց Ջումշուդ—բէկին։ Նա սառած նայումէր ծերունու երեսին առանց կարողանալու մի բառ անգամ պատասխանել։

Հանդիսականքն ոչինչ չը հասկացան այդ խօսքերից։ Միայն Շուշանը, տեսնելով, որ ծերունին ձեռքը ձգեց և կամենումէր բռնութեամբ դէպի դուրս քաշել իւր փեսացուն, վազեց և բռնելով նորա թեւքից, ճըչաց՝

—Բիձա, բիձա, ով ես, ինչ ես անում, ինչ գալ ունիս դրա հետ։

Ծերունին իւր վայրենի դէմքը շրջեց դէպի Շուշանը, պատասխանեց մի փոքր մեղմացնելով իւր գիւղական կոշտութիւնը՝—Ես հո ես եմ . . . հըրցնումըս դու,—ես էդ անաբուռ տըղի խնդճ հարնըմ. (ցոյց տուեց Նա Ջումշուդ—բէկի վերա.) էդ իմ բէդասըլ տըղաս ա . . .

—Ես չեմ ճանաչում քեզ պատասխանեց Ջումշուդ—բէկը։

—Ըրս ճանչնըմ . . . եաչըմըս էդ մըհակը . . . ձայն տուեց ծերունին քարձրացնելով աւագին մահակն, որ բռնած ունէր ձեռքին։

Շուշանն այսքանը հասկացաւ, որ ծերունին յայտնեց, թէ նա փեսայի հայրն էր.—Ի՞նչ հէր, ճըչաց նա մէջ մանելով. սա հէր չունի, սրա հէրը մեռել է։

Գիւղացու վայրենի դէմքը յինցուեցաւ մի քիթ ծիծաղով և նա պատասխանեց հեգնօրէն, ուղիղ Շուշանի երեսին նայելով

—Չա, դրա հարը մեռալ ար . . . ամա էլըհա մըռըլ տեղա իրակացալ . . .

—Դուն սրա հէրը չիս, սա Մէլիք Թօրոսի վուրթի Ջումշուդ—բէկն է, սրա հէրը վինճ մարթ էր, քի պէս արջ չէր. պատասխանեց Շուշանն աւելի կրքով։

Իսկ գիւղացին խիստ արհամարհական սառնութեամբ ասաց նորան՝

—Մէլիք Թօրոսին տղան ա, հա . . . Ջումշուդ բէկն ա, հա . . . ։—Դրուստ ա, մէլիք Թօրոսին տղան չատ մըճ մարթ ա, ամմա էդ եալանչին (ցոյց է տալիս փեսայի վերա) նրան տղան չէ, դա ինձ նման չնեցիր առչին ճօտը՝—Գիւքին ա, Գիւքին . . .

—Գիւքին ով է, ինչ իս խօսում, դա հիմի իմ փեսէն է։

Վերջին խօսքը զգալի կերպով սարսափ ձգեց ծերունու վերա և նա դարձաւ դէպի Շուշանը, հարցնելով՝

—Քօ փեսադ ա, հա։

—Չա, իմ փեսէն է, էս գիշեր պիտի պսակենք, տեհնում ես վուր հարսնիք է. պատասխանեց Շուշանը ցոյց տալով հանդիսականքը։

Ծերունին բոլորովին թուլացաւ։ Նա դարձաւ դէպի որդին այդպիսի անէծքներով՝

—Տաճիը մընիս դու, Ըստուծու կէծակը տա քեզ . . . ըստեղչըս խափալ . . . ըստեղչըս օղում փսակուէս . . .

Յետոյ նա դարձաւ դէպի Շուշանն որդուց վերա ցոյց տալով.—Նանի, Հախմիանտէրը ընէծի դրան,

չօրք տարի ա ես օլքից—օլքա դրա յեւտան չօռըմ դալիս, էլ տէղ չը մնացալ, որ դա չը փսակուի . . . էլ տէղ չը մնացալ, որ ուրան կինէկը բըրախ տըված չընի . . . ամէն չըհարուամ դրան խօխէքը, դրան կինէկները ուզօղըթիւն քն անըմ . . .

—Պսակումիլ է . . . զարհուրելով հարցրեց Շուշանը։

—Հա, նանի, օխտը հետ փսակուալայ էդ պըտըհասու էկածը . . . լըհա մըտէկս տանը կինէկ օնի։

Բոլոր հանդիսականքն, որք մինչև այն րոպէին զարմացած նայումէին այդ դրամային, քարի պէս սառեցան։

—Վայ իմ միղքը . . . կոչեց Շուշանը՝ գլխին տալով։

—Վայ իմ նամուսին . . . կոչեց Նատօն ուշքից գնալով։

—Թողէք ես էդ անիծուածին սպանիմ . . . կոչեց ուստայ Գրիգորն, ուրագը ձեռին առիւծի պէս ներս վազելով։


Իսկ «տնային փեսան» արդէն ուրուականի պէս աներևութացել էր . . .

Սոյն միջոցին մի պատանի մօտեցաւ ուշագնած Նատօին.—Ե՛ս իմ քոռ փեսան, Ես . . . կոչեց նա, վեր բարձրացնելով նորան յատակի վերայից։

Դա Գիգոլին էր։

ՀԱՐԵՄ

Առաջին մասն



ՀԱՐԵՄ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

Ա.

18.. թվականն էր։

Ամպնապին արեգակը սաստիկ այրումէր դրսումը։ Պարսկաստանի Թէհրան քաղաքում մի հոյակապ ապարանք էր այն բախտաւոր տներից մինն, ուր երկնքի բոցերը չէին թափանցում նոյն ժամուն։ Այդ բնակարանը պատկանումէր մի խչխանի, որոյ երակնելում վազումէր երևելի Նաղէր—Շահի արիւնը։

Ապարանքը բաժանուած էր երկու մասն՝ դրսի—տուն և ներսի—տուն։ Առաջինի մէջ զետեղուած էին՝ Շահզադէի դիւանխանան, հիւրանոցը, ծառաների կացարանը և նորա տակում՝ ստորերկրեայ մթին ընդանում՝—բանտը։ Երկրորդ մասը պարուսնակումէր իւր մէջ հարեմխանան—կանանց նուիրական կացարանը։ Նա բաժանուած էր զանազան բակերով, որոց ամէն մինի մէջ բնակվումէր մի առանձին հարեմ՝ իւր աղախիններով և փոքրիկ մինչև տասն

տարևկան տղայ—սպասաւորներով։ Դրախտն իր բոլոր չքնաղութեամբ հապիւ կարող էր մրցութիւն անել այդ բակերի ամէն մէկի հետ։ Նորա հովանաւորուած էին մշտականաչ ծառերով և ծաղիկներով, ուր վարդենին թագաւորութիւն բոլորի վերա։ Ամեն մեղմ—կուսական ժպիտով ծիւմէին լճակները և արծաթափայլ ջուրը, մարմարեայ չաղրաւաններից դէպի բարձր և բարձր արտահոսելով, յօդուածէր մարդարեայ կաթիլները։ Հարեմները ծովային ներբէտների նման, հովասուն վաղորդեան պահուն, կամ երբ երեկոյեան արեգակն ոսկեզօծութիւն մինարէթների գմբէթները, խոթովին լեղանութիւն, թոխոտութիւն և զուարճանութիւն աւազանների մէջ։ Եւ հարեմհանայի Իչխանը՝—միայնակ նստած իր բալահանում (վերնատուն) բայ լուսամուտի հանդէպ, ղէլյանի ծխի անուշ արբեցութեան մէջ, իր փառքի բարձրութենից՝—նայում էր այդ կախարդական տեսարանին։ Նա հիանում էր . . . զրդուում էր . . . բորբոքում էր . . . և բախտաւորացնում էր մինչև այն զեղեցկուհիներից . . .

Ոչ մի օտար արարած համարձակ մուտք չունի այդ փակեալ դրախտի մէջ։ Զգուշ ներքինին հրեղէն սրով հսկում է նորա դրանը . . .

Կէսօր էր։

Խորին, արբալան լռութիւնը տիրել էր հարեմհանայի վերա։ Կարծես թէ, այն ժամային—միջօրէական պահուն ամբողջ բնութիւնը, թուլացած, թմրած, ներում էր հակայական քնով։ Արեւն էր միայն մի

հոգի։ Երեղաղարդ անհեռում, գեղեցիկ զլուխը զարդարած մարգարտեայ փունջերով զարդարած բարձերին, կիսով չափ ծածկուած բարակ քիւմիրեան շալով, պառկել էր մի մանկահասակ կին։ Թաւախիտ ծամերը, սև թրպէս ծիծեռնակի թևքն, արձակ հիւսերով վռռուել էին կիսամերկ կուրծքի վերա։ Ոսկեայ օղամանեակը վառվռում էր գոյնզգոյն գոհարներով, որ զարդարում էր նորա գեղեցիկ պարանոցը։ Նա իր հոգևկան խռովութեան մէջ քնքուշ ձեռքով բռնել էր նարդիլէի օձապտոյտ ծխաքարշն, երբեմն հակիրնում էր բերնին նորա արծաթեայ ամզուկը և անուշահոտ ծուխը մանրիկ օղակներով դուրս էր թափվում վարդագոյն շրթունքի միջից։

Սևամորթ աղախինը, նստած տիկնոջ բարձի մօտ, սիրամարդի փետուրներից հիւսած հովհարով, զով էր տալիս նորա երեսին և զուարճացնում էր նորան, պատմելով հրապուրիչ հէքեաթներ ջիններից, գեղեցիկ հուրիներից և փէրիներից, մինչև որ նա կը քնէր։ Երկար առանց լռելու պատմում էր նա երբ նշմարեց, որ տիկնոջ քունը չէր տանում, վերջացրուց աղախինն իր հէքեաթն այդպիսի խօսքերով՝

—Ջէննաթի հրեշտակները թող անուշքնեն քո երեսը քաղցրիկ երազներով, հանդստութեան վարդեր թող սփռեն քո մահճի վերա։

—Ա՛խ, Մարջան, բացակայեց տիկինը ցաւալի ձայնով. իմ մահիճը խռովեցուցիչ է ինձ, որպէս սարսիայի փշալի անասատան . . . ես երբէք հանգիստ լինել կարող չեմ . . .

Մարջանն,—այդպէս էր աղախնի անունը,—մի կաթեւրեական հայացք ձգելով տիկնոջ երեսին, խօսեց՝

—Մարջանը քո ոտքերուն մատաղ ընի, տիկին, այդ այն պատճառաւ է, որ այն անապատում Մաջնունները են թափառում . . .

Մի խորհրդական ժպիտ խաղաց խանումի դունատ դէմքի վերայ։

—Դու շատ խորամանկ ես, Մարջան . . . Ասաց նա, և ձեռքը նեցուկ տալով երեսին, դլուխը բարձրացրուց բարձի վերայից։

—Յաւդ առնի Մարջանը. խօսեց աղախինը չը դադարելով չարժել հովհարը. քանի՛ ժամանակ է, որ քո սարկուհին նշմարում է, իր տիկինը տանջվում է հոդու անհանդստութիւնից և նորա դէմքը տխուր է, որպէս ձմեռուայ լուսնեակը . . . նա շատ քիչ է քնում . . .

Ջէյնաբ—խանումը—այդպէս էր տիկնոջ անունն, —իր ցաւալի աչքերը դարձնելով դէպի աղախինն, ասաց՝

—Ա՛խ, որքան անուշ է մահուան քունը, Մարջան, դերեզմանի խորքումը հանդստանալումն ամեն դառնութիւնքը . . . Բայց դերեզմանն էլ, Մարջան, խնայում է մեզանից իր վերջին մխիթարութիւնը . . .

Սարսափի նման մի բան փայլեց խաւիսիկի խոշոր աչքերում, և նա համբուրելով իր տիկնոջ ոտքը, ասաց՝

—Պանդուխանների տէրն՝ Խմամ—Մուրդան թող մխիթարէ քո հոգին, իմ տիրուհին ինչ առիթ ունի

իւր սիրտը մաշել այդպիսի ցաւերով . . . Շահզադէն (տիկնոջ ամուսինն) իւր բոլոր հարեմներից աւելի սիրում է քեզ, նա պահում է քեզ ոսկու, արծաթի և Թանդագին քարերի մէջ։

—«Է՛հ, ինչ կանեմ ոսկի լադանն, երբ նորա մէջ արիւն պէտք է Թքեմ։» Ասաց տիկինը պարսկական առածը, և խօսքը փոխեց հարցնելով աղախնուց՝—քեզ երդում եմ տալիս քո հօր ոսկերքով, ճրմարիան ասա, Մարջան, դու սիրում ես քո տիկնոջը, դու հաւատարիմ կը մնաս դէպի նա։

—Այդ ինչ հարցմունք է, տիրուհի. պատասխանեց աղախինը.—Մարջանը քո ոտքերի փոշին է, նա քո սարկուհին է, երբէս կարող է նա չը սիրել և հաւատարիմ չը մնալ քեզ։ Թող Ալիու դուլֆուդարն իմ սիրտը կտոր կտոր անէ, Թող ես ղրկուիմ Մուհամէդի լոյսէն, Թող Շիմրին և Եազիղին տուած նզովքներն իմ դլխին Թափուին, եթէ ես ծուռն աչքով նայեմ դէպի քեզ։

—Ես բոլորովին հաւատում եմ քեզ. յառաջ տարաւ տիկինը. բայց դու ուղիղն ասա, Մարջան, քո կեանքում պատահել է, որ դու սիրահարուած լինէիր։

—Ինչպէս մեղքս գաղնամ, տիկին, պատահել է . . . պատասխանեց աղախինն անմեղութեամբ։

—Պատմիր, ինչպէս է պատահել։

Աղախինը սկսեց պատմել։

—Մեր ցեղի մէջ կար մի տղամարդ, նա կոչվում էր Սադդայի որդի Բիլալ։ Նորա դէմքը սև և վայլուն էր, որպէս Թուխ էբենոս։ Նորա աչքերը վառ-

վումէլին, որպէս եամենի սև չաւայ։ Նորա ատամները սպիտակ էին, որպէս կարմիր ծովէն նոր դուրս բերած սաղաֆ։ Նորա ճակատը նկարուած էր զանազան դուներով, որպէս կրիայի խայտաճամուկ մէջքը։ Բիլալը մեր ցեղի քաջ տղամարդերից մինն էր։ Սահարայի առիւծը չունէր նորա սիրտը. անապատի ջայլամն այնպէս արնոթաց չէր, որպէս Բիլալը. Նեղոսի եղէգնների մէջ օձն այնքան թեքուն և զալրուն չէր, որպէս նա։ Բիլալը մի համարձակ որսորդ էր։ Նորա նետերն երբէք չէին չեղվում նպատակից։ Նորա նիզակը զարհուրելի էր։ Շատ անգամ հեղեղատի եղերքում ես բանջար քաղելիս, հանդիպում էր ինձ Բիլալը։ Միանգամ կապեց նա իմ պարանոցէն ծովային խղոճուկներից և նապխուն խիճերից մի վզանոց, որոնք նա իւր ձեռքով հաւաքել էր անապատից, և օծեց իմ մարմինը կակաոյի իւղով, և նայեց իմ վերա, համբուրեց ու ասաց՝ «Դու այժմ գեղեցիկ ես, Յուդղի, որպէս աբեսինեայի եղջերուն . . . .» Այն ժամանակ այդպէս էր կոչվում իմ անունը։ Բայց երկար չը տևեց իմ ուրախութիւնը գեղեցիկ Բիլալի հետ։ Ափրիկայի խորին անապատներից վայրենիները մի բազմաթիւ խումբ յարձակուեցան մեր ցեղի վերա։ Մերոնք յաղթուեցան։ Նրանք գերեցին մեր ցեղի մանկահասակ զաւակները և չատերին սպանեցին։ Բիլալն ինքն էր, որ ինձ պաշտպանելու ժամանակ, անցաւ նորա թիկունքի միջէն թշնամու նիզակը։ Նա աչքերը փակեց, ասելով ինձ իւր վերջին խօսքը՝ «ես չը կարողացայ ազատել քեզ, Յուդղի . . .» Ես գերի

ընկայ վայրենիների ձեռքում ուրիշ չատ աղջիկների և տղերքի հետ. նորանք մեզ ծախեցին հնդկացի վաճառականներին և մենք տարուեցանք դէպի Բօմբայ։ Այնտեղից ինձ Պարսկաստան բերից մի բանդեր— Բուշերցի հաջի, որից դու գնեցիր ինձ, տիկին։ Մինչև այսօր ես չատ անգամ տեսնումեմ Բիլալին. ես տեսնումեմ նորան երազումս. նա թափառումէ Աբեսինեայի հեղեղատի ափերում և խղոճուկներ է հաւաքում, որ զարդարէ իմ պարանոցը . . .

Խափչիկը վերջացրեց իւր պատմութիւնը և նորա վառվռուն աչքերից գլորուեցան արտասուքի մի քանի խոշոր կաթիլներ սեորակ թըշի վերա։

—Ո՛ կեանքի տխուր պատմութիւնը, Մարջան, նորա խօսքը կտրեց Զէյնաբ—խանումը. իմ միտքս լերաւ հէնց մի այդպիսի հէքեաթ, որ ես մի ժամանակ լսել էի պառաւ տատիցս։ Նա չատ նման է քո ասածներին, լսիր, Մարջան, ես կը պատմեմ քեզ։

Խափչիկի ուռած շրթունքը շարժուեցան մի անմեղ ծիծաղով և նա համբուրեց իւր տիկնոջ ոտքն, ասելով՝

—Դու ո՛րքան բարի ես, Զէյնաբ, դու ուզումես հէքեաթ ասել քո ստրուկին։

—Հա, կասեմ, քանի քունս չէ տանում։

Բ.

Այդպէս սկսեց Զէյնաբ—խանումն իւր հէքեաթը՝

«Կար, չը կար, կար մի քաղաք։ Այն քաղաքում նստումէր Գուրջիստանի թագաւորն։ Այն քաղաքը չինուած էր այն սարերի մէջ, ուր Ղաֆ—Դաղի գըլ-

էին չղթայած է Ջինների գլխաւորը։ Դրախտը չատ մօտ է այն երկրին և հրեշտակների նուագածութիւնը դեռ լսելի են լինում այնտեղ։ Դրախտէն բխած գետերից մինն անցնում է այն քաղաքի միջից և ջրում է ծաղիկներով զարդարուած դաշտերը։ Այնտեղ կանայքը չուր չեն տաքացնում լեղանալու համար, տարտարոսի բոցերն, անդունդից դուրս գալով, տաքցընում են աղբիւրները և նորանց ջրով լեղանում մարդիկ։

«Եղել է, չէ եղել, եղել է այն քաղաքում մի այրիկ և մի կնիկ. նրանք ունեցել են մի սիրուն աղջիկ, որի անունը լինում է Ալմաստ։ Նա լինում է մի աղջիկ՝ այնպէս վարդ թշերով, սև աչքերով, թուխ յօնքերով։ Տան և հինգ գարուն ծաղկում էին ծաղիկները և Ալմաստը տան և հինգ տարի լսում էր սոխակի սիրահարական երգը։ Նա էլ ունէր իւր սիրահարը, իւր սիրով այրուած, կրակուած սոխակը—դա մի պատանի էր մանկահասակ։ Սաւալանի նուները չունէին նորա թշերի գոյնը. Շերազի վարդերը չունէին նորա շրթունքի նրբութիւնը և կանաչաղարդ սալի—չիեարին իւր չիտակութիւնով չէր կարող համեմատուիլ նորա վայելչահասակ բոյի հետ։ Նորա բնաւորութիւնն այնպէս քաղցր էր, որպէս հրեշտակի չունչը։ Նա արտով այնքան բարի էր, որքան մինարէթի աղաւնին։ Այդ պատանու անունը կոչւում էր Մեխակ։ Չնդկաստանի մեխակը միայն կարող էր լինել այնպէս անուշահոտ և անմեղ, որպէս նորա հոգին։

«Մեխակը և Ալմաստը ծնուել էին իրենց մայրերից մի օրում և մի ժամում։ Դեռ նրանց ականջները չէին լսել առաջին ձայնն օրօրոցի երգի, երբ նորածիններուն ծնողքը վճռեցին նոցա ապագան—նրանք օրհնեցին Ալմաստի և Մեխակի ամուսնական նշանադրութիւնը։ Երեխաների օրօրոցի դաստակէն քարշ էին տուած ուլունքներով զարդարած խաղալիկների մի մի չարք, որոց մէջ անցուցած էին մի մի հատ մատանի։ Այդ մատանիներն էին նշաններ նոցա ծնողաց ուխտադրութեանը։ Պառաւ տատը չարժուէր օրօրոցը և մեղմիկ ձայնով նանիկ էր կարդում. երեխայքը խաղում էին մատանիների հետ, մինչև անուշիկ քունը հանգստացնում էր նորանց։

«Երեխայքը մեծանում են։ Մատանիներն օրօրոցի խաղալիկից դառնում են նրանց մատների զարդարանք, մինչև պատանին և օրիորդը հասկանում են նրանց նշանակութիւնը, հասկանում են, և սիրում են միմեանց . . .

«Հանդարտ լուսնական գիշերներում, դաղանի ծնողքներից, ծառերի խորին տուների տակ, երկու սիրահարքն անցուցանում էին սիրոյ քաղցրիկ րոպէները . . . Սոխակը նախանձվում էր նորանց, երբ մտածում էր, թէ իւր վարդը չատ անդամ ծակոտում էր նորա սիրան իւր փշերով, բայց Ալմաստը և Մեխակը փուշեր չունէին . . . : Աներևոյթ փերիները նախանձվում էին նորանց, երբ տեսնում էին, որ անմահների խումբի մէջ չը կային այնպիսի սիրականներ . . .

«Բայց նրանց պարզ, հրեշտակային սէրը չը տևեց երկար։ Մի սարսափելի դէպք բաժանեց նրանց մէկմէկուց։

«Հետու արևելքից յայտնվում էր այն քաղաքում մի նորքինի Թագաւոր *)։ Նա ունենում էր իւր հետ զօրքերի մեծ բազմութիւն։ Այդ մարդիկը չորս տեղ խմում էին ադամորդիների արիւն, իսկ հացի տեղ՝ ուտում էին նոցա միսը։ Նոցա սրտումը գութ չը կար։ Անասուի վագրը և բորենին աւելի բարեխիղճ էին քան թէ նորա։ Թագաւորի զօրքերը կրակ են տալիս այն գեղեցիկ քաղաքին, կողոպտումն բնակիչներին, կոտորումն ալևորներին, մորթումն ծրծկեր երեխայքն իրեանց մօր գրկումը, իսկ մանկահասակ աղջիկները և տղերքը գերի են առնում։ Ըւղտերու ամբողջ քարաւաններով տանում էին խեղճ գերիներին դէպի նորքինի Թագաւորի ախոյարհն, որոց հետ և գերի է ընկնում Ալմաստան։ Այնուհետև նա Մեխակից ոչինչ տեղեկութիւն չէ ունենում։

«Երբ Թագաւորը հասնում է իւր քաղաքը, բաժանում է բերած կողոպուտը և գերիներն իւր զօրքերի մէջ։ Ալմաստին վեր է առնում Թագաւորի գլխաւոր զօրապետներից մինը՝ մի Շահզադէ, որը նորա գեղեցկութեան համար, կարգում է որպէս իւր նչանաւոր տիկիններից մինը հարեմի մէջ։ Զարդարում էին նորան ոսկով և գոհարներով, բնակեցնում էին թանդարդին խալիներով և չալերով չքեղացրած դահլիճների մէջ, կերակրում էին նորան մեղրով և չաքարով։

«Ցիկինոջ պատուհանում դրած է փղոսկրեայ վանդակի մէջ մի Թռչնակ, երբ տիկինն իւր ախոռը—

(*) Ղազ Փամէտ խանն՝ Ախտայ—Շահ մականուանեալ։

յուսահատական րոպէներում ածում է Թառի վերա, Թռչնակը երգում է վանդակի միջից՝—

«Իմ տիկինը կերակրում է
Ինձ նշերով, չաքարով,
Իմ վանդակը զարդարում է
Իւր քնքշիկ ձեռքերով»

«Բայց գէթ մի ժամ ուրախ լինել
Ես չեմ կարող իմ կեանքում,
Երբ լիշում եմ, թէ գերի եմ
Այդ նեղ, փակուած վանդակում . . .»

«Ցիկինը լսում է Թռչնակի խօսքերը և նորա սրտում զարթնում են մի և նոյն զգայմունքները։ Նա լիշում է հայրենի երկիրը, նա միտն է բերում իւր հայրը, մայրը և աղգականները։ Նա լիշում է իւր կորցրած սիրականը—քաղցրիկ, անուշահոտ Մեխակին։ Նա զգում է, որ ինքը նոյնպէս մի գերի է, մի գերի հեռու աշխարհում, փակուած հարեմի վանդակի մէջ և կենդանի թաղուած այն տխուր գերեզմանում . . . ։ Եւ իսկոյն անցեալն իւր սարսափելի կերպարանքով պատկերանում է նորա աչքի առջև։—Նա տեսնում է իւր հօր, իւր մօր և աղգականների դիակները Թաւալուած արեան մէջ՝ իւր հայրենական օջախում, և իւր այժմեան ամուսինը սուրը ձեռքում կանգնած է նոցա մօտ . . . ։ Եւ իսկոյն ծնվում է տիկնոջ սրտում մի զարհուրելի տեղումն դէպի այդ դահիճն, որ կոտորեց իւր ծնողքը, որ խլեց իւրեան հայրենական

օջախից, որ և այսու ամենայնիւ կոչումէր նորան իւր կին . . .

«Թէ քնած թէ արթուն՝ միշտ տիկնոջ աչքի առջեւն էր այդ արիւնոտ տեսարանը և օրէցօր աւելի ու աւելի բորբոքումէր նորա սրտի մէջ կատաղի տեսլումիւնը դէպի իւր գերիչը . . .

«Անցանումէն մի քանի տարիներ։

«Միակ միտքն, որ աւելի շատ էր տանջում տիկնոջը էր իւր Մեխակի մասին։ Նա թէև համարումէր նորան սպանուածների թւում, բայց տակաւին այդ մասին մի որոշ տեղեկութիւն չունէր։

«Միանգամ տիկինն իւր աղախիններով և ծառաներով գնումէ իւրեանց մերձակայ այգին, որ գտանվումէր քաղաքին մօտ։ Այնտեղ ընդարձակ լճակի ափին կանգնած էր մեծաչէն ամարանոց։ Գիշեր էր։ Տիկինը վերնահարկի բարձրութիւնից նայումէր դէպի լճակին, որոյ մէջ լուսնեակը խաղումէր արծաթափայլ շողքերով։ Երկար նա այնպէս նայումէր և նորա սրտի մէջ զարթնումէին անցած, գնացած օրերի տխուր յիշատակները . . . ։ Նա յանձ իջաւ ապարանքի բարձրութիւնից և սկսեց միայնակ պտըտել ծառաղարդ ճեմելիքներով և լսել թռչունների դիշերային ճռվռոցը։

«Յանկարծ յայտնվումէ նորա առջև մի անծանօթ տղամարդ։

«Ի՞նչպէս համարձակուեցար դու մտնել այստեղ.» ասումէ տիկինը և կամենումէ կոչել ծառաներին, որ բռնեն նորան։

«Անծանօթ տղամարդը չոքումէ տիկնոջ առջև և

ասումէ՝—«Եթէ ճանաչէք ինձ, տիկին, չէք բարկանայ իմ վերա։

«Տիկինն ուրախութիւնից չիմոթվումէ։ Ծանօթ ձայնը նորա կորուսած Մեխակի ձայնն էր։

«Ա՛տուաձ իմ . . . կոչումէ տիկինը և գրկումէ նորան։

«Մի քանի րոպէ նոքա խօսք չեն գտնում միմեանց պատասխանելու։ Երբ փոքր ինչ սթափվումեն իրեանց հոգեզմայլութիւնից, տիկինը տանումէ հրիտասարդին մերձակայ հովանոցն, այնտեղ նստումեն։

«Ի՞նչպէս դու ուրացար այստեղ, հարցնումէ նորանից տիկինը։

—«Ես էլ գերիների թւումն էի, պատասխանումէ հրիտասարդն, ինձ գերի անող զօրապետի քանակն անցաւ մի քանի օրով առաջ և մենք բաժանուեցանք միմեանցից։

«Իսկ այժմ որտեղ ես լինում, հարցնումէ տիկինը։

—«Ես կառավարումեմ նոյն զօրապետի—քաղաքիս Սար ասքէրի—կալուածներն. իմ անունը կոչվումէ այժմ Քէրիմ—բէկ։

«Ուրեմն դու ուրացար կրօնքդ։

—«Ուրացայ, Ագմաստ, որովհետև ճար չունէի. ուրացայ միայն առերես։ Բայց մեր հօրերի կրօնքը միշտ վառ կը մնայ իմ սրտում, որպէս քո սէրը . . .

«Դու դեռ սիրումես ինձ . . . հարցնումէ տիկինն անուշ բերկրութեամբ։

—«Սիրումեմ, Ագմաստ . . .

«Նոցա խօսակցութիւնը ընդհատումէն տիկնոջ

ապահովեն, որ, անելով նա չաս ուշացաւ, պրատաւէին նորան։ Արխատարդը անելով նորանց անհետքանում էր ճանապարհի մէջ։

«Միւս օրը սիմիոն առն է գառնում և պատում է ոչ ոքի չէ տեսել այլ ես չէ տեսնում այն նոպերի պատկերը։ Նա միշտ երխատարդի վերա է մտածում և միշտ նորան է տեսնում իր երազներում.... Երբ ՝ուտը միջօրէական պահն սիմիոն պատկած է իր անեակում, նորա տեսիլքի ապահովը նստած է կոշիկ։ Ապահովը հէքեաթներ է ասում և հոլէ սիրում սիմիոնջ երեսին, որ նորա քունն անուշանէ, բայց նա չէ կարողանում քնել, որովհետև մտածում է իր Մեխակի վերա....»

Գ։

Տիկինը վերջացրուց իր հէքեաթը։

Խափչիկը, որ բոլոր ժամանակը խորին համակրանքով լսում էր, կտրեց նորա խոսքն ասելով

—Ես ապահովը հասկացա բոլորը... Մարջանը քո զարդին մի ճար կանէ...

—Ի՞նչպէս, Մարջան. հարցրուց Զէյնար—խանումն ապահովով։

—Շատով իմ սիրտը կը տեսնէ իր Մեխակին այս անեակումը...

Ոսկեսանիկան լսելը վերջացրեց սիրտը պէտք վերա, և նա, մտածողով իրեան, բացեց սուրհանդակը հարցնելով

—Մին է...

—Իմ սիրտը դեռ չէ ճանաչել իր ապահովին,

նա ջիններից գաղ է առել և շէյնանիկ անէլ պիտէ, պատասխանեց Մարջանը։

—Ուրեմն ես կարող եմ նորան այսօր տեսնել, հարցրուց Զէյնար—խանումն անհամբերութեամբ։

—Դու միայն չնորհիր քո սրտիդ ուշ ձգելուն իր ախնեան քաղքը, քո կամքը կատարած կը լինի։

Խոսանքի խափչիկը, յարմար միջոց գտնելով իրեան ապահով, մտածեց օգուտ քաղել այդ առիթից։

Տիկինը, որ ամէն բան պատրաստ էր գտնել միայն իր սրտածին կրկին տեսնելու համար, համաձայնեցաւ։

—Թող Գարագէ Աստուածը վկայ լինի, ես խոստանում եմ, Մարջան, քեզ արձակել, ասաց նա։

Խափչիկի կոկ և փայլուն թշերը ցնծութեան ուրախութեան ժպիտով և նորա սպաղիի նման սպիտակ ատամները ամէն գեղեցիկ կերպով երեացին փոքր ինչ ուռած շրթունքի միջից։

—Թող Լէյլի և Շիրինի Աստուածը քեզ օգնական լինեն, ասաց նա իրեն հրճուանքով։

Իսկ Զէյնար—խանումը, չը նայելով իր բոլոր հոգեկան բերկրանքին, անհանգիստ մտատանջութեան մէջ էր։

—Բայց դու երդումբ, Մարջան, որ այդ բանը պարտիզը կը մնայ մեր մէջ։

—Թող խնամ—Յուսէյնի խէնջար զարկողներից մինը լինի, թող Օսմանի գառամը գառաւ Մարջանն, եթէ իր սրտիդը հաւատարիմ չը մնայ. երդուեց խափչիկը։

—Այժմ ասա, ինչ հնարքով կարող ես նորան այստեղ բերել։

Խափչիկը զարձեալ ծիծաղել սկսեց, կարծես նորանից հարցնումէին մի ամենահասարակ բան։

—Իմ տիկինը դեռ չը գիտէ հարեմխանայի գաղտնիքները, ասաց նա. բայց Մարջանը կատուի նման ամեն ծակուծուկ մտնումէ և ամեն բան իմանումէ։ Նա գիտէ, թէ ինչպէս պէտք է բերել։

—Բայց դու ճանաչումես Հէյդարին,—այդպէս էր ներքինապետի անունը.—այդ հին դևն աւելի խորամանկ է քան Իբլիսը, նորա աչքերէն ոչինչ բան չէ կարելի թաղցնել։ Այդ անկարելի է, Մարջան, նա հարեմխանան չէ կարող մտնել . . . ասաց Զէյնաբ—խանումը կրկին յուսահատուելով։

—Բայց ինչ կասէ իմ տիկինն, երբ Մարջանը նորան նոյն իսկ Հէյդարի առջևից կը բերէ, և Հէյդարն իւր աչքերով կը տեսնէ, երբ նա կը մտնէ քո սենեակը, և ոչինչ չի հասկանայ։

Խափչիկն այդ խօսքերն ասելու միջոցին այնպէս հանդարտ էր, մինչ նա դրդուց Զէյնաբ—խանումի մտահատատութիւնը.—Դու կատարեալ կախարդ ես, Մարջան . . . երևի դու ծանօթ ես Իսմ—ազամին. (*) հարցրուց նա ծիծաղելով։

—Թող իմ տիկինն իւր տարակուսու վերա չը ծիծաղի։—Պատասխանեց խափչիկը փայլուն աչքերը

(*) Իսմ—ազամ նշանակումէ գերագոյն անուն—բարձրագոյն էակի իսկական անունը, որին ծանօթ եղողն, եթէ յիշէ, կարող է մարդկանց տեսութիւնից աներևոյթ մնալ։

դարձնելով դէպի իւր տիրուհին։—Հարեմխանայի մէջ աղամարդի ներս բերելու համար հարկաւոր չէ ծանօթ լինել Իսմ—ազամին։

—Էլ ինչ հնար կայ։

—Գիտէք, տիրուհի, ինչ էր պատահում մի օր Բադիմ—խանումի աղախինը՝ մալայուհի Ֆերուզը։

—Ի՞նչ էր պատահում։

—Նա՝ ասումէր, թէ իւր տիրուհին ունի մի սիրող։

—Ցնծայ։

—Թէ սիրողը շատ անգամ գալիս է տիրուհու մօտ։

—Հարեմխանայի մէջ։

—Այո, հարեմխանայում։

—Ի՞նչպէս է նորա մտնում։

—Ֆերուզն ասումէր, իմ տիրուհին ինձ ուղարկումէ այն աղամարդի մօտ։ Ես տալիս եմ նորան իմ հագուստը՝—իմ բուրէնոը, չարշաւը և չախչուրները։ Նա հագնվումէ և այնպէս գալիս է տիրուհուս մօտ, որպէս նորա աղախինը՝—Ֆերուզը . . .

—Այդ զարմանալի է, Մարջան։ Ի՞նչպէս ներքինիքը չեն ճանաչում նորան։

—Սատանան ինքը չէ կարող ճանաչել արդեօք չարշաւի մէջ փաթաթուածը կին է, թէ աղամարդ։

Տիկինը սկսեց ուրախութիւնից ծիծաղել և նորա սիրտն այդ յոյսերով աւելի վառուեցաւ։

—Ի՞նչու էք ծիծաղում, տիրուհի, չարունակեց Մարջանը. շատ անգամ Բադիմ—խանումն ինքն իւր աղախնի հագուստով դուրս է գնում ամիրզէն և շաբաթներով կորչումէ, սատանան գիտէ, թէ ու . . .

Իհարկէ, իւր սիրոյն—Շաֆիկի մօտ։

—Միթէ Հէյդարը չէ՞ նկատում այդ բոլորը։

—Հէյդարն ինչով կարող է պիտենալ, ծպտեալ կինն աղախինն է, թէ տիրուհին։

—Բայց ինչպէս չէ հասկանում խանը։

—Խանն, եթէ հարեմներից մինը կորչի էլ, չի պիտենայ, այնքան որ շատ են։ Մին էլ՝ իմ տիրուհուն յայտնի է, որ հարեմները պիտեն իրարանց հերթն, թէ երբ խանի հետ պէտք է տեսնուին։ Բայց դորանից՝ խանը շատ անգամ չարաթներով որսի է գնում ու չետ չի դառնում։

Չէյնաբ—խանումն սևորակ աչքերում կրկին փայլեցաւ ուրախութեան լոյսն.—Ուրեմն մեզ համար աւելի լաւ է, որ այժմ խանը մի չարաթով որսի է գնացած։

—Յայտնի բան է։

—Եւ դու, Մարջան, պէտք է դործ դնես նորին հնարն, ինչ որ անում է Ֆէրուզն իւր տիրուհու համար։

—Չէ, ես մի այլ հնար պէտք է մտածեմ։

—Ի՞նչ հնար, ասա, Մարջան։

—Մարջանն այժմ ասել կարող չէ, նա պէտք է մտածէ դորա վերայ։ Բայց թող իմ տիկինն այժմ քնի, հանդստանայ, երբ որ զարթնի, Մարջանը կասէ նորան։

Խափչիկը թողեց իւր տիրուհին միայնակ իւր սենեակում։ Բայց նա ամենևին չը կարողացաւ քնել։

Դ.

Երբ Մարջանը հեռացաւ իւր տիրուհու սենեակից

արեգակի բոցերը սաստիկ այրումէին դրսումը։ Հարեմների հանդստութեան ժամն էր։ Ոչքա արդէն քընած էին։ Միայն մանկահասակ աղախիններն, ազատ միջոց գտանելով, քաչուել էին սրահակների հովութեան մէջ, խօսումէին, ծիծաղումէին և զուարճանումէին փոքրիկ սենեկապատաս մանկլաւիկների հետ։

Խափչիկը տեսաւ մալայուհի Ֆէրուզին գեղեցիկ Սալմանի հետ մտն էր. գալիս բակի ճեմելիքով, որ կամարած էր խաղողենի որթերով։

—Ֆէրուզ, Սալման, ձայն տուէք նա։

Ոչքա կանգնեցան։ Մարջանը մօտեցաւ։ Նորա միտքն այն էր՝ կրկին անգամ խօսեցնել Ֆէրուզին, նորա տիրուհու գաղտնիքներից խօսք քաչել և իւր տիկնոջ նպատակին ծառայելու միջոցներ հնարել։

—Սոխակները նիրհումեն վարդի թփերի մէջ, նախշուն թիթեռները հանդստանումեն կանաչ տերևի տակ, բայց Ֆէրուզն ու Սալմանը հանդստութիւն չունեն . . .

Մալայուհին և չիրագի պատանին երկուսն էլ ժպտեցան։ Ոչքա մտան աւազանի մօտ գտնուող հովանոցն, որ հիւսած էր եասի պատառուկ ոստերով, որոց սպիտակ ծաղիկներն աւելի անուշ բուրումէին կէսօրուայ տաքութիւնից։

—Ի՛նչ լաւ է այստեղ ծխել, ասաց Մարջանը, դնա մի ղէլյան բեր, Սալման։

Փոքրիկ Սալմանն ուրախութեամբ վազեց կատարել երկու աղախինների հաճոյքը։

—Դու էլ այսօր չես քնել, Մարջան, երևի մի «փո-

բացաւ» ունեց. ասաց Ֆէրուզը պատանու դնալուց յետոյ։

—Ի՞նչ փորացաւ։

—Դու իմանում ես ինչ եմ ասում . . . : Այս ժամուն երկու արարածներ չեն կարող քնել, ոչ հրեմիանայի աղախինները և ոչ դրսի տան մանկլավիկները . . .

—Ի՞նչ օգուտ, Ֆէրուզ ջան։ Մենք նմանումենք երկաթի վանդակի մէջ դրած թռչունին, որոյ չուրջը խեղճ կատուն պտիտ է դալիս, միամու, միամու է անում, իր թաթիկները մեկնումէ ճեղքերից . . . բայց ոչինչ բաւականութիւն չէ ստանում . . .

—Այդ ուղիղ է, բայց դիտէք, ինչ է ասում առածն՝ «երկու սրտեր երբ միացան, չուտ են գտնում ծածուկ տեղը։»

—Ինչպէս դու և այդ չէրագիլ պատանին։ Այնպէս չէ, Ֆէրուզ։

—Նա դեռ երեխայ է, ոչինչ չէ հասկանում . . .

—Բայց դու դարձեալ սիրումես նորան։

—Սիրումեմ . . . : Պատասխանեց մանկահասակ մայրուհի աղջիկը և նորա մոդ—դեղնագոյնի գոյն դէմքըն ընդունեց խիստ տխուր արտայայտութիւն։

—Բայց մեր տիկիններն ասելի բախտաւոր են մեզանից. խախչիկը փոխեց իւր խօսքը.

—Բախտաւոր են, Մարջան։ Գիտէք, ինչ էր պատմում Խուրշիդ—խանումի աղախինը՝ Հուանին։

—Ի՞նչ էր պատմում։

—Նա ասումէր, իմ տիկինը մի օր Թոյլտուութիւն խնդրեց իւր քրոջ տունն երթալու։ Երկու ձի պատրաստեցին մինը տիկնոջ համար, միւսն՝ ինձ համար։ Մեզ հետ վեր առանք խանումի արաբին, բայց փոխանակ նորա քրոջ տունն երթալու, մենք քաղաքից դուրս եկանք, արաբը մեզ տարաւ մի այգի։ Այնտեղ սպասումէր խանումին մի երիտասարդ զօրապետ։ Խանումն երկու օր անցրուց նորա հետ։

—Բայց ինչպէս հաւատում է Խուրշիդ—խանումն արաբին իւր գաղտնիքը. հարցրուց Մարջանը զարմանալով։

—Արաբը մեզ նման ստրուկ է. խանումը խոստացել է նորան ազատութիւն, եթէ մինչև հինգ տարի կը պահէ նորա գաղտնիքն։ Ասումեն, նա արաբին էլ է սիրում . . .

Այդ խօսակցութեանը վերա հասաւ Սալմանն, որ բերումէր արծաթի գլխով մինա արած ղէչլանը։ Նա մատոյց ղէչլանը Մարջանին, բայց ուրախ պատանու երևսը չէր դադարում ժպտելուց։

—Ի՞նչ պատահեց քեզ, Սալման, հարցրուց Ֆէրուզը։

—Ես լսեցի ինչ էիք խօսում։

—Սուս կաց, դու դեռ փոքր ես, քեզ պէտք չէ այդպիսի խօսքերին ականջ դնել։

—Ես թէև փոքր եմ, բայց շատ բան գիտեմ։

—Ի՞նչ գիտես, հարցրուց Մարջանը։

—Ես առաջ սպասաւոր էի Կ . . . —Միրզայի հարեմիանայում։ Իմ խանումը գեղեցիկ էր ինչպէս հրեշտակ։ Բայց մեր իչխանն ատումէր նորան։ Տարի-

խնդրեց իւր քրոջ տունն երթալու։ Երկու ձի պատրաստեցին մինը տիկնոջ համար, միւսն՝ ինձ համար։ Մեզ հետ վեր առանք խանումի արաբին, բայց փոխանակ նորա քրոջ տունն երթալու, մենք քաղաքից դուրս եկանք, արաբը մեզ տարաւ մի այգի։ Այնտեղ սպասումէր խանումին մի երիտասարդ զօրապետ։ Խանումն երկու օր անցրուց նորա հետ։

—Բայց ինչպէս հաւատում է Խուրշիդ—խանումն արաբին իւր գաղտնիքը. հարցրուց Մարջանը զարմանալով։

—Արաբը մեզ նման ստրուկ է. խանումը խոստացել է նորան ազատութիւն, եթէ մինչև հինգ տարի կը պահէ նորա գաղտնիքն։ Ասումեն, նա արաբին էլ է սիրում . . .

Այդ խօսակցութեանը վերա հասաւ Սալմանն, որ բերումէր արծաթի գլխով մինա արած ղէչլանը։ Նա մատոյց ղէչլանը Մարջանին, բայց ուրախ պատանու երևսը չէր դադարում ժպտելուց։

—Ի՞նչ պատահեց քեզ, Սալման, հարցրուց Ֆէրուզը։

—Ես լսեցի ինչ էիք խօսում։

—Սուս կաց, դու դեռ փոքր ես, քեզ պէտք չէ այդպիսի խօսքերին ականջ դնել։

—Ես թէև փոքր եմ, բայց շատ բան գիտեմ։

—Ի՞նչ գիտես, հարցրուց Մարջանը։

—Ես առաջ սպասաւոր էի Կ . . . —Միրզայի հարեմիանայում։ Իմ խանումը գեղեցիկ էր ինչպէս հրեշտակ։ Բայց մեր իչխանն ատումէր նորան։ Տարի-

ներով նորա երեսը չէր տեսնում։ Շատ անգամ իմ խանումը զարդարվումէր գոհարներով և թիրմայներով։ Ցօնքերը ներկումէր բասմայով, աչքերը սևացնումէր սուրմայով և ձեռքերը ներկումէր խինայով։ Նա այնպէս սիրուն էր դառնում, որ ուղումէիր միշտ նայել նորա վերա։ Ցետոյ այդ բոլոր զարդարանքը նա ծածկումէր մի հին կարկատած չարսաւի տակ, երեսին ձգումէր նոյնպէս հին րուբէնդ։ Եւ որպէս մի աղքատ կին նա դուրս էր գալիս հարեմխանայից և ձևացնումէր իւրեան կոյր մուրացկան։ Ես նորա ձեռքիցը բռնած, մանէլի ածում բազարումը։ Նա խանումթպաններից ողորմութիւն էր խնդրում։ Բազարի տղամարդկերից որին հանդիպումէր նա, ես կանչումէի նորան մի պատաւի տուն, ուր սովորաբար գնումէր իմ տիրուհին իւր չրջանը կատարելէն յետոյ։

—Դու կատարեալ դևիկ ես, Սալման, ճըչացին երկու աղախինները, չը կարողանալով զսպել իւրեանց ծիծաղը։

—Մի անգամ, յառաջ տարաւ Սալմանն, իմ տէրն իմացաւ այդ բանն, իմ խանումին խեղդեցին և պիչերով թաղեցին քաղաքի խրամատի մէջ։ Ես փախայ այն տեղից։

Երկու աղախինները բոլոր մարմնով դողացին։

Սոյն միջոցին սենեակների մինի լուսամուտի յետքից լսելի եղաւ մի քնքուշ կանացի ձայն՝—Ֆէրուզ, Սալման։

—Տիկինը զարթնեց, ասացին մալայուհին և չիրագի պատանին և երկուքն էլ ըստացով հեռացան Մարջանից։

Մարջանը հովանոցի մէջ միայնակ նստած մտածումէր, երբ նորա մօտ եկաւ եթովպացի Սայիդը։ Դա մի պատանեակ էր ուղիղ և վայելուչ կազմուածքով, որոյ էբենոսի նման սև՝ մանկական դէմքի դուարթութիւնից կարելի էր նկատել, թէ նորա տարիքն ոչ աւելի են քան տասն և եօթը։ Սայիդը Զէյնաբ—խանումի սենեկապապա ծառան էր։

—Ինչ խանումը. հարցրուց Մարջանը սպասաւորից։

—Ես մատուցի երրորդ անգամ ղէյլան, նա տակաւին ծխումէր։

—Նստիր, Սայիդ, ես խօսելու բան ունեմ քեզ հետ։

Պատանին նստեց և նորա փայլուն աչքերն անհամբերութեամբ նայումէին Մարջանի երեսին, որ նոյն ժամուն աւելի հրապուրիչ կերպով կախարդումէր պաշտանու սիրտը։

—Ես այլ ևս ստրուկ չեմ, Սայիդ, իմ տիրուհին այսօր չնորհեց ինձ ազատութիւն։

—Աստուած, քեզ փառք. բացականչեց պատանին ղգացմունքով լի ձայնով և նորա կրակոտ աչքերի սպիտակուցքն աւելի չլացուցիչ կերպով նկարուեցան սև չրջանակների մէջ։

—Լսիր, Սայիդ, յառաջ տարաւ Մարջանը։ Դու նոյնպէս ստրուկ չես լինի, եթէ ինչ ասելու լինեմ քեզ դու իմ խօսքը պահես։

—Սայիդը սիրում է քեզ, նա չէ կարող քո խօսքը կոտրել։ Թող անիծուած լինի Սայիդը, Թող քո պիսակներն արիւնի մէջ տեսնէ նա, եթէ քո խօսքը չը լսէ։

Լսելով այդ սարսափելի երդումը, Մարջանը մանրամասնաբար պատմեց Սայիդին իւր տիկնոջ «հէքեաթը,» յայտնեց նորա նպատակը, թէ պէտք էր աշխատել նորա սիրած տղամարդին հարեմխանան մտցնելու։

—Այդ գործի մէջ, Սայիդ, աւելացրուց խաւիչիկը, դու ոչ միայն սիրոյ գաղտնիք պահես, բայց և պէտք է օգնես Մարջանին իւր տիկնոջ կամքը կատարելու։ Այն ժամանակ մեր տիկինը կը տայ քեզ ազատութիւն։

—Ես ամեն բանի պատրաստ եմ, եթէ ինձ սպանդին ես։

—Ուրեմն ամեն ինչ վերջացած է։ Մեր տիկինը հասնելով իւր նպատակին, մենք նոյնպէս կը հասնենք մերին . . .

—Այսինքն կը պսակուենք. այդ ես ուզում ասել։

—Այո։

Պատանու աչքերը վառուեցան, նա գրկեց իւր սիրուհին և մի տաք համբոյր քաղեց նորա թշերէն։

Ե.

Արեը սկսել էր խոնարհուիլ դէպի իւր պիչերային մուտքը։ Ամրոցի բարձր պատերի ստուերը յետդհետէ յայնանում էր բակերի վերայ։ Իսկ երեկոյեան մեղմիկ զեփիւռը ոգի էր ներշնչում ցնծութեամբ լեցուած տերեներին։

Հարեմական ծառաների խումբը՝ սև ստրուկներ, ալեւոր ծերունիք, փոքրիկ պատանեակներ՝—բոլորը հարեմներին անվոտանգ մարդիք,—որը բակն էր ասեղում, որն աւազաններից ջուր էր կրում, և որը ցընցուղներով սրսկում էր սալհատակների և ծաղիկների վերայ։ Նորա մօտ կանգնած էր մի բարձրահասակ մարդ՝ լղարիկ կազմուածքով, բոլորովին լերկ ու թառամած երեսով և սպառնալից աչքերով։ Նա հրամաններ էր տալիս աշխատողների խմբին։ Նորա պատչաճաւոր հագուստը, գոտկումը խրած զէնքերեան դաշնակն որոշում էր նորան միւս ծառաներից՝—Դա ներքինապետ Հէյդարն էր։

Մարջանը, բոլորովին կազմած պլխումը իւր տիրուհու նպատակին ծառայող գաղափարի ծրագիրը, դուրս եկաւ հոլանոցէն, երբ նորան հանդիպեց Հէյդարը։

—Ի՞նչ է պատահել քո տիկնոջ հետ, քանի օր է նա չէ երեւում, հարցրուց ներքինապետը։

—Ա՛խ, մի հարցնիր, Հէյդար . . .—Պատասխանեց խաւիչիկը տալով իւր ձայնին խիստ ցաւալի արտասանութիւն։—Մարգարէների մեծը Թող օգնէ նորան, իմ տիրուհին ողորմելի դրութեան մէջ է . . .

—Ի՞նչ է, հիւանդ է, հարցրուց ներքինապետը զարհուրելով։

—Երանի թէ հիւանդ լինէր . . . յաւէտ տարաբախտիկը. նա տանջւում է չար ոգիներից։

—Չար ոգիներից—կրկնեց Հէյդարն աւելի տար-

սպիելով։—Ո՛վ դժած և ողորմած Ալլահ...

—Այո՛, բարի Հէյդար, ցերեկները հանդստութիւն չունի և ամբողջ գիշերը նորա աչքերին քունը մօտ չէ գալիս։ Դևերը և ջիններն անդադար բղըղումն նորա ականջներին, վախեցնումն և ամենևին չեն հեռանում նորանից։

—Նզո՛վք շէյթանին. բացականչեց ներքինապետը։

—Պէտք է չուտով կանչել ջինդարին (կախարդ։)

—Ես էլ այդպէս եմ մտածում, Հէյդար։ Ես ճանաչումեմ մի պառաւ վհուկ, նա կոչվումէ «ջիննների մայր։» Նա իշխումէ դևերի վերա, երկնքից աստղ է վեր բերում, ասումեն, և փակեալ դանձերի դուռն է բաց անում։ Այս առաւօտ ես նորա մօտ էի, խոստացաւ գիշերը գալ, երբ ասելի են հաւաքվում իմ տիկնոջ չուրջը չար ոգիները։

—Ուրեմն կը գնայ նա։

—Անպատճառ, այս գիշեր։ Բայց գիտես, ինչ ասաց կախարդը։ Նա ասաց, խանումը պէտք է միայնակ լինի իր սենեակումն. ոչ ոք չը համարձակուի ներս մտնել նորա մօտ, որ նորա հմայքները չարդելնն։

—Ես կը հրամայեմ ամենին մօտ չը գնալ այն ժամուն խանումի սենեակին։

—Կախարդը կը բերէ իր հետ դևերի իշխանին, յառաջ տարաւ խափչիկը, նա կը հալածէ ամբոցին բոլոր չար ոգիները. մեծ պատերազմ կը լինի ոգիների մէջ և այդ միջոցին խանումի բակումն ոչ մի արարած պիտի չերևնայ, եթէ ոչ կը հանդիպի նոցա

սրերին։ Այդպէս ասումէր կախարդը։

—Ես կը կարգադրեմ բոլորը, որպէս պահանջումէ կախարդը. պատասխանեց ներքինապետը։ Բայց նոյն րոպէին նա ամբողջ մարմնով դողումէր երկիւղից։

—Միայն դու, Մարջան, այս գիշեր աչխատիր անպատճառ բերել նորան։

Խափչիկը հեռացաւ ներքինապետից մի բաւականութեամբ որպէս մի մարդ, որ կիսով չափ հասել էր իւր նպատակին։ Նա գնաւ իւր տիրուհին նոյն դրութեան մէջ, որպէս թողել էր։ Զէյնաբ—խանումը, տակաւին թիկն տուած թաւիշեայ բարձերին, իւր սրտի ամենաքաղցր վրդովմունքի մէջն էր։ Խափչիկի պատմածները հարևանական դաղտնիքների մասին քաջալերումէին նորա սիրտը և նա յոյս ունէր միւսանգամ տեսնել նորան, և այդ բախտաւոր րոպէին ստանումէր նա մեծ անհամբերութեամբ։ Տեսնելով Մարջանի ուրախ դէմքը, նա հաւատացրուց իւրեան, թէ խորամանկ խափչիկն արդէն կազմել էր իւր մէքենան։ Եւ այդ կարծիքի մէջ չը սխալուեցաւ նա, երբ լսեց յետոյայ խօսքերը՝

—Իմ տիկնոջ աչքը թող լուսաւոր լինի. ամենն բան արդէն կարգադրած է։

—Որպէս. հարցրուց Զէյնաբ—խանումը ուրախութեամբ։

Խափչիկը պատմեց այն ամենը, ինչ որ խօսել էր ներքինապետի հետ։

—Դու կատարեալ սատանայ ես, Մարջան, խօսեց Զէյնաբ—խանումը ծիծաղելով.—ուրեմն նա կը մտնի

ինձ մօտ որպէս կախարդ։

—Այո՛, Բայց լսեցէք, տիրուհի, այդ բոլորը չէ։

—Այլ ևս ինչ ունես ասելու։

—Մենք չենք կարող այդ գաղտնիքը ծածուկ պահել Սայիդից, նա պէտք է գիտենայ բոլորը։

—Ի՞նչպէս հաւատալ նորան։

—Ես երաշխաւոր եմ լինում իմ գլխով։

Տիկինը մտածութեան մէջ ընկաւ։

—Դու երևի ամենը պատմեցիր նորան, հարցրուց խանումը բոպէական խոհուեմութիւնից յետոյ։

—Բոլորը։ Թող իմ տիկինը չը վրդովուի, Մարջանը լաւ գիտէ իւր գործը։ Ես խոստացայ Սայիդին, թէ խանումը կը չնորհէ քեզ ազատութիւն, եթէ դու լուռ պահես լեզուդ։

—Նա ինչ ասաւ։

—Նա խոստացաւ ոչ միայն լուռ մնալ, այլ և ամեն բանի մէջ օգնել մեզ։ Ես երդուեցայ սարսափելի երդումներով և իմ սիրով։

—Քո սիրո՞վ, կրկնեց տիկինը մի վարդ սիրտ առնելով։

—Այո՛, իմ սիրով։ Պատասխանեց Մարջանը ծանրութեամբ։—Մենք մեր սիրուհուց գաղտնիք չունենք, Մարջանը և Սայիդը սիրումն մէկ մէկու։

Թէ խաւիկը և թէ մայրացողի պատանին Զէյնաբխանումի սնոտիական ապուշները լինելով, նա կատարեալ իրաւունք ունէր նորանց ազատութիւն չնորհելու։

—Այս օրից Սայիդն ազատ է, խօսեց տիկինը գո-

հունակ կերպով. բայց լսիր, Մարջան, թէ դու և թէ քո սիրականը չը պիտի յայտնէք ձեզ ազատուած մինչև մի յարմար ժամանակ, մինչև դուք պսակուած կը լինէիք։

—Հասկանում եմ . . . ասաց խաւիկին ուրախաձայնով և համբուրեց իւր տիկնոջ ոտքերը ի նշան իւր չնորհակալութեան։

—Ուրեմն դու մի ուշացիր, Մարջան, չուտով ազանը կը կանչեն։

—Դուք միայն ասեցէք, թէ ո՞րտեղ է նորա բնակարանը։

—Դու կը գտնես նորան քաղաքիս Սար—Ասքէրի ասանում, նորա կալուածքներն է կառավարում։

—Այդքանը բաւական է ինձ։ Ասաց Մարջանը վեր կենալով։—Դուք կախարդին սպասեցէք գիշերի տասերկու ժամին։ Այս րոպէիս գնում եմ, Սայիդին կասեմ ոչ օրի չը թողնէ ձեզ մօտ. դուք էլ կը ձևացնէք ձեզ այնպէս, որպէս ես յայտնել եմ Հէյդարին։

—Շատ լաւ։ Տէրին յանձնում եմ քեզ։

Զ.

Քաղաքի արևմտապետական թաղերից մինի մէջ կանգնած էր փառաւոր տուն, չրջապատած բարձր աչտարակներով և ատամնաւոր պարիսպներով։ Գլխաւոր մուտքի հանդէպ չարած մի քանի հրացանաձերն և նորա մօտ մի թումբի վերա նստած պահապան սարվազները՝ ցոյց էին տալիս, թէ այդ ապարանքը պատկանում էր մի պինուորական աստիճանաւորի։ Եւ արդարև, այնտեղ կենում էր զօրքի Սէր—Ասքէրը։

Առաւօտեան ժամն էր։ Հոյակապ տան դահլիճներից մէնի մէջ, որ լայն—դռներդուն ապակիներով զարդարած լուսամուտները բացվում էին դէպի պեղեցիկ պարտէզը, նստած էին երկու ամուսիններ խրախճանքի հատակի զատմեալ և պատկառելի տարիքում։ Սիրը իրէն մեքենայի կողքին չայ էր պատրաստում, իսկ այրը նորանից հետու իր վաղորդեան նամակն էր կատարում։ Երբ վերջացրուց նա իր աշխատքը, ծռաեցաւ կինոջը և նստից նորա մօտ։ Սիրը լցրուց մի բաժակ իրէ և դրեց նորա առջև։ Երբ վերջացրուց նա իմիկը, անհնազանդ փորրատրներից մէնը նեղա բերաւ գլուխը և դրեց իր ազգի առջև։ Նա սկսեց ծխել։ Նորա երկուքն էլ դեռ չէին փոխանակել իրենց մէջ ոչ մի խօսք։ Բայց նոցա բազմահոգ դէմքերից երեւում էր, իրէ երկուքի միտքն էլ զբաղուած էր մի ծանրակչիռ ընտանեկան խնդրով։

Այրն առաջին ընդհատեց սիրող լռութիւնը՝

—Կին, դու ոտներից գիտես, իրէ Մահին սիրում Քէրիմ—բէկին։

—Մէհրին ինձ պատմեց բոլորը, պատասխանեց սիրկինը։

—Բայց դու Մահիի լեզուից ոչինչ չես լսել։

—Ես նորանից հարցրի, բայց նա ոչինչ չը պատասխանեց, միայն լաց էր լինում։

—Ուրեմն այդ հաստատ բան է։

—Նա Մէհրիից թագուն բան չունի, նա իր ազատինին պատմել էր բոլորը և ազատինը յայտնեց ինձ։

Ինձ զօրապետի խորհուրդ, բայց միևնոյն ժամանակ պատկառելի դէմքն ընդունեց խիստ ծանր արտայայտութիւն և նա յառաջ տարաւ իր խօսքը՝

—Իր սիրոց մէջ չէ սխալուել Մահին Քէրիմ—բէկն արժան է նորան։

Տիկնոջ խառնուած, բայց տակաւին գեղեցիկ աչքերում փայլեցան ուրախութեան նշոյլներ։ Նա գոհ էր, որ ամուսնի համարդայութիւնը համապատասխանում էր իրենին։

—Այդ երիտասարդին, յառաջ տարաւ զօրապետը, Զարշխանեան Թիֆլիս քաղաքից ես բերեցի որպէս գերի։ Նա ազգաւ հայ էր, իսկ կրօնքով քրիստոնեայ։ Բայց չուտով ճանաչեց նա մեծ մարգարէի կրօնքի ճշմարտութիւնը և ընդունեց իսլամը։ Այժմ նա ամենաերեւելաչա մուսուլմաններից մէնն է։ Նա այսքան տարի իր ծառայութեան մէջ միշտ հաւատարիմ մնաց ինձ, այդ պատճառաւ ես սիրում նորան որպէս իմ աչքի լոյսը։ Վերջապէս նա ազատեց ինձ մահից . . . և ես իմ կեանքով պարտական եմ նորան։

—Նա ազատեց քեզ մահից, կրկնեց կինն ուրախանալով։

—Այո՛։ Հէրթի կռիւում մենք յաղթուեցանք, իմ զօրքը ցրուեցաւ։ Ազգականների և բէկլիների սուրը անխնայ կոտորում էր մեր սարվազներին նորանց հալածելու միջոցին։ Ես նոյնպէս սպրտած էի խոյս տալ կռիւի դաշտից։ Բայց յանկարծ իմ թուրքմէնցի ձին գլխիցը գնդակ ընդունելով գլորուեցաւ գետին։

Եւ թաւալուեցայ փոշիների մէջ։ Մին էլ այն տեսայ, որ Աւդան արծուի արագութեամբ չոքեց իմ կուրծքի վերա։ Նորա դաշնակը փայլեց։ Բայց հեռուից ծխաց մի հրացան և Աւդանը մի ակնթարթում գլորուեցաւ իմ մօտ։ Ես տեսայ իմ ազատիչը՝—Ջերիմ—բէկը՝ վերա հասաւ, ոտքով գլորեց դիակը դէպի մի կողմ և ինձ վեր բարձրացրուց։ Նա տուեց ինձ իւր նժոյգը՝ ասելով «Գնա փախէք, Սէրթիփ, ես կարող եմ ինձ ազատել։» Ես համբուրեցի նորա ճակատը և այն րոպէից խոստացայ նորան Մահին . . .

—Փառք քեզ, Աստուած։ Բացականչեց կինն իւր աչքերը դէպի երկինք ուղղելով։—Մինչ այդքան քաջ է Ջերիմ—բէկը։

—Նորա մէջ փղի ուժ կայ և առիւծի սիրտ, պատասխանեց ծերունի զօրապետը. նա իւր Թրի մի հարուածքով վար է քցում ահագին գոմէշի գլուխը։

—Մաշալլայ . . . կոչեց կինը։—Բայց որքան ազնիւ է նա որպէս տղամարդ, չը նայելով որ Մահին նորա համար հանգստութիւն չունի, նա մինչև այսօր ուղղակի աչքով չէ նայել մեր աղջկայ երեսին։

—Ջերիմ—բէկը կատարեալ տղամարդ է. նա արժան է մեր փեսայ լինել և մեր բոլոր հարստութեան ժառանգ։

—Բայց ինչու չը յայտնել նորան մեր նպատակը։

—Ես այս րոպէիս գնում եմ դրսի տունը, նորան կը կանչեմ ինձ մօտ և բոլորը կասեմ։ Խօսեց Սէր—Ապէրը և վեր կացաւ, վերարկուն քցեց ուսին և դուրս գնաց։

Այն միջոցին ներս մտաւ մի մանկահասակ աղջիկ հիանալի գեղեցկութեամբ։ Նորա սև գանգուրները խիտ օղակներով ծփումէին կիսամերկ թիկունքի վերա։ Աղեղնաձև յօնքերն պատել էին երկայն թերթերով հովանաւորուած աչքերը, որոց մէջ մանկական կրակը վառվռումէր իւր բոլոր արևելեան ջերմութեամբ։

Դա Մահին էր։ Մայրը պատմեց նորան հօր խօսքերը և իւրեանց նպատակը։ Օրիորդն ոչինչ չը պատասխանեց։ Մի քանի կաթիլ արտասուք երևացին նորա սևորակ աչերի մէջ և հանդարտ կերպով գլորուեցան մոյգ—վարդագոյն թշերի վերա։—Այդ նորա համաձայնութեան արտայայտութիւնն էր։

Սէր—Ապէրը, դուրս գալով հարեմխանայից, առանձնացաւ դրսի տան սենեակներից մինի մէջ և իսկոյն հրամայեց իւր մօտ կանչեն Ջերիմ—բէկին։

Քանի րոպէից յետոյ յայտնուեցաւ մի տղամարդ վայելուչ կազմուածքով և համակրական դէմքով։ Նա իսրին մեծարանքով գլուխ տուեց ծերունի զօրապետին և կանգնեց։

—Նստիր, Ջերիմ—բէկ, ասաց զօրապետը։ Մօտ նստիր։

Երիտասարդը, պահպանելով իւր պատշաճաւոր համեստութիւնը, չոքեց զօրապետից փոքր ինչ հեռու խալիների վերա։

—Լսիր, բարեկամ, խօսեց ծերունին, ես այսօր պէտք է յայտնեմ քեզ մի միտք, որ վաղուց դրած էր իմ սրտի մէջ։ Դու տեսնում ես, որ ես արդէն

հասակս առած եմ, զերեզմանը չատ հեռու չէ ինձանից, մահը կանգնած է իմ վրդի եանէն։ Միակ ճրագը, որ պէտք է վառ պահէ իմ օջախը, է իմ սիրելի աղջիկ—Մահին։ Բացի նորանից, դու գիտես, ես ուրիշ զաւակ չունեմ։ Մահին այժմ տասն և վեց տարեկան է, ուրեմն ես կարող եմ կատարել իմ խօսքը, որ տուեցի քեզ Հէրաթի կռիւի դաշտումն, երբ դու իմ կեանքն ազատեցիր մահից։ Մահին քո կինը կը լինի, Քէրիմ—բէկ, իսկ դու իմ որդին։ Եւ իմ բոլոր հարստութիւնը կը մնայ ձեզ ժառանգութիւն։

Այդ երկար մնջոյղի միջոցին Քէրիմ—բէկի դէմքն աւելի և աւելի մռայլւում էր։ Կարծես թէ, նա տարաւիղով ապաստամբը ծերունի զօրապետի վերջին խօսքերին։

—Այժմ իմ որդի,—ես այսուհետև այդպէս պէտք է կոչեմ քեզ,—ևկ ձեռքս համբուրիր, որ քեզ օրհնեմ։

Ներքին պատերազմն ամենաստամիկ կերպով խռովումէր երիտասարդի սիրտը։ Մի քանի րոպէ նա տարուբերուեցաւ անվճռականութեան մէջ։

—Աստուած երկար կեանք տայ ձեզ, իմ տէր, պատասխանեց նա չփոթուելով.—ես պատրաստ եմ համբուրել ոչ թէ ձեր ձեռքն, այլև ձեր հողաթափները։ Բայց ինչ որ վերաբերումէ Մահինին, այդպէս չատ չեմ կարող ընդունել մի այդպիսի առաջարկութիւն։

Ջարմացքը ծերունու մէջ ցարսափի փոխուեցաւ, լսելով մի այդպիսի անսպասելի պատասխանը, նա հարցրուց անհամբերութեամբ՝—

—Երևի դու չես սիրում Մահինին։

Երիտասարդը դարձեալ ընկղմուեցաւ դժուարացուցիչ դրութեան մէջ։ Նա չը գիտէր, թէ ինչ պատասխանէ։ Իսկոյն ծագեցաւ նորա դլխում մի միտք և նա վճռեց կեղծաւորուիլ։

—Ես սիրումեմ Մահինն, իմ տէր, բայց նորա սէրից աւելի ես պատուումեմ իմ ուխտը։

—Որպիսի ուխտ, զարհուրելով հարցրուց ծերունին։

—Հէրաթի կռիւի դաշտումն, երբ յայտնեցիք դուք ձեր խոստումնքը Մահինի մասին, մի և նոյն րոպէին ես երդուեցայ մեծ մարգարէի առաջև, որ չը պատկուեմ՝ մինչև Մէքքայ ուխտաւորութեան չերթամ։ Ես պէտք է գնամ Մէքքայ, ես պէտք է մտնեմ Քաբայի տունը, համբուրեմ Մուհամէդի զերեզմանը և հաջի դառնամ, որպէս զի կարողանամ դոցանով արժել իմ ձեռքերն այնքան արիւններից, որ թափել եմ ես . . .

Այս խօսքերն երիտասարդը արտասանեց այնպիսի մի ջերմեռանդութեամբ, մինչ ծերունու սրտում ամենևին կասկած չը մնաց նորա ճշտութեան մասին։ Նոր իսլամը ընդունող այլակրօն երիտասարդի այդ մուսուլմանական զգացմունքն աւելի բարձր՝ աւելի վսեմ էր, քան թէ Մահիի սէրը և ամեն երկրային բան։ Այդ պատճառաւ ծերունին խանարհուեցաւ երիտասարդի այդ սուրբ կրօնական պարտաւորութեան առջև։

—Երբ որ այդպէս է, խօսեց ծերունին, ես չեմ ընդդիմանում քո հարցանքին, իմ որդի։ Ես նախ և

առաջ մեծ պատրաստութեամբ կուզարկեմ քեզ Մկըքայ, դու քեզ հետ կունենաս մի ամբողջ քարաւան ծառաների և ստրուկների և կը կատարես քո ուխտը։

—Աստուած թող երկար կեանք պարգևէ քեզ, տէր իմ, պատասխանեց երիտասարդը և մօտեցաւ համբուրելու ծերունու աջը։

Բայց զօրապետը բռնեց նորա ձեռքից,—խոստանում եմ, որդի, որ հաջի դառնալէդ յետոյ, կը կատարեմ իմ կամքը։

Երիտասարդը կրկին չվոխուեցաւ։

—Ասա, մի ամաչիր։

—Խոստանում եմ . . . պատասխանեց Քէրիմ—բէկին, իսկ այդ խօսքը կարծես այրեց նորա շրթունքը . . .

Է։

Մի քանի օր միայն անցել էր այդ խօսակցութիւնից։

Երեկոյեան ժամն էր։ Մէչիդների բարձր մինարէթների գլխից լսելի էին լինում հարիւրաւոր մուազինների (քարոզների) ազանի ձայներ, մինը գոռումէր, միւսը կրկնացնումէր իւր ձայնը։ Այդ հնչումների ընդհանուր խառնուրդեան հետ՝—միախառնուելով քաղաքիս անդադար երեկոյեան խօսուտուտի զռզռոցը, այգիներից իւրեանց բեռնով դարձող աւանակների ահռելի մեղեդին՝—կազմումէին մի անախորժ ներդաշնակութիւն։

Թանութպաններն էին բաղարից ըշտապումէին դէպի տուն։ Նոցանից ոմանք իւրեանց թևքի տակին տանումէին մի քանի սանդակ, որը մի կտոր սառուց խուռով քաշ էր տուած իւր ձեռքէն, որն իւր քնքոյշ թաշկինակի մէջ կանաչի կամ միրգ էր տանում իւր երեխաներին։

Նոյն ժամուն մի կին, ոտքից ցղուվ փաթաթուած կապոյտ չարշաւի մէջ, սպիտակ երեսկալով, մի մեծ կապոյ թևքի տակին բռնած, միայնակ դիմումէր դէպի Ղազվինի—Դարվազէն։ Նա անցաւ բազարից և կէս ժամից յետոյ հասաւ Սար—Ասքէրի տանը։

—Ո՞վ ես դու, հարցրուց դրնապանը խռպոտ ձայնով, երբ կամենումէր կինը ներս մտնել։

—Քէրիմ—բէկի համար լուացք եմ տանում, պատասխանեց անծանօթը, ցոյց տալով թևքի տակի կապոցը։

—Անցէք, Բէկը այժմ իւր սենեակումն է, ասաց դրնապանը։

Կինը ներս մտաւ փոքրիկ սպասասրից, որ հանդիպեց նորան սրահակի մէջ, տեղեկացաւ նա Քէրիմ—բէկի կացարանի մասին և ուղղակի դիմեց այնտեղ։ Կինը գտաւ նորան միայնակ իւր սենեակում թէյ էր խմում և ծխումէր։ Նա առանց բարձրացնելու երեսկալը, մօտեցաւ երիտասարդին, բարևեց՝—

—Խաղաղութիւն լինի քեզ։

Երիտասարդը սովորական կերպով ընդունեց ողջոյնը, հրաւիրելով նորան նստել։ Կինը մօտեցաւ նորան և հազիւ լսելի ձայնով ասաց՝—

—Իմ տէր, ձեզ հետ գաղտնի խօսելիք ունեմ։

Այդպիսի անակնկալ հիւրերը, մանաւանդ անծանօթ կնիկներից ամուրի երիտասարդների մօտ, այն

քաղաքում սովորական լինելով, Քէրիմ—բէկին ամենևին չը կասկածեց իր այցելուի մասին, և խիստ քաղաքավարի կերպով պատասխանեց նորան՝—

—Այստեղ չեն արդեօք ձեզ, միայն դուք յետ քաշէք ձեր երեսկալը։

Անծանօթն երեսէն առեց դիմակը և յայտնուեցաւ մի խափչիկի դէմք բաւականին նուրբ գծագրութեամբ։ Երիտասարդը մտածեց, թէ նա տարփաւոր խանումների աղախիններից մինը պէտք է լինի։

—Ի՞նչպէս Թողեցին ձեզ ինձ մօտ։

—Ես խաբեցի դրնապանին, ասեցի թէ ձեզ համար լուացք եմ բերում, պատասխանեց խափչիկը ցոյց տալով իր կապոցը։

Օրիորդը նաեւ երիտասարդից ոչ այնքան հեռու։

—Բարի լինի ձեր գալուստը . . . հարցրուց Քէրիմ—բէկը հետաքրքրութեամբ։

—Փառք Աստուծոյ բարի է։ Ասաց աղախինը, և ապրի մօտենալով երիտասարդին, խօսեց նորա ականջին՝—ինձ ձեզ մօտ ուղարկեց Զէյնաբ—խանումը։

Զարմացքը, հրճուանքը և սոսկումը փոփոխակի կերպով մի րոպէում նկարուեցան Քէրիմ—բէկի դէմքի վերայ։ Նա չը կարողացաւ իսկոյն հաւատալ խափչիկի խօսքին։

—Ո՞վ է Զէյնաբ—խանումը, հարցրուց նա փորձելու մտքով։

—Իմ տէրը լաւ է ճանաչում նորան։ Զէյնաբ—խանումն իմ տիկինն է, իսկ ձեր՝—սիրուհին։ Դեռ Դարձեալ

Չիստանի Թիֆլիս քաղաքում Մեխակը և Ալմաստը սիրումէին միմեանց։ Այդպէս կոչւում էր այնտեղ ձեր երկուքի անունները։ Ներքինի Թագաւորը ձեզ այստեղ գերի բերաւ և դուք բաժանուեցաք միմեանցից . . .

Մի երկրայական սառսուռ ցնցեց Քէրիմ—բէկի բոլոր մարմինն այդ խօսքերը լսելու միջոցին։

—Դուք, յառաջ տարաւ խափչիկը, ձեր հայրենիքից զրկուելէն յետոյ մէկմէկից բնաւ տեղեկութիւն չունէիք, մինչև քանի շաբաթ առաջ հանդիպեցաք միմեանց իմ տիկնոջ ամարանոցումը . . .

—Նշմարք չէյմանին, բացականչեց երիտասարդը սարսափելով,—մեր դաղտնիքը յայտնուած է . . .

—Հանդստացէք, իմ տէր, ես լրտես չեմ։ Հաւատացնումեմ ձեզ ես իմ տիրուհու անունով, որ իմ խօսքերի մէջ կեղծաւորութիւն չը կայ։ Ձեր և Զէյնաբ—խանումի կեանքի պատմութիւնը բոլորն ինձ յայտնի է։ Իմ տիրուհին Մարջանից դաղտնիք չունի,—այդպէս է ձեր աղախնի անունը։

Խափչիկը, դուրս բերելով իր ծոցէն մի ոսկեայ խաչ, ցոյց տուեց երիտասարդին։

—Ճանաչեցէք այդ բանը։

—Տէր Աստուած, այդ «նորանն» է . . . ։ Բացականչեց Քէրիմ—բէկն, իր ձեռքը առնելով փոքրիկ խաչը։

—Լսեցէք, իմ տէր, շարունակեց խափչիկը, Զէյնաբ—խանումն այդ նշանը տուաւ ինձ, ձեզ ցոյց տալու համար, որ դուք հաւատաք իմ բոլոր ասածներին։

—Ես այժմ հաւատումեմ ձեզ։

—Ուրեմն ակամայ դրեցէք զէյնար—խանումը սպառնալեաց այս դիշեր տասերկու ժամին ձեզ իւր մօտ ընդունել։

—Որպէս ես կարող եմ մտնել հարեմխանան։

—Դուք կը հագնիք այդ չորերն, որ ես բերել եմ հետս և կը մտնիք հարեմխանան որպէս մի կախարդ պառաւ։

Խափչիկը ցոյց տուեց նորան իւր բերած կապոցը և յայտնեց այն բոլորն, ինչ որ խօսեցել էր ներքինապետի հետ, և որպէս կարգադրել էին նորա դերը հարեմխանան մտնելու համար։ Քէրիմ—բէկը լսելով այդ խօսքերը չը կարողացաւ զսպել իւր ծիծաղը։

—Մարդիկն, ասաց նա, դուք ուզումիք ինձ կախարդ չինել։

—Ուրիշ հնար չը կայ։ Ժամանակը թանգ է մեզ համար։ Իմ տիրուհին կակիծից կը մեռնի, եթէ այս դիշեր ձեզ չը տեսնէ։ Ամբողջ ամէն ինչ կարգի դրած է ձեզ ընդունելու համար։ Այդ մասին միամիտ կացէք։ Ահա ես գնում եմ և ձեզ մօտ եմ թողում այդ հագուստը։

—Ես ո՞րտեղ կարող եմ դտնել ձեզ։

—Չո՛, մոռացայ։ Դուք կը գտնէք ինձ Ջումայի—Մէչկիի մօտ։ Այնտեղից մինչ միասին ամբողջը կերթանք։

—Շատ լաւ, պատասխանեց երիտասարդն ուրախութեամբ, երկու ժամից յետոյ ես այնտեղ կը լինեմ։

Խափչիկը վեր կացաւ, և մինաք բարով առնելով, հեռացաւ։

Ը։

Մթին դիշեր էր։ Շահզադէի հարեմխանայի դռնապոյն—ապակեզարդ լուսամուտները վառվռում էին կախարդական լուսով։ Ծառերի խորհրդական ասպարիսը, չադրաւանների ներդաշնակ խոխոջմունքը, դիշերապահ զինուորների աղդարար նշանախօսութիւնքը, նոցա հարա—հրոցը՝ տալիս էին այդ ցաւերով և զուարճութեամբ լի բնակարանին մի դիւթական բնաւորութիւն . . .

Ամէն մի հարեմի անհնակից լսելի էր լինում մի առանձին ձայն՝—մի տեղ մանկահասակ աղախինները հնչեցնում էին թմբուկ, դայրայ և քամանն, և իւրեանց տիրուհուն պար էին ածում։ Մի տեղ վրչտալի հարեմը, միայնակ նստած իւր սենեակի լուսամուտի հանդէպ, փափուկ մատները վազեցնում էր թաւ լարերի վերա և տխուր ձայնով երգում էր իւր կոտրած սէրը . . . . Մի այլ սենեակում մայրը չարժում էր իւր զաւակի օրօրոցը և նանիկ էր կարդում։ Մի այլ տեղ աւելի հասակաւոր հարեմը՝ լի բարեպաշտական զղացմունքներով իւր դիշերային նամազն էր կատարում։ Մի խօսքով, ամէն ինչ չարժողութեան մէջ էր, ամէն տեղ եռ էր գալիս հարեմական կեանքն իւր ուրախ, տրտում, դեղաջինջ և արտասուելի տրամադրութեան մէջ . . .

Մի սենեակում միայն տիրել էր խորին լռութիւն և աղօտ լուսով վառվռում էր ճրագը։ Ոչ ոք չէր համարձակվում մօտենալ այդ բնակարանին. ամբողջ ամրոցի մէջ տարածուել էր լուր, թէ այնտեղ հաւա-

քուել էին չար ոգիները։

Այդ Չէյնար—խանութի սեռնեակն էր։

Անհամբեր, մի հոգեկան քաղցր վրդովմունքով, «վինին» ապատումէր նա այն ժամուն իւր նուիրական օթեակումը .... Հոլանի Թևքը նեցուկ տուած պեղեցիկ գլխին, նստած էր նա, և արձակ ծամերն ալիքաւոր հոսանքով Թափուել էին կիսամերկ կուրծքի վերա։ Սենեակի մէջ տիրումէր խորին լռութիւն։ Միայն ժամացուցի կանոնաւոր չրկչրկոցը ներդաշնակումէր նորա սրտի ամեն մի զարկի հետ, երբ նա մտածումէր, Թէ երբ կը լրանայ տասերկու ժամը ...

Վերջապէս մտածեց նա իւր հոգեկան ամբոխմունքը մի փոքր ցրուել Թամբաքուի ծխով։ Այդ պատճառաւ ձայն տուեց՝—Սայիդ։

Խոզոյն ղրները յետ դնացին և եթովպացու սև կերպարանքը նկատուեցաւ սենեակի մուտքի մէջ։

—Մի ղեչլան։

Սայիդը գլուխ տալով հեռացաւ։

Նա կանգնեցաւ ոտքի վերա և ուզումէր մօտենալ բայց լուսամուտին մի փոքր Թարմ օդ ծծել։ Նորա կլասիկական հասակը նոյն ժամուն նմանումէին էր քերում մի հաւերժահարսնի, որ կարծես, դեռ նոր վեր էր բարձրացել ծովային փրփուրներից։ Ոսկի Թևերով նեչած կարճիկ չափքանը խիստ նեղ կերպով սեղմուած էր նազուկ մէջքին։ Եւ ամբի պես փքուած շալվարները լայն բացուածքով հանդումէին մինչև բոլորովին մերկ սրունքները։ Թափանցիկ շապիկը հազիւ պօղումէր մարմարեայ կուրծքը, որոյ վերա դո-

հարեղէն մանեակը վառվռումէր աստղերի նման։ Նա նստեց պատուհանի հանդէպ, երբ Սայիդը մատուց ղեչլանը։

—Սայիդ, Մարջանն ասաց քեզ, Թէ այս գիշեր մենք մի հիւր պէտք է ընդունենք։

—Ասաց, տիրուհի։ Ես բոլորը գիտեմ, պատասխանեց եթովպացին խորհրդաւոր ձայնով։

—Դու արթուն կաց, որ «նորա» գալուստը չարգելուի։

—Ես հսկումեմ որպէս սատանայ։ Քանի բոպէ առաջ բոլոր հարեմխանան կատուի զգուշութեամբ չրջակայեցի։ Այս գիշեր չղջիկներն էլ կարծես չեն համարձակվում ձեր բակին մօտենալ։ Չար ոգիների ստրատիը տիրել է ամենի վերա։ Ծերունի Հէյդարը բռնուած է մի անասելի երկիւղով։ Ես տեսայ նորան, ախ, որպէս աղօթումէր նա իւր սենեակում...

Մի ուրախ ժպիտ չարժեց խանումի վարդագոյն շրթունքը և մարգարտեայ ատամները դուրս երևացին, որպէս սաղաֆը կարմիր բուսթի միջից։

—Այդ լաւ է ... խօսեց նա, Մարջանը չատ խրատանկութեամբ հնազանդել է իւր Ֆէնդ ու Ֆէլը ...

—Նա չատ սատանայ է, տիրուհի։ Պատասխանեց Սայիդը, կամենալով այդ խօսքով արտասանել Մարջանի անասնական դիտումները։

—Դորա համար էլ դու տիրումես նորան։ Այդպէս չէ։

Եթովպացին ոչինչ չը պատասխանեց, բայց նորա խաղող աչքերի ասիտակութիւնը չողաց, որպէս մի

ղոյգ աստղեր սև ամպերու ճեղքից։

Պատի ժամացոյցը տասերկու անգամ զարկեց իր մուճջը։ Ջանկարծ ամրոցի դրսէն լսելի եղաւ դիւրային բուի ձայնի հնչումներ, որպէս թէ Թռչունը մօտենումէր իւր որսին։

—Մարջանն եկաւ։ Ասաց Սայիդը իւր լսելիքն աւելի լարելով։

Բուի ձայները կրկնուեցաւ։

—Նա որսը իւր հետն է բերում, ասաց Սայիդը և չուտով դուրս գնաց իւր սիրուհու սենեակէն։

Նոյն րոպէին Ջէյնաբ—խանումի բակում լսելի եղաւ մի այլ Թռչունի ձայն, որ նմանումէր դիւերապահ կուռնկի ձայնին։ Առաջին ձայնը պատասխանեց նորան և իսկոյն լռեց։ Վերջինը Սայիդի սիրնամն էր։

Սիմէոնացի պատանին դուրս վազեց հարեմիանայից և չուտով յայտնվեցաւ ամրոցի դրանը։ Երկու ասուերներ դուրս երևցան խաւարի միջից, մինը մօտեցաւ Սայիդին և փոխեցին նորա հետ մի քանի խօսքեր նեդրեան լեզուով։

Նոքա երեքը միասին դիմեցին դէպի ամրոցը։

—Ո՞վ է այդ կինը, հարցրուց հարեմիանայի ղեկնասպանը։

—Կախարդը, պատասխանեց Մարջանը։

Ներքինին ոչինչ չը խօսեց և ներս թողեց։

Քանի րոպէից յետոյ «վախարդը» յայտնուեցաւ Ջէյնաբ—խանումի սենեակումը։ Մարջանը իսկոյն վար թողեց լուսամուտների վարագոյրները և հեռացաւ։

Կախարդի արտաքին կերպարանքը բոլորովին համապատասխան էր իւր կոչմանը։ Նորան չէր կարելի որոշել մի ցիգան պառաւից իւր ֆալ բացելու բոլոր օտարոտի պարագաներով։ Իսկ երբ նա ձգեց չարաւաը և երեսկալն, որոցմով ծածկուած էր, երևան եղաւ մի վայելչակազմ տղամարդ, կողքից քարշ ընկած դաշոյնով և գոտիումը խրած մի ղոյգատճանակներով։

Ջէյնաբ—խանումը, տեսնելով իւր ցանկութեան առարկան, իսկոյն վազեց և փաթաթվեցաւ նորա վզով։ Երկար այնպէս գրկախառնուած մնացին նոքա և լուռ ու մունջ վայելումէին իրենց սրտի բերկրութիւնը . . . ։

Թ.

Երբ մի փոքր սթափուեցան նոքա իրենց հոգեմտպելութիւնից, նստեցին միմեանց մօտ, սկսկին առաջին ընդհատեց սիրող լռութիւնը՝—

—Ո՞վ կը մտածէր, Մելիսակ, որ այդքան անցքերէն յետոյ մենք կրկին կը տեսնէինք միմեանց։

—Աստուծոյ ձեռքում ամեն բնչ հնարաւոր է, Ամմասա։—Պատասխանեց երիտասարդը։—Բայց ինչպէս լաւ խօսումես դու հայերէն, դու դեռ չես մոռացել մեր լեզուն։

—Ես ոչինչ չեմ մոռացել, Մելիսակ Ջան, ես դեռ յիշումեմ Թիֆլիսն ու մեր Կուրը, ես դեռ յիշումեմ Խոջանց վանքն ու Հաւիրաբձման օրը, երբ աղջիկների հետ այնտեղ ջանդուրումներ էինք երդում ու վիճակով մեր բախտը փորձում։ Ես դեռ մտքումս ունեմ

մի քանի ջանգուլումներ։ Կարծես թէ, հէնց այդ բոպէին իմ աչքի առջև կանգնած են մեր տունը և մեր կտուրն, ուր ճիւղերով ծածկուած չարդախի տակ, յիշումես Մեխակ, մենք անցուցանումէինք ամբողջ գիշերներ . . .

—Յիշումեմ . . .։—Պատասխանեց երիտասարդը և նորա ձայնը դողաց սրտի յուզմունքից։—Ես ուրախ եմ, Ալմաստ, որ այդ բոլորը չես մոռացել դու։ Ես մտածումէի, թէ հարեմական դուարճութիւնների մէջ, դու մոռանաս կանէիր մեր բախտաւոր անցեալը—մեր սիրոյ և մանկութեան քաղցրիկ օրերը . . .

—Ի՞նչ դուարճութիւն, իմ սիրելի, դու ինքդ լաւ գիտես, թէ ինչ բան է հարեմխանան և հարեմը։ Այստեղ ոսկուց, արծաթից և թանգագին գոհարներից է կազմված անբախտ հարեմի գերեզմանը . . . Թիրմայ չալերից է կարված նորա պատանը . . . և նա թաղված է զարդարած դահլիճների փակուած պատերի մէջ . . .

—Ես նա միխիթարութիւն է գտնում, ասելացրուց երիտասարդը, խօսելով թմրած ներքինիների և զրուկի դէմքով սեամորթ ստրուկների հետ։

—Այդ ուղիղ է, իմ սիրելի, յառաջ տարաւ Ալմաստը։—Դու չես կարող երևակայել, թէ ինչ ցաւերով անցուցել եմ ես այստեղ իմ սև օրերը . . .։ Ամբողջ հարեմխանան լցուած է կնիկներով, ամեն ազգից և ամեն դասից։ Նոցա ամեն մէկի կեանքի հետ կապուած է մի սարսափելի պատմութիւն։ Ներքինապետը մի և նոյն կերպով է վարվում իւր տիրոջ կնիկ-

ների հետ, ինչ կերպով որ վարվումէ ախոռապետը նորա ձիաների հետ, երբ պատրաստումէր նոցանից մինը, որին նորա տէրը բարեհաճել էր հեծնել և կատարել իւր դրօսանքը . . .

—Սարսափելի դրութիւն, կոչեց երիտասարդը։

—Ներքինապետը հերթով է բաժանում հարեմխանայի խնդանի սէրը նորա կնիկների մէջ։—Շարունակեց Ալմաստը ցաւալի ձայնով։—Կնիկները ստիպուած են կամ կաչառել իւրեանց անգութ պահապանին և կամ հաճոյամոլութիւններով գրաւել ամուսնի սիրտը։

Երիտասարդը բոլոր ժամանակը լսումէր, թոյլ տալով իւր սիրուհուն թափել սրտի բոլոր ցաւերը։

—Շատ անգամ յուսահատութիւնը մինչ այն աստիճան սիրումէր ինձ, որ ես պատրաստվումէի ինձ խեղդել, կամ որևիցէ թոյնով հանգստացնել սրտիս դարդերը։ Բայց միշտ մի անևրևոյթ ձեռք կարծես արգելումէր ինձ, երբ մտածումէի, թէ ես քրիստոնեայ եմ, թէ իմ դիակը կը գրուի մահմետական գերեզմանատունում . . .

—Բայց դու չէիր մտածում իմ վերա, ընդհատեց երիտասարդը նորա խօսքը։

—Մտածումէի, Մեխակ ջան, ինչպէս չէի մտածում։ Ես կարծումէի, թէ երկնքումը կը գտնեմ քեզ և այնտեղ էլի կը սիրէինք միմեանց։

Վերջին խօսքերն արտասանելու միջոցին Ալմաստի աչքերը լեցուեցան արտասուքով։

—Ուրեմն դու չը գիտէիր, որ ես կենդանի եմ։

—Ո՛չ, մինչև այն օրն, երբ քեզ առաջին անգամ

տեսայ մեր այդումը, երբ դու ասեցիր՝ թէ «դեռ սիրուհս ինձ»։

—Սիրուհիս, Ալմաստ, պատասխանեց երիտասարդը։

Այնուհետև մի քան միջէ պատմեց նա, թէ ինչ նշանակութիւն էր ստացել ինքը Սէր—Ադէլի տան մէջ։ Յայտնեց նոյա դառը Մահիի սիրահարութիւն իւր վերա, և նորա ծնողաց նպատակն իւրեան փեսայացնելու և ամբողջ հարստութեան ժառանգ չինելու։ Պատմեց, թէ ինչպէս նորանց առժամանակ հանգստացնելու համար ստիպուած էր ինքը կեղծաւորվիլ, պատճառ բերելով Մէքքայի ուխտագնացութիւնը և այլն։

Երիտասարդի պատմութեան ժամանակ Ալմաստի դէմքը յետզհետէ պայծառանում էր, նորա աչքերը մի հոգեկան կրակով փայլում էին քէքուշ սրտի բոլոր զգացումներով։ Երբ վերջացրուց նա իւր պատմութիւնը, տիկինը դրկեց նորան ասելով՝—

—Այդ բոլորը դու գտնելիր իմ համար...

—Ես գտել եմ քեզ, սիրելի Ալմաստ, ոչ միայն իմ սիրտը, այլև իմ կեանքը և իմ ծնողը. պատասխանեց Գէրիմ—լեկը համբուրելով նորա թշերից։

—Ո՛րինն աղատիր լինէ, Մելեակ Չան, աղատիր այդ բանդէն։

—Ես կազատեմ քեզ, Ալմաստ, ես վաղուց մտածում եմ դորա վերա։ Դեռ դու իմ գոյութեան մասին ոչինչ տեղեկութիւն չունէիր, դեռ դու չը գիտէիր, թէ ուր է Մելեակը, ես մտածում էի քո ազատութեան համար։ Ես միշտ կարող էի թողնել այդ քաղաքը և փախչել դէպի իմ հայրենիքը։ Սէր—Ադէլի բոլոր հարստութիւնը չէր կարող կապել իմ սիրտն ինձ համար մի առելի երկրի հետ, որտեղ ես ընտրած էի որպէս գերի։ Բայց մի բան ստիպեց ինձ այսքան երկար ժամանակ այս քաղաքում մնալ, երբ մտածում էի, թէ այստեղ կը թողնեմ մի սիրտ, որ գուցէ դեռ զարկում էր իմ համար...—Այդ քո սիրտն էր, սիրելի Ալմաստ։

—Ա՛խ, որքան բարի ես դու, Մելեակ։ Աղատիր լինէ, ազատիր, կրկնեց Չէյնաբ—խանումն արտասուելով։

—Նպատակն արդէն վճռուած է, սիրելի Ալմաստ, մնում է նորա գործադրութիւնը։

—Ի՞նչու չը պիտի չուտ լինի այդ։

—Հարկաւոր է մտածել, թէ ինչ հնար պէտք էր գործ դնել։

—Ա՛խ, այդ չատ ուշ կը լինի...կոչեց յուսահատութեամբ Չէյնաբ—խանումը։

—Մի ընտապիր, իմ հոգիս, պատասխանեց երիտասարդը ծանրութեամբ։—Գիտես մենք որտեղ ենք գտնվում,—Պարսկաստանի սրտումը և մեզանից ամեն մինն՝ ամենահզոր խչխանի տան մէջ։ Երկրի սահմանները հազարաւոր մղոններով հեռի են դրած մեզանից։ Մի փոքր անզգուշութիւնը կարող էր մեզ յաւիտեան զրկել միմեանցից...

—Ա՛խ, Աստուած, բացականչեց տիկինը սխուր ձայնով։

—Լսիր, Ալմաստ, այստեղ չէ կարելի մեզ երկար

իսորհրդակցել միմեանց հետ։ Այդ անշունչ պատերը կարող են ականջ ունենալ։ Հարկաւոր է նշանակել փոքր իշատ է ապահով տեղ։

—Ես ոչ մի տեղ չեմ ճանաչում, սիրելի Մենակ, մինչև այսօր այդ չորս պատերն են եղել իմ աշխարհը։

—Դու յիշումՅս ձեր հարևան Սալօմէին։

—Այո՛, յիշումեմ, կախէթեցի Գիօրգիի աղջիկը, նա իմ լաւ բարեկամս էր։

—Սալօմէն այժմ այս քաղաքումն է։ Մի պարսիկ տանուտէր գերի բերաւ նորան այստեղ, յետոյ ամուսնացաւ նորա վերա։ Սալօմէն ունի մի զաւակ միայն իւր տղամարդից։ Նա շատ բարի կին է։

—Առաջ էլ բարի աղջիկ էր, կտրեց Զէյնաբ—խանումը Ջէրիմ—բէկի խօսքը։

—Այո՛, բարի աղջիկ էր։ Ես նորա մինչև որդութեամբ էի միշտ քեզ զանազան խաբարներ ուղարկում ... Սալօմէն մեր գաղտնիքն այնպէս ծածուկ պահումէր։ Ես տակաւին չեմ մոռացել նորան։ Ես քեզ հետ տեսնուելէս առաջ շատ անգամ գնումէի նորա տունը, միշտ քեզ վերա էինք խօսում և նորոգումէինք վաղեմի յիշողութիւնները .... Նա դեռ սիրումէ քեզ, Ալմաստ, դու կարող ես նորա տունը քեզ ապահով օթևան ընտրել, երբ կը կամենայիր ինձ հետ տեսնուիլ։

—Բայց ես չեմ գիտում նա որտեղ է բնակվում։

—Այս գիշեր Մարջանին ես ցոյց տուի նորա տունը, խաւիսկը քեզ ուղղակի այնտեղ կը բերէ։

—Շատ լաւ, այսուհետև մեր տեսութիւնների համար կը նշանակենք Սալօմէի տունը։ Ես շատ ցանկանումեմ նորան տեսնել, ես չը գիտէի, թէ նա էլ գերի է առնուած։ Ա՛խ, ինչքան կուրախանայ Սալօմէն երբ ինձ տեսնէ։

—Շատ կուրախանայ, Ալմաստ, նա դեռ սիրումէ քեզ։—Ճառաչ տարաւ երիտասարդը։—Մարջանը կը լինէ մեր միջնորդն, երբ պէտք էր տեսութեան ժամերը նշանակել. այդ խաւիսկը շատ խելացի աղջիկ է երևում։

—Մի և նոյն ժամանակ նա չափից դուրս հաւատարիմ է։

—Իսկ այդ ևթովպացի պատանին։

—Սայիդը, նա նոյնպէս հաւատարիմ է ինձ։

—Շատ լաւ, մենք կարող ենք օգուտ քաղել դոցա հաւատարմութիւնից։ Այդ սևերը խիստ յարմար գործիք են լինում գաղտնի յարաբերութիւններում։ Մի և նոյն ժամանակ նոքա խորամանկ են, որպէս սատանայ։

Սոյն միջոցին նախասենեակից լսելի եղան զանազան ձայների սարսափելի հնչումներ։ Կարծես թէ գիշատող գազանների ահարկու մռնչիւնները գումուէին մի ընդհանուր վայրենի ներդաշնակութիւն։

Երիտասարդը ձեռքը տարաւ դէպի դաշնակը։

—Մի վրդովիր, Մենակ, դոքա խաւիսկը և ևթովպացին ներկայացնումեն չար ոգիները։

—Կրծողը տանէ նրանց, կատարեալ սատանաներ են, ասաց երիտասարդը ծիծաղելով։

—«Վախարդը» սարդէն սկսել է իւր գործողութիւնը . . . պատասխանեց հեղնօրէն Չէյնաբ—խանումը։

—Ի՛նչ ծիծաղելի դեր եմ խաղում ես։

—Այդ ուղիղ է, դու վաղուց կախարդել ես իմ սիրտը . . .

Ամարկու մանչիւնները կրկնուեցան։

—Չար ոգիների պատերազմը սկսուեցաւ, ասաց ներքինապետ Հէյդարը, որը կանգնած հարեմխանայի դրանը լսում էր այդ ձայները։ Նա զարհուրելով փախաւ, փակուեցաւ իւր սենեակում, սկսաւ աղօթել և «բ՚իսմուլլահ» կարդալ։

—Սրանք, լսիր, ինչ սարսափելի ձայներ են հանում դևերը, ասաց վազելով պատանի չիրագդու մօտ Ֆէրուզը.—փախչենք, սիրելիս, փախչենք այստեղից։

Նոքա վազեցին դէպի իւրեանց սիրուհու սենեակը։

Մի րոպէում երկիւղը և սոսկումը սիրեց ամբողջ ամրոցի վերայ։ «Խնդճ Չէյնաբ—խանում, ասում էին հարեմներից շատերը, հիմայ դևերը կը խեղդեն նորան . . . ։»

—«Վախարդը նորա մօտ է, պատասխանում էին մեւանները։

«Ի՞նչ կարող է անել կախարդն այդքան դևերին, լսիր, Հուրի, ինչ շատ են նոքա։

—«Վախարդը կարողութիւն ունի հալածել բոլորին։

«Խնդճ Չէյնաբ—խանում, ինչպէս չէ տրաքում նորա սիրտը . . .

—«Ես այստեղ դողումիմ . . . կրկնեց մի սևաչեայ հարեմ։

«Չարները լռեցին, խօսեց Հուրին։

Այդպէս խօսում էին միմեանց մէջ հարեմները։ Իսկ Չէյնաբ—խանումի սենեակում «վախարդն» իւր դիւթական գործողութեան մէջն էր . . .

Գիշերն աննկատելի կերպով անցաւ։ Արշալոյսը սկսել էր չառագունել, երբ «վախարդը» հեռացաւ ամրոցէն, առանց ոչ ոքին տեսանելի լինելու։

Սայիդը և Մարջանն, որք ամբողջ գիշեր անքուն էին մնացած, նոր գնացին հանգստանալու։

ժ.

Արեգակը բաւականին բարձրացել էր հորիզոնի վերա։ Վաղորդեան զեփիւռը փչում էր Ջերմ—կուասկան չնչով և ծառերի տերևները թռթռում էին, զբրկախառնուում էին և պաչպչում միմեանց հետ։

Մարջանը միայնակ դուրս եկաւ իւր սենեակէն, մօտեցաւ Ջրի ուաղանին և լուացվում էր։ Նոյն ժամուն ծերունի Հէյդարը կատուի նման պրտտում էր հարեմխանայի ամեն ծակումուտքը։ Նա անցաւ խափչիկի մօտից։

—Ի՞նչպէս է քո խանումի քէվը, հարցրուց Մարջանից։

—Հիմայ մի քիչ լաւ է։ Երեսում է, դևերը հեռանալու վրա են։

—Հրամայում էր արդեօք խանումը բաղնիքի պատրաստութիւն տեսնել, այսօր ջուժայ է։

—Ո՛չ, բարի Հէյդար, իմ խանումը չէ կարող իւր սենեակից դուրս գալ։

—Ի՞նչու, հարցրուց ներքինապետը, աչքերը լայն բացելով։

—Կախարդը հրամայեց նորան քառասուն օր չի-
այ (*) մտնել։

—Ո՞րդ։

—Այո, քառասուն օր նա փակուած կը մնայ իր սենեակում և արևի երեսը չի տեսնի։ Աղամորդու հետ պիտի չը խօսի և ոչ ոքին իր մօտ չընդունի։

—Այդ շատ ծանր բան է, ասաց ներքինապետը զարմանալով։—Այդ կատարեալ ճգնութիւն է։

—Այդ քառասուն օրումը, յառաջ տարաւ խաւիշիկն, իմ խանումն ևօթն անգամ ղօրանը պէտք է ծայրէ ի ծայր կարդայ և ամեն օր ևօթն անգամ նաժազ պէտք է անի և միայն աղուհաց պիտի ուտի։

—Կախարդը դարձեալ կը դայ։

—Շարաթը մի անգամ։ Նա դեռ այստեղ է։

—Թող Աստուած ողորմութիւն անի Զէյնար—խոնուումին ի սէր մեծ մարգարէին, բարեմախթանց ներքինապետը և մեռաւ մի այլ բակ։

Մարջանը դարձաւ իր տիկնոջ սենեակը, զուաւ նորան բոլորովին չը հանուած պառկել էր իր մահճի վերա։ Նա սովորական ողջոյնը տալէն յետոյ, հարցրուց՝

—Իմ տիկինը երևի ամենևին չը քնեց։

(*) Զիլաֆ պարսից չըհիլ բառից է, որ նշանակում է քառասուն կամ քառասնեակ։ Դա խորհրդական օրերի մի թիւ է, որ գործ են դնում կախարդներն իրենց հըմայքների մէջ և դերվիշները իրենց ճգնութիւնների օրերը այդ թուով են որոշում։ Այդ անհաւատութիւնն երևում է Հայաստանի և Պարսկաստանի հայերի մէջ. կանայքը ծնունդից յետոյ քառասուն օր են պահում, այսինքն մինչև քառասուն օր փակուած են մնում իրենց օթևակում։

—Ոչ, «նորա» գնալուց յետոյ քունս չը տարաւ։

—Ի՞նչի, իմ տիկնոջ սրտիկը կարծեմ այժմ գոհ է։

—«Չափազանց ուրախութիւնը նոյնպէս անհանգիստ է անում մարդուն, որպէս տրտմութիւնը։» Գիտես այդ առածը։

—Այդ իրաւ է։ Պատասխանեց խաւիշիկը և պատմեց բոլորն, ինչ որ խօսացել էր քանի րոպէ առաջ ներքինապետի հետ տիլայի մասին։

Տիկնոջ դիւրաւուայ անքնութիւնից նուաղած աչքերը կրկին զուարթացան նոր յոյսերով։

—Սատանան ինքը չէր կարող մտածել այդ, Մարջան, դու կատարեալ մարդարէուհի ես։

Աղախնին այդ փաղաքշող խօսքերը խիստ ուրախութիւն պատճառեցին։ Իսկ տիկինը փոխեց իր խօսքը հարցնելով

—Ջերիմ—բէկը քեզ ցոյց տուեց մի տուն, այնպէս չէ, Մարջան։

—Հրամիր էք, Սալօմէի տունը։

—Դու լաւ յիշումես այն տունը։

—Աչքերս խփած կարող եմ գտնել։

—Շատ լաւ—Յառաջ տարաւ Զէյնար—խանումը—Ինձ կարող ես այսօր այնտեղ տանել, որ ամբողջում ոչ ոք չը հասկանայ։

Խաւիշիկը փոքր ինչ մտածելուց յետոյ պատասխանեց՝—

—Կարող եմ։

—Ի՞նչպէս։

—Շատ հեշտ կերպով։ Ամբողջում ոչ ոք չը պիտէ,

թէ կախարդը հեռացել է։ Ես առաւօտեան ներքինապետին ասեցի, թէ դեռ այստեղ է։ Դուք կը հագնէք կախարդի շորերը և այնպէս դուրս կելթանք։

—Սիթէ նա շորերը այստեղ թողնէ։

—Ես հարկաւորութիւն չը կար «նորան» կախարդի շորերը հագնելու։ «Նա» դնաց լուսարացին կէս ժամ առաջ։ Ամէնքը քնած էին։ Ես «նորան» դուրս տարայ հարեմիանայի յետքի դրնով բաղնիքների բակը. դրնապանը միեւնոյն նման ընկած էր. ինքս դուրը բաց արի, «նա» հեռացաւ։ Դորանից յետոյ «կախարդի» դերը կը կատարէք դուք։

—Որպէս։

—Երեակայեցէք Զէյնաբ—խանումը, ցոյց մատ՝ մինչև քառասուն օր փակուած կը մնայ իր սենեակումն, իսկ իմ տիկինն որպէս կախարդ դնալ և պալ կունենայ նորա մօտ։

—Հասկանում եմ... Մարջան, այդ գեղեցիկ միտք է։

—Սիթէ իմ տիկինը հաւան է այդ մտքին, կրկնեց Մարջանը, կարող ենք կատարել խնդիրս։

—Իսկ դու, Մարջան, կարծուհիս կասկածելու այստեղ ոչինչ չը կայ, հարցրուց Զէյնաբ—խանումը երկբայութեամբ։

—Ամենևին։ Իշխանը մի չարաճիճի որսի է դնացած, կարելի է աւելի տևէ։ Հարեմներից ամէն մինը ձեզ նման մի «արտացաւ» ունի... նորա իբրևայ դուարճութեանց նուիրուն են ընկած։ Իսկ ներքինապետն անդադար աղօթք է կարդում, որպէսզի վախենում է ամբոցում գոյացած դէպքն իւրեան չը խեղդէն։

Զէյնաբ—խանումը բոլորովին հաճեցուցաւ խաւիչիկի խօսքերից։ Նա հարցրուց՝—Ես կարող եմ մի քանի օր մնալ Սալօմէի տանը։ Այդպէս չէ, Մարջան։

—Իմ տիկինը մինչև քառասուն օր ազատ է։

—Ուրեմն դու կարգադրէ Սայիդի հետ, որ նա հարկաւոր զգուշութիւնները գործի դնէ մինչև քո վերադառնալը։

—Բայց պէտք է առաջ հաղցնել ձեզ։

—Այդ ուղիղ է։

Աղախինը սկսաւ կախարդի հագուստով զգեստաւորել իւր տիկնոջը։ Քանի րոպէից յետոյ Զէյնաբ—խանումը նայեց իւր վերա և ասաց՝—

—Բաղդադի կախարդներն երբէք չեն ունեցել մի այդպիսի կերպարանք...

—Եւ ոչ Սուլէյմանն իւր բոլոր զօրութեամբ... կցեց խաւիչիկը։

Մարջանը դուրս գնաց նախասենեակը Սայիդին հարկաւորած պատուէրները տալու։ Նախ և յառաջ հասաւօտ կերպով պատմեց իւր առաւօտեան խօսակցութիւնը ներքինապետի հետ։ Ցետոյ յայտնեց իւր նոր կարգադրութիւնը Զէյնաբ—խանումի մասին։

—Հիմայ ախանջ դիր, Սայիդ։

—Սայիդի ականջները քո խոնարհ ծառաներն են, պատասխանեց եթովպացին։

—Այդ նախասենեակումը կանդնած կը մնաս որպէս քարէ արձան։

—Կանգնեցայ, պատասխանեց Սայիդը և ձգուեց փայտի պէս։

—Թող հանգաքը, Լսիր, ոչ ոքին չես Թաղնի խանութիդ սենեակը մանի։

—Ձանճն էլ չի համարձակուի մանել։

—Շատ լաւ։ Ես այս րոպէիս տանուամբ վախարդին ճանապար դնելու։ Մի մուտացիր, որ նորա չարչաւի տակ ծածկուած է մեր տիրուհին։

—Հասկանում եմ . . . Ծեռոյ։

—Ես կը վերադառնամ կէս ժամից յետոյ։

—Այդ դեղերիկ բան է։ Սը նշանակէ դու և ես կը մնանք այդ փառաւոր դահլճի տէրը և տիրուհին։

Խոխլիկը ժպտեցաւ։

—Որչափ կամենում ես ուրախացիր, Սայիդ։ Խանութը մի քանի օրով բացակայ կը լինի ամրոցէն։

—Իսկ առ այժմ աւելորդ չէր լինի մի բան։

—Ի՞նչ բան։

—Իմ տիրուհին մի Թեթև վարձատրութիւն անէր այդ բոլոր հրամանների փոխարէն։

Մարջանը մօտեցաւ Սայիդի շրթունքին իր կոկ, չագանակի կեղևի գոնով Թշերը։

Քանի րոպէից յետոյ երկու դիմակաւորուած կանայք, ծածկուած չարշաւներով, դուրս գնացին ամրոցէն։

—Կախարդը . . . լսելի եղան մի քանի ձայներ, գնում է Մարջանի հետ։

Ժ.Ա.

Քաղաքի խուլ և խեղդուած Թաղերից մէկի անկիւնում, կեցած էր մենաւոր տուն, որ ապուռի բոյնի նման տիրութեամբ նայում էր իւր խրամատի վերա,

որով շրջապատած էր ամբողջ քաղաքը։ Գիշերուայ մթութեան մէջ ոչ ոք չէր համարձակուի մօտենալ այդ փոքրիկ տնակին, որն արտաքուստ թէև կրում էր աղքատիկի կերպարանք, այսու ամենայնիւ միշտ սարսափ էր ձգում իւր շրջակայքի վերա։

Այդ տնակն ոչ սակաւ անգամ եղած էր տեսարան զարհուրելի չարագործութիւնների . . .

Նա բաղկացած էր մի քանի սենեակներից, որք ոլոր—մոլոր մուտքերով բացվում էին միմեանց մէջ։ Այդ սենեակներից մէկի մէջ միայնակ նստած էր մանկահասակ կին։ Նեղ բակի չինարի ծառերին փաթաթուած խաղողենիքը, հովանաւորում էին նորա լուսամուտները նոյն ժամուն արեի այրող ճառագայթներից։

Կինը տխուր—յուսահատական ձայնով նանիկ էր կարդում իւր մանուկին, որը, մօր կուրծքին կպած, անյագ կերպով ծծում էր իւր սնունդը նորա տմինքից, և երբեմն ժպտելով իւր լուսափայլ աչքերը դարձնում էր մօր երեսին, կարծես, նորանցով այխատում ցոյց տալ, Թէ նա արդէն գոհ էր իւր վիճակից։ Բայց արքան յոյս և կեանք էր տեսնում այն պարզ և անմեղ աչիկներում քնքուշ մայրը . . .

Այդ կինն իւր մինչև հասակումն էր՝ լղարիկ և ցամաք կազմուածքով։ Բայց նորա վշտահար դէմքը կրում էր իւր վերա տխրութեան բոլոր գծերը։ Նորա նշաձև սեռրակ աչքերը՝ խիտ թերթերուքներով, որոց մէջ կար այնքան կեանք և կիրք, նուաղած էին։ Էր ևս էր, որ նորա շատ անգամ վկայ էին եղել ցա-

ալի տեսարանների և արտասուքը խիստ հաղիւ ցամաքել էր նոցա մէջէն . . .

Դրան թխկոցը լսեց մօր ուշադրութիւնն իւր սիրելի մանուկից։ Նա դրեց տղան օրօրոցի մէջ։ Երեխայի փոքրիկ մատիկները սկսան զբաղուել իւր օթեակի դաստակէն քարշ ընկած խաղալիկների հետ։ Մայրը վազեց դէպի դուռը։ Ատուած տար, որ «նա» լինէր, ասաց իւր մտքի մէջ։

—Ո՞վ է ք, հարցրուց ներսից։

—Աստուծոյ հիւրեր, լսելի եղաւ դրսից։

Դուռը բացուեցաւ։ Տան տիրուհու առջև յայտնուեցան երկու դիմակաւորուած կանայք։ Նոցանից մէկի արտաքին օտարոտի կերպարանքն իւր վրայ դարձրուց նորա ուշադրութիւնը։ Նա նմանուէր բոշայ մուրացկանի, որ կարծես եկել էր մի բան խնդրելու։ Այդ միտքն առիթ տուեց տանտիկնոջը հանել իւր գրպանից մի քանի սև փող, որն առաջարկելով բոշային, ասաց՝—

—Ա՛ռ այդ արծաթը, աւելին Ատուած տայ։

—Մենք չենք եկել ողորմութիւն խնդրելու, ասաց բոշայի նմանող կինը. միայն, թէ կարելի է մի քանի րոպէ մեզ հանդստութիւն չնորհեցէք ձեր տան ծածկի տակ, մինչև ասլիը կանցնէր, մենք հետու ճանապարհից ենք գալիս։

—Հրամայեցէք, ասաց տանտիկինը, ներս հրաւիրելով։

Հիւրերը ներս մտան։ Դուռը կրկին կողպուեցաւ։ Նոքա տեսան սենեակը, բայց եկուորներից և ոչ մինը

տակաւին չէր բարձրացրել երեսից դիմակը։

—Այստեղ դու՛ք միայնակ էք, հարցրուց բոշայի նմանող կինը։

—Այստեղ ես եմ և իմ տղան, իսկ միւս սենեակում պարկած է մի հիւանդ։

—Մի հիւանդ, կրկնեց եկուորը։ Նա արդելք չէ կարող լինել մեզ։

—Նա վիրաւորուած է, չարժուել անգամ անկարելի է նորան։

Եկուորները բարձրացրին դիմակները։ Երկու պատկեր, մինը՝ գեղեցիկ որպէս բոլորուած լուսնեակ, միւսը՝ սևուկ բուլած գահվէի գունով, երևան եղան տանտիկնոջ աչքին։ Նորա հիացմունքն աւելի սաստկացաւ, երբ նոքա ձգեցին իւրեանց հնոտի չարշաւները։ Գեղեցիկ կինը զուրկուած էր բոլոր այն չքեղութիւններով, որով արևելքը գիտէ զարդարել իւր սիրոյ առարկաները։

Բոպէական ապշութիւնից յետոյ, չփոթուած տանտիկինը՝ գեղեցկուհուն վերա ընկաւ, գրկեց նորան, «Ալմաստ» անունը թոռաւ նորա բերանից, և թուլացած, անմռունչ մնաց իւր հիւրի կուրծքի վերա . . .

Դա Զէյնաբ—խանումն էր, իսկ նորա ընկերուհին Մարջանը։

—Դու ճանաչեցիր ինձ, Սալօմէ, ասաց նա, չը թողելով իւր վաղեմի բարեկամին գրկից։

—Իմ աչքերը պէտք է կոյր լինէին, որ չը ճանաչէին քեզ, Ալմաստ։ Ա՛խ, Ատուած, ինչպէս մենք կրկին տեսանք մեկմեկու։

Երկար երկու ընկերուհիքն, որպէս մի ղոյդ հարազատ քոյրեր, չէին դադարում միմեանց գրկելուց, միմեանց համբուրելուց և մէկմէկու վրա նայելուց։ Ուրախութեան բորբոքումը թաց արեց երկուսի էլ աչքերը արտասուքով։

Մարջանը լռութեամբ նայումէր այդ հոգեշարժ տեսարանին։ Երբ նորա բաժանուեցան, նա մօտեցաւ եր տիկնոջը, հարցնելով՝—

—Ձեր աղախինն այժմ կարող է գնալ։

—Գնա, Մարջան, պատասխանեց Ջէյնաբ—խանումը. անցկիր «նորա» մօտ, ասա որ ես այստեղ եմ։ Ցետոյ ամբողը կերթաս, այնտեղ քո գործը դու կունենաս. ես իմանում . . .

Խափչիկը գլուխ տալով կամենումէր հեռանալ, երբ Սալօմէն հարցրուց՝—

—Դա քո աղախինն է, Մարջան, ինչ գեղեցիկ անուն է։

—Իմ հաւատարիմն է, ճանաչիր, Սալօմէ, այսուհետև դորա հետ գործ չատ կունենաս։

—Ե՛կ համբուրեմ քեզ, դու իմ ընկերուհուս բարեկամն ես։ Ասաց Սալօմէն գրկելով Մարջանին։

—Թող չը դնա այդպէս չատ, գարձաւ նա դէպի Ջէյնաբ—խանումը, մի փոքր սառը միրդ ուաէ, սիրտը հովացնէ, արևգալին այրումէ դրուսքը։

—Կուշանայ, Սալօմէ, պատասխանեց աղախնի տիրուհին։

—Թող խմէ գոնեա մի փոքր ցուրտ շերբէթ։

Սալօմէն դուրս եկաւ սենեակից, քանի լոպէից

յետոյ նա դարձաւ մի մեծ գաւաթ ձեռին, որ լիքն էր չաքարով և նարնջի ջրով չինած ըմպելիքով։ Գաւաթի մակերևոյթի վերա լող էր տալիս մի կտոր սառուց։

Խափչիկը ծծեց գաւաթը մինչև յատակը, և չնորհակալութիւն անելով հեռացաւ։

—Հիմայ նստենք, իմ սիրեկան, դարձաւ Սալօմէն դէպի իր հիւրը։ Նստենք ու խօսենք։ Ա՛խ, ինչքան խօսելու բաներ ունենք . . .

—Շա՛տ . . . որքան ասես, շա՛տ . . . , պատասխանեց Ջէյնաբ—խանումը տխրալի ձայնով։ Բայց մի և նոյն րոպէին նորա աչքն ընկաւ օրօրոցին։—Այդ քո երեխան է, ինչ սիրուն երեխայ է, շատ նման է քեզ, Սալօմէ։

Եւ նա մօտեցաւ սկսաւ համբուրել տղեկի վիզը թշերը։

—Դու դեռ երեխայ չունես, Ալմաստ։

—Չունեմ, Սալօմէ, և չեմ ցանկանայ ունենալ։

—Ի՞նչու։

—Մենք ախտր քիստոնեայ ենք, Սալօմէ, բայց մեր որդիքն այստեղ պարսիկներ կը ծնուէին։

—Այդ ուղիղ է, իմ սիրեկան, պատասխանեց Սալօմէն հոգւոց հանելով։—Դէ նստիր, Ալմաստ, ինչու չես նստում, դու ինձ անհանգիստ ես երևում։

—Ես ապատում եմ Ջէյրիմ—բէկին։

—Ի՞նչու չես ասում Մելիակին։ Մի՞թէ նա գալու է այստեղ։

—Գալու է։ Մարջանը գնաց նորան իմացում տայ։

Երկու վաղեմի ընկերուհիքը նստեցին միմեանց մօտ մի խալիչայի վերա, որ փռած էր լուսամուտի հանդէպ, որ բացուած էր դէպի կանաչազարդ բակը։

—Դու ինչպէս գտար Մեխակին, Ազմաստ Ջան, հարցուց Սալօմէն. ախ, ես արդէս ուրախ եմ, որ դուք էլի ռաստ էկաք մէկմէկու։

—Նա ինձ գտաւ, Սալօմէ Ջան, պատասխանեց Զէյնաբ—խանումը։

Եւ տիկինը պատմեց՝ ամարանոցի այդու դէպքին սկսեալ՝ մինչև «կախարդի» երևնալն ամրոցում։ Մարջանի այդ խորամանկութիւնը մինչ այն աստիճան չարժեց Սալօմէի ծիծաղն, որ նորա աչքերը բոլորովին թաց էլան արտասուքով։

—Էդ լաւ բան էք սարքի . . . ընդհատեց նա իր ընկերուհու պատմութիւնը։

—Ի՛նչ անենք, Սալօմէ Ջան, «կատուի բերանն երբ մսին չէ հասնում, սկսում է դողդոջուն անել»։

—Էդ լաւ է, շատ լաւ էք մօծոն . . . կրկնեց Սալօմէն չը դադարելով ծիծաղելուց։—Ա՛խ, ես մոռացայ քեզ համար ղէյլան պատրաստել, խօսքը փոխեց նա վեր թռչելով նստած տեղիցը։

Նա անցաւ նախասենեակը։

«Խեղճ Սալօմէ, ասաց Զէյնաբ—խանումն իր մտքի մէջ. օրքան փոխուել է նա . . . օրքան մաշուել է նա . . .»

Սալօմէն ներս բերաւ ղէյլանը, տուեց իր հիւրին։ Նոքա սկսեցին ծխել։

—Հիմայ էս ղէյլանով ու էս շորերով, Ազմաստ Ջան,

ես ու դու Թիֆլիսում նստած ըլէինք ձեր դրանը՝ Տափի—Թաղում, ախ, ինչքան կը ծիծաղէին մեր Թաղի աղջիկները։

—Էլ չենք տեսնի ոչ Թիֆլիսը և ոչ Սօլօլակը, Սալօմէ Ջան . . . ։ Միտդ է գալիս, որ կիրակիները գնում էինք խէվումը բուրթի (գնդակ) էինք խաղում։ Ո՞ւր է էն օրերը . . . ։ Կէկէլի աղջիկը՝ Սօփօն, յիշումես, Սալօմէ, ինչ լաւ էր խաղում էն ծամ կտրածը։

Հայրենիքի յիշողութիւնները ցաւալի տպաւորութիւն ունեցան երկու կերիների վերա նա։ Եւ նոքա երկուսն էլ չը կարողացան զսպել իրենց արտասուքը։

—Իմ մասին բոլորը լսած կըլինես Գէրիմ—բէկից, պատմիր, Սալօմէ Ջան, դու ինչպէս ընկար այստեղ։

—Լաւ է, որ չիմանաս, Ազմաստ Ջան։

—Չէ, քո հոգուն մատաղ, ես ուզումեմ դիտենալ։

Սալօմէն սկսեց պատմել։

—Երբ Մահմատ—խանի սարվազները լեցուան մեր քաղաքը, հէրս տանը չէր, նա գնացել էր Կախէթ գինի բերելու։ Տան մէջ մնացել էինք ես, մէրս, մէկ էլ իմ աղբէր Սօսիկօն։ Միտդ գալիս է Ազմաստ, էն պստիկ երեխէն, որ չէր ծիծ էր ծծում։ Ցանկարծ ողջ քաղաքը ծուխի մէջ կորաւ, լայ ու չիւանը բարձրացաւ և ամեն կողմից խառար դուրս եկաւ, թէ քաղաքը թալնումեն, աղջիկները ու չէհիլ տղէրքը գերի են տանում։ Մայրս ինձ թագցրուց մեր սարդապումն ու ինքը նստաւ դրանը։ Մէկ էլ տեսանք, երկու պարսիկ մտան մեր բակը։ Մօրս լեզուն կապուեցաւ

Ներանք սկսան մեր տունը կողոպտել, ինչ լաւ բան որ գտան՝ արծթեղէն, պղնձեղէն՝ ամենը լեցրին իրենց խուրջիններում։ Ցետոյ մօրս սկսեցին տանջել, թէ պահած փող կունենայ, հանէ տայ։ Խեղճ մայրս աղաչում էր, լաց էր լինում, բոլոր սուրբերի անունով երդում էր ուտում, թէ փող չունի։ Ներանք չէին հաւատում։ Ցետոյ Սօսիկօին խլեցին մօրս գըրկից։ «Ցեա էդ երեխէդ կը մորթենք, թէ փողերի տեղը ցոյց չը տաս։» Մէրս էլի սկսեց աղաչել, որ երեխին ձեռը չը տան։ «Աստուած է վկայ, աստմէր, մենք աղքատ ենք, փող չունենք։»—«Դու խաբում ես, անզգամ, գուռաց մինը, տեա։» Ու էդ խօսքի հետ Սօսիկօին զարկեց գետինը։ Խեղճ երեխի գլուխը պիտաւ քարին, մի ծպտուն էլ չը հանեց, հոգին տուաւ։ Մայրս հէնց էս որ տեսաւ, ուշից գնաց, վէր ընկաւ։ Անողորմները տեսան նրա մատների մատնիքներն, ուզեցին հանել, բայց դժուար էին դուրս գալիս։ Ներանցից մինը խանջարը հանեց և մատները կտրեց։ Ա՛խ, ինչպիսի սարսափով էդ բոլորը տեսնում էի ես սարդապի պատուհանիցը...

Ջեյնաբ—խանումը խարխն տխրութեամբ լսում էր այդ բոլորը, որի կրակիցը կարծես ցամաքել էին աչքերի արտասուքը։ Սալօմէի պատմութիւնը յիշեցնում էր նորան այն անբախտ դէպքն, որին ինքն էլ վիճակակից էր։ Նա ընդհատեց նորա խօսքը, հարցնելով—

—Բա, դու ինչպէս ընկար ներանց ձեռքում,

—Ցետոյ ներանց աչքն ընկաւ սարդապի դրանը։

«Չստեղ մի բան կըլնի թագցրած,» ասեցին մէկմէկու։ Սարդապի դուռը կոտրելն ու ներս մանելն մէկ րոպէի գործ եղաւ։ «Ա՛յ, դանջըղ, տես որտեղ է մտել» ասեցին ու ինձ դուրս քաշեցին։ Ես ոչինչ չը հասկացայ, թէ ինչ պատահեց ինձ հետ, ուր տարան ինձ, բայց հէնց որ ուշքի եկայ, տեսայ, որ ես կապուած եմ մի էշի վերա և գտնվումեմ գերիների ահագին քարաւանի մէջ։ Հիմայ էլ մարմինս սառստումէ, մազերս փուշ փուշ են դառնում, երբ միտս եմ բերում էն ցաւալի րոպէն։ Ես տեսայ, սիրուն աղջիկներն ու տղերքը, որ զօլունի (զօրքի) աստիճանաւորներին էին պատկանում, կապուած էին ուղտերի և ձիաների վերա, բայց հասարակ սարվազների գերիները բոլորիկ ոտքով, ամեն մի զինուոր թօկը ներանց թևքերիցը կապած, քարշ էր տալիս իր առնէն։ Բայց իրենց չորքոտանիների վերա ներանք բարձել էին այն թալանը, որ կողոպտել էին մեր քաղաքից։ Գերիների լացը, սուգը, ներանց ողորմելի աղաղակը, սարվազների անդութ չալլախի (մարակի) ձայնն, այդ բոլորը խառնվումէին դրաստների հարա—հրոցի հետ։

—Բայց ինչպէս ես չը տեսայ քեզ, Սալօմէ։

—Դու շատ բան չը տեսար, սիրելի Ալմաստ, դու բախտաւոր էիր մեզանից։ Քեզ տանումէին մի ջորու վերա կապած քաջաֆէի (պատգարակի) մէջ։ Որովհետև դու պետպատի գերին էիր։

—Մին էլ, մենք անցանք հետևակ զօրքից մի քանի օրով առաջ։

—Էդպէս է, իմ սիրելիան։ Ցառաջ տարաւ Սալօմէն

իր պատմութիւնը։—Երբ գիշերը վերա հասաւ (էդ առաջին գիշերն էր, որ մենք դուրս էինք եկել քաղաքից) ղշլաղը իջևանից մեկ նեղ դաշտի մէջ, որ մօտ էր Քրի ափին ու մեկ կողմը սարեր կային։ Ի՛նչ սարսափելի գիշեր էր այն . . . . Երբ մութը պատեց, երբ գինուորների կրակները վառուեցան, ամեն ձորի միջից, ամեն քարի տակից, ամեն թուփի միջից լսվում էին ողորմելի ձայներ։ Դրանք անմեղ կոյսերի մրմունջներն էին, որոնց անողորմ գաղանները բաժանում էին իրանց մէջ։ Հերթը հասաւ ինձ։ Դու յիշում ես, Ամատ, որ ես ասեցի, թէ ինձ գերի անողնները երկու հոգի էին։ Նրանց մէջ վէճ բացուեցաւ իմ մասին ու վճռեցին իմ վերա վիճակ քցել։ Վիճակը դուրս եկաւ նրան, որ սպանեց Սօսիկօին ու մօրս մատները կտրեց։ Ա՛խ, որքան աւազակ էր այդ գաղանին։ Բայց էն միւսն, որ աւելի բարեսիրտ էր երևում, չը բաւականացաւ վիճակով։ Նրանց մէջ սկսուեց կռիւը։ Խէնջարները չդադարին, իմ առելին դղրուեցաւ գետին։ Ես մնացի գոհ մէկելին։ Դա իմ այժմեան ամուսինն է, սիրելի Ամատ։

—Գո այժմեան ամուսինը, կրկնեց Զէյնաբ—խանումը չփոթուելով։

—Այո՛, պատասխանեց Սալօմէն մեծ ձայնով։

—Ի՞նչով է պարապվում։

—Նա աւազակ է։

Զէյնաբ—խանումը սոսկաց, նորա ամբողջ մարմնի մէջ դող ընկաւ։

—Աւազակ . . . անբախտ Սալօմէ, ուրեմն դու աւա-

զակի կին ես և ես այս բոպէիս աւազակի տան մէջն եմ . . .

Սալօմէն սկսեց հանգստացնել նորան ասելով—

—Մի վախիր, Ամատ Ջան, այդ տնաւկն, որ միշտ վառօդի հոտ է փչում, աւելի ապահով է քան մեծ մուչտէիդի ապարանքը, ուր միշտ ղօրանի ձայնն է լսվում։

—Բայց դու ասեցիր նա աւազակ է։

—Այո՛, աւազակ է։ Նա սպանում է, կողոպտում է, նա այս բոպէիս էլ գնացել է իր որսն որսալու։ Բայց երբէք նա աղքատի հացը չէ խլել և խեղճի աչքերէն արտասուք չէ քամել։

—Ես դու սիրում ես նորան։

—Սիրում եմ, Ամատ Ջան, որովհետև նա իմ աչքի առջև մորթեց այն գաղանին, որ սպանեց իմ եղբայրը և կտրեց մօրս մատները։

Զէյնաբ—խանումը տակաւին մտատանջութեան մէջ էր, նա երևակայել անգամ չէր կարողանում, թէ մի աւազակ կարող էր լաւ յատկութիւններ ունենալ։ Իսկ Սալօմէն բոլորովին դուրս բերաւ նորան այդ երկբայութիւնից։

—Նա իւրեան ապաստանած կնկան քոյր է կուչում, Ամատ Ջան, իսկ իր ձեռքը բռնող ընչաքաղցն՝—եղբայր։ Նա իր սուրը և ձեռքը չէ խնայում օգնել նորանց, որք ապաւինումն նորան։

Այդ խօսքերի միջոցին մերձակայ աւենակից լսելի եղաւ.—«Ջուր, այրվումեմ . . .»

—Խեղճը ծարաւ է, ասաց Սալօմէն և վազեց դուրս։

Երբ նա դարձաւ, Ջէյնաբ—խանումը հարցրուց՝—
—Ո՞վ է նա։
—Ամուսնիս ընկերներից մինն, ողորմելին սաստիկ վէրք է ստացած գլխից և կուրծքից։
Դրան ձայնը լսուեց։ Սալօմէն դնաց բաց արաւ։ Յայտնուեցաւ Ռէշիմ—բէկը։

Ժ.Բ.

Նոյն աւուր երեկոյեան պահուն, երբ արեգակը տակաւին իր վերջին ճառագայթները խաղացնում էր Դէմաւէնդի գագաթան վերա, Շահ—Աբդուլա-գիմի դէրվազէից ներս մտան մի խումբ հրացաններով և նիզակներով զինուորուած ձիաւորներ։ Լզարիկ բարակները, լայնականջնայ գամիճները, փոքրիկ կատուանման թուլաները, յոգնած, լեզուները քարչ քցած, վազ էին տալիս նոցա առջև։ Բաղէները, որք անհոգ կերպով նստած էին ձիաւորների ձեռքի վերա, ցոյց էին տալիս, թէ այդ հեծելախումբը դառնում էր որսորդութիւնից։ Եւ յիրաւի, զանազան թռչուններով լիքը արիւնոտ տոպրակները և մի եղջերու, որ բեռնած էր ջորու վերա, հաստատում էր այդ կարծիքը։ Փոշին թանձր սիւներով բարձրանում էր այն փողոցներից, որտեղից անցնում էին նոքա։ Նստած մարդիկը կանգնում էին և նորանց գլուխ էին տալիս։ Աշորդը յետ էր քաշվում, կանգնեցնում էր իր ջրատաը և ճանապար էր բաց անում, իսկ կանայք ծածկվում էին անկիւններում։

Դա Ջէյնաբ—խանումի ամուսինն էր իր ծառայներով։ Նա մի մարդ էր մօտ յիսուն տարեկան, հաստ-

լիկ, հինայով ներկած երկայն մօրուքով և ահեղ կերպարանքով։ Իշխանը բռնած էր նոյն ժամանակ Շահի դրանը մի մեծ պաշտօնական տեղ։

Նա հասաւ իր ամրոցն, երբ ճրագները վառուել էին արդէն, իսկոյն վայր իջաւ ձիուց և սանձը յանձնեց դրան պահապաններից մինին, որք խումբով վազեցին նորա առջև։ Նորա նժոյգը պատած էր ապոնի նման փրփրած քրտինքի մէջ, սկսան մանաձել նորան մինչև հովանայ։ Իշխանը ներս մտաւ իր դիւանխանան։ Մանկահասակ պատանեակներն, անմահ թշերով, պատեցին նորա շուրջը. մինը սկսաւ իր տիրոջ կօշիկները դուրս քաշել, միւսը նորա զէնքերն էր արձակում, երրորդը լաղան—աֆտաֆէն դրաւ նորա առջև, որ լուացուի։ Երբ նա մաքրեց իրեան ճանապարհի փոշուց, իսկոյն մատուցին վարդաջուր, նա սրսկեց իր վառաւուր մօրուքը, օծուեցաւ և անուշահոտուեցաւ։ Նոյն րոպէին պատրաստ էր նորա առջև ոսկեայ գլխով զարդարած զէյլանը, որից սաւը ջուրը կաթկթում էր։

Այնուհետև մինը միւսի յետքից ներկայացան իշխանի դրանիկները՝—նորա ֆէրրաշրաշին, նաֆիրը, մինանախօրը, նայիբը և այլն։ Նոցա ամէն մինի դէմքի վերա նկարուած էր երկիւղ և սարսափան խոնարհութիւն։ Նորա, իորին կերպով գլուխ խոնարհեցնելով, երկրպագութիւն էին տալիս և ամէն մինը զինուորական էր անում իր գործակատարութեան մասին իշխանի բացակայութեան ժամանակ։ Իշխանը մի քանիսին գովեց, մի քանիսին բարկացաւ և հայհոյեց ու այնպէս արձակից ըղձրին։

Ամենից վերջը յայտնուեցաւ Ծերունի Ներքինապետը, երբ նորա տէրը միայնակ ծխում էր։

—Ի՞նչ ունես ասելու, Հէյդար, դարձաւ դէպի նա իշխանը։

Ծերունին կրկնեց երկրպագութիւնը, պատասխանելով

—Թող ողջ լինի իմ տէրը և Աստուած նորան երկար կեանք պարգևէ, թող նորա փառքն արեգակից վերև բարձրանայ։

—Ի՞նչպէս է իմ հարեմխանան։

—Ձեր աղախինները բոլորն առողջ են և աղօթաբար իւրեանց տիրոջ թանդագին կենաց համար։

Իշխանն ընդունեց ինքնաբուսական կերպարանք, բայց Հէյդարի դէմքի վերա նկատումէր նա կասկածաւոր մի երևոյթ, որը ծերունին կարծես աշխատումէր թաղցնել։

—Առանձին ոչինչ չէ պատահել, հարցրուց նա։

—Ձեր մեծութեան հովանաւորութեան չնորհն, երբ իւր աղախիններից պակասումէ, անկարելի է, որ մի չարիք չը հանդիպէ, տէր իմ։

Իշխանի դէմքն այլայլուեցաւ։

—Ի՞նչ կայ, չուտ ասա, ծերուկ, կոչեց նա մի վոքր բարկացած ձայնով։

Ներքինապետին, որ բոլոր մարմնով դողումէր և հազիւ էր կարողանում իւրեան ոտքի վերա պահել, ասաց՝—

—Հարեմներից մինը տանջվումէ ջիններից։

—Յանուն պճած և ողորմած Ալահի.... Նզովք

չէյթանին... բայց կանչեց իշխանը սարսափելով։—Այդ ո՞ւն է, անհամբերութեամբ հարցրուց նա։

—Գուրջիստանցի խանումը, տէր իմ։

—Չէյնաբին։ Նորա տեղն է... պատասխանեց իշխանը լի բարկութեամբ։—Այդ կամակոր գաւուրի աղջիկը միանգամ ևս իւր կեանքում նամազ չէ արել։ Նորա տեղն է, թող այժմ իւր անհաւատութեան վարձը ստանայ... թող ջիննները տանջեն նորան...

—Ձեր ծառան հրաւիրեց մի պառաւ կին, տէր իմ, յառաջ տարաւ ծերունին երկչոտ ձայնով։—Նա զօրաւոր կախարդներից մինն է, նա իշխում է ոգիների վերա։ Կախարդը մեծ մասամբ հալածեց ջիններին, այժմ խանումը փոքր ինչ հանգիստ է։

Իշխանի վրդովմունքը մի փոքր հանդարտեց։

—Գնա, Հէյդար, դու ասա Չէյնաբին ևս ուզումեմ նորան տեսնել, հրամայեց նա։

—Դժբախտաբար ձեր աղախինը չէ կարող վայելել իւր տիրոջ մի այդպիսի չնորհը։

—Ի՞նչու։

—Կախարդը հրամայել է նորան իւր սենեակումը փակուած մնալ, մինչև քառասուն օր լինայ անցնել և աղամորդու երես չը տեսնել։ Այդ քառասուն օրումը խանումն եօթն անգամ զօրանը պէտք է ծայրէ ի ծայր կարդայ և ամեն օր եօթն անգամ նամազ անէ, մինչև չար ոգիները բոլորովին հեռանան նորանից։

—Ուրեմն ես չեմ կարող տեսնել նորան։

—Վտանգաւոր է մտնել նորա մօտ, տէր իմ։

Սոյն միջոցին Չէյնաբ—խանումի բակից լսելի եղան

գանազան տարօրինակ ձայներ։

—Լսեցէ՛ք, տէր իմ, լսեցէ՛ք, ահա Ջիններըը սկսեցին իւրեանց դիւական հարսանիքը։

Իշխանի երեսի գոյնը թռաւ։ Նա իւր մատներով սկսեց անհանգիստ կերպով իւր «տէրողորմեայի» հատիկները դարձնել և Ալլահի ու մարգարէի անունները կարդալ։

Ձայները լռեցին, միայն երբեմն լսելի էր լինում սուր—ձգական ճըլվլոց։

Նոյն ժամուն մանկահասակ ոպասաւորներից մինն իմացում տուաւ, թէ մի քանի խաներ և բէկեր ուզումէին ներկայանալ։ Իշխանը հրամայեց, որ գան։

—Դու կարող ես գնալ, Հէյդար, դարձաւ նա դէպի ծերունին. միայն Բադիմ—խանումին յայտնիր, որ այս գիշեր նորա մօտ կը լինեմ։

Ներքինապետը կրկին երկար կեանք և առողջութիւն բարեմաղթեց իւր տիրոջը և գլուխ տալով հեռացաւ։ Իշխանի դահլիճը մտան խաները և բէկերը, որոնք կառավարութեան մեծամեծ պաշտօններ էին վարում և մի և նոյն ժամանակ ունէին բարեկամական յարաբերութիւններ նորա հետ։

ԺԴ.

Գիշերը խիստ մութն էր։

Ներքինապետը զոհութեամբ և արագ դուրս եկաւ իւր տիրոջ դահլիճից։ Նա իսկոյն դիմեց դէպի Բադիմ—խանումի կացարանը։ Նորան հանդիպեց մատուցիչ Ֆէրուզը, որ միայնակ բակումը մեն էր գալիս։

—Ո՞ւր, Հէյդար—աղա, հարցրուց աղջիկը։

—Խանումիդ մօտ։

Աղախինը բոպէական չփոթութիւնից յետոյ պատասխանեց՝

—Նա քնած է։

—Դէ գնա, Ֆէրուզ, չուտ զարթեցրու խանումին, ասա, որ իշխանն այս գիշեր նորա մօտ կը լինի։

—Շատ լաւ, պատասխանեց մատուցիչն և հեռացաւ։

Նա գտաւ Սալմանին իւր տիկնոջ նախասենեակում։

—Սալման, քո հոգուն մատաղ, չուտ վազիր խանումի մօտ, ասա նորան . . .

—Ի՞նչ ասեմ։

—Ասա, իշխանը դարձել է որից, Հէյդարը յայտնեց, որ այս գիշեր մեր խանումի մօտ կը լինի։

—Դու ինչ ասացիր Հէյդարին։

—Ես խաբեցի նորան, ասացի խանումը քնած է։

—Ի՛նչ սատանայ ես, Ֆէրուզ։

—Սուս կաց, գնա, մի ուշացիր։

Սալմանն իւր հողաթափները պնդացրեց և սկսեց փութով դէպի ճանապարհ։

—Գիտես որտեղ է նա, հարցրուց Ֆէրուզը։

—Գիտեմ, պատասխանեց պատանին։

—Դէ, վազիր։

—Ծոխ պէս կը թռչեմ։

Եւ իրաւ, քառորդ ժամից յետոյ թնթռ պատանին կանգնեց փոքրիկ տնակի հանդէպ, սկսաւ զարկել մուրճը։

—Ո՞վ ես, հարց արին ներսից։

—Ես եմ, ձայն տուեց պատանին և խակոյն ներս ընդունուեցաւ։

Այդ տնակի մէջ իւր մի հատիկ սպասաւորի հետ բնակվումէր Միրզայ—Շաֆի անունով մի տղամարդ։ Նա եկած էր այս քաղաքը Հաֆիսի հայրենիքից։ Ի վաւելուն երևակայութեամբ շիրազցի երիտասարդն իւր ժամանակի երգիծարան բանաստեղծներից մինն էր։ Նա, բացի նորանից, որ զանազան երգերի կտորներ գրելով, նուիրումէր Պարսից մեծամեծներին և նոցանից ընծաներ էր ստանում, այլև պրպանից փողը պակասած միջոցներում, շատ անգամ մի քաչքաչ քաշ էր տալիս թևքից, սկսումէր փողոցներում երգել և դէվրիշի նման իւր օրական ապրուստը հաւաքել։ Միրզայ—Շաֆին հիանալի ձայն ունէր։ Նորա կրակոտ երգերից մինն էր, որ Բաղիմ—խանումը լսելէն յետոյ, հարեմխանայի խորքից ձգեց գեղեցիկ իշխանուհու սիրտը դէպի մանկահասակ բանաստեղծը։ Եւ այնուհետև հարեմական տարփածուն չարաչքը մի քանի անգամ իւր գաղտնի այցելութիւնները նուիրումէր Միրզայ—Շաֆիի մենաւոր բնակարանին։

Սալմանը յայտնուեցաւ տնակի բակում, փոքրիկ սենեակի լուսամուտից լսեց նուագածութեան ձայները։ Նա գտաւ իւր սիրուհին դուարճութեան ամենատքնչելի դրութեան մէջ։ Հարեմական գեղեցկուհին, ոսկեայ ջանկերը մատներին անցուցած, արձակ խոպոպիքը մէջքի վերա ափռելով, ղընկ—ղընկացնումէր, և չալմաներով մրրկածուփ փոթորկի մէջ պտըտ-

վումէր, պար էր գալիս։ Բանաստեղծը, թաղն իւր կուրծքին սեղմած, հնչեցնումէր, ներդաշնակելով մի քեֆի գեաֆ։

Նոցա մօտ մի կողմում դրած էին զանազան ոգելից ըմպելիքներ և նախաճաշելու ուտելիքներ։

Սալմանի երևոյթը յայտնի վրդովմունք պատճառեց երկուսի վերա ևս և խանումը դադարեց պարելուց։

—Ի՞նչու եկար, դարձաւ նա դէպի պատանին։

Փոքրաւորը պատմեց բոլորը, ինչ որ լսել էր Ֆերուզից։ Խանումը բոլորովին չփոթուեցաւ։

—Ի՞նչ անեմ, Աստուած, կոչեց նա խորին յուսահատութեամբ։

—Անհոգ կաց, Բաղիմ, ասաց երիտասարդը, անփոյթ կերպով ծիծաղելով իւր հիւրի խռովութեան վերա։—Այդ առաջին անգամը չէ, որ դու ծուղակի մէջ ես բռնվում։

Իշխանուհին դարձեալ անհանգիստ էր։

—Իշխանն ծրտեղ էր գտնվում, դարձաւ երիտասարդը դէպի Սալմանը։

—Դիւանխանայի մէջ։

—Ո՞վքեր կային մօտը։

—Մի քանի խաներ և բէկեր, ասաց պատանին տալով նոցա անունները։

—Ա՛, այդ դաղարկապորտ անպիտանները նորա մօտ կը մնան մինչև կէս գիշեր։ Իշխանը դեռ իւր հիւրերին բերած որսից եղջերուի խորոված կուասցնէ։ Ցետոյ նրանք կսկսեն լըկել ու լափել, յետոյ խա-

ղալ ու ամբողջ ժամերով իւրեանց յիմարութիւնները պատմել։

Սալմանը դուրս գնաց նախասենեակը, սպասումէր իր տիկնոջը։

—Ինձ ինչ օգուտ դռնանից, հարցրուց խանումը վշտահար ձայնով։

—Այն օգուտն, որ իշխանը իւր սիրուն հարեմի օթեակը կը մտնէ կէս գիշերից մի քանի ժամ անցած, բայց տակաւին չորս ժամ կայ մինչև այդ անբախտ րոպէն։

—Այսու ամենայնիւ ինձ պէտք է գոնեա երկու ժամ առաջ այնտեղ գտնուիլ, որպէս զի կարողանամ պատրաստուել նորան ընդունելու։

Երիտասարդի ուրախ դէմքի վերա վազեց մի հեգնական ծիծաղ։

—Ա՛, այժմ իմացայ, թէ ինչու ես ըղձապում, —պատրաստուելու համար . . . երեսդ կակղելու համար . . . մազերդ անուշհոտցնելու համար . . . աչերդ սուրմայելու համար . . . յօնքերդ ներկելու համար . . . ամենափառաւոր հագուստով զարդարուելու համար . . . Չա՛, այդպէս չէ։

Խանումն այդ խօսքերին պատասխանեց մի քաղցրիկ ժպիտով։

—Բայց ինչու խելօք բանաստեղծի խուզը գալու ժամանակ չես պատրաստվում դու։ Յառաջ տարաւ երիտասարդը։—Մի՞թէ մոռացուհես, որ քո քիչմիրհան լաթերը կպաստառուին իմ սենեակի փուչիների մէջ։

—Նրա համար, որ դու էդպէս էլ սիրուհես ինձ, պատասխանեց խանումը և իւր ձեռքը նազելով երիտասարդի ուսին դրեց։

Մի րոպէ—Շաֆին զրկեց իւր սիրուհին և նստեցրուց իւր մօտ։

—Այդ ուղիղ է, հոգիկս, խօսեց նա, հարեմական բռնակալները,—այդ հոտած, փքած իշխանները միայն,—ախորժումն իւրեանց անբախտ զոհերը միշտ խայտաճամուկ կեղևի մէջ տեսնել։ Իսկ Շաֆին սիրումէ այդ կրակոտ աչերը, այդ աղնիւնաձև յօնքերը տեսնել իւրեանց բնական գեղեցկութեան մէջ։

Այդ խօսքերին յաջորդեց մի ջերմ, սիրաբորբոք համբոյր։

—Լսիր, բազիմ, յառաջ տարաւ երիտասարդն աւելի ծանր կերպով, երդվումեմ այդ գանգրահեր զուլֆերովդ (խոպոպիք,) որ չուտով այդ անպիտանների դարը կանցնի։ Մեծ «Բաբի» վարդապետութիւնը կը տիրէ մեր աշխարհին։ Ապագան մերն է։ Այն ժամանակ այդ իշխաններն, այդ խաներն, այդ բէկերն, այդ ինասակար արարածներն՝ այլ ևս չեն կարող ժողովրդի արիւնը ծծելով պարարտացնել իւրեանց փորը։ Այլ ևս չեն կարող դիզել իւրեանց պալատներում երկրի հարստութիւնը և լեցնել իւրեանց հարեմխանան մեր աշխարհի ամենագեղեցիկ աղջիկներով . . .

Այդ խօսքերն արտասանելու միջոցին երիտասարդը այնպէս զրաւվեցաւ իւր մտքերով, կարծես թէ, մոռացաւ իւր սիրուհին, որ գրկումն էր։ Նա չարունակեց՝—

—Թող առժամանակ ևս խեղճ Շաֆին, գիշերները քաղցած փորով, իր վերարկուի տակ կծկուած, իր սառը ծնկերը գրկած, միայնակ քնէ այդ խոնաւ սենեակի մէջ։ Բայց կը գայ օրը, երբ մենք կը ցըրուինք այդ անողորմ մեղուների բունը և նոցա քաղցրիկ մթերքը մեզ կերակուր կը չինենք . . .

—Ջէ որ, ես քեզ միևնակ չեմ թողնում, Շաֆի ջան, երիտասարդի խօսքը կտրեց իշխանուհին հրապուրիչ ձայնով։

—Դողութիւնը միշտ զգուելի բան է։ Պատասխանեց երիտասարդը։—Ահա սպասում է Սալմանը, գնա, և դու մի րոպէից յետոյ իմը չես։ Գնա, սիրելի Բագիմ, ես չեմ ուշացնի քեզ, գնա պատրաստուիր, զարդարուիր, քո բնական այս գիշեր քեզ մօտ չնորհ ունէ։ Բայց երբ կը գայ կնոջ ազատ իրաւունքը, դու այլ ևս ստիպուած չես լինի շողոքորթել մի «դաժանի» անասնական կրքերին . . . Իսկ առ այժմ պէտք է համբերես, Բագիմ, որովհետև դու ստրուկ ես . . .

Տիկինը մի համակրական զգացմունքով իր վարդի կոկոնի նման չրթունքը հպեցրուց երիտասարդի ճակատին և վեր կացաւ։ Նա պատրաստուելու գնալ, բայց Միրզայ—Շաֆին կանգնեցրուց նորան։

—Սպասիր, գիշերը շատ մութն է, քաղաքի սրիկաները՝ քաղցած գայլերի նման՝ այժմ պատսպարմանն փողոցներում։ Սպասիր, ես քեզ հետ գամ։

—Դու մնա տանը, Շաֆի, մի փոքր հանգստացիր, դու շատ վրդովուած ես, ասաց տիկինը։

—Ես կը հասցնեմ քեզ մինչև ամրոցը։

Նոքա միասին դուրս եկան, իրենց հետ առնելով Սալմանին։ Ամրոցի մօտ բաժանուեցան։ Բագիմ—իսանումն երբ կամենում էր անցնել հարեմխանայի բակը դրնապանը հարցրուց նորան՝—

—Ո՞վ ես։

—Բագիմ—իսանումի մօտ եմ գնում, նորա քրոջմէն նամակ եմ բերում, եղաւ պատասխանը։

—Գնացէք։

Ժդ.

Միրզայ—Շաֆին, բաժանուելով իր սիրուհուց, մի քանի րոպէ կանգնեց իշխանի ամրոցի մօտ, նա մտածումէր՝—«Ո՛րքան անբախտ արարածներ իրենց սիրողների գրկից խլուած, բանտարկուել են այդ վանդակի մէջ։ Եթէ նոցա բոլորի արտասուքը միախառնուէին, այդ ահագին պարիսպները կը խորտակվէին նոցա հոսանքի առջև . . .»

Նա կամենում էր հեռանալ, երբ մի նոր միտք յետ դարձրուց նորան։ «Ջէ, մտնեմ իշխանի մօտ և մի քանի րոպէ նորան զբաղեցնեմ դարտակախօսութեամբ, մինչև նորա տիկինը կը պատրաստուէր . . .» Եւ նա ուղղեց իր քայլերը դէպի ամրոցը։

Նա գտաւ գիւանխանայի դահլիճներից մինը փառաւոր կերպով զարդարուած լալայներով և մարդանաւոր կերպով զարդարուած լալայներով և մարդանդիներով։ Լուսամուտների լայն—ապակեզարդ փէնջարէքը վեր էին քաշուած և բակի ծաղիկներով անուշ հոտուած օդը ներս էր ծավալվում ախորժ թարմութեամբ։

Փէնջարէի մի կողմում ծալապատիկ նստած էր ամրոցի իշխանը, նորանից ներքև կարգաւ չարուած էին հիւրերը և լռութեամբ ականջ էին դնում նորա խօսքերին։

Մխրզայ—Շաֆին ներս մտաւ և սովորական ողջոյնը տալով, կանգնեց։

—Ա՛, Մխրզայ բարով եկար, բարով, հրամայեցէք, նստեցէք, ասաց իշխանը նորան տեղ ցոյց տալով։

Երիտասարդը բոլորին ծանօթ էր, առանց նեղուելու, համարձակ գնաց և նստեց ցոյց տուած տեղը։

Նա լաւ գիտէր իւր երկրի սովորութիւնը, թէ գտանվումէր մի իշխանի մէջլիսում, և թէ հարկաւոր էր ամէն նորա յիմար ու խելացի խօսքերին լռութեամբ լսել, «այո՛, այդպէս է» ասել, այդ պատճառաւ Մխրզայ—Շաֆին կամեցաւ առժամանակ պահպանել պատշաճի կանոնները։

—Հօրս գերեզմանին երդում լինի, չարունակեց իշխանը ընդհատուած խօսակցութիւնը, իմ որսորդութիւնն այս անգամին անսպասելի յաջող գնաց։

—Ձեր մեծութիւնը միշտ բախտ ունէ որսորդութեան մէջ, չողոքորդից հիւրերից մինը։

—Բացի դորանից, իշխանի շները լաւ վարժուած են, վերա բերեց մի այլը։

—Իմ ոսկեզօծ բարակը՝ Շէյթանը՝ հրաշալի մի բան է, նա նորան չեմ փոխի ամենաազնիւ արաբական ձիոյզի հետ, պատասխանեց իշխանը։

—Այն որ Զաֆար—խանը ձերդ մեծութեանը վէշքէշ էր ուղարկել, հարցրուց մինը։

—Այո՛, հէնց այն, պատասխանեց իշխանը, գիտէք, խան, ծրքան թանգ նստեց ինձ այդ բարակը։ Զաֆար—խանը, ձեզ յայտնի է, ամբողջ մի տարի գառաւապետ էր Քաշանում, ինչ անիրաւութիւններ ասես չէր արել այնտեղ այդ անպիտանը՝—կաշառքներ, տուգանքներ,—բացի դորանից դիւանի տուրքից ևս բաւական կուլ էր տուել։ Ես կարող էի նորանից մի քանի հազար դեղին թուման դուրս քաշել, բայց բոլորը բաշխեցի։

Մխրզայ—Շաֆին, որ լռութեամբ լսում էր, կտրեց իշխանի խօսքը՝—Վնաս չունի, բարակը նոյնպէս դեղին գոյն ունի, իշխան։ Բայց ես զարմանում եմ մի բանի վերա, ես գիտէի, որ քաւութեան գոհերը մատուցվումեն միայն սուրբ կենդանիներից, իսկ այդ մի նոր վարդապետութիւն է, որ չներից եղած զոհաբերութիւնը դարձեալ կարող էր սրբել մի յանցաւորի մեղքերը...

Մխրզայ—Շաֆիի երդիծական սրախօսութիւնը բարձրացրուց ընդհանուր ծիծաղ։ Բայց որովհետև բոլորը սովոր էին նորա խօսքերին, այդ պատճառաւ իշխանն ամենևին չը բարկացաւ նորա նկատողութեան վերա և չարունակեց իւր խօսակցութիւնը, որ այնքան հետաքրքրական էր նորա հիւրերին։

—Իսկ այդ անգամին իմ Հաղուզը—այդպէս էր իշխանի նժոյգի անունը—կատարեալ հրաշք գործեց։

—Ի՞նչպէս, հարց արին ամեն կողմից։

—Այս անգամ երկար մենք թափառեցինք Ս.....ի դաշտերում և ձորերում, մի քանի կա-

քաներ և տատրակներ միայն գոհանք։ Նօքարներս ամէն մինը մի կողմ ցրուած էին։ Մին էլ հեռուից տեսայ Աքսլար սպահանցու հրացանի ծուխը բարձրացաւ։ Բայց գնդակը չը դիպաւ նպատակին և աղջիերուն սատանայի արագութեամբ սկսաւ վազել։ Ես Հադուդին բաց թողեցի էրէի վերա։ Քառորդ ժամու չափ իմ ձին և որսը վազումէին մի և նոյն ուղղութեամբ։ Ցանկարծ իմ առջև մի խոր ջրանցք, մինչև ատեն արշին լայնութեամբ։ Ես չը կարողացայ Հադուդիս գլուխը դարձնել, որովհետև նա չափազանց տաքացած էր։ Իմ աչքերիս առջևը սևացաւ։ Մին էլ այն տեսայ, ձին արծուի պէս թռաւ և ես գոհանումի ջրանցքի միւս ափումը։

—Մաշալլայ, մաշալլայ, կոչեցին հիւրերը։

—Եղջերուն ընկաւ ջրանցքի մէջ և մինչև կէսը ցաղուեցաւ լճի մէջ։ Ես արձակեցի իմ կարաբինան և խոշոր կոտրակները անցան որսի ուղեղի միջից։

—Բայց դուք էլ մեծ քաջութիւն էք արել, իշխան, գովաբանեցին հիւրերը։

—Ես այդ դէպքում աւելի պարտական եմ Հադուդին, քան առաջ տարաւ իշխանը. ճշմարիտ նա արժէր վրկանք լինել, այն գեղեցիկ օրիորդին . . . որ . . .

—Ի՞նչ օրիորդ, հարցրուց հիւրերից մինը, ձեր մեծութիւնը, կարծեմ, Հադուդին հինգ հարիւր թոհանով գնեց։

—Դուք սխալւում էք, խան, պատասխանեց իշխանը, ձեր ասածը Զէյրանն է, որ գնեցի բաղդադցի Արարից։ Հադուդը ինձ բերեց Ծերունի Խալաֆ—բէկի

կը՝ Մաւրի Թուրքմէնների ցեղապետը։ Երբ վերջին արշաւանքներում մենք Թուրքմէններից այնքան գերիներ և կողոպուտ խլեցինք, նոցա թւում գոհանումէը և Խալաֆ—բէկի աղջիկը։ Խեղճ Ծերունին առաջարկեց հազար թուման փրկանք իւր դստեր համար, ես չընդունեցի, այլ պահանջեցի նորա ձին, որ բոլոր Թուրքիստանի մէջ հռչակուած էր։ Նա ստիպուած եղաւ տալ Հադուդին, որ իւր երկու աչքի լուսի հետ չէր փոխի։ Ձին բերեցին, հրամայեցի տանել ախոռը, իսկ աղջիկը մինչև այսօր էլ իմ հարեմխանայումն է . . .

Վերջին խօսքերը Խալաֆ—բէկի դստեր մասին վերաբերումէին Բադիմ—խանումին, Միրզայ—Շաֆիի սրտին ամենամօտ առարկային։ Նորա հպարտ աչքերը վառուեցան այդ լսելու ժամանակ և շրթունքը սկսեցին դողալ

—Ի՛նչ լաւ էք արել, գովեցին ամէն կողմից իշխանի նէնգութիւնը։

—Շատ լաւ է արել, վերա բերից Միրզայ—Շաֆին հեգնօրէն կերպով, խաբեբայութիւնը պատերազմական գործերում թոյլ է տուած մինչև անգամ զօրանով . . .

Խօսակցութիւնը ընդհատուեցաւ, երբ նորս բերուեցան ղէյլանները։ Նոքա սկսեցին ծխել։

—Դուք բոլոր ժամանակը Ս . . . . . ումը անցուցիք, իշխան, հարցրուց խաներից մինը։

—Երեք օր միայն։ Ախտեղից ես եկայ Յուսէին—խանի մօտ, ճաշին հիւր եղայ նորա պիւղումը։ Ձմա-

բիտն ասած, շատ ուրախ անցուցինք։ Խանն ինձ պուարճացնելու համար կանչել տուեց իւր հրէայ բայանթիներից մի քանի պատանիներ և աղջիկներ, նրանք «Ջիհուդի» պար բռնեցին։ Ա՛խ, ինչ ծիծաղելի էր այդ նզովեալների խաղը։ Ցետոյ մի քանիսին ձերներից փայտի կապել տուաւ խանը. սկսեցին ծեծել. նրանց լացը ու գոռոցն աւելի ծիծաղեցրուց ինձ, կատարեալ «Ջիհուդի չիւան . . .»

Այդ խօսքերը այնպիսի մի եռանդով պատմեց իշխանը, որ չարժեց բոլոր հիւրերի ծիծաղը բացի Միրզայ—Շաֆիից։

—Ես էլ տեսել եմ այդ անիծուածների խաղերն, ասաց խաներից մինը, ճշմարիտ շատ ծիծաղելի է։ Երբ առաջին անգամ գնացի Համադան որպէս կուսակալ, երբ քաղաքին մօտեցանք, բոլոր ժողովուրդը ընդառաջ եկաւ։ Մուսուլմաններն ամեն մի տասը քայլափոխում մատաղ էին մորթում ձիուս ոտքերի տակ։ Ջիհուդները պար էին գալիս։ Նրանք հատկ էին ծաղրական հագուստներ, գլխներին դրած էին երկայն, զանազան գոյներով ներկուած թղթէ գոտակներ։ Ամենքս թռչկոտում էինք, ջրթիկ էին զարկում և պէսպէս մասխարաբազիութիւններ էին անում։ Իսկ աւելի ծիծաղելի էին հայերը։ Նրանք դուրս էին բերել իւրեանց քահանաներին եկեղեցւոյ հագուստով և բոլոր պատկերներով ու խաչերով, որ այդ անօրէնները զոհ են անում իւրեանց եկեղեցիներում։ Ես չը կարողացայ իմ ծիծաղը պահել, երբ տեսնում էի, պարսիկ լամուկները մօտենում էին պատկերներին, ու

*սկսում էին նոցա առջև իւրեանց բերանը ծռմռել ու զանազան ծաղրական խօսքեր ասել, և կամ քէշիներից (տէրտէրներից) հարցնում էին՝—«քէշի՛շ, ինչու ես խաչի յետքում փայտ անցուցել։» *)*

—Այդ շատ ծիծաղելի է, ձայն տուեցին ամենքը հրճուալով, և յայտնեցին, որ իրանցից շատերը ներկայ եղած են այդպիսի հանդէսների։

—Բայց օտար աղգերի կրօնական սրբութիւնքը ծաղրածութեան առարկայ չինել, այդ ոչ միայն խրղճմտանքի ընդդէմ է, այլ և Աստուծոյ, մէջ մեսա Միրզայ—Շաֆին։

Բայց իշխանը, նորան փոխանակ ուղղակի պատասխանելու, ասաց՝—

—Աւելի հաճելի կը լինի մեզ, եթէ այդ ուռայն քարոզների տեղ, դու երգես մի երգ։

—Բոլորովին ուղիղ նկատեցիք, իշխան, աւելացրուց խաներից մինը, ուրեմն հրամայեցէք բերեն Թառը, ես խնդրում եմ, որ Միրզայ—Շաֆին ածէ ևս։

Սոյն միջոցին իշխանի մանկլաւիկները ներս բե-

(*) Պարսկաստանում այդ անպատիւ լրութիւնը շարունակւում մինչև այսօր։ Քաղաքների մահմետական ժողովուրդն իւրեանց նորեկ գաւառապետների դուարճութիւնը յագեցնելու համար ծաղրածութեան գործիք են ընտրում հրէաներին և քրիստոնեաներին։ Խ. Սրուանձը նկարագրում է իր Վէրք Հայաստանի մէջ հայ կղերի մի այդպիսի եկեղեցական հանդիսակատարութիւնը Երևանի խաների առջև։ Երևում է այդ սովորութիւնը շատ հին ժամանակներից գալով կրօնական հալածասիրութեան ծնունդն է։

բնեին արծաթհնոյ մատուցարանների վերա դրած նախատաճկելիքներ, որոնց ընթրիքից առաջ սովորութիւն ունեն պարսիկները ուտելու և նոցա մօտ դրուելան զանազան զօրանից արգելուած ըմպելիքներ։ Հիւրերը սկսեցին խմել և ուտել (*) իսկ Մխրզայ— Շաֆին հնչեցրուց թառը և յանպատրաստից երգեց այդ երգը։

«Մթին անտառով պատած էր սարը,
«Ան սարի գլխին գմբէթի նման՝
«Կապոյտ երկինքը իւր լոյն կամարը՝
«Դրած էր այնպէս պայծառ, անսահման։

«Ան սարի վերա ամրոց էր կանգնած,
«Թշնամի վրնուկ կախարդից նորան.
«Ամրոցի մէջում աղջիկ էր նստած,
«Նորան կապել էր գերութեան չղթան։

«Միայնակ, տխուր նազելի կոյսը
«Փակուած էր մթին իւր նեղ սենեակում,
«Կեանքից և բախտից կտրած էր յոյսը,
«Արտասուաշ ցաւերը կըրումէր հոգում։

«Ամրոցի մօտէն մէկ աշուղ անցաւ,
«Երգից աշուղը իւր երգը անուշ,
«Վրնուվի այն չար թիլիսմը լուծուեցաւ,
«Փշրից իւր չղթան աղջիկը քնքուշ։

(*) Պարսիկները սովորութիւն ունեն ընթրիքից առաջ հատուկ նախատաճկելիքներով խմել տգեղից ըմպելիքներ, ոլպիսի

«Վաղեց գէպի դուրս, աչուղին կանչեց,
«Ասաց՝—«Դու ես իմ սրտի ուղածը,
«Սեղմեց գրկի մէջ, երեսէն պաչեց,
«Ասաց՝—«Ինձ փրկիչ ճամպեց Աստուածը։«

«Երբ որ լուսինը ելուրի ծայրին
«Շողումէր լոյսը՝ ուրախ և պայծառ,
«Երբ որ աստղերը երկնի կամարէն՝
«Պղպղին տալով՝ թաւիւէին գոհար,—

«Ամրոցի միջէն աչուղի նազելին,
«Ծածուկ դուրս գալով, սիրեցեալ՝
«Վի ցնորքներով՝ սրտի սիրելին՝
«Կանչումէր, կանչում...նորան պըտրում...

«Ան անտառի մէջ կար մի տաղաւար,
«Կարծես, դէվրիի էր նա բնակարան,
«Թփերով պատած՝ ճիւղերը հիւսած
«Ցրտից, անձրևից պահումէր նորան։

«Ահնտեղ աչուղը միայնակ՝ լուին
«Առանձնութեան մէջ երգումէր երգը,
«Նորան կենակից էին՝ Հաֆիս, Սադին
«Եւ մեծ Թուսեցու հրաշալի գիրքը։ (*)

եին՝ գինի, արաղ և այլն։ Երբ բոլորովին արբենումեն, յետոյ բերանները լուանումեն և ուտումեն ընթրիքը։

(*) Թուսեցի էր պարսից երևելի բանաստեղծ Ֆիրդուսին։ Նորա նշանաւոր պատմական վէպը կոչվում է Շահ—Նամէ։

«Ահն տաղաւարում ամրոցի հովիտն
«Անցուցանումէր անուշ գիշերներ.—
«Ջէննաթը երբէք իւր անմահներին
«Չէ, չէ չնորհում այնպիսի օրեր . . .

«—Թափումէր ցաւը վշտահար սրտից,
«Սրբումէր աչքից դառն արտասուքը,
«Որպէս մի անմեղ՝ ազատուած բանտից՝
«Մոռանումէր իւր ողբն ու սուգը։

«Ամրոցի տէրն էր բռնակալ—իշխան,
«Որ խլեց նորան հայրենի երկրից,
«Իսկ աղջկայ հայրն—էր ծերուկ մի խան,
«Որ շատ արտասուք քամեց աչերից։

«Իշխանը ունէր պաշտօն արքունի
«Եւ գեղեցկուհի կանայք բազմաթիւ,
«Նորա հարեմում ստրուկ, ներքինի
«Չտէնէին բնաւ համար և հաշիւ։

«Նորա կանայքը փակուած են ոջլուն
«Երկաթով պատած՝ ամուր վանդակում,
«Բայց «սէրը» հզօր է քան բռնութիւն,
«Նա իւր վանդակը է միշտ խորտակում . . .

ԺԵ.

Բախիմ—խանումը, դառնալով իւր սենեակը զարդարուեցաւ, օծուեցաւ, կոկուեցաւ և նախկին թիւ-

ֆեռնիկի կերպարանք ստացաւ։ Նա, իւր օթեակը լեցրած անուշհոտութեամբ, սպասումէր իւր տիրոջ գալստեանը։ Յանկարծ նորա ականջներին դիպաւ մոգական հնչումները մի երգի։

—Այդ «նորա» ձայնն է . . . Առաց չփոթուելով տիկինը և մօտեցաւ բաց լուսամուտին, ուսկից ներս Խոան երգի վերջին տողերը՝—

«Եւ իսկ այս գիշեր ամրոցի հովիտն
«Ջուարճանումէր աչուղի դրկում—
«Որ թռիչք տուեց սրտի դարդերին . . .
«Որ ձեզի համար այդ երգն է երգում . . .»

—«Նա» ինձ է երգում . . . մտածեց տիկինը մի քաղցրիկ վրդովմունքով և թեքուեցաւ փէնջարէի յենարանի վերա։

—Գիտէք, խանում, ով է երգում, հարցրուց Ֆէրուզը, որ կանգնած հետաքննութեամբ իւր տիկնոջ երեսի փոփոխական գծերը։

—Գիտեմ . . . պատասխանեց տիկինը տխուր ձայնով։

—«Նա» նորա համար է երգում, որ դուք լսէք։

Տիկինը ոչինչ չը պատասխանեց։ Նա երկար ականջ էր դնում, բայց երգը լռել էր արդէն։

—Խշխանը այս գիշեր ձեզ մօտ կը լինի, խօսեց ազախինը։

—Գիտեմ։

—Ի՞նչ պատրաստել։

— Ինչ ուզումես պատրաստիր, Ֆերուզ, ինձանից մի հարցրու, իմ գլուխն իմս չէ . . .

Աղախինը, նկատելով սիկինոջ վշտահար դէմքը, հեռացաւ։

Բադիմ—խանումը հեռացաւ լուսամուտէն, մօտեցաւ հայելուն, երկար նայումէր իւր վերա, կարծես, սիրահարուած լինէր իրանով։ «Եթէ այդպէս տեսնէր ինձ Շաֆին . . .» ասումէր նա ինքն իրան։

Նորա մտածմունքը չփոթեց մի ձայն։—Բախտաւոր, զարդարուիր . . . ուրախացիր . . . հիմայ իշխանը կը գայ։

Տիկինը յետ նայեց, տեսաւ հարեմներից մինը՝ գեղեցիկ Ջէյրան—խանումին։

—Նախանձմունես, Ջէյրան, դարձաւ նա դէպի իւր այցելուհին ակամայ ժպիտով։

—Թող իմ աչքը կոյր լինի, եթէ նախանձուիմ, պատասխանեց եկուորը մօտենալով։

—Բան ինչ ես ասում։

—Հանաք եմ անում, Բադիմ։

—Նստիր, հոգիս, նստիր, մի քիչ խօսենք, ես այսօր շատ ուրախ եմ . . .

Նորա նստեցին մինհանց մօտ։

—Դու պէտք է ուրախ լինես, Բադիմ, այսօր «նորա» մօտ էիր. պատասխանեց Ջէյրան—խանումը ծիծաղելով։

—Է՛հ, «տարին մի անգամ բայրամ (զատիկ) այն ևս ախուվախով . . .» պատասխանեց Բադիմ—խանումը ցաւալի կերպով։

—Բաս ես ա՛ն պէտք է հաղնեմ, որ ամիսներով նորա երեսը չեմ տեսնում . . .

—Դու էլ ինձ պէս անբախտ ես . . . Ջէյրան։

—Չա՛, անբախտ եմ, Բադիմ . . . կրկնեց Ջէյրանը խորին կերպով հոգւոց հանելով։

Երկու տիկիններուն խօսքն իւրեանց դաշտնի սիրողների վերա էր։ Նորա միմեանցից ծածուկ ոչինչ չունէին։

—Ա՛յդ ո՞ր աստանան փչեց իշխանի խելքին, որ կամեցել է այս գիշեր քեզ մօտ լինել, Բադիմ։

—Չեմ գիտում։ Դու քանի ժամանակ է չես տեսել իշխանին, Ջէյրան։

—Երեք ամիս։

—Ամեն գիշեր ընկած է Ղարաչու աղջկայ մօտ։

Բադիմ—խանումի խօսքը մի բոշայ հարեմի մասին էր, որին շատ էր սիրում իշխանը։

—Նա գեղեցիկ է, նորա համար, ասաց հեգնօրէն Ջէյրան—խանումը։

—Աստանան տանէ նրա աչ գիշերը։ Պատասխանեց Բադիմ—խանումը զգուանք ձևացնելով իւր դէմքի վերա։—Թէ ես և դու, Ջէյրան, նրա նման ածել, երգել, պարել գիտենայինք, իշխանը մեզ էլ կը սիրէր։

—Մինակ այդ չէ պատճառը, հոգիս, խօսեց Ջէյրանը, խուրշիդը—այդպէս էր բոշայ հարեմի անունը—որպէս ամեն մուջրութիները, կատարեալ կախարդ է։

—Ո՞րդ։

—Իմ հօր գերեզմանը վկայ։ Նա գիւքել է իշխանի աչերը։

—Այն գևի ծնունդից ոչինչ բան պակաս չէ։

—Իշխանը կարծումէ, յառաջ տարաւ Ջէյրան—խանումը, թէ խուրշիդն ամեն հարեմներից աւելի է սիրում նորան։ Բայց դու, Բագիմ, գիտես նորա բաները։

—Ջեմ գիտում։

—Նա ուրիշին է սիրում։

—Ո՞ւմը։

—Ջեմ գիտում։ Բայց միանգամ խուրշիդը ծեծել էր իւր աղախնին՝ Հուանիին, աղախինը պատմեց ինձ ամենը։

—Ի՞նչ ասեց։

—Ասեց իմ տիկնոջ ծնելու օրը հասաւ։ Նա հրամայեց ոչ ոքին իւր սենեակը չը թողնել, այնտեղ էր միայն պառաւ տատիկը։ Խուրշիդն ազատուեցաւ Տղան ծնուեց սև ինչպէս ածուխ, հատ չրթունքներով և տափակ քթով։ Տատիկը գիշերով վեր առնում էրեխան, տարաւ իւր հետ։ Միւս օրը բերաւ մի այլ տղայ սպիտակ, որպէս ձիւնն Այնուհետև յայտնեցին, թէ խանումը ազատուեցաւ ծնունդից . . .

Ջէյրան—խանումն այդ խօսքերը պատմելու միջոցին Բագիմ—խանումի դէմքը փոփոխուեցաւ զարմացական յայտնութիւններով։

—Ուրեմն խուրշիդի այժմեան երեխան իրանը չէ, հարցրեց նա ծիծաղելով։

—Տատիկը գալ է նորան մի մէչիդի դրնից, ուր նորան ձգած են եղել։

—Բայց իշխանը դիրկը առած սիրում է, համբուրում է երեխային, կարծելով թէ իւրն է։

—Եւ սիրում է մօրը, որ այնպիսի գեղեցիկ որդի ծնեց . . .

Բագիմ—խանումն երկար պաշարուած էր իւր լսածների զարմացումով։

—Հիմայ իմանում եմ, Ջէյրան, որ իշխանի սէրը գրաւելու համար գեղեցկութիւն պէտք չէ։ Պէտք է այնպէս սատանայ լինել, որպէս խուրշիդը։

—Ի՞նչ գեղեցկութիւն, պատասխանեց միւսը, Ջէյնաբ—խանումը մեր ամենից գեղեցիկ է։ Ի՞նչու չէ սիրում նորան իշխանը։ Նորա համար որ, նա սատանայութիւն չունի։

—Խեղճ Ջէյնաբ, խօսեց Բագիմ—խանումը ցաւակցական ձայնով, կարելի է սրտի դարդերից դեռ տեղ . . .

—Դարդը քիչ բան է . . . Ես մի օր չէի տեսնում նորան, որ աչքերն արտասուքով թաց չը լինէին, խեղճն ամբողջ օրը իւր սենեակից դուրս չէր գալիս, հէնց ախ էր քաշում ու լաց լինում . . .

—Հիմայ մի քիչ լաւ է, ասումն։

—Չիններին ձայնը գնա չատ անգամ լսումէ։

—Ես ուզումէի այսօր նորա մօտ գնալ, վախեցայ։

—Չէ, Բագիմ, չէ կարելի նորա մօտ գնալ, ասաց Ջէյրան—խանումը։ Կախարդն ամեն գիշեր գալիս է։

—Շատ բաներ են պատմում կախարդի մասին։

—Ի՞նչ բաներ։

—Ասումեն ամեն բան գիտէ։

Լսելով վերջին խօսքերը Ջէյրան—խանումի զըլ-

իւաւմ ծագեց մի նոր միտք, եւ նա հարցրուց՝—

—«Սիրոյ Թիլիսմաններ» էլ կը գիտենայ. Այդպէս չէ՞։

—Ամեն բան գիտէ։

—Ե՛կ, Բագիմ, մի օր նրան մեզ մօտ կանչենք։

—Ի՞նչու համար։

—Թող մեզ համար «սիրոյ Թիլիսմաններ» գրէ։

—Առանց այդ էլ սիրուհին մեզ . . . պատասխանեց Բագիմ—խանումը ժպտելով։

—Իշխանը որ չէ սիրում . . .

—Ի՛նչ պէտք է իշխանի սէրը։

—Նրա համար պէտք է, որ բայրամ (զատիկ) է գալիս, եւ ու դու նոր հագուստ չունենք։

—Մուրդաշուրը (*) տանէ նրա առած հագուստը . . . պատասխանեց Բագիմ—խանումը արհամարհական կերպով։

—Բայց ես կախարդին կանչել կը տամ։

—Կանչել տուր, որ նոր հագուստով գընաս սիրականիդ մօտը . . . դու նորա համար ես զարդարվում . . .

Երկու հարեմների խօսակցութիւնը ընդհատուեցաւ, երբ նրանք տեսան հարեմիանայի բակը ներս մտաւ իշխանը։ Երկու փոքրիկ սպասուհիներ իւրեանց լապտերներով լուսաւորում էին նորա մուտքը։ Ջեյրան—խանումը վազեց դէպի իւր սենեակը։

Ժ.Զ.

Զը նայելով այն խորին ատելութեանը, որ ունէր

Բագիմ—խանումը դէպի իւր բռնակալը, այսուամենայնիւ, երբ նորա գալուստը տեսաւ, ընդունեց խիստ ուրախ և հրապուրիչ կերպարանք։ Թէև այդ ուրախութիւնը բոլորովին ակամայ և հրապոյրը ստիպողական էր, բայց դարձեալ գրաւիչ և ախորժելի էր։ Նա դիմեց մինչև նախասենեակը, երբ աժուխինն ստացաւ զրեց նորա չէմքի վերա, բռնեց նորա ձեռքից և գրկելով բերաւ իւր օթեակը։

Այն խօսքերը, որոյմով տիկինն արտասանութեամբ իւր սէրը և ուրախութիւնը, կարող է արտասանել մի կեղծաւոր լեզու, որ երկար ժամանակ եղել է թարգման ճնշուած, յաղթահարուած և մինչև ստրկութեան հասած սրտի . . .

Մտնելով իւր հարեմի սենեակը, իշխանն իւր սովորական հպարտութեամբ գնաց, նստեց իւր համար յատուկ պատրաստած փափուկ օթոցի վերա և մէջքը տուեց թանգագին բարձերին։ Սինը նստեց նորա մօտ և նազելով թեքուեց դէպի նա, իւր հինայով ներկած ձեռքը դրեց ամուսնի ափի մէջ։

—Ի՞նչպէս է քո առողջութիւնը, հարցրուց իշխանը ծանրութեամբ։

—Ձեր չնորհը աղախնիդ համար կեանք է, ձեր մեն մի ժպիտը նորան յաւիտեան անմահութիւն կը պարգեւէ, պատասխանեց կինն ասիական գեղեցկախօսութեամբ։

—Այդ պատճառաւ էլ ես քեզ մօտ եկայ։

—Ձեր գալուստն այնքան թերկրալի է, որպէս ամարնային անձրեւն իւր մարգարիտները սփռում է ծա-

(*) *Մուրդաշուր պարսկերէն նշանակում է մեռել լուացող, որոյ վարձն է ննջեցեալի հագուստը։*

բաւած երկրի վերա . . . (*)

—Միթէ դու այդքան սիրուածես ինձ։

—Թող վկայ լինեն երկնքի հրեշտակները, որ ոչ մի ծաղիկ իւր գեղեցկութեամբ իմ աչքը չէ գրաւում, երբ «սիրականիս» դէմքը չէ այն, և ոչ մի թռչուն իւր երգերով ինձ չէ ուրախացնում, երբ «սիրականիս» ձայնը չէ այն։

Գուցէ Բադիմ—խանումի խօսքը մի այլ «սիրականի» մասին էր, բայց իշխանը, բոլորովին իւրեան վերաբերելով, ասաց՝—

—Միթէ սէրն այդքան քաղցր է քեզ համար։

—Աւելի քան «կենդանութեան ջուրը»։

Սոյն միջոցին իշխանը թևքը փաթաթեց տիկնոջ պարանոցով և նորա շրթունքը սեղմուեցան իւր գեղեցիկ հարեմի թշի վերա։

—Դու աւելի անուշահոտ ես, քան թէ Ջննաթի վարդերն, կոչեց իշխանն իւր հրապուրանքի քաղցրութեան մէջ։

—Վարդն աւելի ուշարթանում է, երբ վաղորդեան ցողը փայլում է նորա թերթերի վերա . . .—այդ քո

(*) Գուցէ ընթերցողին անհասկանալի կը լինի մի այդպիսի փաղաքշական խօսակցութեան ձևն այս և կնոջ մէջ, որ բոլորովին գործ է ընտանեկան պարզութիւնից։ Բայց արևելքի բարձր շրջաններում, ուր կինն ուրիշ բան չէ, եթէ ոչ ամուսնի զուարճութիւնների մի գործիք, համարեա սովորական է այդ։ Էին շահե իշ մինը, որ ունէր բանաստեղծական ղգացմունքներ, իւր հպարճներից մէկին աւելի էր սիրում, որ խօսում էր նորա հետ ստանաւորներով։

սէրն է, թանգագին ամուսին, պատասխանեց տիկինը։

Մի քանի այդպիսի խօսակցութիւններից յետոյ Բադիմ—խանումը վեր կացաւ, իւր ձեռքով պատրաստեց մի ղէյլան և մատուց ամուսնին։ Ղէյլանի ծխաքարշը բոլորը զարդարած էր գոյնզգոյն ծաղիկներով։

Իշխանը սկսեց ծխել։ Ֆէրուզը նստս մտաւ և վար Թողեց օթեակի վարագուրները։ Քանի րոպէից յետոյ խաւարը ծածկեց իւր պարկեշտ թևքերու տակ հարեմական իշխանի բոլոր սիրակցութիւնքը . . .

Բայց Ջէյրան—խանումը, դուրս գալով Բադիմ—խանումի սենեակէն, նորան հանդիպեց Թուրխիդ—խանումը, որոյ մասին կէս ժամ առաջ խօսումէին երկու տիկիններըս Թուրխիդը, կատաղած առիւծի նման, միայնակ մանէր գալիս հարեմխանայի բակումը։

—Ջէյրան, Ջէյրան, կանչեց նա հեռուից։

Ջէյրանը կանգնեց։ Նա մօտ եկաւ։

—Իմամ—Յուսէյնի գերեզմանին երդում լինի, ասաց նա բարկացոտ ձայնով, թէ առաւօտեան ես Բադիմի ծամերը մէկ մէկ դուրս չը քաշեմ . . .

—Ի՞նչու։ Գժուել ես, հարցրուց Ջէյրանը զարմանալով։

—Նա համարձակվում է իմ հերթը խլել . . .

—Ի՞նչ հերթ։

—Իշխանն այս գիշեր ինձ մօտ պիտի լիներ, թէ նորա մօտ։

—Թող քեզ մօտ լիներ։ Պատասխանեց Ջէյրանը սառնութեամբ։—Բադիմը խօ զօրով իւր մօտ չէ տարել։

Թուրչիդն աւելի կատաղեցաւ։

—Զօրով չէ, բա ինչ է։ Նա չէր իմանում, որ հերթն իմն է։

—Նա ինչով իմանար։ Նա էյլմ—դէյբի (*) չը գիտէ, հեգնօրէն ասաց Զէյրանը։

—Ես նորան կը հասկացնեմ, թող առաւօտը լուսանայ . . . ։ Ես այն Թուրքմէնի քաճին ցոյց կը տամ . . .

—Գնա, գնա, դու կռիւ ես պտրում։ Ասաց Զէյրանը յանդիմանական կերպով։—Եթէ նա Թուրքմէն է, դու էլ մուլթրուֆ (ցիգան) ես . . . մի չատ ազնիւ ցեղից չես . . .

Բօշայ հարեմի աչքերը վառուեցան բարկութեան կրակով։—Դու, անզգամ, պաշտպանում ես անառակին, կոչեց նա յարձակուելով Զէյրանի վերա։

—Անզգամն էլ, անառակն էլ դու ես . . ։

—Ե՞ս . . . ճղեաց Թուրչիդը և երկու ձեռքով ձիգ ընկաւ Զէյրանի ծամերից։

—Վայ . . . վայ . . . ձայն արձակեց Զէյրանը և ինքն էլ փոխադարձաբար բռնեց Թուրչիդի ծամերից։

Երկար նոքա մէկ մէկու քարշ էլին տալիս, միմեանց աչքն ու երեսը ծաւռումէին, երբ վերա հասաւ ներքինապետը։

—Ամօթ է . . . խանումներ, այդ ինչ խաբար է . . . ասաց նա նորանց բաժանելով։

(*) Էյլմ—դէյբի նշ. գիտութիւն աներևոյթ բաների. գերբնական ուսումն.

—Թող դրան խնդիմ . . . ասումէր Թուրչիդը, աչխատելով Հէյդարի ձեռքից դուրս պրծնել։

Բայց Զէյրանն այլ ևս ուշադրութիւն չը դարձրաւ և խոյս տուեց կռուի դաշտից։

ԺԷ.

Մինչ ամրոցում անց էլին կենում նախնեաց դէպքերը, Զէյնալ—խանումը և Գէրիմ—բէկը, Սալօմէի տան մէջ, նստած մխիթանց մօտ, իւրեանց սրտի գերազանց բերկրութեան մէջ, ճաշակումէին միրոյ քաղցրութիւնները . . .

Սալօմէն նոցա մօտ չէր, նա միւս սենեակում իր ամուսնի հիւանդ ընկերի վէրքերին սպնդանիք էր դնում։

—Լաւ, Ագմաստ, յառաջ տարաւ Գէրիմ—բէկը ընդհատուած խօսակցութիւնը, մեր գերութիւնից յետոյ մեր հայրենիքում պատահել են մեծամեծ փոփոխութիւններ։ Վրաստանը վաղուց միացել է Ռուսաստանի հետ։ Այժմ վրացիք թագաւորութիւն չունեն։ Հիմայ մեր Թիֆլիսը ռուսաց քաղաք է։ Ռուսներն ուզումեն տիրել բոլոր Կաւկազին, այժմ այնտեղ պատերազմ կայ։

—Պատերազմ . . . կրկնեց սարսափելով Ագմաստը։—Էլի կռտորումեն . . . ։ Այդ դու որ տեղից գիտես, Մինախակ։

—Այսօր վաղ առաւօտեան Նալբ—ով—Սալթանէի սուրհանդակը Թարրիզից այստեղ հասաւ։ Նա եկել էր չորս օրում և բոլոր Պարսկաստանի համար բերել էր տխուր լուրեր։ Ռուսները յաղթումեն և տի-

բումն Պարսից խանութիւններին, Բոլոր Հայերն ոտքի են կանգնած, ուղումն ազատուիլ Պարսից լծից։

Դեռ գտանուելով պատերազմական սարսափելի ապատրուիլների տակ Ալմաստը, լսելով այդ խօսքերը, բոլոր մարմնով դողումէր։ Նա հարցրուց անհամբերութեամբ՝—

—Ռուսներն ովքեր են։ Ա՛խ, ով գիտէ նրանք էլ Մահմետ խանի նման թալնումն . . . գերի են տանում . . .

—Չէ, Ալմաստ, հանգստացրուց նորան Քէրիմ—բէկը, Ռուսները մեզ նման քրիստոնեայներ են, նրանք գերի չեն առնում և Պարսիկների նման չեն թալնում . . .

—Նրանք մեր խաչը և պատկերները պաշտումեն։

—Պաշտումեն։

Ալմաստը մի փոքր սիրտ առնց, հանգստացաւ։

—Ամբողջ Թէհրանն այսօր խառովութեան մէջ է, շարունակեց Քէրիմ—բէկը, Շահը հրամայել է բոլոր զօրապետներին հաւաքել իւրեանց զօշունը։ Մեծ Մուշտէյլն առաւօտեան դուրս եկաւ մէչիդից քաղաքի հրապարակը, քարոզեց ջիհաթ (*) անել իւրեանց կրօնակիցներին օգնելու համար։

—Այդ լաւ չէլաւ մեզ համար . . . ասաց Ալմաստը յուսահատ կերպով։

—Դու չես հասկանում, Ալմաստ, շատ լաւ էլաւ։

(*) Ջ ի հ ա թ նշանակումէ ընդհանրական պինդութիւն։ Օրինական պարտաւորութիւն է մուսուլմաններին ջ ի հ ա թ գազմել, երբ վտանգ կայ կրօնքի կամ պետութեան դէմ.

—Ի՞նչպէս։

—Որպէս զի ամուսին իշխանը, նոյնպէս իմ տէրը՝—Սէր—Աքերը՝ երկուքն էլ մեծ զօրապետներ են, նրանց հրամայած է գնալ պատերազմ։ Մենք երկուքս էլ ազատուած կը լինենք։

—Որպէս։

—Այնպէս որ, եթէ մենք թողնենք այդ քաղաքը և հեռանանք այստեղից, էլ նրանք չեն կարող մեր ետևէն ընկնել։

—Ի՞նչու։

—Նրա համար որ, նրանք զբաղուած կը լինեն իւրեանց պատերազմական գործերով։ Նրանք այստեղ չեն լինի։

Ալմաստի յուսահատ դէմքը զուարթացաւ ուրախութեան լուսով, և նա հարցրուց անհամբերութեամբ՝—

—Բա, ինչու ենք ուշանում.

—Գնանք, Ալմաստ, չուշանանք, ամեն մի րոպէն թանգ է մեզ համար։ Խօսեց Քէրիմ—բէկն ոգեորուած կերպով։—Գնանք, մեր վրէժն առնենք այն ազգից, որոնք թափեցին մեր հօր, մեր մօր ու մեր ազգականների արիւնը . . .

—Եւ այդքան ատելութիւն մեզ . . . յարեց Ալմաստը։

Սոյն միջոցին երիտասարդի դէմքն ընդունեց խիստ վշտահար արտայայտութիւն, և նա, խորին կերպով հոգւոց հանելով, ասաց՝—

—Այո, ատելութիւն . . . իմ սիրեկան։ Արդէն տասն տարի է այս քաղաքումս ես լսումեմ Պարսիկը հայի

հաւատքը հայհոյելիս և լռումեմ . . . . ես տեսնում եմ պարսիկը հոյի գլխին ծեծելիս, աչքերս խփումեմ և անց եմ կենում. . . . Սիրտս կրակ է կտրում, աչքերս արտասուքը վազումէ . . . Բայց ոչինչ չեմ կարողանում անել . . . որովհետև այստեղ թէ լեզուս և թէ ձեռքս՝—երկուքն էլ կապուած են . . .

Ալմաստը լսումէր վերջին խօսքերը բոլորովին հանդարտութեամբ—Ինձ հետ էլ միւտ մի և նոյնն է պատահել, Մեխակ Ջան, տիկինն ընդմիջեց նորա խօսքը, թէև ես մինչև այսօր ձևացրել եմ ինձ որպէս ճշմարիտ մահմետական, բայց դարձեալ երբ խչխանը կը բարկանար ինձ վերա, իսկոյն կսկսէր խաչին հայհոյել։

—Այդպէս են վարվում այդ բարբարոսները հայերի հետ։ Պատասխանեց Փէրիմ—բէկը կրկին սկս քաշելով—Անցեալ օր հայերի Բաղումն անցայ, մի քանի պարսիկներ ցնծութեամբ մտել էին մի պինեվաճառ հայի տունն խուզելու համար։ Ամուսիր միայնակ գտնուում էր մի մանկահասակ հարս, որը, պարսիկներին տեսնելով, փախչումէ դրացու տունը։ Գաղանները, տեսնելով մի ութը տարեկան աղջիկ, որ քնած է լինում սենեակումը, անմիջ կուսին անպիծութեամբ բռնաբարումեն . . . և նա արտասուատու է լինում ու մնում։ Ես տեսայ նորա անբախտ հօրը, որ դառեր անպատուած դիակը գրել էր մեծ վէղիրի դրանը և արդարութիւն էր խնդրում։ Պարսիկները անցնում էին, նայումէին անմիջ գոհի վերա և ծիծաղումէին . . .

—Խեղճ աղջիկ . . . հառաչեց Ալմաստը և նորա

աչքերը թաց էին արտասուքով։

—Ա՛խ, այնքան չմտէ այդ ազգի կրակն իմ սրտի մէջ, յառաջ տարաւ երիտասարդը ցաւալի ձայնով, որ հազարաւոր պարսիկների արիւնով դարձեալ չեմ կարող մարել նորան . . . ես դեռ չեմ պատմել քեզ, սիրելի Ալմաստ, թէ ինչպէս գերի արեցին ինձ։ Աւազտեան ժամն էր։ Հայրս մի սայլ էր վարձել, ուզումէր մեզ փախցնել Կախէթ։ Մին էլ տեսանք պարսիկները թափուեցան մեր տունը։ Հայրս նրանց աղաչեց, թէ «ինչ որ ունեմ, չունեմ ձեզ լսի, տարէք, բայց երեխերքիս ձեռը մի տաք»։ Նրանք մեր տունը խուզելուց յետոյ ուզումէին տանել ինձ ու իմ քոյր Նինոյին։ Դու յիշումես, Ալմաստ, ինչ սիրուն աղջիկ էր նա։ Մայրս մեր երկուսին խառնել էր իր գրկում, չէր կամենում թոյլ տալ։ Հայրս աղաչումէր, պատսպարումէր, որ մեզ չը տանեն։ Նրանք չէին լսում։ Երբ տեսաւ ուրիշ ճար չը կայ, հայրս առաւ խէնջարը «Քանի կենդանի եմ, ասաց նա, երեխերքս ձեզ չեմ տայ»։ Դու գիտես, Ալմաստ, հայրս քաջ մարդ էր։ Էրեկլէ պարոնը չատ էր սիրում նրան։ Նա պարոնի առաջին որսորդն էր։ Պարսիկների սուրերը փայլեցին։ Հայրս կռւումէր ինչպէս՝ մի առիւծ, որ բունից խլումեն ձագերը . . . . Պարսիկներից երեքն ընկած էին, երբ հայրս սուրը ունիցն վերջ տանալով թողացաւ . . . . Ա՛խ, ինչ բան է սիրելի, հօր և մօր սիրտը . . . . Դու գիտես, Ալմաստ, թէ որքան փափկասիրտ և բարի կին էր իմ մայրը։ Բայց այն արտասուելի բոպէին, երբ նորա աչքի առջև ընկած էր

իւր տղամարդի արիւնով ներկուած դիակը, նորա սիրտը կարծես երկաթի պնդութիւն էր ստացել։ Կատաղած արծիւի նման, նա երկար կռւումէր պարսիկների հետ և իւր թնդերի տակից չէր ուզում բաց թողնել իւր զաւակները... Մինչև խէնջարը ցցուեցաւ նորա սրտում, աչքերը փակեց և մեզ խլեցին մայրական գրկից...

Տխրութեան ամպերը կուտակուեցաւ Ջերիմ—բէկի վշտահար դէմքի վերա, արտասուքը խեղդեց նորան և ձայնը սկսեց դողալ։ Նա ընդհատեց իւր պատմութիւնը։ Ալմաստը բոլոր ժամանակը լաց էր լինում։

Երբ երիտասարդը մի փոքր հանդստացաւ իւր ցաւալի վրդովմունքից չարունակեց՝—

—Այդ դեռ բոլորը չէ, սիրելի Ալմաստ, քրոջս վերա կոխ եղաւ, երկու դինւորներից ամեն մէնն ուզումէր նորան ինքը վեր առնել։ Մինը, որ ատելճանով աւելի մեծ էր, գործ դրեց իւր բռնութիւնը և խլեց մեւսի ձեռքից։ Բայց այդ վերջինը կատաղած գազանի նման քաշեց սուրը և խրեց քրոջս կողքը ...«Թող մեռնի այդ գեղեցիկ աղջիկը, ոչ իմը լինի և ոչ քոնը...» ասաց նա գիւղական հրճուանքով։

—Ես նա մնռաւ... կոչեց Ալմաստը սոսկալով։

—Մեռաւ... սիրելի Ալմաստ

—Խեղճ Նինո, ես կարծումէի նա Թիֆլիսումն է մնացել։ Բայց ինչպէս ընկար դու Սէր—Ասքերի ձեռքը, հարցրուց Ալմաստը, արտասուքը սրբելով։

—Երբ զօրքերը Թիֆլիսից դուրս եկաւ, բաժանուեցաւ զանազան գունդեր։ Ես գնրի էի մի ծեր գին-

ուորի, որ գտանվումէր Սէր—Ասքերի մօտ մնացած զօրախումբի մէջ։ Դու չը գիտես, Ալմաստ ջան, թէ ինչ մարդերից կազմուած էր Աղայ—Մամատ—խանի զօրքունի մեծ մասը։ Պարսկաստանի ամեն կողմերից բախտախնդիր աւազակներ հաւաքուել էին նորա մօտ։ Առանց ռօճիկի և առանց թօշակի նոքա յոյս էին դրել միայն կողոպուտների վերա։ Ճանապարհին նոքա ուտելու հաց անդամ չունէին, յարձակվումէին հանդիպած հայաբնակ գիւղերի վերա և ինչ որ գտանումէին, բոլորը թալնումէին։ Այդպէս նոքա մտան Պարսկաստան։ Այնուհետև Աղայ—Մամատ—խանը հրամայեց, որ պարսից գիւղօրայքին չը դիպչեն։ Բայց մինչև Թէհրան հասնելը դեռ երկար ճանապար կար։ Ջինուորները սկսեցին վաճառել իւրեանց կողոպուտը և գերիները։ Մի հատ ոչխարն աւելի բարձր գին ունէր, քան թէ մի վրացի կամ հայի աղջիկը։ Նոքա ծախումէին պարսիկներին, այնպէս որ, մինչև Թէհրան հասնելը գերիների կէսը չը մնաց։ Իմ գերեվար գինուորը սպառեց իւր իրեղէնները, միակ վաճառքը ապրանքը մնացել էի ես։ Բայց նա չէր ուզում ինձանից զրկուիլ, զաւակ չունէր։ «Քեզ կը Թուրքացնեմ, ինձ որդի կը չինեմ, ասումէր նա։» Մի օր նա գնաց Սէր—Ասքերի մօտ, «Ուտելու հաց չունեմ, ասաց, աւանակս մինչև անդամ հրացանս ծախեցի, մնումէ գերիս։» Սէր—Ասքերի աչքին դիւր եկաց ես, նա տուեց գինուորին տասը կրան (*) և գնեց ինձ։

(*) Տասը կրանն է մօտաւորապէս երեք րուբլի։

—Տասը կրան . . . կրկնեց Ալմաստը և նորա տխուր աչքերը չորացին աղօտափայլ լուսով։

Ժ.Ը.

Արևը վաղուց մտել էր։ Դեռ Ալմաստը և Քերիմ—բէկը, մտաբերելով իւրեանց տխուր անցեալը, խօսում էին։ Մութը սենեակի մէջ բաւականին թանձրացել էր, երբ Սալօմէն, աւարտելով իւր բժշկական գործողութիւնն ամուսնի ընկերի մօտ, ճրագը ձեռին ներս մտաւ։

—Ա՛խ, աչքերս քօռանայ, ես ձեզ բոլորովին խաւարի մէջ եմ թողել, կոչեց նա ափսոսելով։

—Մութի մէջ նստելն աւելի լաւ էր, խօսեց Քերիմ—բէկը, մենք չէինք ուզում տեսնել մէկմէկու արտասուքը . . .

—Դուք լաց էիք լինում . . . Ա՛խ Ալմաստ, քանի անգամ քեզ ասել եմ՝ հերիք խօսես անցած բաների վերա։

—Ալմաստը չէր խօսում, ես էի խօսում . . . պատասխանեց Քերիմ—բէկը։

—Անցածն անցել է, Մեխակ Ջան, յառաջ տարաւ Սալօմէն, հիմայ փառք տուէք Աստծուն, որ դու և Ալմաստը կրկին մէկ մէկու հանդիպեցաք։ Մոռացէք Թիֆլիսի վերա, որ մէկել նորան տեսնէք, մէկել մեր Քուրի ջուրը խմէք։

—Մենք արդէն վճռեցինք այդ։

—Ա՛խ, ինչ լաւ կը լինէր ինձ էլ ձեզ հետ տանէիք։

—Դու կը թողնես քո ամուսինը։

—Ջեմ թողնի, Մեխակ Ջան, ես նորան շատ եմ սիրում։

—Դու Թիֆլիսն էլ շատ ես սիրում։

—Սիրումեմ . . . Իսկի մտքիցս չէ գնում։

—Մարդդ էլ կը տանենք, այնտեղ վանքումը կը մկրտենք, նա քեզ չը կարողացաւ մահմետական չինել, մենք նորան քրիստոնեայ կանենք։ Մարդդ իմ խօսքիցը չի դուս գալ։

—Ի՛նչ լաւ կը լինի։ Երկնէկ էն աւուրը . . . Երեխէս էլ մկրտել կը տամ։

Քանի ժամից յետո լսելի եղաւ դրան թխկոցը։

—Ով գիտէ նա է։ Եկաւ։ Ասաց Սալօմէն և դուրս վազեց։

Եւ իրաւ, նոյն միջոցին բակի դրնից ներս մտաւ մի հակայաձև տղամարդ, փաթաթուած մէչէդեան լայն վերարկուի մէջ։ Նորա մոյդ—դեղնադէյն դէմքը տառնուամէր աւելի ահեղ արտայայտութիւն ալ թիլի վերա իւր ընկած սպիով, որ ձգուամէր յօնքի ձայրից մինչև ծնօտքի վերջը։

Ղաֆար—բէկը—այդպէս էր Սալօմէի ամուսնի անունը—իւր երկրի տովորութիւններին յարմար չուզեց Քերիմ—բէկի մօտ մտել, երբ Սալօմէից լսացաւ, թէ այնտեղ կար օտար կին։ Նա ըստացաւ դէպի այն սենեակը, ուր պատրաստած էր իւր հիւանդ ընկերը։

—Դու նամահրամ (*) չես, լսեցաւ ծանօթ ձայն տրվեց նորան Քերիմ—բէկը, ինձ մօտ գտնվող տիկինը Սալօմէի քոյրացուն է։

(*) Նամահրամ, այն տղամարդիկը, որոնց կրօնքով արդելուած է օտար կանանց երեսը տեսնել։

—Այս րոպէիս ձեր սպասումը կը լինեմ, պատասխանեց աւազակապետը և մտաւ մի այլ սենեակ։

Կինը գնաց նորա հետ։ Նա ձգեց վերարկուն և երևեցաւ զինուորական ատրճանակներով, լայնաբերան կարաբինայով և ահագին խէնջարով։ Սալօմէն սկսեց արձակել նորա զէնքերը։

—Էլի արիւն . . . կոչեց կինը սարսափելով։

—Սուս կաց, կապիր թևքս, ասաց ամուսինը։

—Էլի կռուել ես դու։

—Դու չես լռի։

Սալօմէն դողումէր ամբողջ մարմնով, տեսնելով, որ ամուսնի հագուստը բոլորը թաթախուած էր արիւնով։

—Էդ ծր տեղ էլաւ, հարցրուց նա անհամբերութեամբ։

—Ամեն բան պէտք է պատնաս։

—Ախար ինչու չես ասում։

—Գլուխս մի տար, կապիր թևքս։ Սալօմէն փաթաթեց վէրքը, և աւազակապետը, հագուստը փոխելով, հանգիստ և դուարթ դէմքով գնաց հիւրերի մօտ։ Նորան անծանօթ չէին ոչ Քէրիմ—բէկը և ոչ Զէյնաբ—խանումը։ Երկուքի պատմութիւնը ևս նորան յայտնի էր։ Նա՝ իւր հիւրերի հետ բարևելու սովորական ձևը կատարելէն յետոյ՝ նստեց Քէրիմ—բէկի մօտ։ Սալօմէն մատուց նորան ծխել դէյլան, տեսնելով ամուսինը վրդոված է։

Ղաֆար—բէկն այն քաջ տղամարդերից մինն էր, որոնք նշանաւոր են իւրեանց յանդուգն, անվերկիւղ

և վեհ բնաւորութեամբ։ Նա ծառայումէր Սէր—Ասքէրի մօտ որպէս նորա թիկնապահ զինուոր։ Ջանդաղան արշաւանքներում նա ցոյց տուեց իւր արիութիւնը, որով ոչ միայն գրաւեց զօրապետի վստահութիւնը, այլ և Քէրիմ բէկի բարեկամութիւնը։ Թէհրանում միանգամ նա առեւանգեց մի իշխանի կնոջ, որոյ հետ ունէր գաղտնի յարաբերութիւններ։ Իշխանուհին գոյր լինելով նշանաւոր պաշտօնակալի, Ղաֆար—բէկը դատապարտուեցաւ գլխատման։ Այն ժամանակ Քէրիմ—բէկը Սէր—Ասքէրի միջնորդութեամբ գործ դրեց ոչ միայն իւր ջանքը, այլ և իւր արծաթը նորան ազատելու։ Աւազակապետն այն օրից իւր կեանքը պարտական էր համարում Քէրիմ—բէկին, որպէս իւր վերկչին։

—Ի՞նչպէս նասիբը (*) հասնումէ իւր նշանակութեանը, խօսեց աւազակապետը, ակնարկելով երկու վաղուցուայ սիրողների՝ Ալմաստի և Մեխակի վերաբ։

—Ճակատագիրը ջնջել ոչ ոք կարող չէ, պատասխանեց Քէրիմ—բէկը։

—Քէրիմ—բէկը և Զէյնաբ—խանումն ուղումեն Թիֆլիս գնալ, մէջ մտաւ Սալօմէն ծիծաղելով, ինձ էլ պիտի իւրեանց հետ տանեն։ Դու էլ կը գաս, այդպէս չէ, Ղաֆար։

—Անպատճառ։ Պատասխանեց նա ծանր կերպով։

—Դու հանգիստ ևս անում, հարցրուց Քէրիմ—բէկը։

—Հանգիստ չէ։ Ես պէտք է Թէհրանից հեռանամ . . .

(*) Նասիբ նախասահմանեալ հասոյթ, որ նախախնամութիւնը տնօրինամէ մարդու համար։

Սալօմէն բոլորովին չփոթուեցաւ ուրտխութիւնից։

—Ի՞նչ կայ, հարցրուց Քէրիմ—բէկը, նկատելով աւազակապետի անհանգիստ դէմքը։

—Լօթիների (արիկայների) ձախսէ փողը հատել էր, էս գիշեր Մաշադի—Սամադ սեղանաւորի սընդուկներին մի փառաւոր այցելութիւն արեցինք...

—Ի՞նչ պատահեցաւ, անհամբերութեամբ հարցրուց Սալօմէն։

—Ոչինչ։ Մենք վեր առանք սեղանաւորի թթուած ոսկիներից որքան մեզ պէտք էր։ Միայն ընկերներից մինը բռնուեցաւ։

—Բռնուեցա՛ւ... զարհուրելով կոչեց Սալօմէն։ Նա քեզ կը մատնէ։

—Նա չի մատնի, եթէ կտոր կտոր ևս անեն։ Բայց ինձ ճանաչեցին։

—Վա՛յ իմ գլխին... հառաչեց Սալօմէն և քիչ էր մնում, որ ուշքից գնայ։

—Հանգստացիր, կին, ձայն տուեց աւազակապետը բոլորովին սառնութեամբ։—Բայց իմ յիմար ընկերները վատ վարուեցան, դարձաւ նա դէպի Քէրիմ—բէկը, ծառաներից ոչ մինը կենդանի չը մնաց և սեղանաւորին առաւօտեան գուցէ կը թաղեն։

—Այդ վատ է... պատասխանեց Քէրիմ—բէկը, Մաշադի—Սամադը բարձրադոյն դրան սեղանաւորն է, էգուց Շահը Թէհրանի բոլոր ծակումտերը խուզարկութիւն անել կը տայ։ Բայց ով ճանաչեց քեզ։

—Կինը քնարանից ծածուկ դուրս էր սրծել և դէպի փողոցը ձայն էր քցել. զինւորները

վերա հասան, նոքա ճանաչեցին ինձ կռուի մէջ։

Ամբոխը բոլոր մարմնով դողումէր։ Սալօմէն դարձեալ չէր դադարում ախովախ քաշելուց։ Բայց ամուսինը մի կողմնակի հայեացք ձգեց նորա վերա և կինը լռեց։

—Եթէ սեղանաւորը լինէր մի այլ մարդ հեշտ էր բանն ուղղել, յառաջ տարաւ աւազակապետը, նորա ոսկիներից մի մասը կը նուիրէինք մեծ վէզիրին, նա դործը կը ծածկէր։ Բայց այժմ անհնարին է...

—Այդ ճշմարիտ է, պատասխանեց Քէրիմ—բէկը։ Բայց ինչ պէտք է անել։

—Ուրիշ հնար չըկայ, պէտք է հեռանալ Թէհրանից։ Այս րոպէիս կարող են պաշարել մեզ։

Վերջին խօսքը Քէրիմ—բէկին նոյնպէս քցեց խռովութեան մէջ։

—Ե՞րբ հեռանալ, հարցրուց նա վրդոված ձայնով։

—Այս րոպէիս, ուշանալ պէտք չէ, պատասխանեց աւազակապետը նստած տեղից վեր կենալով։

—Գնանք... խօսեց Ազմաստը, որ բոլոր ժամանակը լսումէր։

—Փախչենք... յարեց Սալօմէն։

—Այդպէս անպատրաստ, ասաց Քէրիմ—բէկը չուարուած կերպով։

—Ոչինչ պատրաստութիւն հարկաւոր չէ, Քէրիմ—բէկ, պատասխանեց աւազակապետը, ինչ որ ուղուենք՝ իմ տանը կայ։ Բաղաքի պարսպից դուրս մէկ մղոն հեռու սպասումեն իմ ընկերները. նոքա ունեն իւրեանց հետ աւելորդ ձիաններ, դուս և քո ընկերաւ-

հին կարող էք նստել։

—Տանդ լրեղէնները պիտի թողնես, մէջ մտաւ Սալօմէն։

—Ինձ պէտք է միայն մէկ բան վեր առնել, այն է այստեղ պառկած ընկերս։

—Բաս երեխա... կոչեց արտասուելով Սալօմէն։

—Այդ քո գործն է։ Թող նա էլ գայ մեզ հետ և սովորի հօր արհեստը։

—Ապա Մարջանը... և Սայիղը... մէջ մտաւ Ամասատը։ Նրանց կը մօրթեն մեր գնալուց յետոյ։

—Նրանք ո՛վ են, հարցրուց աւազակապետը։

—Ջէյնաբ—խանումի սպասաւորը և սպասուհին, պատասխանեց Քէրիմ—բէկը։

—Նրանք էլ կարող են մեզ հետ լինել։

—Ի՞նչպէս դուրս բերել նրանց ամրոցէն։

—Այդ ճանապարհին կը խօսենք։ Պատասխանեց աւազակապետն ըստ սովորելով։—Սալօմէ, դարձաւ նա դէպի կինը, դու առժամանակ պէտք է այդ բարակ լաթերէդ զրկուիս, գնա, փոխիր հագուստդ, ծպտուիր որպէս աւազակ, եթէ ուզումես մեր խմբի մէջ մտնել։

—Կարծեմ, մի և նոյնը կը յօժարուի անել և Ջէյնաբ—խանումը, ասաց Քէրիմ—բէկը, նայելով իր սիրուհու երեսին հարցական հայեացքով։

—Ո՞րտեղից գտնել հագուստ, հարցրուց Ալմաստը։

—Այդ սենեակի տակում դուք կը գտնէք մի ամբողջ հանդերձատուն, պատասխանեց աւազակապետը։—Սալօմէ, տար տիկինը այնտեղ։

Սալօմէն ձրագը վառեց, տարաւ Ջէյնաբ—խանու-

մին մի այլ սենեակ, այնտեղ բարձրացրուց յատակի վերա սփռած գորգը։ Երևան եղաւ մի տախտակամած, Սալօմէն ձեռքը մեկնեց նշմարուող դրնակին, տախտակամածը բարձրացաւ։ Նոցա առջև բաց եղաւ մի փոս ստորերկրեայ սանդուխտներով։ Սալօմէն նախ իջաւ ցած և ճրագով լուսաւորումէր մուտքը։ Քանի րոպէից յետոյ նոքա յայտնուեցան ստորերկրեայ սենեակում։ Բորբոսահոտ խոնաւութիւնն իսկոյն զարկեց նոցա քթին։ Այնտեղ թափուած էին ժանգոտած զանազան մետաղեղէն անպէտ կարասիք։ Այնտեղ խառնիխուռն միմեանց վերա դիզուած էին զանազան կանացի և այրացի թանգագին հագուստներ։ Այնտեղ կային զէնքերի ամեն տեսակները։ Այնտեղ դրած էին թօփերով պէսպէս աբրչումներէն, բրիճեղէն և բամբակեղէն ապրանք։ Մի խօսքով ամեն բան կարելի էր գտնել այնտեղ։

—Այդ ինչ է... զարմանալով հարցրուց Ալմաստը։

—Ամուսնիս հարստութիւնը, պատասխանեց Սալօմէն ծիծաղելով։

—Ով գիտէ, բոլորը գողացել է։

—Ջէ, փող է տուել... հեգնօրէն պատասխանեց Սալօմէն։

Երկու տիկինները փոխեցին իրեանց հագուստը, զինուորուեցան ատրճանակներով և խէնջարներով, և այնպէս ծպտեալ կերպով դուրս եկան, ամեն մինը ձգած ունելով իր բազուկի վերա մի վերարկու։

—Հիմայ ձեզ չէ կարելի որոշել նորահաս սրիկայներից։ Ասաց աւազակապետը, հետաքրքիր աչքերով

չափելով երկու տիկիններըը, որք նոյն հադուստով աւելի գեղեցիկ էին։

— Հիմայ դրանց հետ կարելի է ամեն տեղ գնալ, աւելացրուց Քէրիմ—բէկը։

— Ուրեմն դէպի ճանապարհ, պատասխանեցին տիկիններըը, որք կարծես մի նոր քաջաղնական հոգի էին ստացել։

Սալօմէն մօտեցաւ իւր երեխայի օրօրոցին, առեց քնած երեխան, փաթաթեց նորան չալով ծածկուեցաւ իւր վերարկուի մէջ և նորա տակով, սեղմեց երեխան իւր կուրծքին։

— Դուք ձեր տան իրեղէնները բոլորը թողնուա՞մէք, դարձաւ Քէրիմ—բէկը դէպի աւազակապետը։

— Բոլորը։ Պատասխանեց նա։—Կաւկազում պատերազմ կայ, Քէրիմ—բէկ, Ռուսները կռւում են պարսիկների հետ, այնտեղ իմ մանգաղին առատ հունձք է սպասում . . . ։

— «Գայլը միշտ թրղած օրն է սիրում . . . »

— «Իսկ գողը—մթին գիշերներ . . . » պատասխանեց աւազակապետը։ Նոքա դուրս գնացին։

Նոքա արդէն դրանն էին, երբ աւազակապետը դարձաւ դէպի տնակը. մի րոպէում սատանայի պէս անցաւ բոլոր սենեակները, յետոյ մտաւ հիւանդի մօտ, կրեց նորան ուսի վերա և հանեց դուրս։

— Բարեկամ, ասաց նա վիրաւորին, քեզ ստիպուած եմ տեղափոխել մի այլ տուն։

— Ո՞րտեղ, հարցրուց վիրաւորը թոյլ ձայնով։

— Կռ սիրուհու Զահրայի տունը, նա կը լանամէ քեզ։

— Իսկ դո՞ւ։

— Ես առժամանակ քեզանից բաժանուելու եմ . . .

Աւազակապետի տունը գտանուելով քաղաքի պարսպի մօտ, իսրամատի վերա, նոքա իսկոյն իջան փոսը և անցան միւս կողմը։

Քառորդ ժամ չէր անցել, երբ Սալօմէն յետ նայեց դէպի քաղաքը, տեսաւ ահագին հրդեհ։

— Էդ ինչ կրակ է, Աստուած, կոչեց նա սարսափելով։

— Մեր տնակը, պատասխանեց աւազակապետը։

— Ի՞նչ արիր . . . ։

— Այրեցի . . . ։

ԺԹ.

Գիշերի կէսն էր։ Լուսնի եղջիւրն անհետացաւ լերան յետքում և մութը պատեց բոլոր առարկաները։ Աւազակապետն իւր նոր ընկերների հետ անցան լայնատարած գերեզմանատնից և հասան մի մատուռի, որ կանգնած էր դամբարանների մօտ։

— Քէրիմ—բէկ, այդ մատուռի մէջ մի փոքր սպասեցէք, մինչև ես իմ բեռից կը թեթևանամ։

Այդ ասելով, աւազակապետը, ուսին կրած ընկերը հետը տանելով, աներևութացաւ խաւարի մէջ։ Քէրիմ—բէկն երկու տիկինների հետ թաղնուեցան մատուռի մէջ։

— Հիմայ մենք բախտաւոր ենք, ասաց Ալմաստն ուրախ ձայնով, դրկելով Մեխակի պարանոցը։

Քէրիմ—բէկը պատասխանեց այդ խօսքերին մի տաք համբուրով։

—Երանի այն օրին, երբ այդպէս կը գրկէինք մեռեանց Թիֆլիսումը . . . ասաց նա։

—Ես սպասումէի մի այլ խօսքի . . . պատասխանեց տիկինը խորհրդաւոր ձայնով։

—Երբ ես ամուսին, իսկ դու իմ կինը կը լինէիր, աւելացրուց երիտասարդը։

Ալմաստը գլուխը դրեց իր սիրականի գրկումը, կարծես, գիշերային խաւարի մէջ նա աշխատումէր թաղցնել իր վառուած դէմքը։

Սալօմէն ընդհատեց այդ սրբազան լռութիւնը՝—Եւ Ղաֆարը կը լինէր ձեր խաչեղբայրը պսակի ժամանակ։

—Իսկ դո՛ւ, հարցրուց Ալմաստը։

—Ես էլ ձեզ համար ղէյլան կը պատրաստէի, թէհրանի բամբասանքները կանէի։

—Դու աղջիկ ժամանակդ էլ մեզ օգնումէիր, Սալօմէ։

—Միտդ է, Ալմաստ, մի օր Մելիակը խուրմայ էր ուղարկել քեզ, ես բերեցի, թագուն քեզ տուի։

—Այն որ կէսը ճանապարհին դողացել էիր, ասաց Ալմաստը ծիծաղելով։

—Հա՛, լաւ միտս եկաւ, դու էլ ձևձեցիր ինձ դրայ համար։

Սոյն միջոցին Սալօմէի երեխան ծրտաց։

—Խեղճ երեխայ, նա չէ իմանում ուր են տանում իրան, թէ չէ, նա էլ մեզ պէս կուրախանար . . .

Մինչ դռքա մատուռի մէջ իւրեանց ազատութիւնով և ապագայ յոյսերով ուրախանումէին, աւազակապետը դրեց նոցա մօտ արծաթի քսակը

կապետը հասաւ քաղաքից փոքր ինչ հեռու արուարձանին։ Այնտեղ կանգնեց նա մի տան առջև, որ ունէր փոքրիկ պարտէզ, դրան մուրճը զարկեց, չների հաչելու ձայնից զարթնեցաւ մի դեռահաս աղջիկ, որ միայնակ քնած էր իւր սենեակում։ Զըսպաւելով մինչև դրան բացուիլը, աւազակապետը ցատկեց պարտէզի չրջապարսպից և իւր բեռը իջուց միւս կողմը։ Նոյն րոպէին փոքրիկ սենեակի չէմքի վերա երևան եղաւ դեռահաս աղջիկը ճրագը ձեռին, գիշերուայ հագուստով։

—Ո՞վ ես, հարցրուց նա վրդոված ձայնով, որովհետև ճրագի լոյսն արդելումէր տեսնել խաւարի մէջ եկուորին։

—Ես եմ, պատասխանեց աւազակապետը։

Այդ ձայնը ծանօթ էր օրիորդին, նա իսկոյն լուսաւորեց իւր կայսրանի մուտքը և ներս հրաւիրեց աւազակապետին։

—Ռուստամից մի նամակ . . . եղաւ օրիորդի առաջին խօսքը։

—Ահա, բերել եմ նորան . . . Ասաց աւազակապետը և իւր չալակած բեռը դրեց օրիորդի քնացորների վերա։—Ա՛ռ, մեկնեց նա դէպի օրիորդը մի քսակ և խնամքը տար այն տղամարդին, որին սիրումես։

Օրիորդը, փոխանակ առնելու քսակը, տեսնելով վիրաւոր երիտասարդի արիւնաքամ եղած և դալկացած դէմքը, արձակեց մի ցաւալի հառաչանք և գրկեց նորան։

Աւազակապետը դրեց նոցա մօտ արծաթի քսակը

և ըստապելով դուրս գնաց, այդպիսի խօսքերով՝—

—Ջահրա, խնամքը տար Ռուստամին, դա քո սիրելին է և իմ քաջ ընկերներիցս մինը։ Մնացէք բարեաւ, գուցէ այլ ևս չը տեսնուենք։

Դուրս գալով գեղեցիկ օրիորդի աչակէն, աւազակապետը քառորդ ժամի մէջ հասաւ մատուռին։

—Գնանք, ասաց նա Գէրիմ—բէկին։

Գիշերային փախստականները կրկին ճանապարհ ընկան։ Կէս մղոն անցել էին, երբ հասան մի հին ամրոցի աւերակներին։ Աւազակապետը չըվայրուց, հեռուից պատասխանեցին մի ևնոյն ձայնով։

—Այստեղ են . . . ասաց նա և յառաջ գնաց։

Մի ստորերկրեայ, գետնափոր խորանի ծակից, որ պատած էր բաղեղով և մացառներով, աղօտափայլ լոյսը նեղ ժապաւէններով դուրս էր չողացել գիշերային խաւարի մէջ։ Աւազակապետը մօտեցաւ ծակին և խորհրդաւոր նշանախօսութեամբ ձայն արձակեց և իսկոյն դուրս սողացին երեք պլուխներ։

—Ո՞ւր է Հաչիմը, հարցրուց աւազակապետը։

—Այնտեղ ձորի մէջ ձիաներն է արածացնում, պատասխանեց մինը։

—Նա թող մնայ այնտեղ, յառաջ տարաւ աւազակապետը, իսկ դուք, Ալի, Սամադ, Ասադ, այդ երկու հոգին—ցոյց տուեց նա Այմաստի և Սալօմէի վերա—կը պահէք ձեզ մօտ։ Ձանազումէք ովքեր են, մինն իմ կինն է, իսկ միւսը նորա քոյրը։

—Մեր աչքի լոյսի պէս կը պահենք, պատասխանեցին աւազակները։

—Ես կը դառնամ մէկ ժամից յետոյ, իսկ եթէ ուշացայ, դուք, այդ երկու հոգին ձեզ հետ առնելով, կանցնէք N . . . ի ձորը, այնտեղ կսպասէք ինձ։

—Դու ուր ես գնում, հարց արին նորանից։

—Այդ պարոնի հետ պիտի դառնամ քաղաքը, ցոյց տուեց նա Գէրիմ—բէկի վերա։

—Մեղանից ոչ մինը քեզ հարկաւոր չի մնա։

—Դա բաւական է։

Երբ աւազակապետը և Գէրիմ—բէկը կամենում էին հեռանալ, Այմաստը մօտեցաւ և ասաց նորան՝—

—Ջուշանաս, Մելիսակ Ջան, ինձ մինակ չը թողնես. Մարջանին և Սայիդին բեր հետդ։

—Նրանց համար ենք գնում, պատասխանեց Գէրիմ—բէկը, չուտով կը դառնանք։

Ի.

Աւազակապետը Գէրիմ—բէկի հետ, դառնալով դէպի քաղաքը, գտան դարվաղանները կողոպտած։

—Ո՞րտեղից մտնենք, յուսահատութեամբ հարցրուց Գէրիմ-բէկը։

—Հնչտ է, եկ։ Ասաց աւազակապետը, և մինչև յիսուն քայլ բոլորեց չրջապարիսպը, և կանգնեց պատի մօտ։

Նա արձակեց իւր մէջքից երկայն մետաքսեայ պարանը, որոյ ղլխին ամրացուցած էր արճիճից մի գնդակ։ Ձգեց գնդակը դէպի վեր, պարանը բռնեց պարսպի աւտամնաւոր բարձրութիւնից, իսկ արճիճն իջաւ ցած։ Աւազակապետը, պարանի երկու ծայրերը ձեռքին բռնելով, սարդի արագութեամբ վեր բարձ-

բայաւ պարսպի վերա։ Ա֊ինուհետև նա կրկին իջաւ պարանը և Գէրիմ—բէկը հետևեց նորա օրինակին։ Մի րոպէից յետոյ երկուքն էլ պարսպի վերա էին։ Ա֊ինուհետև նոյն մեռաքսեայ սանդուխտի միջոցով նոքա իջան պարսպի միւս կողմը։

Անցանելով նեղ, ոլոր—մոլոր չուկայներից, շուտով նոքա յայտնուեցան Իշխանի ամրոցի մօտ։

—Այժմ ինչպէս դուրս կանչել այդ սևերին, բոլոր դրները փակ են, ասաց Գէրիմ—բէկը։

—Թէ քնած չը լինեն հնչատ է, պատասխանեց աւազակապետը։

—Ի՞նչպէս։

—Ես նրանց լեզուն գիտեմ . . . : Եկէք։

Նոքա անցան հարեմհանապի պատի կողմը, որտեղից մօտ էր Զէյնալ—խանումի կացարանը։ Աւազակապետը սաղի սուր—ձգական ձայնով երեք անգամ նշան տուեց։ Ամրոցի խորքից պատասխանեցին մի ևնոյն ձայնով։

—Հասկացան, ասաց աւազակապետը հաղիւ լսելի ձայնով։

—Այստեղ սպասենք։

—Մի շարժուիր։

Քանի րոպէից յետոյ խաւարի միջից երևան եղաւ մի ստուեր։ Դա Սայիդն էր։ Գէրիմ—բէկը յայտնեց նորան բոլորը։ Եթովպացին ուրախութիւնից արձակեց մի տեսակ հառաչանք, որ աւելի նման էր թռչունների ծրվծրվոցին։

—Դուք այդ դրանը սպասեցէք, ցոյց տուեց նա և հեռացաւ։

Նոքա մօտեցան այն դրանը, որ ուղիղ բացվում էր հարեմհանապի մէջ։ Իսկ Սայիդը ներս գնաց այն մուտքով, ուսկից որ եկել էր։

Քանի րոպէից յետոյ նոքա լսեցին դրան յետքից մի այդպիսի խօսակցութիւն՝—

—Բաց արա դուռը։

—Ի՞նչու։

—Կախարդը գալիս է։

—Ա՛խ, այդ անիծուած կախարդը հանգստութիւն չէ տալիս . . . : Ասաց քնաթաթախ դրնապանը և ժժդոնութեամբ սկսաւ դարձնել բանալիները։

Դրները բացուեցան։ Աւազակապետը և իր ընկերը յետ քաշուեցան։

—Ո՞ւր է կախարդը, հարցրուց դրնապանը։

—Մենք գնում ենք նորան կանչենք, ասաց Սայիդը։

—Հրամայած է ոչ ոքին դուրս չը թողնել, մինչև ներքինապետան լինքը թոյլ չը տայ։

—Զէյնալ—խանումն լինքն ուղարկեց մեզ։

—Չեմ կարող։

Մինչ նոքա այդ վիճաբանութեան մէջ էին, աւազակապետը վերա հասաւ։ Նա մի կողմ հրելով դրնապանին,—Դուք գնացէք, ասաց Սայիդին և Մարջանին։

Խավիկը և Եթովպացին դուրս վազեցին։ Դրնապանը փորձ փորձեց հարայ տալ, բայց իսկոյն աւազակապետի դաշնոյնը ցցուեցաւ նորա կոկորդի մէջ և ներքինին գետին գլորուեցաւ։

—Հիմայ նա կը պոռայ և բոլոր ամրոցը մեր գլը-

խին կը հաւաքէ, ասաց Մարջանը դողալով։

—Նա էլ ձայն չի հանի . . . : Գնանք, պատասխանեց աւազակապետը։

Երբ բաւականին հեռացան ամրոցէն, նորա պէտք է անցնէին Սէր—Ասքերի դրնէն։

—Ես պէտք է դանեա վերջին անգամ մտնեմ, այստեղ, աւաց Քէրիմ—բէկը։

—Ի՞նչ կայ, հարցրուց աւազակապետը։—Ժամանակ ենք կորցնում։

—Շուտով դուրս կը գամ։ Պէտք է վեր առնել մի քանի բաներ։

—Թէ փողի համար է, մեզ մօտ կայ, որքան ուզես։

—Ջէ, ես չեմ կարող թողնել զէնքերս և ձիս։

—Գնա։ Քեզ կսպասենք քանդուած մզկիթի մօտ։

Քէրիմ—բէկը, մօտենալով Սէր—Ասքերի դրանը, պահապանները ճանաչեցին նորան, իսկոյն բաց արին մուտքը։ Նա դիմեց դէպի իւր կացարանը, որքան մեծ եղաւ նորա զարմայքը, երբ գտաւ իւր սենեակը ներսից կողպուած։ Նա հեղիկ զարկեց դուռը, լսելի եղաւ մի քնքուշ ձայն, որ աւելի նման էր մետալական հնչումի։ Դուռը բացուեցաւ, երիտասարդը ներս մտաւ։ Խաւարի մէջ երկու ձեռք փաթաթուեցան նորա պարանոցով . . . ջերմ շրթունքները սեղմուեցան նորա թշին և մի էակ ընկաւ նորա գիրկը . . .

Երկար նորա մնացին այդ անբարբառ հոգեզմայլութեան մէջ, մինչև երիտասարդը, աղատուելով նորա գրկից, վառեց ճրագը։

Քէրիմ—բէկի սենեակում գիշերային հսկողը Սէր

—Ասքերի դուստրն՝—օրիորդ Մահին էր։

—Ա՛խ, Մահի, դու, այս կէս գիշերին . . . այստեղ . . . ձայն արձակեց երիտասարդը։

—Ամբողջ օրը քեզ չէի տեսել, միշտ այդ քեզ էր պատրում . . . պատասխանեց օրիորդը վշտալի ձայնով։

—Ի՞նչպէս եկար այստեղ։

—Հայրս, մայրս քնեցին, իմ քունը չէր տանում, կամաց սենեակիցս դուրս եկայ, կտուրի վերայից անցնելով՝ մտայ այստեղ։

—Բայց եթէ ես չը գայի։

—Ես կը մնայի այստեղ և մինչև առաւօտ լաց կը լինէի։

Եւ իրաւ, երիտասարդը նկատեց, որ արտասուքը դեռ չէր չորացել օրիորդի աչքերից։

Երիտասարդն ընկաւ սարսափելի խռովութեան մէջ։ Երկու հակառակ վրդովմունք սկսան յուզուիլ նորա սրտում։—Այդ սիրոյ փոթորիկն էր . . .

Նոյն րոպէին երկու պատկերներ նկարուեցան երիտասարդի աչքի առջև, մինը՝—դեռահաս և կրակոտ Մահին, միւսը՝—վշտալի և անբախտ Ալմաստը, որ աւազակների խումբի մէջ սպասում էր նորան։ Որին տալ գերազանցութիւնը։ Քէրիմ—բէկը ընտրել էր վերջինը և հաստատ մնաց իւր ընտրութեան մէջ։ Բայց մի միտք միայն տանջում էր նորան, թէ ինչպէս հեռացնել Մահիին, որ ինքը կարողանայ դուրս գնալ։ Նա սկսեց կրել իւր զէնքերը։

Օրիորդը, տեսնելով նորա անհանգիստ դէմքը, հարցրուց՝—

—Դու տխուր ես, Քէրիմ, դու մի տեղ ուզումես գնալ։

—Չա, Մահի Ջան, այս րոպէիս վատ լուր հասաւ ինձ, աւազակները յարձակուել են մեր մօտակայ գիւղի վերա, ըլտապումեմ օգնութեան հասնել խեղճ գիւղացիներին։

Այդ խօսքերը ցաւալի կերպով ազդեցին օրիորդի սրտին։

—Ո՛վ գիտէ, կսպանեն նրանց . . . ասաց նա դողալով։

—Կսպանեն և ամեն ինչ կը կողոպտեն։

—Հօրս չես յայտնում։

—Ջեմ ուզում նրան անհանգստացնել։

—Չա, այդպէս, մի նեղացրու հօրս, առաւօտեան նա ճանապար պիտի գնայ։

Վերջին խօսքը չարժեց երիտասարդի հետաքրքրութիւնը։

—Ո՞ւր պիտի գնայ, հարցրուց նա։

—Ջեմ իմանում, մայրս ասումէր պատերազմ կայ, պիտի գնայ իւր ղօշունի հետ։

Երիտասարդը հասկացաւ Սէր—Ափքերի թէհրանից հեռանալու պատճառը։ Նա արդէն պատրաստ էր։

—Դու գնա, Մահի Ջան, թող քեզ չը տեսնեն, ես ուզումեմ կանչել ծառային, ասաց նա, օրիորդի փոքրիկ ձեռները առնելով իւր ափի մէջ։

—Էգուց գիշեր էլի կը գամ, խօսեց օրիորդը ժպտելով։

—Եկ, ես այստեղ կը լինեմ։

—Տես, չը խաբես։

—Ջեմ խաբի . . .

Օրիորդը կրկին ընկաւ երիտասարդի գիրկը։ Քէրիմ—բէկը քաղեց նորա թշերէն իւր վերջին համբոյրները . . .

Մահին հեռացաւ։—Տես, կը գամ ես, հէնց էս ժամուն, ասաց նա դրնից կրկին անգամ նայելով երիտասարդի վերա։

«Խեղճ աղջիկ . . . խօսեց իւր մտքում երիտասարդը և նորա դէմքը պատեցին տխրութեան ամպերը . . .

Քէրիմ—բէկը կանչեց իւր ծառային, որ քնած էր նախասենեակում։

—Գնա, չուտով իմ ձիերը երկուսն էլ թամքիր, հրամայեց նորան։

Քնահարամ ծառան աչքերը տրորելով վազեց դէպի ախոռատունը։ Քէրիմ—բէկը առեց իւր փոքրիկ խուրջինը, մօտեցաւ մի արկղի, հանեց նորանից մի քանի ծանր քսակներ.—Սև օրուայ համար հարկաւոր կը լինի, ասաց և դրեց խուրջինում։

Շուտով դարձաւ ծառան և յայտնեց, թէ ձիերը պատրաստ են։

—Վէր առ այդ խուրջինը։

Երկուքը միասին դուրս գնացին։ Խուրջինը կապեցին ձիու մէջքի վերա, երիտասարդը հեծաւ։ Իսկ ծառան հարցրուց՝—

—Հրամայումէք, այդ միւս ձին ես նստեմ և ձեզ հետ գամ։

—Չէ։ Պատասխանեց երիտասարդը։—Տուր ինձ սանձը։

Նա առնց միւս ձիու սանձը, և յետքից քարշ տալով, աներևութացաւ խաւարի մէջ։

ԻԱ.

Քէրիմ—բէկը չուտով հասաւ քանդուած մզկիթին, ուր աւազակապետը սպասումէր նորան։

—Բարեկամ, ուշանումենք, ասաց նա, գուք ցած նկէք ձիուց, թող սևերը նստեն, մինչև քաղաքից դուրս գանք։

Քէրիմ—բէկը մտածելով, որ առանց խորհրդի չէր այդ առաջարկութիւնը, ձիաների երկուսն էլ յանձնեց սևերին։ Նոքա ճանապար ընկան։ Գիշերը հանդարդ էր և հովասուն։ Շների խառնաձայն հաչելուձանը միայն ընդհատումէր տիրող լռութիւնը։

Դուրս գալով բազարի մէջից, նոքա տեսան ուղղակի իւրեանց առաջ էլին գալիս մի խումբ գիշերապահ զինուորներ։ Զարտուղել ճանապարհը չէր կարելի։

—Այդ անպիտանների հետ կը հարկաւորի ծեծուիլ։ Դուք քանի՞ կրակ ունէք, հարցրուց աւազակապետը Քէրիմ—բէկից։

—Երկու զոյդ ատրճանակներ գօտիումս, երկուսն էլ թամբի վերա, մի հատ էլ կարաբինայ, պատասխանեց նա։

—Բաւական է։

—Մի զոյդ էլ ես ունեմ, պատասխանեց Սայիդը։

—Դու քո ընկերուհու հետ միայն պահէք ձիաները, ասաց աւազակապետը։

Գիշերապահները մօտեցան։

—Գիշերի անունը, հարցրուց նոցանից մինը։

—Անցէք, ձայն տուեց աւազակապետը։

—Դարուղան հրամայել է բռնել, ով կը հանդիպէ։ Երեք ժամ առաջ կողոպտեցին բարձրագոյն դրան սեղանաւորի տունը։

—Մենք աւազակներ չենք։

—Ուղիղ մարդը հիմայ չի ման գայ, այն ևս առանց լապտերի։

—Կնիկ էլ ունեն իրանց հետ, ձայն տուեց մի այլը։

—Մէկ խօսքով, ինչ է ձեր միտքը, հարցրուց աւազակապետը յառաջ գնալով։

—Դուք ընկերիդ հետ և այդ խանումի հետ, ցոյց տուեց պահապանների առաջնորդը Մարջանի վերա, չնորհ կը բերէք մօտաւոր զարավուլխանան, այնտեղ մեզ հիւր կը լինէք, մինչև առաւօտը դարուղան կը տեսնէ ձեզ։

Այդ առաջարկութիւնը մտնու խնդիր էր, թէ աւազակապետի և թէ նորա ուղեկիցների համար։ Այդ պատճառաւ նոքա վճռեցին մինչև վերջին չունչն ընդդիմանալ։

—Պարոն, քո արիւնը կարծեմ ծանրութիւն է անում, պատասխանեց աւազակապետը սառնութեամբ։

—Այդ ուղիղ է, այս տարի երակս չեմ կտրել։

Աւազակապետը վերարկուն առեց իւր վրիցը, փաթթեց ձախ թևքը, իւր համար վահանակ չինեց, և ձախ ձեռքը մերկացնելով, հրաւէր կարդաց՝

—Հրամայեցէք։

Գիշերապահները գաղանի նման յարձակուեցան։

Նոքա թուով ութը հոգի էին։ Կռիւը տաքացաւ։ Սայիդը վայր իջաւ ձիուց ատնձը յանձնեց Մարջանին և պատուիրեց որ հեռու կենայ կռուողներից։ Նոյն միջոցին աւազակապետը, իր սուրը դուրս քաշելով դիւերապահների մեծաւորի կուրծքից ասաց՝—

—Ամենահմուտ դալլաքը այդպէս արիւն չէր կարող առնել քեզանից։

Նա ձայն չը հանեց և թաւալուեցաւ գետին։ Երկու հոգի յարձակուեցան Քէրիմ—բէկի վերա, նա իր դաշոյնով ծակեց մէնի կողքը և ճեղքեց մլուսի գլուխը։ Առաջինն ընկաւ, բայց վերջինը քիչ էր մնում հարուածէր երիտասարդին, երբ Սայիդի ատրճանակը ծխաց նորա կուրծքի մէջ։

Քէրիմ—բէկը տեսաւ, աւազակապետը չրջապատած էր մի քանի հոգիով և կատաղի կերպով պաշտպանում էր իւրեան։ Նա առիւծի պէս դեմն դրեց մինին, որ պատրաստվում էր իւր հրացանը արձակել աւազակապետի վերա։ Նոյն միջոցին Թիկունքից ստացաւ նա մի հարուած, բայց կռուի տաքութեան մէջ ոչինչ չը զգաց։ Նա յետ դարձաւ, երբ զարկողը ուզեց կրկնել իւր հարուածը։ Քէրիմ—բէկի ատրճանակը որոտաց, հակառակորդը ընկաւ։

Ես վերջացրի իմ գործը, մօտենալով ասաց աւազակապետը երիտասարդին։

—Իսկ դուքա, հարցրուց Քէրիմ—բէկը։

—Թող գնան, խեղճ են . . .

Եւ իրաւ, դիւերապահներից երեքը, տեսնելով իւրեանց ընկերներից հինգն ընկած, թողեցին և փախան։

—Այժմ նստիր ձիդ, խօսեց աւազակապետը, ինքն հեծնելով միւս ձիու վերա։—Սևերի ամեն մինը առնենք մեր ձիու գաւակը։

Շուտով հասան նոքա քաղաքապրներից մինչև, որ փակ էր։ Դրնապանը երկար ընդդիմանում չը բաց անել, բայց Քէրիմ—բէկը գնելով նորա ձեռքը քանի մի հատ ոսկի, նա յօժարուեցաւ գեղծել իր պարտաւորութիւնը։

Նոքա բաւականին հեռացել էին քաղաքից, երբ Մարջանը, որ նստած էր Քէրիմ—բէկի հեծած ձիու գաւակին, յանկարծ ձայն արձակեց՝—

—Արիւն է հոսում . . .

—Ո՞րտեղից, հարցրուց Քէրիմ—բէկը չվոթուելով և ձեռքը տարաւ դէպի մէջքը, տեսաւ, հագուստը թաց էր եղած։

Աւազակապետը մօտեցաւ հարցնելով—Ի՞նչ է։

—Ոչինչ։ Պատասխանեց Քէրիմ—բէկը։ Ունենք քեզ հետ խանդարութ։ (*)

—Ես առանց դորան չեմ լինում։ Ասաց աւազակապետը ձիուցը վայր իջաւ։

Նա վառեց կրծկած մոմլատը, որ զրպանումը ունէր և չուտով փաթաթեց Քէրիմ—բէկի վէրքը։

—Գայլը լաւ է դիպցրել, ասաց աւազակապետը, բայց անվնաս է։

—Աղան էլ մի լաւ գնդակ ուտացրեց այն քաջին, վերա բերեց Սայիդը։

(*) Խանդարութ, խանձած բուրթ կամ մազ, որ դործ է դրվում արեան հոսումը դադարեցնելու համար.

—Նոքա կրկին հեծան ձիաները և շարունակեցին ճանապարհը դէպի Կ... ամրոցի աւերակները։ Արշալոյսը դեռ նոր սկսել էր չառագունել, երբ նոքա հասան ամրոցին։ Ասազակապետը գտաւ իւր ընկերներին բոլորովին պատրաստ։

Ալմաստը, տեսնելով Քէրիմ—բէկին, վազեց նորա առաջ։ Նա ուրախացաւ, երբ տեսաւ Մարջանին և Սայիդին։ Բայց թէ խափչիկը և թէ ևթովպացին երկուքն էլ, սկզբից չը կարողացան ճանաչել իւրեանց տիրուհին ծպտեալ հագուստով։ Խափչիկը տուեց Ալմաստին մի գեղեցիկ արծաթասպատ արկղիկ, ասելով՝—

—Ձեր աղախինը չը մոռացաւ իւր հետ բերել։

Ալմաստն ուրախութեամբ առեց արկղիկը։

—Այդ ինչ է, հարցրուց Քէրիմ—բէկը։

—Իմ բոլոր հարստութիւնը, իմ գոհարեղէնները։

Քէրիմ—բէկը, ծիծաղելով առեց արկղիկը, դրեց իւր խուրջինը։

—Մասլահաթի ժամանակ չէ, լսելի եղաւ աւազակապետի ձայնը, դնանք, լուսանում է։

Քէրիմ—բէկն իւր հետ բերած ձին տուեց Ալմաստին, երկու ձիաներ ևս որոշեցին Սայիդի և Մարջանի համար։ Նոքա ճանապարհ ընկան դէպի իւրեանց քնիկ հայրենիքը՝—դէպի Հայաստան!!

ՄԱՔԱ

Ստեփաննոս Պզոյանի
ՍԵՐԵՐԱԿԱՆՑ
Ա ս տ ա խ ա ձ

Ս Ա Ռ Ա

Ա·

Մանկական օրեր, մանկական հասակ,
Կեանքիս դուք պարնան ծաղկազարդ պսակ,
Ա՛խ, քանի՛ ուրախ և քանի՛ տրտում
Դուք յիշողութիւնք թողիք իմ սրտում։

Մանկական օրեր, օրեր թանգագին,
Երբ միտս է գալիս, կրկին և կրկին
Վառվռումն սրտիս մարած կայծերը,
Եւ բորբոքվումն իմ հին վէրքերը ...

Գանդուխտ եմ այժմ ես հեռու երկրում,
Հայրենեաց կարօտն սիրտս է տոչորում,
Աչքերէս ամեն լինչ լինճ խորթ են, օտար,
Չեն վինում նոքա հոգուս մըխիթար։

Ես չա՛տ տանջուեցայ ... յոգնեցայ խոպառ ...
Աչքս հաչտվումեմ բախտիս հետ թշուառ,
Դէպ քեզ, Պարսկաստան, հայրենիք անգին,
Տարաղիր որդիդ դառնումէ կըրկին։

Բայց արա ինձի քո գիրկն ու ծոցը,
Դու ես մանկական իմ օրօրոցը,
Քաղցր է պանդխտին իւր հայրենիքը,
Նորա խրճիթներն և ուռենիքը . . .

Բայց ինչ եմ տեսնում . . խոցվում է հոգիս . . .
Ահա պատկերը խեղճ հայրենիքիս՝
Իւր մեռելային դէմքով դունաթափ՝
Երևնում է ինձ, բերում է սարսափ . . .

Նորա հարստութիւնք՝—անթիւ են, անբաւ,
Իսկ վայելչութիւնք՝—պակաս են, սակաւ.
Նորա դաշտերի մէջ—անապատ, տխուր—
Ո՛րքան քրտինքներ թափվում են ի զուր . . .

Նորա խչխանները և խչխանազունք
Արիւնոտ թրով կ՚չափեն իրաւունք,
Ջոհում են իւրեանց կամքին, հաճոյքին
Արիւնոտ պտուղը աչխատող ձեռքին։

Իսկ խարդախ մօլլան—կրօնքի ջատագով—
Ջեղծում է չարեաթին [1]) ինքնահաճ կերպով,
Օրէնքն և կանոն մարդարէական
Են նորա չահուց զօրաւոր ատեան։

Եւ կոյր ամբոխը խաւար Պարսկին,
Թըմրած ղօրանի ստուերի տակին,
Ջէննաթի [2]) երազն է նորան հրապուրում,
Կեանքի պէտքերը նա չէ պըտրում։

Եւ հարեմական [3]) փակուած վանդակում,
Ո՛րքան գեղուհիք հալվում են, մաչվում,
Կոպիտ ամուսնի բռնակալ կամքը
Է նոցա սէրը և նոցա կեանքը։

Դեռ համարվում է հայրն պիղծ հպատակ,
Պարսիկն երեսին զարկում է ապտակ,
Գլուխը ծռած, հայը լուռ ու մունջ,
Իւր տունն է մըտնում, թաղցնելով տրտունջ։

Նա տեր չէ երբէք անբախտ իւր զլխին,
Տէր չէ կայքերի, իւր խեղճ երեխին,
Չէ կարող լինել իրաւանց պաշտպան,
Մունջին չէ տուած խօսելու մի բան . . .

Ջիղ տարիներով, երկար և երկար,
Կուրծքիս մէջումն եփուած անդադար,
Իւր լի սև մաղձով Թոյնը դառնագին
Թափում է սիրտս։ Ա՛խ, զղուանք կբկին . . .

Բայց ինչը ձրգեց ինձի վերստին
Դէպի այդ Սոդոմն մարդկային աղտին.
Մխիթ հայրենական օջախի միջում
Կուրծքըս աւելի ազատ է չընչում։

Ո՛չ։ Թող ես էլ տանջուեմ իմ ազգայնոց հետ։
Ամբոխը դեռ ևս խաւար է, տրդէտ,
Գուցէ կարենամ ես նորանց օգնել,
Նոցա աչերից արտասուք սրբել։

Բ.

Ահա հայրենի տընական իմ առջև,
Ուր վիճակուած էր ինձ տեսնել արև,
Ուր կ՝սովրեցնէին՝—լըռել, համբերել,
Առանց տրտունջի նախատինք կըրել . . .

Ահա ամրոցի հին աւերակը . . .
Մեր ախոռատունը . . խոտի մարագը . . .
Որոց պատերի պատռած ճեղքերում
Ես խեղճ ճնճղուկի ձագն էի պըտրում,

Եւ ծըծբուռը ողորմելի ծըտին
Բերկրանք էր բերում մանկական սրտին:
Հիմի էլ եմ սարսափում . . . ահա դպրոցը—
Փափուկ հասակիս ըսպանդանոցը,

Այդ դպրոցի մէջ դիւղի տէրացուն
Ուսուցանումէր ինձ «խոնարհեցոն,» [4])
Գիշերը քնելիս «Ընկեայէ» [5]) կարդալ,
Եւ վաղ առաւօտ միշտ ժամն երթալ:

Ահա այն ծառը . . . Թչուառ ուռենի,
Քեզ չեմ մոռացել, փըթած ծերուկի,
Դու տալիս էիր իմ վարժապետիս
Միշտ դալար ճիւղեր ինձի պատժելիս . . .

Ահա այն կտուրը, ուր իմ դայեակը
Միշտ ցոյց էր տալիս փայլուն լուսնեակը,
Եւ շատ հեքեաթներ՝ աստղերից, գևերից
Պատմումէր ինձի պատառը ոգևից:

Նա ասումէր ինձ, թէ այդ լուսնեակը
Էր իւր մայրիկի միակ զաւակը,
Նա երեխայ էր շատ չար, անհանգիստ,
Երբեմն իւր մօրը բարկացնումէր խիստ:

Մի օր մայրիկը հունցումէր խըմոր,
Տըղան գողացաւ տաշտքիրը [6]) իւր մօր,
Մայրը բարկացաւ, խմորոտ ձեռքով
Ջարկեց երեսին զայրացած կրկով:

Եւ ամեն անգամ տեսնելով լուսին,
Այն մութ դրոշմը նորա երեսին
Յիշեցնումէր ինձ ապտակը իւր մօր,
Որոյ հետքը դեռ մնումէ մինչ այսօր:

Նոյնպէս ժըպտելով վազումէ դետակը,
Նորա դոյնզդոյն, աւազուտ յատակը,
Կարծես զարդարած մանր ուլունքներով,
Փայլումէ դարձեալ նոյն հրապոյրներով:

Սիրելի դետակ, յիշումես և դուն,
Երբ ես, ամբողջ օր մոռցած հայց և տուն,
Քո ափերի մօտ ձուկն էի որսում,
Կամ նաչխուն ծըտի յետքերն էի վազում:

Իսկ երեկոյեան թրջուած, թաթախուած՝
Տուն էի դառնում՝ ես սաստիկ յոգնած,
Ա՛խ, մայրիկս ինձ որքան ծնծումէր,
Իւր չար երեխին նա անլծումէր . . .

Ահա և այդին . . . նոյն ընկուզենին . . .
Նոյն խնծորենին և ողկուզենին . . .
Ճանաչումեմ ձեզ, հին բարեկամներ,
Բայց դուք յիշումքէք վաղեմի հաչիւներ . . .

Երբ գիշերային լռութեան պահուն,
Ես,—այգեպանից դաղտնի և թագուն,
Յանկապատից դող կատուի նըման,—
Ներս էի սողում, որպէս մի թուրքման [7]։

Ահա, քարշ դալով, դըժիր [8]) Սահակը
Ժողովումէ խանի ձուն և վառեակը,
Դեռ կենդանի է այդ աւազակը,
Կրումէ իւր ձեռքին դեռ նոյն մահակը . . .

Ահա և չարչին, [9]) այդ անպիտանը
Էլ բան չը թողեց գիւղացոց տանը,
Ինձ էլ աւումէր՝ ձու դողնամ տատից,
Բիշմիշ և մաստաք [10]) դընեմ նորանից։

Դեռ յօրանջելիս գիւղի քահանան
Խաչակնքումէ [11])։ Ախորժ է նորան
Դերեզմանատան յաճախել ուղին,
Ուտել հոգեհաց, դրպանել փողին։

Դեռ թանձր քօղով գեղեցիկ աւուր
Ծածուկ է պահում իւր վարդ թըշերը,
Նա օտարի հետ բնաւ խօսք չէ փոխում,
Մի մարդ տեսնելիս՝ քաշվումէ, վախում։

Երբ որ կընիկը պանդուխտ ամուսնից
Նամակ է ստանում՝ օտար աշխարհից,
Նա ման է ածում մի գիւղից միւս գիւղ
Եւ չէ գըտանում ո՛չ մի ընթերցող։

Երբ որ մահամերձ գըրած է հիւանդ,
Կոչումէ գիւղացին սրտով ջերմեռանդ,
Կամ իւր Նարեկով տըղէտ տէրտէրին,
Կամ կախարդելու՝—խարդախ ջինջարին։ [12])

Դարձեալ քաղցր է ինձ հիւրասէր չէմքը
Եւ իմ աղգայնոց անխարդախ դէմքը,
Ա՛խ, այն դէմքի մէջ որքան պարզութիւն
Նկարեց փութով անմեղ բնութիւն։

Սիրելի են ինձ առարկայք բոլոր,
Որք յիշեցնումեն իմ կեանքը մոլոր,
Այն կեանքը դարտակ՝ անհոգ մանկութեան,
Վաղանց անցգուտ մէջ յիմարութեան . . .

Նոյն դրացիքը կան առողջութեամբ,
Ամեն ինչ մնացել՝—նոյն ամբողջութեամբ,
Ոչինչ չէ փոխուել . . . ։ Դեռ նոյն դարեւոր
Անշարժութեան մէջ ապրումեն բոլոր . . .

Թէ հսկայական խոր քնով ես քնէի
Եւ հարիւր տարուց յետոյ զարթնէի,
Իմ հայրենիքը նոյն իսկ աղայական
Դրութեան մէջը ես կը տեսնէի։

Բոլորը նոյն է, ինչպէս և առաջ,
Եւ մախմուր արտերն, և մարգերը կանաչ,
Միայն քո պատկերն ինձ չէ երևում,
Նաղելի Սառա, քոյրիկդ իմ հոգուն։

Դու, իմ մանկութեան քնքուշ բարեկամ,
Կար մի ժամանակ, երբ ես չատ անգամ
Անցուդարձումէի անքուն գիշերներ,
Ինձ բաշխումէիր քաղցրիկ երազներ . . .

Դու լսեցիր ինձնից խաղերը մանկական,
Բոլոր բերկրութիւնքն իմ դուարճութեան։
Հանգստութիւնը խաղաղ իմ հոգուն
Ես զոհ բերեցի քո անմեղ սիրոյն։

Թէ այգին էի գնում, թէ տանը նստում,
Թէ թափառումէի ես արձակ դաշտում,
Թէ գետի եղերքը տխուր, անկատակ
Ման էի գալիս, միշտ, իմ հրեշտակ,

Պարզ աղբիւրների հայելւոյ միջում
Քո սիրուն պատկերն էի ես տեսնում,
Եւ կարմիր վարդի ալ թերթիկները
Նըկարումէին քո վառ թշերը։

Եւ թռչունների ուրախ մեղեդիք
Լսեցնումէին քո ձայնիկը քաղցրիկ,
Շընչումէր գիւղիւռ, տերևի սօսափիւն
Հնչեցնումէր քո սիրելի անուն . . .

Ա՛խ, անցած օրեր, օրեր թանգագին,
Ի՞նչու էք խառնում իմ սիրտը կրկին,
Խիստ դառն է ինձի նորից միտ բերել,
Թէ որքան ես վաղ ընկայ սիրել . . .

Գ.

Բարեպաշտ ծնողաց աղջիկ էր Սառան,
Նորա քոյրերը վաղօրօք մեռան,
Նա ունէր իւր մայր, փոքրիկ մի եղբայր,
Եւ ժիր, գործունեայ, ծերունի իւր հայր։

Գոհ էին նոքա, թէ և առանց փող,
Բայց գետի ափին կըտորիկ մի հող
Մշակումէր մեծ ջանքով ծերունին,
Եւ կերակրումէր խաղաղ ընտանին։

Որպէս վայրենի՝ ճոխ, անփոյթ ծաղիկ
Աճումէր նոցա գեռահաս աղջիկ,
Նա չունէր կըրքեր, չը գիտէր հոգսեր,
Նորան ծանօթ չէր՝ ինչ է արդեօք սէր։

Արդէն տասն և վեց լրացաւ տարին,
Չը գիտէր աշխարհն նա «չարն ու բարին,»
Որպէս մի նաշխուն, ուրախ թիթեռնիկ
Իւր խաղերումն էր նա գոհ, երջանիկ։

Դեռ ևս սիրումէ «աղամայ մութը,»[13])
Ոչ ոք չէ բացել տան լուսամուտը,
Սառան արթուն է և արդէն հագնուած,
Թէև տանեցիք խոր քնով են քընած։

Նա ցօղումէ Ջրով գաւիթն ու բակը,
Մաքրում, սարքումէ իւրեանց ընակը,
Նա հունդ է ցրվում խաստուտիկ [14]) հաւերին
Եւ խառ է տալիս վորբիկ հարիւրին։

Վառուելց արշալոյս ճախառումէ երկինք,
Ոսկեզօծ գունով ներկուելցան լերինք,
Գեղազուարճ խանդով Թռչնում է ընութիւնս
Տիրից ընդհանուր կեանք, ուրախութիւն։

Ուրախ է Սառան։ Նա խիստ ըստապով
Առնումէ սափորն և Թեթև կերպով
Վազումէ դէպ՝ դուրս, գիմումէ աղբիւր,
Իւրեանց տան համար բերել սառը Ջուր։

Թրջումէ ոտքերը վաղորդեան ցօղը,
Փըսփսումէ հովից նորա գլխի քօղը,
Եւ սև հասանքով Թուխ Թուխ ծամերը
Ծըփումէն նորա Թիկունքի վերա։

Աչիտեղ աղբիւրի Ջրովը սառնորակ
Լուացվումէ նա։ Նորա սեորակ՝
Վառվումէն լոցով՝ լի կեանքով աչեր,
Վաղորդեան հովից չիկնումէն Թշեր։

Ծագեց արևը—ըսկսվումէ օր։
Դաշտում գործումէ գիւղացու աւօր։
Սերմերով բեռնած փոքրիկ սայլակը
Դէպ արան է վարում անխոնջ մըշակը։

Շընչումէ աղատ Սառայի կուրծքը։
«Ի՛նչ հրաչալի է Աստուծոյ գործքը . . .»
Նայումէ չուրջը՝—բոլորը ծաղկունք,
Անուշ ցնծութեամբ երգումեն Թռչունք։

Գոհարով ցօղած, կանաչ դաշտերը
Յրվումեն սրտից խորին վըշտերը,
Եւ տերևազարդ, Թաւուտ ծառերից
Ամէրժ է հնչում ձայնը զեփիւռից։

Նա գետ գմայլած, նայումէ չուրջը։
Հեռու կամարած՝ նկարվումէ կամուրջը,
Անտեղ խաղալով վազումէ գետակ,
Ժպտումեն նորա ալիքներ յստակ։

Պարկը չալակին գետ նոր գիւղացին
Տանումէ աղալու պարէնն իւր հացին.
Գոռումէ Ջաղաց, Թունդ ժայթքումէ Ջուր
Եւ բամբակի նման սպիտակ փրփուր։

Ուշացաւ Սառան։ Դառնումէ նա տուն
Ոտքով մանրաքայլ, ընթացքով հաստատուն։
Նա մաքուր գործն է անմեղ բնութեան,
Որպէս մարմնացած տիպ համեստութեան։

Գետ նոր է գարթել ծերունի հայրը,
Գոմն է աւելում նորա ժիր մայրը։
Ցոփնած խաղերից, անուշ երազում
Քնած է եղբայրը, գարթնիլ չէ ուզում։

Լուացվեց ծերունին դատեր բերած ջրով,
Ապեղարդ մօրուքը սանտրեց սանտրով,
Նա խաչակնքեց դէմքն երեք անգամ,
Առեց վերարկուն, գլխեց դէպի ժամ։

Արևը սովոր էր տան մէջ աղօթել,
Սկսեց նա յետոյ կովերը կթել,
Փրփրադէզ կաթնի անուշհոտ չոգին
Բերկրանք էր բերում տանտիկնոջ սրտին...

Բռնել էր Սառան հորթերը նորածին,
Որ չը խանգարեն նըրանք մօր գործին.
Ջար էին նոքա և խիստ անզգամ,
Ծըծումէին ամբողջ կաթը չատ անգամ։

Մէկին աւելի սիրումէր Սառան,
«Շուշանիկ» անուն դըրել էր նորան,
Ներկել էր հինայով[15]) խայտերը ճերմակ
Եւ պարանոցէն կախել էր զանգակ։

Դեռ նոր նախիրը քըշումէն գիւղից,
Խրխինջ, բըռբըռոց են առնէն տեղից,
Խառն բառաչմունք, աղաղակ, ճըչիւն
Կաղմումէն ուրախ ներդաշնակութիւն...

Կանաչին է տալիս ընդարձակ արօտ,
Դալար խոտերին անձկանօք կարօտ
Վազումէն հօտեր, տալով ճոխ տրտինգ,[16])
Առաջնորդումէ նրանց հովուի սըրինգ։

Սառան տաւարը հասցրուց նախիրին,
Հանեց-թողնելից[17]) վառուցքը մոխիրին,
Լեցրուց կթոցում, տարաւ դուրս ածել,
Ծուլութեան վերա նա չէր մըտածել...

Բարձրացաւ արև դէպի հորիզօն։
Փափուկ ջերմութեամբ օդը հովասուն
Ծավալվումէր խիստ ախորժ հոսանքով,
Ոգի էր սիրում անեղծ կեանքով։

Հանգիստ չէ Սառան։ Շարժուն, անդադար
Գըտտվումէ նա։ «Աղջի, այս բեր, այն տար»
Պատուէրներ էր որ տալիս էր մայրը։
Ջրոյը չէր օգնում իւր ծոյլ եղբայրը։

Նա թոռնիրի համար բերեց վառելիք։
Պատրաստ է ճաշն, այլև ընթրիք։[18])
Սառային մի գործ դեռ ևս մընաց,
Արտը հօր համար պէտք է տանի հաց։

Նա գնումէ արտը։ Հայրը գործումէ,
Ճակատի խորշոմից քրտինքը վազումէ։
Ուռենու չուքի տակումը Սառան
Ցողնած հօր համար կազմումէ սեղան։

Կէս օր է արդէն։ Տօթը այրումէ։
Թառամած տերևը հազիւ չարժվումէ։
Փոյթ չէ Սառային, երբ կը ճաշէր հայրը։
Նա անցաւ ծըտի պէս մինչ արտի ծայրը։

Անտեղ պարզ, փոքրիկ հոսումներ դեռահաս,
Նորա ափերից չատ տեսակ—տեսակ
Բաղումէ ծաղկունք, հիւսումէ նա փունջ,
Թաղցնումէ ծոցում, կրկին լուռ ու մունջ

Դառնումէ տեղը՝ վերջացած է ճաշ։
Հայրն, աչխատանքից եղած հալումաշ,
Հանդչիլ է ուզում քանի մի րոպէ։
«Մի պնակ էս ճամպով, Թուրք կը հանդիպէ,»

Ասումէ աղջկան։ Հեռացաւ Սառան։
Բայց Թուրքի երկիւղն ինչ փոյթ էր նորան։
Նա անց է կենում մի այգու մօտից
Եւ կատուի նման Թռչումէ պատից։

Նա ճանկրտելով, որպէս ժիր կապիկ,
Մի ծառից միւս ծառ բարձրացաւ ճարպիկ.
Չէր քաղում մրգերն և չէր դողանում,
Չուարճութեան համար այդպէս էր անում . . .

Լսելի եղաւ ձայն՝ «Բռնուեցաւ գողը . . . »
Ծանօթ են նորան ձայնն ու եկողը։
Սառան նայումէ ծառից ներքև,
Իջնումէ խնդոյն՝ նոյնպէս վարժ, թեթև։

Պատանի էր դա այգետիրոջ որդին,
Խիստ մօտ առարկան—Սառայի սրտին։
Ի՞նչ էր որ աղջկան նորա կողմը քաշեց,
Անմեղ սրտիկը հալեց ու մաշեց . . . ։

Սառան չը դիտէր։ Գիտէր նա մի բան՝
Պատանու սէրը ախորժ էր նորան։
Չիցէ այն մաքուր սրտումը հանդարտիկ
Սկսուել էր սիրոյ մրրիկը սաստիկ . . .

«Ո՞ւր էիր Սառա,» հարցրուց պատանին,
Որպէս հին ծանօթի, նորա ընտանին։
—«Ես հօրս համար հաց էի տարել։»
«Բայց դու ինձ համար ոչինչ չես բերել։»

—«Տես, ինչ եմ բերել,» ասաց ժըպտելով,
Իւր քաղած փունջը պատանուն տալով։
«Ինչ լաւ աղջիկ ես, դու բարի Սառա,
Ես էլ քեզ համար մի մատնիք առայ։»

Փոխումներն նորա անդիտակցաբար
Սիրոյ զրաւականն։ Իսկ սէրն էր արդար,
Չի Աստուած նրանք համրուրեցին,
Քոյր—եղբայր լինել միմեանց ախտացին [19])

«Մեր խնծորները սիրուն, կարմիրիկ
Հասել են այժմ, դնանք, իմ քոյրիկ,
Դու խօ սիրումես, քաղեմ քեզ համար,
Նորա խիստ առատ բերք ունեն այս ամառ։

Նորա գընացին։—«Ես ախար պատ եմ, [20])
Ասումէ Սառան,—«պիտի ստանամ
Աներկի Համբարձում, մինչ դայ Վարդավառ,
Քաղէ, կը տանեմ եղբօրս համար։

Նոքա մերձեցան խընձորի ծառին,
Որոյ պտուղները գրաւեց Սառայն,
—«Այդ խնձորները, ախ, դու ես նախչել,
Ով գիտէ, ինչին միտք ունես բաշխել . . . : »

Պատանին քաղեց ալ—վարդակարմիր,
Կլորիկ մի խնձոր, «թէ դիտնայիր դու,
Այդ խնձորի վերա, սիրելի Սառա,
Դու քո անունը պիտի կարդայիր : . . : » [21])

Դ.

Թեքուեց արեը: Երեկոյ է արդէն:
Ծերունի հայրը դարձել է արտէն:
Սառան ազատ է տնային գործերից,
Նորան կանչումեն մօտիկ կըտուրից:

Ամեհեղ երկնքի պարզ կամարի տակ
Դեռհաս աղջիկներ խաղումեն գնդակ:
Սառան վազումէ ըշտապով նոցա մօտ,
Նա այդ խաղի մէջ վարժ է և հմուտ:

Առնումէ գնդակը, զարկումէ գետին,
Թռչումէ գնդակը, բռնումէ կրկին,
Եւ ամեն անգամ պտոյտ է գալիս,
Կրկին և կրկին գետնին է տալիս:

Պտոյտ է գալիս, որպէս ճախարակ,
Թեթև չարժմունքով, համարձակ, արագ.
Փըսփսումեն գլխի երկայն հիւսերը,
Շեժումեն կլորիկ, լեցուն ուսերը:

Քանի րոպէում մինչ քըսան չրջան
Բոլորումէ նա: Մինչ այդ աստիճան
Անվատահելի ուժը բընութիւն
Տուեց դիւզացի աղջկան տոկուն:

Շարունակումէ խաղը վոյթ ընդ վոյթ,
Ինչի չէ զգում նա գլխի պըտոյտ . . .
Յոգնեցաւ ահա . . . գնդակը թըռաւ . . .
Նորա ձեռքիցը այլ աղջիկ առաւ:

Ծըպտումէ Սառան . . . կարմրած են թըշեր,
Ալմաստի նման վառվռումեն թուխ աչեր . . .
Սև գանգուրներով նորա գուլփերը [22])
Ցրուած են չիկնած երեսի վերա:

Սառան ունէր իւր և տխրութիւնքը,
Վազումէր աչքից առատ արցունքը:
Սնուցանումէր նա սարեակի մի ձագ,
Ընդել էր նորան Թռչնիկը համարձակ:

Ձըվըլումէր միշտ, լուռ չէր սարեակը,
Սառան զարդարուց նորա վանդակը,
Միշտ իւր ձեռքովը կուտ, ջուր էր տալիս,
Կանչումէր հեռուից, իւր մօտն էր գալիս:

Մի օր գտաւ Թռչնին վհատացած և լուռ:
Դառն էր Սառայի սոսկում և սարսուռ:
Առաջին անգամ երևցաւ նորան
Սառն, անմռունչ կերպարանք մահուան . . .

Նա իբեանց բակի ընկուզենու տակին
Փորեց գերեզման նորա դիակին,
Մարմինը դրեց տուփի մէջ փոքրիկ,
Շիրիմը ծածկեց քարով մի ծանրիկ։

Լինումէր չատ գամ ամբողջ ժամերով
Նստումէր Սառան գերեզմանի քով,
Ողբ էր յօրինել, մի ողբ խիստ տրխուր,
Երգումէր նորա կտուցը, սև փետուր։

Նա քարի վերա խունկը ծըխումէր,
«Ի՞նչու տէրտէրը,» մօրից հարցնումէր,
«Ջէ օրհնում չիրիմը և իմ սարեակին,
Էդպէս խօ դժոխքը կերթայ նրա հոգին . . .

«Ի՛նչ լաւ էր, մայրիկ, ախ, իմ սարեակը,
Ցիշումեմ նորա դու ուրախ երգը.
Մատս չէր կծում, նա ինձ սիրումէր,
Խօսք էլ ասում, նա հասկանումէր . . . . »

Իւր դնդախաղը վերջացրուց Սառան։
Տանը գործներ են ըսպասում նորան։
Մինա խրճիթներում փայլումէ կըրակ,
Եւ իբեանց տնակում պիտի վառել ճրագ։

Նա լոյս է գընում կըտուրի վերա,
Սիրումէ օթոց, քնելու չորերը,
Այնտեղ գիւղացուն պարզ երկնի կամար
Հովանաւորումէ մի ամբողջ ամառ։

Հաւաքուեց ահա խաղաղ ընտանիք,
Պատրաստ է նոցա արդէն պարզ ընթրիք։
Սառան ջուր է ածում ձեռքերին ծնողաց,
Լուացվումեն նոքա, վայելումեն հաց։

Գիշեր է խորին։ Տիրումէ լռութիւն։
Մութ ծածկոցի տակ նիրհումէ ընութիւն։
Դեռ յողնած մշակի երգերը դաշտէն
Թափումեն նորա վըշտերը սրտէն . . . ։

Ուրախ է միայն երկինքն աստղազարդ։
Նորը ամպերու մէջ, որպէս հին կախարդ,
Լուռ—խորհրդական սահումէ լուսին.
Ի՞նչու է աղօտ փայլը նորա լուսին . . .

Նստած են նոքա կըտուրի վերա,
Սառան գրկել է իւր մօր ծնկերը,
Եւ լի ջերմ սիրով նորա երեսին
Նայումեն աչերը մատղաշաս կուսին։

Բայց ինչու է լուռ։—Նա մտածումէ . . .
Մանկական ուղեղը նորա գործումէ։
Նորան չատ անգամ էին հետաքրքիր
Իւր չրջապատող երկինքն ու երկիր։

«Տես, ահա մայրիկ, այն աստղը վաղեց,
Ցետքիցը պայծառ մի չաւիղ թողեց.
Բայց ո՛ւր թըռաւ նա . . . երկնքից ընկաւ,
Ա՛խ, վառ ճրագի պէս նա մարեց, հանգաւ . . . ։

—«Որդի, դա աստղ է բարեպաշտ մարդին,
Որ բնաւ չէ կոտրել սիրտը աղքատին.
Նա մեռաւ ահա, իւր յետքից Թողեց
Նշանը գործերին, ինչ բարիք գործեց։

«Ցե՛ս այնտեղ, մայրիկ, սարի գագաթին
Ի՛նչպէս դիզուել են ամպերը մէջքին,
Փայլումէ, նայիր, ահա վիշապը,
Ո՛րպէս չողումէ այնտեղ կայծակը . . . ։

—«Որդի, Աստուծոյ քաջ հրեշտակը
Թափումէ այնտեղ բոցն ու կրակը,
Հրեղէն իւր սրով նա կռիւ է տալիս,
Սատանայներին կըռնի կոտորելիս։

«Ցե՛ս ահա, մայրիկ, սարի գագաթում
Ի՛նչպէս սաստիկ է ամպը որոտում.
Չը լինի այնտեղ երկինքը փուլ եկաւ,
Թէ մրրիկի միջից մի վիշապ ընկաւ։ [23])

—«Չէ, որդի, այնտեղ սատանայները
Ահն չար Յուդայի կապած են ոտները,
Արճիճ են հալում նորա ականջում,
Ինպէս գոռումէ, տանջումն են . . տանջում . . . ։

«Ցե՛ս ահա, մայրիկ, երկնքի վերա
Պայծառ չափուղի Թողած հետքերը,
Աստուն, մի մարդ յարդ է գողացել,
Մինչև տուն տանել չէ կարողացել։ [24])

—«Չէ, Մի օր Աստուծոյ բարկութիւնն ահեղ
Պատուեց երկինքը, եղաւ Ջրհեղեղ.
Աստուածաձինը կրկին նորան կարեց,
Երկնքից հեղեղն իսկոյն դադարեց։

«Երբ բաց եմ անում հագուստիս կապոցը,
Փակուած եմ գտնում նորա հանգոյցը.
Այդ ոմ է, մայրիկ, նրանց այդպէս բացում,
Շորերիս վերա ըրծեր է քըցում։

—«Երևի, որդի, չար դևիկները
Այդպէս խառնուսմեն քո նոր շորերը,
Կապոցի վերա դու աստղ ցըցէ,
Որ դևն այլ ևս նորան չը բացէ։ [25])

«Մայրիկ, դևերից ես իմ չեմ վախում,
Մի օր կը Թագչեմ գիշերն օթախում,
Երբ դալուս լինի, իսկոյն կը ըրռնեմ,
Ջիպ կը տամ ծամիցը, վըրէժս կառնեմ . . .

—«Որդի, խելօք կաց, այդպէս մի արա,
Գիտես, ինչ վատ են այդ չար դևերը,
Նոքա կարող են քեզի վընասել,
Նրանցից ամեն բան կարելի է սպասել . . . ։

«Հոդը նրանց գլխին . . . Թէև եղջիւր ունեն,
Խաչակնքուսմեմ, իսկոյն կորչումեն . . .
Ի՛նչ լաւ կը լինի, եԹէ ես, մայրիկ,
Բռնեմ նոցանից մի դև փոքրիկ։

Մայրը ծիծաղեց—«Կրծողը քեզ տանի,
Դու երբ ես տեսել, որ դևն եղջիւր ունի։
«Եկեղեցումը տեսայ պատկերը,
Սև, որպէս արաբ, ծուռն էին ոտքերը,

«Չա՛, եղջիւր ունէր, ճակատից դուրս ցցուած,
Աչքերում կարծես կրակ էր վառուած.
Ես չեմ վախենում, կը բռնեմ նորան,
Ինձ վախեցնում է միայն չար Ղարան։ [26])

«Երբ կուրծքիս վերա նա ծանր նստում է,
Ա՛խ, հոգի է տալիս . . . այնպէս ճնշում է . . .
Ուզում եմ բռնել՝—ձեռքս չէ չարժում,
Ուզում եմ կանչել՝—լեզուս է լռում . . .

«Ինձ վախեցնում է և Ղուկլուբանին [27])
Մայրիկ, հաւատա դու իմ այդ բանին՝
Մի գիշեր տեսայ, երկար էր . . . երկար . . .
Երբ մօտ գընացի,—չքացաւ, էլ չը կար . . .

«Հայրիկ, խոստացար դու այդ չարքերը
Մի օր ինձ պատմել նորա հեքեաթը,»
Դէպի ծերունին դառնում է Սառան,
Հետաքրքրում էր այդ հարցը նորան։

Հայրը պատասխանեց՝—Հերիք է, Սառա,
Դու շատ խօսեցիր չարքերի վերա.
Գիշերը գևերից չեն խօսում այդքան,
Աղօթիր, դու քնի, երևիդ խաչ հանե։

Ծընողքը չուտով մոռանում են խոր քուն,
Քաղցրիկ մխիթարն աչխատող մարդուն։
Սառան արթուն է, աչքերը դուարթ
Դէպի աստղերը յառած են անթարթ.

Հանդիստ չէ սիրտը։ Նա մըտածում է,
Ի՞նչը խեղճ աղջկան ալեկոծում է . . . .
Նա թագցրած ունի բարձի տակումը
Խնձորն, որ ստացաւ այնօր այգումը։

Դուրս թերից նորան՝ Ո՛րքան ուրախ է։
Մինչև իւր մահը նորան կը պահէ . . .
Մերթ ծոյլն է դընում—կուրծքին է ճընշում,
Իսկ մերթ շրմունքին—և հոտ է փչում.

Երկար նա այնպէս դեալում, մըտածում,
Ահա նա տրխրեց, Ի՞նչու արտում է։—
Ինքն էլ չը գիտէ։ Մի գաղտնի պատում
Տանջում է նորան և սիրտն է խոցում . . .

Լուռ մրմնջում է . . . Ա՛խ, նա լացում է։
Գունաթափ թշերն առատ թացում է,
Առաջին սիրոյ տաք արտասուքը
Ա՛յն խաղաղ կուրծքը ալեկոծում է . . . .

Ե։

Ա՛յն գիւղերը դուրս կար հին ժամատուն,
Գարերի ընթացքն այնտեղ հաստատուն
Ոչինչ չը թողել։ Ջարդ—փշուր եկած
Նորա կամարները, պըճրելի և սեպտ։

Մի բան կենդանի տևեց մշտական,
Այդ էր ջերմ հաւատը գիւղացի մարդկան,
Որոց սըրտերին մընացին պաշտելի
Տխուր փշրանքը վաղեմի սրբութեան։

Այդ ժամտան մասին պառաւ կընանիք
Պատմուանն խիստ չատ ըրոյց և հրաշալիք,
Թէ որպէս մի թուրք այնտեղից մի քար
Տարաւ իւր տանը չինուածքի համար,

Բայց չը կարողացաւ բեռը դնել գետին,
Կըպած էր քարը պինդ նորա մէջքին.
Նա այնպէս մընաց միշտ թափառական,
Կրումէր քամակին դողութեան առարկան։

Եւ այնուհետև այդ նուիրական
Սրբարանից մի աղիւս անգամ՝
Յանդուգն իւր ձեռքով չէր երբէք տարած
Թուրքը, Պարսիկը, կամ այլ արարած։

Շրջապատած էր այգիով ընդարձակ,
Ծղնումեն ծառերը բարձր, համարձակ,
Ոչ ոք չէ քաղում նոցա պտուղը,
Հոկումէ այնտեղ «Սուրբի» երկիւղը։

Այնտեղ ծերունի, դարևոր կաղնիք
Աւերակներին սփռումեն հովանիք,
Որոց ճիւղաթափ ոտերի տակին
Հիւանց արադին քոյնը ահագին։

Իւր այդ ամրոցէն սպիտակ Սուլթան[28])
Իշխումէ ամբողջ խաղաղ պետութեան,
Ուր ճնճղուկ, սարեակ լռում չեն երգերից,
Ապրումեն անհոգ, աղատ հարկերից։

Վաղուց չէր լսվում այնտեղ չարական,
Միայն չաբաթ գիշերն այդ նուիրական
Փլատակների տըխուր աւերակ
Լուսաւորումեն քանի մի ճրագ։

Գիշեր է խորին։ Գետ լուռ է աքաղաղ։
Վնաս են գիւղացիք—հանգիստ և խաղաղ։
Իւր պարզ—կապուտակ կամարից լուսնեակ
Թափումէ լոյսը կաթնագոյն, յըստակ։

Խուլ մըրմնջումէ չնչասպառ հովիկ,
Հազիւ չարժվումէ նիրհած տերևիկ,
Կարծես, ծանր քնով մրափումեն ծառեր,
Նոցա խորքիցը՝—անա մի սառեր . . .

Դանդաղ քայլերով, սակաւ առ սակաւ,
Մինչ աւերակները նա յառաջ եկաւ.
Խաչ—քարի վերա ծըխեց նա խունկը,
Յոնաարհեցրուց նորա առջև իւր ծունկը։

Երկար ջերմեռանդ գլուխը ծըռած
Աղօթումէր նա, և դեմնաառարած,
Հպեցնումէր երեսը սուրբ փուչներին,
Թափումէր աղերսը բոցավառ սրտին . . .

Նա անցաւ այդու խոտերը կանաչ,
Դառաւ մի ածուի մէջ նոր բայուած կակաչ,
Ջախեց պիծիելով նորա ծըղօտը,
Նըչան դրեց վերան կարմիր նարօտը։ [29])

Այդ կիւսը. հմայքով իւր բախտն էր փուրձում,
Ջի միւս առաւօտ ուն է՝—Համբարձում։
Իսկ նորան մի ձայն խռովեց սաստիկ,
«Սառա» անունը հնչեց խիստ մօտիկ։

«Նա» էր, որ եկաւ։—«Գիտէի, այս գիշեր
Դու պիտի գայիր ծաղիկներ չափել.
Դաշտերը լիքն են պիւղի աղջիկներով,
Ի՛նչպէս հակումն նոյ անց տըղերքը . . . ։

«Եւ դու վախեցար Թողնել ինձ մինակ,»
Հարցնում է Սառան։—«Այդ մութ ժամանակ . . .
Այդ վտառակներում . . . քար է քո սիրտը . . .
Յերեկը սարսափով անցնում էր մարդը։

Չ.

Ծագեց առաւօտ։ Ցօնն էր Համբարձման,
Յանկալի ուրը պիւղայի աղջկան։
Բնութիւնն էլ այնօր, կարծես, նպաստում էր
Նոցա ուրախալի, անհոգ զուարճութեան։

Յիշում եմ այն ուրն . . . ։ Հին ժամանակ այդում
Դեռահաս աղջիկներն երդ էին երգում,
Պար էին բռնել, հնչում էր դայիրան։
Ի՛նչ հիանալի էր այն տեսարան . . . ։

Ուր խորհրդական այն ծառերի տակ,—
Նայնան գուներով, կարմիր, սպիտակ,
Ջուքված, զարդարուած, որպէս ծաղիկներ—
Թըռվռում էին սիրուն աղջիկներ։

Եւ պատանեկաց խումբը զուարճասէր
Աղջկանց պարերգը այնտեղ կը լսէր,
Ծառերի տակին, նոցա չորս կողմով
Ծափ էին տալիս ուրախ ցնծումով։

Նա էլ խառն էի այդ ուրախ խումբին,
Քաղցր էր ինձ նայել աղջկանց ակումբին,
Ուր ամէն տըղայ—հերոսը պիւղական—
Գըտնում էր սրտի խիստ մօտ առարկան . . .

Տեսայ Սառային, առեց դայիրան,
Ա՛խ, որքան աչեր նայումեն վերան . . .
Դայիրան հընչեց . . . մրրիկի նըման
Նա չրխան տուեց . . . պոյան էր աննման . . .

Նա պար էր գալիս։ Հասակը թեքուն
Էր խիստ դիւրաճիպ, թեթև, գալարուն։
Տատանվումէր նա, մերթ նազ—նազելով,
Մերթ թռթռալով, մեղմիկ վազելով։

Ահա նա սլացաւ արնթաց, որպէս նետ,
Ա՛խ, որքան սրտեր տարաւ նա իւր հետ . . .
Գլուխը ծըռեց . . . զուլֆերը խաղումեն . . .
Եւ սև հոսանքով դէմքը պօղումեն։

Նա ոլորվումէր օձի պէս ճապուկ,
Խաղումն նորա թևքերը փափուկ,
Ժըպտումն նորա աչքերը բոցավառ,
Շիկնումն նորա թըշերը պայծառ . . . .

Ջրգեց մի հայեացք . . . դադարեց պարէն,
Ի՞նչ նեռեր էին, ցայտեց աչերէն:
Ա՛խ, այն նեռերը Թըռան ուղղակի,
Ինչ որ ծակեցին՝—դա էր մի «հոգի՛» . . . :

Դադարեց պարը: Լռեցին երգ, դաշնակ:
Կազմեցին գեղուհիք բոլոր շրջանակ,
Մէջտեղում նըստեց մի վըհուկ աղջիկ,
Խաղաղ էր դէմքը, չրթունքը ճնշկիկ:

Հին—բախտահմայ կախարդի նըման
Նա դրեց իւր առջև «վիճակի աման,»
Վառ ծաղիկներով էր նա զարդարած,
Եօթն աղբիւրների պարզ ջրով լեցրած:

Օրիորդները հերթով մօտ եկան,
Տուեցին նոքա վըհուկ աղջկան
Իւրեանց զարդերից՝ օղ, մանեակ և գինդ,
Որն իւր մատանին, որ ունէր յակինթ:

Եւ վիճակափորձն առնումէր մին մին
Ջրցումէր «բախտի սափորի» միջին,
Ուսկից գեղուհիք սրտով դողդոջուն
Մութ ճակատագրի կ'սպասէն լուծում:

Մօտ եկաւ Սառան դէմքով ամօթխած
Այն իսկ մատանին այգումը ստացած . . .
Տուեց կարմրելով գուշակող կոյսին:
Է՞ր յանկարծ փոխուեց գոյնը երեսին . . . :

Ջարդերը ժողվելու վերջացաւ ձէնը:
Վիճակհանումեան սկսուեց հանդէսը:
Վըհուկը փակեց «սափորի» բերան
Եւ աղջիկներին տուեց պատուիրան՝

Հերթով երգելու մի մի «Ջան—գիւլում,»
Անպէս, որ միմեանց չը լինին արգելում,
Երբ նա «սափորից» կը հանի մի բան,
Կը տայ երգողին մի յայտնի նըշան:

Տարաւ դէպ «սափորը» վըհուկն իւր ձեռքը:
Աղջիկներից մինն երգեց այդ երգը՝—

«Ծաղիկ ունեմ՝ ալայ [30]) ա,
«Ալայ չի ալվալայ [31]) ա,
«Եար [32]) բռնելը լաւ կըլնի,
«Բայց Թողալն բալա [33]) ա:»

Մի օրիորդի թիակեայ, սևուկ
Տուեց ապարջանն, ասելով վըհուկ՝
«Սիրիր, Թող մի տուր սրտիդ առարկան,
«Կը վնաս յետոյ դու շատ փօշիման:»

Վըհուկն դարձեալ գործը չարունակեց:
Մի ուրիշ աղջիկ այդ երգը երգեց՝—

«Աղջիկ, աղջիկ, ալ [34]) աղջիկ,
«Աչքերդ չալչալ [35]) աղջիկ,
«Դու մեր տանը հարս պըտիս,
«Իմ քիրը քեզ տալ, [36]) աղջիկ։»
Դարձաւ դէպ հնացած աղջիկ մի հասակիկ,
Որն խիստ անհամբեր տանջվումէր սասակիկ՝
Ասաց՝—«Գնա, ուրախ կաց, հասար մուրազիդ, [37])
Պսակի նարօտը [38]) կը կապես բօղազիդ։ [39])

Մի օրիորդի գունաթափ դէմքով
Այդպէս գուշակեց «վիճակն» իւր երգով—
«Ձեր բաղի դուռն բաց ա,
«Ոտներդ չաղով թաց ա,
«Եարիդդ հեռացել ես,
«Աչքերդ լիքը լաց ա։»
«Դու սիրիր դարձեալ սիրածդ նախկին,
Կը քաղցրացնէ նա քո սիրտը և հոգին.»
Կարդաց վըհուկը գունաթափ աղջկան։
Պատրամը, կարծեմ, չէր նրան դիւրեկան։

Վ.ըհուկը կրկին գործը չարունակեց,
Մի օրիորդի այդպէս գուշակեց՝—
«Առակ [40]) եղայ ողջ գեղի,
«Սիրտս ընկաւ օձի լեղի,
«Իմ հօրն ու մօրն ինչ ասեմ,
«Ինձ տուին մի գէշ [41]) որդի։»
«Նասիրդ [42]) հեռու է, կտրած է քո սիրտը,
Գնա, պատ պահիր, կը բացուի քո բախտը։»

Դառն ճակատագիրը կարդաց վըհուկը
Բայց սրբան պատ էր պահել աղջիկը . . . [43])

Բայց ինչ գուշակեց Սառայի համար։—
Այդ երկն երգելին նորա սրտին յարմար՝
«Խնծոր ունեմ նըբեչած ա,
«Ոսկէ գաւմով [44]) զըրած ա,
«Աղբէրս ուզեց, տուի չէ,
«Աղիզ [45]) եարի զըրկած ա։»

«Ես աղջիկ եմ՝ ալ կուգամ,
«Շորերս ծալեծալ կուգամ,
«Երբ որ եարիս տուն կերթամ,
«Գօտիկս թիրմայ [46]) չալ կուգամ։»

—«Դու հարուստ մի տան հարսիկ կը դառնաս,
Միշտ կարմիր չորերդ նոր—նոր կունենաս.»
Այդպէս գուշակեց մարգարէուհին,
Սրտիօք նա հասաւ սրտի «մուրազին» . . .։

Է.

Բայց ուր ես այժմ, նազլի Սառա,
Ես քո դարդիցը մաշուեցայ . . մնացի . . .
Մէյմէ երկինքն այնքան էր անդամի . . .
Ա՛խ, ինչ եմ մտածում . . . Այդ բոլորն է սուտ՝

Գնամ «պատաւել» մօտ, ուրտանէն է դուր,
Գուցէ նա կը տայ Սառայից ինձ լուր։
Ահա նա . . . խնդիրը հնացել է խոպառ,
Սպասելին նորան օրերը Մըշուառ . . .

—Բարև, տատի ջան,—չէ ճանաչում նա,—
Լա՜ւ է ք, առողջ է ք։—«Ցնծումէք ահա,
Աղբումներք այսպէս . . . միրի կուշտ, միրի քաղցած,
Ինչպէս որ բուդին [47]) հասցնում Աստուած։

—Բան վնաս է պընում, տատի, ապրուստը։
—«Աղբումին, որդի, չէնն ու հարուստը,
Մեզ ծնողներէն օրը միշտ սև է,
Բանի ժամանակն այսպէս կը տևէ։

Վերջապէս եղան մեծ մասով ապրատ,
Մեր մեղքից չը կայ խէյր ու բարեբախտ, [48])
Վարումնս, ցանում, ցանքը չէ պակաս
Ցաւերն էլ այժմ պատչ չեն տալիս,

Ասում ենք անիծած իրիմար,
Չեն էլ մտածում Աստծոյ բերել ջար. [49])
Ասումին, մերենք պետք գայ տատիկ,
Բազարում ցորեան չես գտնի մի հատիկ։

Չար ցորենագէրն երկինքը կապել է, [50])
Ա՛խ, քանի անգամ ամպերն ասպել է,
Չէ պակաս անձրև,—ասա մի կամիկ
Գարնանի համար երբէք չես գտնիկ։

Մեր հնտնիքը չատ մեզ ածին նուրին, [51])
Եւ ակռաներն անդատան արին,
Խաչով, խաչվառով գաչար պընացին,
Թէ մեծ, իէ փոքրն ոպրացին, լացին,

Ոչ՝ Չը կարացին բացել երկինքը՝
Գոյչ այդպէս էր Աստուծոյ կամքը . . .
Մեր ապրիլները ազջ ցամաքեցան,
Կանաչ ցանքերը ամէնքս չորացան . . .

Ինչ էլ որ եկաւ, գոգացաւ իւրքը՝
Չեն էլ հարցնում, ինչ ծանր է տարքը՝—
Մալեամի, բանիրաց, ապ և պլեահարկի, [52])
Ինչեր չեն առնում . . . գրով ու անկարգ . . .

Մեր մեղքերից է այդ պատահած,
Չը կայ կիրակի, ուտումեն պատ.
Ի՞նչ է, ասումեն, «հասն ու չը հասր,»
Աղջականի հետ պռակիում մեծ մասր։

Մի տարուայ հարաբ՝ գետ գոյն երեսին՝,
Իր ապտակրդի հետ՝ կիսրաջ ապատին
Խոտուկ արձակ, ծիծաղում համարձակ,
Չեն հարցնում տարին, անելն, անելձագ . . .

Գնացել է, մի խօսքով, ամօթն ու աչը,
Կարծես, քանդուելու մտա է աչխարհը . . .
Այդպէս չէր վարուց մեր ժամանակը,
Մեր լեզուն մանջ էր, սպանիր—ձայն չը կայ . . .

Թախտ էի պրտած յանուն Աստծու՝
Ան հատ տակին ամբողջ քսան ձու,
Ազջ ասեր եղան, հինգը գոբս եկաւ,
Երկուսն էլ հնդից փոշտօրան [53]) տարաւ

Այժմ ինչ անեմ ես երեք ճրաով,
Մնայի աներես և միշտ ամօթով . . .
Խանեն պէտք է տալ և ամնուատէրին,
Հաշուէր այդ բոլորը, Թողնալ ափսէրին։

—Կար այստեղ աղջիկ ձեզ մօտ հարևան,
Եօթ տարի առաջ, յիշումէք նորան։
—«Սառայի մասին դուք հարցնումէք։
—Հէնց նա . . . տատի Ջան, նրանից լաւ ունէք։

—«Նորա պատմութիւնն երկար է, երկար . . .
Այստեղ, մեր գիւղում մի լաւ արդար կար—
Մելիքի որդին—չէն, որպէս Ջրհուղ,
Ասումէր փըլաս, հարևումէր մահուղ։

Խելքիցը հանել այն խեղճ աղջկան,
Ջահիլ էր աղջիկը, չէր հասկանում բան.
Թէ նոցա մէջը ինչ մի գաղանիք կար,
Այդ ևս չը գիտեր, Ատում է խորար։

Գալիս էր շատ գամ նա իմ խրճիթը,
Տալիս էր բարև, հարցնումէր քէֆը.
Կարծես, չը մնէր մելիքի որդայ,
Այլ դուհկի մեղ պէս, և ոչ մէկ ազայ։

Տեսար և Սառան նորա հանն առաւ,
Լոյս ընկաւ խօսքին «Այժմ դու, պառաւ,
Մեզ ինչ միայնակ,» ասումէր որդան
Թող, մտածումէի, «Ի բնանց ազուն ազան . . . »

Նստումէն նորա, խօսումէն նորա,
Խօսումէն . . . խօսում . . . բնաւ վերջ չը կայ,
Չէի արդիւմ ես նորանց երէկ,
Ո՞վ չի ունեցել այնպիսի բոպէ . . . ։

Մըտնումէր արև. ճրագը վառումէն,
Ծնողքը Սառայի երկար պըտրումէն։
Նրանք չէն բաժանվում, զըրից են տալիս,
Ուսկից էր այնքան խօսք և ասուլիս . . .

Եղաւ որ, մելիքն ուղարկեց որդին
Հետս մի աչխարհ՝ մեծ ծոլի մօտին,
Ուղարկեց, որ տրվի՝ գիր, կարդալ, ուսում,
Որ լաւ մարդ դառնայ,—այդպէս են ասում։

Թէև այստեղ էլ նա չատ բան գիտէր՝—
Ժամագիրքը, Նարեկ՝—որքան մի ափսէր,
Եւ քանի մի լեզուով նա գիր էր գըրում,
Չը կար իւր հատը մեր աղջ երկրում։

Տարիներ անցան, նա յետ չը դարձաւ,
Սառայի որոնն խիստ դառն էր այդ ցաւ։
Երևի, այնտեղ մեծ էին գըրկեր,
Որ երկար նորանց ամրոել պէտք էր։

Տխրումէր Սառան, էր միշտ լուռ ու մունջ,
Լացումէր թաղուն,—դառն էր իւր միտունջ,
Փակուած էր աղջ օրն նա իւր օթախում,
Իսկ նորա երեսն էլ չէր ծիծաղում . . .

Ախ՛ուժիր, չատ դամ ինձ մօտ էր գալիս,
Որպէս սպանուած . . . լալիս էր, լալիս . . .
«Ջունիս «նորանից» տատի մի խաբար . . . »
Հարցնում էր Սասան խիստ անհամբեր։

Բայց հասել էին աղջկայ տարիքը.
Գընում, գալիս էին նրա մուշտարիքը։
Նախանձելի էր նա, ինչպէս մի Չէլրան, [54])
Ո՞վ չէր ուզենայ, չէր սիրի նորան։

Խնդրից տանուտէր Մինասն իւր տրտուն,
Նա աներ գուման, հարուստ տեղ ու տուն,
Կրճտում էր նա չատ կամքիր և դամիշ,
Փարախում լիքն են՝ ձի, ոչխար և էշ։

Չէր տեսած այդպէս մի բան ողջ աշխար,
Բաչլըղ [55]) էր տալիս՝—Չուխտ եղ, տասն ոչխար,
Հինգ բեռը ցորեան, տասիներ քըսան։
Կարմրիկ, խօրօսիկ [56]) էր Ջահիլ փեսան։

Ընչան էր գընում փիրուզ [57]) մատանի,
Ջուխտակ ապարջան—գործ Համադանի,
Ոսկի վըզանոց, մարջանով [58]) չարած,
Արծաթի գօտի, ակնով զարդարած։

Սասան չը գընաց, չը լսեց հօր խօսքին,
Ընդդումնաց ընչանն, արծաթն ու ոսկին։
Այդպիսի պատիժ, ախ, ով էր տեսե,
Աղջիկը հօրն ու մօր խօսքին չը լսե . . .

Գիշերները սկսան ծնողքը նախատել,
Այդ չարի առաջն առնել աշխատել
Կ՛ասէին նորա՝ «այդ «անառակը»
Թողնց մեր աղջկանց՝ վատ օրինակը։»

—«Դու իմ տան վերա սև մուր քսեցիր,
Իմ աղն ու հացը լեղի չինեցիր . . . »
Առումէր աղջկան ծերունի հայրը,
Լացում, աղաչում էր նորա մայրը։

Սասան չէր լսում լացը, նախատինքը,
Երկաթից էլ պինդ էր նորա կամքը.
«Կը մնանեմ, առումէր, չնի գնա օտարին,
Գիտէ ապատան իմ սիրած «տարին»

Թէև վայել չէր այդ հայ աղջկան,
Բայց ամէ չէ խաբել, ախ, չար առուտուն . . .
Սասան ինաց գարձեալ միչտ մարտը սրտով,
Եւ նոյնպէս համառ, նոյնպէս ամօթով։

Մըրջիւն չէր կոխ տալ՝ հասկան գընալիս,
Եւ ծառի տերևը՝ ծառից ընկնելիս՝
Ցան էր պատճառում այն քնքուշ հոգուն,
Արթուն բարիքներ անումէր նա խաղուն . . .

Ախ՛ուժիր, չատ դամ գալիս էր իմ մօտ,
Գեռ նոր է ծագել լոյս և առաւօտ,
«Կարագ եմ բերել, առումէր, քեզ համար,
Մայրս ինձ ասաւ, բայց ես չը կերայ։»

Ա՛խ, որքան չհաս էր դումբը նորա սրտի . . .
«Ինչի՞ ես ուրախ լինում, տատի,
Երբ որ մտնում եմ այդ քո բնակարան,
Կարծում եմ, կրկին տեսնում եմ «նորան»։

Ներստումէր ինձ մօտ նա ձիգ ժամերով,
Եւ իւր հետ բերած մանրիկ սանդերով
Սանդրումէր պատառիս դլուխն ալևոր,
Փորումէր նորան փոքրիկ մատներով։

Խօսումէր . . . խօսում . . . խօսքը չէր պրծնում,
Միշտ «նորա» վերա էր նա մըտածում,
«Տատի, հարցնումէր, երբ որ ես մեռնեմ,
Գէթ երկնքումը «նորան» կը տեսնեմ . . . ։»

«—Մահուան վրա մտածել քեզ վաղ է, որդի։»
«Կեանքն ինձ այժմ խիստ դժուն է, տատի . . . ։»
Աստումէր, թափում հեղեղն աչերին,
Թագցնումէր սրտի գաղտնիքը խորին . . .

Ցետոյ հասկացայ ես այդ գաղտնիքը,
Թէ ինչ էր ուզում ասել աղջիկը,
Հասկացայ, այո՛, բայց ուշ էր արդէն,
Այդ ցաւն անբաժան կը մնայ իմ սրտէն . . .

Քանի մի օրից յետոյ ես լսեցի,
Սառայեան տանում էին եկեղեցի,
Գիտի կատարուէր այնտեղ պըսակը,
Մխնասի որդու էր հարսանիքը։

Հօր ստիպմունքին՝ և իւր մօր կամքին,
Կապիտ գիւղացոց դառն նախատինքին՝
Նա ընդդէմ կենալ չը կարաց երկար,
Հնազանդուեցաւ . . .—անզօր էր, տրկար . . .

Բայց քանի անգամ սիրտը ծակտցաւ,
Ա՛խ, քանի անգամ նա ուշքից անցաւ . . .
Մինչև հասուցին ժամատան չխմբը,
«Ջեմ սիրում տըղին»—այդ էր նրա խօսքը։

Երբ բեմի առջև բոլոր ժողովուրդ
Ահով լըսումէր սրբազան խորհուրդ,
Վայր ընկաւ Սառան, աչքերը փակեց,
Եւ կրկին անգամ նորանց չը բացեց . . .

«Ա՛խ, ց . . . !!»—եղաւ՝ իւր խօսքը վերջին։
Գիւղացիք սարսափով մօտը դընացին,
«Թունաւորուած է . . . » մէկէն կոչեցին,
Լաց ու չիւանով[59] դուռաց եկեղեցին։

Գիւղից ոչ հեռու, այն բլուրի վերան,
Կը գըտնես, պարոն, մեակ գերեզման,
Գերխնները ծառած, մի ջուխտ ուռենի
Սփռումեն այնտեղ ախորժ հովանի։

Այնտեղ է Թաղուած գեղեցիկ Սառան,
Ո՛չ տապանադիր, ոչ խաչ իւր վերան,
Եւ ոչ բուրվառով ժամատն ախրացուն
Ծըխեց տուրք խունկը այն անմեղ հոգուն . . .

Նրան տեղ չը տուեց մեր գերեզմանատուն, [60])
Որպէս մեղաւոր, ինքնասպան մարդուն,
Որպէս կամակոր աղջկան ինքնակամ,
Որ ընդդիմացաւ իւր ծնողացն անպամ։»

Պառաւն աւարտեց։ Բայց նորա հանգած
Աչքերում կաթիլք կային թաղուցած,
Որ նուիրեց նա սուրբ յիշատակին
Իւր միշտ պաշտելի, անմոռ հրեշտակին...

Քանի օրից յետ մի երիտասարդ
Սրտով վշտահար, դէմքով անզուարթ,
Գերեզմանին մի ևս քարի վերա
Գտաւ հետևեալ արխուր տողերը՝—

«Մինչ երբ, դու խաւար բռնակալութիւն,
«Կը ճնշես առանին մեր ազատութիւն,
«Մինչ երբ մեղանից քո ևս ճանկերը
«Կը խլեն Սատոյն նրման զոհերը...!!»

ՂՈՒՅԼՈՒԲՅԱՆԻ

Մաթևոսյան Պողոսեան
ՍԵՐԵՐԱԿԱՆՑ
Ա-ա-ր-խ-ն

Ղ Ո Ւ Յ Լ Ո Ւ Բ Ա Ն Ի

(Ա Ռ Ա Ս Պ Ե Լ)

Կար, չը կար մի քաղաք՝ մեծ և փառաւոր,
Ան կողմն աշխարհին, մեզնից հեռաւոր,
Մեծ ծով էր պատել նորա բոլորքը,
Սուրբ տեղ բահը կըրառմէր գորքը։

Անտեղի կեանքը ազատ էր, յարմար,
Իսկ բնակիչներին՝—ոչ քիւ, ոչ համար,
Գործումնեն նոքա գոհ Աստծոյ փառքից,
Ոչ ոք վաստակը չէ խըլում ձեռքից։

Ապրուստը՝—առատ, բընաւ հոգ չը կայ,
Միշտ եղն ու մեղր ուտումեն նոքա,
Անտեղ աղքատն էլ սրտում գարդ չունի,
Նա չըի փոխարէն խըմումէ գինի։

Անտեղ ձմեռն էլ ծաղկումէ նըշենին,
Ջունի մուշտակի պէտքը ձերունին,
Իսկ նոցա աշունն, որպէս մեր գարուն,
Յանապատ են ծառեր, դեղեցիկ, սիրուն։

Տարին երկու գամ ծընվումէ գառը,
Միշտ կաթին է տալիս տիրոջն ոչխարը,
Ծնունդն էլ, գիտէք,—բոլորը ջուխտակ,
Չը կայ ոչ մի սև,—ամենը սպիտակ։

Ուր խանին երբէք չեն տալիս բէգար, [1])
Սուլտաթ, [2]) Ջարիմայ, [3])—այդպէս բան չը կար,
Եւ նոցա սիրուն կինն ու աղջիկը
Ծընից չէ քաշում գաղան Պարսիկը . . .

Մարդին պէտքը չէր ըընալ անտառը,
Վառելու համար կտրելու ծառը,
Փայտը գալիս էր ձրի նրանց համար,
Վառէ ու վառէ,—չունի չափ, համար։

Այդ ոմ էր ըներում։—Միշտ Ղուլուբանին,
Տարին մի անգամ, բայց ամբողջ տարին
Վառելու համար էր նա բաւական,
Այլև չինուածքին էր միշտ պէտքական։

Ղուլուբանին էր մի «դէվ» [4]) զօրաւոր,
Մարմնով անճոռնի, դէմքով հրէշաւոր,
Մի հսկայ աչք միայն ունէր ճակատին
Եւ ջուխտ եղջիւրներ կրումէր գագաթին։

Ձանձ էր նորա մօտ Ադամայ որդին,
Թէև նա ունէր կերպարանք մարդին.
Գերանի պէս հաստ էր նորա բազուկ,
Հսկան նորա մօտ՝—կարճ, որպէս թըզուկ։

Ամեն անգամին, երբ քայլ էր փոխում,
Բարձր լեռները խըճի պէս կոխում,
Նորա ահագին ամեն մի ոտքը
Ամբողջ դաշտի վրա թողնումէր հետքը

Նա չունէր քաշում՝ լինումէր մրրիկ,
Շարժվումեն ծառեր՝ մեծ և փոքրիկ,
Նա ձայն էր հանում՝ դոռումէր սարը
Եւ որոտալով թընդում անտառը։

Ա՛յն երկրում մի ծով կար պարզ—կապուտակ,
Ոչ սահման ունէր և ոչ էլ յատակ,
Չափել նորա խորքն՝ անհնարին էր, զուր,
Նորա մօտ մեր լիճն՝—էր մի գաւաթ ջուր։

Մտնումէր ղէվն այն ծովի միջում՝
Որպէս արագիլ ճահճի մէջ չըրջում
Եւ ջուրը հազիւ՝ հազիւ հասնումէր,
Նորա ծընկները միայն ծածկումէր։

Մեծ մեծ ձկներն որսումէր ղէվը,
Եւ բարձրացնումէր մինչև արևը,
Այնտեղ երկնքում ձեռքով բռնումէր,
Արևի բոցով լաւ խորովումէր։

Այդ նորա համար էր նախաճաշիկ,
Ընթրիքն աւելի ճոխ էր, անուշիկ,
Հարիւր, կամ յիսուն գառն ու ոչխարը
Հազիւ լեցնումեն ահագին փորը։

Այդ դէմն էր, որ միշտ փայտը բերումէր,
Կարծումէք կացնով նա կըտրումէր,
Ո՛չ։ Խլումէր ծառերը մին մին արմատից,
Որպէս քաղհանը [5]) խոտերը արտից։

Նորհաս ծառերից հիւսումէր չուան,
Ինչպէս կանեփից՝—մենք թօկ, կամ պարան,
Կապումէր ահագին՝ իւր մեծ չալակը,
Թեթև բեռան պէս՝ կրումէր քամակը։

Բայց ինչպէս չալակ . . . սև սարի նման,
Ամբողջ կէս անտառ իւր մէջքի վերան՝
Դիզուած է այնպէս՝ բարձր և ահագին,
Կարծես փոքրիկ ճանճ նստած է քամակին։

Բերումէր քաղաքը և նորա մօտին
Բըցումէր չալակը։ Թընդումէ գետին,
Ցանկարծ երկրաշարժ։ Մըթնումէ օդը,
Եւ ահեղ ձայնով գոռումէ որոտը։

Ցերեկ նման դողումէ աշտարակ,
Թափվումէն վախից մարդկքը հրապարակ,
Կործանվումէն տներ, գմբէթ և սեղան,
Եւ ժողի կնիկը վիժումէ իւր տղան . . .

Որպէս Աստուծոյ ահեղ պատուհաս,
Տալիս էր քաղքին՝ դէմն այդպէս վնաս,
Իսկ նորա օգուտը դորա համեմատ,
Շշմարիտն ասած, էր աւելի շատ։

Վերջին աղբատի օջախի մէջը
Ծըխումէր ծուխը մինչ տարուան վերջը,
Նա դորա համար բան չէր վճարում,
Փայտն առատ էր, վառումէր, վառում . . .

Չաւաքուեց քաղքի բոլոր ժողովուրդ,
Խնդրք ձերունիք կազմեցին խորհուրդ,
Ի՞նչպէս հեռացնել այդպիսի վտանգ,
Որ փայտը նրանց չը նստէր շատ թանգ։

Մտածեցին նոքա շատ մտածմունքներ,
Հին մարդիկներից արին հարցմունքներ,
Եւ վերջ ի վերջոյ ղրտան մի հընար՝
Բաղաքն անվնաս պահելու համար։

Ուղարկեցին նոքա քանի մի ալեւոր
Սիպտակ մօրուքով, ծեր և պատուաւոր,
Գնացին նոքա դէմն մօտ դեսպան,
Բաղաքի կողմից յայտնել այդպէս բան՝—

«Ողջոյն վինի քեզ, ով դէմ գօրաւոր,
Բաջ հսկաների տէր և թագաւոր,
Ողջունումէ քեզ մեր ողջ քաղաքը,
Թող պայծառ վինի քո յարդն ու փառքը։

«Այսքան տարի է մեր քաղքի համար
Դու փայտ ես տալիս առատ, անսպառ,
Եւ դորա մասին մեր ողջ բազմութիւն
Յայտնումէ քեզ իւր՝ շնորհակալութիւն։

«Որպէս զի անմոռաց լինի այդ յիշատակ,
Քաղաքն այդ չապիկն ուղարկեց սպիտակ,
Որ հազնես նորան, տրկլոր չը չրջես,
Քո մերկուԹիւնը նորանով ծածկես։

«Մի ամբողջ տարի քաղքի Ջուլհակը
Սպառեց բոլոր՝ բուրԹն ու բամբակը,
Մի ամբողջ տարի մեր ողջ կնանիք
Հազիւ կարացին կարել այդ չապիկ։

«Շատ Թանգ է նստել մեզ այդ չապիկը,
Շատ մեծ է նորա գինն ու արժէքը,
Բայց կը տանք քեզի դորան մենք աժան,
Որպէս քո պատուին վայել է, արժան։

«Դորա կէս փողը քեզ ընծայ լինի,
Կէսին մեզ կը տաս մուրհակ ըստ օրինի,
Տարի ժամանակ, ԹեԹև տոկոսով,
Մինչև լրացնես պարտքդ Աստուծով։»

Դէվը չատ սիրով ընդունեց այդ պայման,
ՈւրախուԹեանը չը կար չափ, սահման.
Որքան նա մեծ էր մարմնի կազմուածքով,
Այնքան յիմար էր մտքով ու խելքով։

Եկաւ ժամանակ՝ լրացաւ տարի։
Դէվը փող չունի պարտքը վճարի։
Եւ պարտատէրոջ ահից, երկիւղից
Ջրկուեցան նորա աչքերը քընից։

Թէև դէվ էր նա, եղաւ երկչոտ սասիկ,
Ինչեր չեն անում խորամանկ մարդիք ...
Հրգոր առիւծին չինուամն կատու,
Եւ հսկայներին՝—իւրեանց հարկատու ...

ԴէՀն այնուհետև, երբ բերուամբ փայտ,
Բերուամբ գաղտնի, գիչերով, անյայտ,
Որ քաղաքացիք նորան չը տանջեն,
Դատաւորի մօտ պարտքը պահանջեն։

Նա իւր չալակը խիստ զղոյշ կերպով
Գընուամբ գնայն, փախչուամբ չտապով
Շատի տերևն էլ տեղից չէր շարժում,
Մի խըշշոց անգամ նրանից չէր լսում,

Իսկ քաղաքացուն այդ էր հարկատոր,
Բայց մարդն է ապահ և վտանգատոր ...
Նրանք պարտքը Թողին այնքան ծանրացաւ,
Մինչ դէՀն Խապաս նրանց գլուխ գարձաւ։

Եւ այնուհետև եղաւ փախստական,
Թափառում միշտ այդ խեղճ պարտական ...
Թափառում նա աշխարհից աշխար,
Երկիւղը նորան քընում անդադար։

Այն մեծ մարմինը հալուեց ... մաշուեցաւ ...
Լոկ ոսկորներն մի ձև ստացաւ։
Նա մահ է գալիս միշտ մեծ գիչերով,
Նորան աղաչ և վախվըխտալով։

Երբ աղաւորդու երես է տեսնում,
Իսկոյն օղի մէջ չքանում է, կորչում,
Մի վախի նրանից, սիրելի Սառա,
Նա բարի մարդուն երբէք չէ վնասում՝ . . . .

Եւ այժմ էլ մեզ հետ մեր քաղաքացիք,
Վարվում են այդպէս, սիրելի քոյրիկ,
Մեզ վրա ծախում են իւրեանց լաթերը
Եւ բաղմացնում՝ տոկոս--պարտքերը . . . . »

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՌԱՅԻ ՄԷՋ

1. Շուբեռլէ, Մուհամէդի դրած օրէնքը։
2. Ջէննաթլէ, Մուհամէդի երևակայական դրախտը։
3. Հուրիէ, սիրուհի, այդպէս կոչվում են արևելքում մահմետական սիկիւնները։ Հարեմ կամ հարեմլիանայ նշանակում է կանանոց, մի առանձին բաժինը տան, ուր օտարները մուտք չունեն։
4. Խոնարհեցո, մի առանձին դլուխ է սաղմոսի մէջ։
5. Ընէուէ, մի երկար աղօթք ժամադրքի մէջ, որ կարդում են դիշերը քնելուց առաջ, հաւատալով, որ առնը նորա զօրութեամբ չը ջնջատվում է առաւեօք պարիսպներով և անմատչելի է մնում երևելի և աներևոյթ արարածների յարձակմունքից։
6. Տաշտէր, տաշտի քերիչ, դա փոքրիկ երկաթեայ թիակ է, որով քերում են խմորը, երբ նա կպչում է տաշտին։
7. Թուրքմեն, Թուրքեստանցի, բայց ժողովրդական բարբառում այդ բառը դործ է ածվում վոխանակ ասելու դող կամ աւազակ, առնուած լինելով Թուրքմէնների հակամտութիւնից դէպի աւազակութիւն։
8. Գէշէ, դիւղի տանուտէրի օդնականը, որոյ պաշտօնն է՝ հաւաքել դիւղատիրոջ համար չինականներից

ձուաններ, հաւեր և այլն. նա է նշանակում հերթը ձրի մշակութիւններ անելու կալուածատիրոջ երկրագործական դաշտերում։

9. Ջուչէ, մանրամաճառ, որ պտըտում է գիւղերում։

10. Մոսոկ կիւ, ծամոն։

11. Յօրանջելու միջոցին բերանը խաչակնքումն, որ սատանան չը մտնի փորը։

12. Ջինդոլ, կախարդ, որ իշխում է չար ոգիների վերա։

13. Ապոմոյ մոլէ կոչվում է վաղորդեան լուսաբացէն առաջ տիրող մռայլը, այն մտքով, իբր թէ Ադամը նոյն ժամուն արտաքսեցաւ լուսաւոր դրախտից, և դրսում տեսնելով խաւարը, տխրեց և լայ եղաւ։

14. Խոռոխէ, խայտաճամուկ, խայտաբղէտ, պիսակաւոր։

15. Հինոյ, կամ խինոյ, մի տեսակ բուսական փոշի, որով արևելքում կանայք և տղամարդիկ ներկում են իւրեանց ձեռքերը և մազերը։ Նա վարդագոյն—ծիրանի գոյն ունի։ Մահմետականների մէջ նորա գործածութիւնը համարվում է կրօնական պարտաւորութիւն. այն մասը մարմնի, որ ներկվում է հինայով, ազատ է մնում դժոխքի կրակէն այրուելուց։

16. Տրինէ, ռամկական բառ, նշանակում է անասնոց կայտռիլը նոցա թռչկոտիլը։

17. Թռնէր, ասորոց բառ, նշանակում է կրակարան, հնոց։

18. Որովհետև Թոնիրը վառվում է առաւօտեան միայն, գիւղացիք պատրաստում են բոլորը, ինչ որ պէտք էր նոյն աւուր համար։

19. Պարսկաստանի հայերի մէջ սովորութիւն կայ, որ աւագ երկու չարթի առաւօտը կանայք ընտրում են տղամարդիք, իսկ աղջիկները՝ պատանիք, որք, խաչի և աւետարանի վերա հաստրուելով, դառնում են էոյր—եղբայրներ։ Ա.դ միակ միջոցն է, որ թոյլ է

տալիս օտար, ազգական չեղող տղին մի օտար աղջկայ հետ ընտանեկան մերձ յարաբերութիւններ ունենալ։ Ա.յդ սովորութիւնը կայ և մի քանի սլաւոնական ցեղերի մէջ, բայց նորանք զրկվում են այնուհետև միմեանց հետ ամուսնանալուց։

20. Գիւղացւոց մէջ զանազան պատուհներ չեն ուտվում, մինչև մի նշանակեալ տօն, երբ նոքա օրհնվում են քահանայից Աստուծոյ սեղանի վերա, օրինակ, խաղողը, խնձորը և այլն։

21. Պարսկաստանի կարմիր խնձորները նշանաւոր են իւրեանց մեծ և կլորիկ ձիրքով, այլև անուշհոտութեամբ։ Նոցա տնաս ժամանակ, երբ տակաւին պտուղը պարզ—կապտագոյն է, գիւղացի աղջիկներն և պատանիք կալցնումեն նոցա մակերևոյթի վերա գեղեցիկ ձև ունեցող փոքրիկ տերևներ, կամ զանազան տեսակ կարած թղթեր, որք ձևացնումեն նկարներ և չատ անգամ տառեր։ Պտուղի բաց մնացած տեղերը կարմրումեն արևի ներդործութիւնից, իսկ կոցուած տեղերը մնումեն սպիտակ, և այդպէսով խնձորն ընդունում է նախշուն կերպարանք։ Ա.յդպիսի նաշխած խնձորները միայն սիրելիներին ընծայ լինելու համար են պատրաստվում և կոչվումեն Թուրքերէն բառով էոլ—ալմաղ, այսինքն սիրուհու խնձոր։

22. Ջուլֆ, պարսկերէն նշանակում է կանանց թշերի կողմը թողած վարսը, որին զանազան գանգուրներով ձևեր են տալիս։ Թիֆլիսում աստմեն էոլէ։

23, Պտղատվող մրրիկի վերա, մանաւանդ երբ նա սլանաձև դէպ երկինքն է բարձրանում, ժողովրդական մնահաւատութիւնը նայում է, որպէս թէ հրեշտակները վիշապներ են քաշում դէպ երկինքը, որ չհաղ բաց թողնեն, ընկնի և փշրուի։

24. Ցորդող, կամ ձէր էոլին կոչվում է այն, ինչ որ բուսերէն աստմեն՝ млечный путь։ Ա.յդ ժողովրդական աւանդութիւնը խորին կապ ունի մի առասպելի

հետ մեր պատմական անցեալից, իբր թէ հայոց գիւղացիը վաղուց սաստիկ ձմեռան ժամանակ դուրանում Աստղոց Արևի որդու Բարշամի (Բարշամ աստղոց լեզուով նշանակումէ արևի որդի) յարդերը, և փախչելու միջոցին թոթափելով, թողնումէ հետքը երկնքի վերա, որ այժմ կոչվումէ յարդագող։

25. Ռամիկ ժողովրդի մէջ կայ այդպիսի անահատոթիւն, երբ գևերը հարսանիք անեն, կամ ուրիշ բան են կատարում, նոքա գիշերով վեր են առնում մարդկանց նոր հագուստները և նոցանով զարդարվումեն։ Հագուստները գևերից հետու պահելու համար ցցումեն ասեղներով, որպէս զի մատչելի չը լինին նորանց, որովհետև գևը միշտ խոցս է տալիս ամեն առարկայից, որոյ վերա տեսնումէ պողպատ։

26. Գոյ, Մեր ամենից հետ պատահել է, մանաւանդ մանկութեան հասակում, չատ անգամ մեր երևակայութիւնը յայտնուող մի երևոյթ խանգարումէ մեր քունը, ճնշումէ քնողին և ծանրացնումէ նորա շնչառութիւնը։ Դորա բնական պատճառները թէև յայտնի են, բայց ժողովրդական սնահաւատութիւնը նորան մի տեսակ աներևոյթ ոգիներին է ընծայում, որք կոչվումեն Գոյ։ Այդ բառը թուրքերէն նշանակումէ ևս, բայց խնկապէս ծագելով պարսից գէջ կամ գոյչէ բառերից, նշանակումէ աներևոյթ, կամ աներևոյթ էակ։ Իբրևանց զերծ պահելու համար Գարայի ներգործութիւնից գիշերային քնելու ժամանակ դնումեն իբրևանց բարձի տակին մի թղթի երկայն փաթոթ, որ կոչվումէ ճոռ, կամ Քօշնոյ։ Նորա վերա նկարած են տարբերի պատկերներ և գրած են դանազան աղօթքներ, որոց բոլորն վերջանումեն նոյն մարդի անունով, որին պատկանումէր ճոռը։ Նորա երկարութիւնը հաւասար է իր սեփուհ հասակի բարձրութեանը, դորա համար և տալիս են նորան քանուն Քօշնոյ, որ նշանակումէ հասակաչափութիւն։

27. Գոյլուբանի, տես 309—րդ երեսում առաջարկը Գոյլուբանիի մասին։

28. Սպոռ՝ ռուսերէն, փոխանակ ասելոյ արագիլը։ Այդ խաղաղասէր թռչունը համարվումէ սրբանուերը, որովհետև, ըստ մեծի մասին ժամատների բակերում գտնուած ծառերի վերա է դնում իր բոյնը. նա այնքան մեծ է լինում, որ փոքրիկ թռչունները, որպիսի են ճնճղուկ, սարեակ՝ ապրումեն նոյն բոյնի մէջ։ Թուրքերը կոչումեն նորան Հաջի—լէյլէ, կարծելով, որ նա ամեն աշունք, տեղափոխուելու միջոցին, ուխտագնացութիւն է գործում դէպի Մեքքայ և Հաջի է դառնում։ Հիւանդացած երեխաներին չուր են խմեցնում արագիլի ձուի կեղևի մէջ, որ առողջանայ։

29. Համբարձման տօնի նախորդ գիշերը աղջիկները «ծաղկահմայութիւն» են անում։

30. Ալա, գերագոյն, բայց այդ չանգլուրմի մէջ նշանակումէ խայտաբղէտ, գոյնզգոյն։

31. Ալվուշ, նոյն նշանակութիւնն ունի։

32. Եաւ, ընկեր, բայց բանաստեղծութեան մէջ գործ է ածվում սիրող կամ սիրուհի բառերի տեղ։

33. Բալա, պատիժ, պատուհաս, տանջանք։

34. Ալ, վարդագոյն կարմիր։

35. Զուլլա, խայտաբղէտ, իսկ աչքերի վերաբերութեամբ նշ. խաժակն։

36. Տալ, փեսայի քոյրը։

37. Մուրուզ, նպատակ, փափագ։

38. Նուռ, կանաչ և կարմիր գոյներով միասին ոլորած թել, որ կապումեն հարսի ու փեսայի պարանոցին սրանկի խորհուրդը կատարուելէն յետոյ։

39. Բոզուղ, կոկորդ, շնչափող։

40. «Առակ եղայ» այսինքն զրոյցների, կամ հեքեաթների կարգն անցայ։

41. Գէշ, ռամկօրէն տգեղ։

42. Նուռէ, մարդի ամեն հասանելիքը, որ նշանա-

կուած է նախասահմանութիւնից։

43. Պարսկաստանում աղջիկները, բացի նշանակուած պատերը պահումն և կամաւոր պատեր ու ծոմեր ի սէր այս և այն սուրբին, որին իւրեանց պաշտպանն են համարում, որպէս զի իւրեանց բախտը բացուի։

44. Ղուշ, թրիչ։

45. Աչէչ, սիրելի, քնքուշ։

46. Թէրմէ, Քիշմիրի շալ։

47. Բոչէ, պարեն, կամ նախահնամութիւնից նշանակուած օրական ապրուստը ամեն մի մարդի, որ նորանից աւելի կամ պակաս ստանալ կարող չէ։

48. Խէյր, վաստակ, օգուտ։ Բարեխէր, բնդմիատրութիւն, պաղատերութիւն։

49. Ոչ միայն Պարսկաստանում, այլ շատ տեղերի հայերի մէջ կայ մի այդպիսի նախապաշարմունք, երբ պտղաբերութեանն որ և իցէ վտանգ էր սպառնում, օրինակ, մորեխ, թրթուր, ժանդ և այլն, բերել են տալիս Մասիսի սուրբ Յակորայ աղբիւրից ջուր և ցրուելին դաշտերում, որ պատուհասն անցնի։ Աւետիսը հաւատում է, որ ջուրն, բացի նորանից որ ոչընչացնում է վնասակար միջատները, այլ և իւր հետն է բերում մի տեսակ սև և սպիտակ փետուրներ ունեցող թռչուններ, որք կոչվում են սուրբ Յակորայ սարեակներ. դոքա կուտորում են մորեխը։ Եւ իրաւ, այդ թռչունները խմբովին առաւելապէս յայտնվում են այն տեղերը, ուր դոյանում է մորեխը և հետևում նորան ուր և գնում է։ Իսկ այդ երևոյթը ոչ պէտք է վերաբերել սրբազան Յրի աղեցութեանը, այլ նորան, որ այդ թռչունները կերակրվում են մորեխներով, և մի առանձին զուարճութիւն են զգում կուտրել նորանց, թէև կուշտ ևս լինէին։ Սուրբ Յուրը բերելու պայմանները դոքա են՝ նորա ամանը պէտք է գետին չը դրուի, այլ իլևաններում կախ են տալիս

մի վայտից. բերող մարդն ամենևին պիտի յետ չը նայի, մինչև տեղ հասցնելը, եթէ ոչ թիլիսմանը կը լուծվի։

50. Երաշտութեան ժամանակ ժողովուրդը մտածում է, թէ ցորեան ունեցող մարդիք, կաշառելով կախարդներին, կապել են տալիս երկինքը, որ արգելք դնեն անձրևին. որպէս զի սով լինի և նոքա իւրեանց ունեցած մթերքը թանգ գնով ծախեն։

51. Նոբէն, Թիֆլիսում աւուրեն չորբէ, իսկ Պարսկաստանում՝ չոմէ—խոշոռ, դա վայտից շինած և հագցրած մի տիկին է, որ կանայք երաշտութեան ժամանակ գիւղի մէջ ման են ածում, զանազան երգեր երգելով, որք յարմարեցրած են այդ դործողութեանը։ Ամեն մի տանեցին նոբէնի գլխին ջուր է ածում և նորա պատրաստողներին մի բան է բաշխում։

52. Մալէմէ, այն հարկը, որ հաւանում է կառավարութեանը։ Բահէրա, երկրագործական բերքի մի որոշեալ մասը, որ ստանում է կալուածատէրը հողի մշակողից։

53. Քօրթօրա, ուրուր կամ ցին կոչուած թռչունը, որ յաւիտեակում է հաւերի ճտերը։

54. Ջէյրան, եղնիկ, եղջերու։

55. Բուշէղ, այն արծաթն, որ փեսան կամ փեսայի հայրը տալիս են աղջկայ ծնողացը որպէս գլխապայ հայրը տալիս են աղջկայ ծնողացը որպէս գլխապին նոցա դստերը, այդ իսկ նշանակութիւնն ունի Բուշէղ բառը։


56. Խօրօխ, գնդեցիկ, սիրուն։

57. Փէրուզայ, ֆէրուզայ, ադնիւ կապուտակ քար։

58. Մէրջան, բուսեթ, կարալ։

59. Շէ—ն, ողբ, սուգ, հառաչանք։

60. Պարսկաստանում ինքնասպանները դրկվում են հասարակաց գերեզմանատունում թաղուելուց։ Նոցա գերեզմանը դրվում է բնակութիւնից հեռու, առանձին տեղում և ծածկվում է սև քարով։ Բարեխտաբար այդ անմերողամիտ մոլեռանդութիւնն այժմ վերջանալու վերա է։



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂՈՒՅԼՈՒԲԱՆԻՒ ՄԷՋ

1. Բէկոր, պարսից էյկոր բառից, նշանակում է անգործունէութիւն, այդպէս կոչւում է այն ձրի, առանց վարձատրութեան աշխատութիւնը, որ Պարսկաստանում գիւղացիք որոշեալ օրերում տանում են իրենց աղաներին։

2. Սուլուխ, պաշար, որ բռնութեամբ առնւում է ժողովրդից պատերազմի, կամ արշաւանքների ժամանակ։

3. Ջուխտայ, տուգանք։ Պարսկաստանում յանցանքները պատժւում են առաւելապէս տուգանքով։ Դժար է, այդ շատ ձեռնտու է դատաւորներին, որովհետև առնուած փողը նոցա ջիբն է մանում։ Գիւղերի տէրերը նոյնպէս իրաւունք ունեն տուգանք խլել գիւղացիներից ամենաչնչին մեղադրանքի համար։ Բայց մեծ մասամբ այդ մեղադրանքները դժնութեան չինծու, որ հնարում են գիւղապետերը՝ շողոքորթները նորա քըսակը լցնելու, մի և նոյն ժամանակ նորան հաճոյանալու համար։

4. Դէվ և դև զանազան նշանակութիւններ ունեն։ Դևը համարւում է մանր, մարդաչափ, աներևոյթ էակներ, որք բնակւում են ըստ մեծի մասին հին աւե-

րակներում և երբեմն մօտենում են մարդկային բնակարաններին։ Դևերն աւելի քնքուշ են և գեղեցիկ. նոցա վերա խօսելով, հայերը միշտ այդպէս արտայանում՝ «մեզնից աղկները,» այսինքն մեզանից գեղեցիկները կամ լաւերը։ Իհարկ է, այդ նորա համար է, որ չը բարկացնեն դևերին։ Իսկ դէվերը, դրա հակայներ են անճոռնի կազմուածքով, այն, ինչ որ մեր հները կոչում էին թոջեր կամ պիրանները, կամ ինչ որ պարսիկները կոչում են իֆրիտ և դիվ։ Դրա մղում են պատերազմներ, բնակւում են իւրեանց սեպհական առանձին տներում և տեսանելի են մարդկան։

5. Քուշկն, մշակներ, որք մաքրում են ցանքերն աւելորդ խոտաբոյսերէն, նորանց արմատախիլ անելով։

